



Կ. Ն. ՅՈՒԶԲԱՇՅԱՆ

ԱՎԱՐԱՅՐԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻՑ  
ԴԵՊԻ ՆՎԱՐՍԱԿԻ  
ՊԱՅՄԱՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ





К. Н. ЮЗБАШЯН

## ՕՏ ԱՎԱՐԱՅՐՏԿՈՒ ԲԻՏՎԻ Կ ՏՕԳԼԱՇՆԵՐՈՒ ԵՆ ՆՍԱՐՏԱԿԵ

Օուշվա Ղազանչեցոց վանքի ավագ քահանա տեր Առաքել Յուզբաշյանցի ծոռ,  
նույն քաղաքի պատվավոր քաղաքացի Եղոտենց Մովսես բեկի թոռ,  
հռչակավոր ռեալական ավարտած Մկրտիչ Յուզբաշյանցի որդի,  
Թիֆլիզում ախայցիացի մորից ծնված,  
Երեվանում մեծացած ու ձեվավորված,  
կյանքիս մեծ մասը Ռուսաստանում անցկացրած,  
ես իմ ողջ էությունս մնում եմ դարաբաղի  
եվ Ավիրում սույն գիրքը  
Արցախի հպարտ ու խիզախ համերկրացիներին.

ԿԱՐԵՆ ՅՈՒԶԲԱՇՅԱՆ


ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԸՆԹԵՐՈՒՄ

Կ. Ն. ՅՈՒՋԲԱՇՅԱՆ

ԱՎԱՐԱՅՐԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻՑ ԴԵՊՒ  
ՆՎԱՐՍԱԿԻ ՊԱՅՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

A  $\frac{II}{29665}$



ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 1989

Տպագրվում է ՀԽՍՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտի  
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝  
րանասիրական գիտությունների դոկտոր Կ. Մ. Մուրադյան

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսների՝  
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Խ. Սարգսյանը և  
պատմական գիտությունների դոկտոր Պ. Մ. Մուրադյանը

Յուզբաշյան, Կ. Ն.

3-671 Ավարայրի ճակատամարտից դեպի նվարսակի  
պայմանադրությունը/Պատ. խմբագիր Կ. Մ. Մու-  
րադյան.— ՀԽՍՀ ԳԱ Արևելագիտ. ին-տ.—ծր.,  
ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1989—266 էջ.

Գիրքը նվիրված է V դարի հայ ազատագրական պայ-  
քարի կարևորագույն դրվագներին և հոգևոր մշակույթին:  
Վերլուծության են ենթարկվել Հայաստանի սոցիալական հա-  
րաբերությունները, տնտեսությունն ու կենցաղը, քաղաքական  
կառուցվածքը, 450—451 և 482—484 թթ. հակաստանյան  
ապստամբությունների ընթացքն ու հետևանքները: Ընդհա-  
նուր մշակութային հենքի վրա քննվում է V դարի հայոց  
գրականությունը, հատկապես պատմագրությունը, փորձ է  
արվում ներկայացնելու ազգային մտավորականության առա-  
ջին սերունդների ընդհանրացված դիմանկարը:

Աշխատությունը հասցեագրվում է ընթերցող լայն շրջ-  
աններին:

0505040000

3 ————— 104—89

703 (02)—89

ԳՄԴ 63. 3 (22) 42

ISBN 5—8080

© Հայկական ԽՍՀ ԳԱ հրատարակչություն, 1989

Հետագարձ հայացք ձգելով մեր պատմական անցյալին, մտովի ընդգրկելով հազարամյակների ծանր ու բարդ ուղին, մենք հատուկ կանգ ենք առնում V դ. անցքերի վրա: Այդ դարում է ստեղծվել ազգային գիրը, ծնունդ առել հայոց գրականությունը, առաջացնելով հոգևոր զարգացման աննախընթաց վերելք: Այդ դարում հայերը կորցրել են իրենց պետականությունը, բայց և, բարձրացնելով երկու հուժկու ապստամբություն, դրսևորել անկախության հասնելու իրենց կամքն ու ձգտումը: Հոգևոր կյանքը և քաղաքականությունը ասես միաձուլվել էին, իսկ Մաշտոցը, Վարդան Մամիկոնյանը և Վահան Մամիկոնյանն իրենց համար տեղ ապահովել անմահների նույն կաճառում: Անցյալի ոչ մի շրջան այնքան խոր չի տպավորվել հայոց գիտակցության մեջ, որքան V դարը:

V դ. մասին գրել են տակավին ժամանակակիցները. նրանց համար դա հասարակական ինքնագիտակցության միջոց էր: Ամբողջ միջնադարը առաջնորդվել է այդ գաղափարներով, և անփոփոխ ձևով նրանք մտել են եռահատոր «Հայոց պատմության» մեջ, որը 1784—1786 թթ. լույս է ընծայել Միքայել Չամչյանը (այդ հսկայից է սկսվում մեր նոր պատմագրությունը): Այնուհետև հատորներ են գրվել V դ. մասին. այդ շրջանի ձգողական ուժին ենթարկվել են լուրջ գիտնականներ ու սիրողներ, բանաստեղծներ ու վիպասաններ: V դարում ապրած յուրաքանչյուր հայ, որ հայտնի է մեզ թեկուզ միայն անունով, արձանագրվել է մեկ ուրիշ հսկայի՝ Հրաչյա Աճառյանի «Հայոց անձնանունների բառարանում»:

Գիտութիւնն այժմ մեծ նյութ է հավաքել V դ. պատմութեան և մշակույթի մասին: Հարց չկա, որն այսպես թե այնպես շոշափված շիինի բազմաթիւ մենագրութիւններում և հողավածներում: Գրավոր հուշարձաններին, որոնք V դ. ծնունդ են կամ ինչ-որ չափով լուսաբանում են այդ շրջանը, նվիրված է վիթխարի գրականութիւն: Այնուամենայնիւ, պրպտումները շարունակվում են: Պատճառներից մեկն այն է, որ յուրաքանչյուր սերունդ յուրովի է մեկնաբանում այդ դեպքերը, նոր շեշտեր դնում և նոր տեսանկյունից մոտենում դրանց: «Դասական» համարվող դարաշրջանը «դասական» վերլուծութեան ենթակա չէ:

Հիմք չունենք պնդելու, թե հենց V դարն է կանխորոշել հայերի հետագա զարգացումը. իրապես պատմական յուրաքանչյուր շրջանի համար նախապատմութիւն է լինում նախորդող ամբողջ ընթացքը: Սակայն ազգային գիտակցութեան ձևավորման ընթացքում V դ. իրոք, հսկայական դեր է կատարել:

Սույն գրքում փորձ է արվում մեկ անգամ ևս անդադառնալու V դ. հայոց պատմութեանը, լուսաբանելու հասարակական հարաբերութիւնները և քաղաքական վիճակը, ազատագրական շարժումները և դարաշրջանի անկրկնելի մշակույթը: Հեղինակի նպատակից դուրս է այդ հարցերն արծարծել ամբողջութեամբ, շատ դեպքերում միայն ուրվագրծվում են պատմական միտումները, բայց գրերի գյուտը և 450—451 և 482—484 թթ. ապստամբութիւնները շարադրված են հնարավորին չափ մանրամասն:

Գիրքը հասցեագրված է ոչ միայն մասնագետներին, այլև ընթերցողների լայն շրջաններին, այդ պատճառով գիտական գրականութեանը վերաբերող հղումները սակավաթիւ են, սարվածքը՝ թեթևացված: Բացի այդ, խուսափել եմ բանավեճի մեջ մտնել այն դեպքերում, երբ իմ մոտեցումը տարբերվել է մյուս հետազոտողների լուսաբանութիւնից: Գրքի նյութը (համենայն դեպս զուտ հայագիտական մասում) քաղված է անմիջապես սկզբնաղբյուրներից:

Դրքի վերնագիրը պարունակում է երկու տեղանուն: Ավարայրը հայտնի է ամենքին. այստեղ 451 թ. մայիսի 26-ին տեղի է ունեցել այն ճակատամարտը, որը հավերժացրեց վարդան Մամիկոնյանի և նրա զորակիցների անունները: Նվարսակ գյուղը գտնվելիս է եղել Հայոց երկիրը Պարսկաստանից անջատող սահմանագծի մոտերքում: Այստեղ 484 թ. ապստամբ սպարապետ վահան Մամիկոնյանը հաշտության բանակցություններ սկսեց պարսից Նիխորի հետ, հակառակորդին թելադրելով իր կամքը:

Վերնագիրն ինչ-որ շափով փոխաբերական է: Ծանր հարվածներ ստանալով Ավարայրի դաշտում, հայերը շրնկճվեցին և երկրորդ անգամ ապստամբելով՝ ապահովեցին լայն շափերի հասնող ինքնավարութուն: Ավարայրից դեպի նըվարսակ տանող ուղին խորհրդանշում է հայոց ողջ պատմությունը: Այդ եմ նկատի ունեցել, գիրքն անվանելով «Ավարայրի ճակատամարտից դեպի նվարսակի պայմանադրությունը»:

## «ԶԻ ԹԷՊԷՏ ԵՎ ԵՄՔ ԱՇՈՒ ՓՈՔՐ...»

Մ դարում եթե մեկը նպատակ դնեիր անցնել Հայկական լեռնաշխարհը արևմուտքից արևելք, ապա նրա ճանապարհը ընկած էր լինելու մի քանի Հայաստանի վրայով: Ճանապարհորդութունը պիտի սկսվեր Փոքր Հայքից. այդ երկրին քաջ ծանոթ է եղել հույն աշխարհագրագետ Ստրաբոնը (շուրջ 65 մ. թ. ա. — 25 մ. թ.): Նա նշում է, որ Փոքր Հայքը գտնվում է Եփրատ գետից դեպի արևմուտք: Ժամանակին այստեղ առանձին թագավորություն է եղել, սակայն մ. թ. I դարից Փոքր Հայքում հաստատվել է հռոմեական իշխանությունը, երկիրը վեր է ածվել հռոմեական պրովինցիայի՝ համապատասխան վարչական կարգով: Դիոկլետիանոս կայսեր օրոք (284—305) Փոքր Հայքը առանձին պրովինցիա էր, իսկ Թեոդոս Ա կայսրը, 378—386 թթ. այն բաժանում է երկու հատվածի: Հյուսիսային մասը ստանում է Առաջին Հայք անվանումը, վարչական կենտրոնը Սևաստիա քաղաքն է, իսկ հարավայինը՝ Երկրորդ Հայք, Մելիտենե կենտրոնով: Այդ բաժանման մասին իր «Աշխարհացույցում» հաղորդում է նաև հայ խոշորագույն գիտնական Անանիա Շիրակացին, որն ապրել է VII դ.:

Այնուհետև մեր ուղևորը պիտի անցնեիր Մեծ Հայքի սահմանը: Այդ անվանումը ևս շատ հին է. հայերենից բացի, երկիրը այդպես է կոչվել նաև հունարեն ու լատիներեն, այդ անունը յուրացրել են հարևան պարսիկները, վրացիները (Դիդի Սոմխեթի), հետագայում նաև ռուսները (Ар-

менья Великая)<sup>1</sup>: «Մեծ Հայքը» ոչ միայն աշխարհագրական, այլև քաղաքական հասկացություն է: Այն եղել է Արշակունյաց պետության պաշտոնական անունը (66—428), որը, դարձյալ քաղաքական առումով, հետագայում յուրացրել են Բագրատունիները: Այն պետությունը, որը հիմնել էր Աշոտ Ա Բագրատունին, և որը 1045 թ. գրավեցին բյուզանդացիները, պաշտոնապես անվանվել է «Մեծ Հայք»: Այդ անվանումն էր ժառանգվել վերջապես այն ռազմավարական միավորը (բանակաթեմը), որը Անիի գրավումից հետո կազմեցին բյուզանդացիները:

V դ. սկզբներին Մեծ Հայքի վարչական սահմանները զգալիորեն կրճատված են եղել: 387 թ. Պարսկաստանի ու Հռոմեական կայսրության միջև պայմանագիր էր հաստատվել, որի համաձայն Հայաստանը բաժանվել էր երկու մասի՝ արևմտյանը անցել էր հռոմեացիներին, իսկ արևելյանը՝ պարսիկներին: Չգվելով հյուսիսից հարավ, սահմանագիծն անցնում էր Կարին (այժմ՝ էրզրում) քաղաքի կողքով, ընդ որում՝ այդ քաղաքը մնում էր հռոմեական բաժնում: Արշակ Գ Արշակունի թագավորը որոշեց տեղափոխվել հունաց բաժինը, այնտեղ էլ վախճանվեց 390 թ.: Հայաստանի հռոմեական բաժնում թագավորական իշխանությունը վերացավ ընդմիշտ:

Բյուզանդական կայսրության կազմի մեջ մտած հայկական հողերը բաժանվել են տարբեր կարգերի: Հյուսիսային մասում, որի կենտրոնն էր Կարինը, կառավարում էին քաղաքացիական վարչապետները. «կացուցին Յոյնք կոմէսս իշխանս» կարձանագրի հետագայում Մովսես Խորենացին [Մով. Խոր., էջ 316. 6. 7]\*: Պատմիչի ասելով «առաջնորդ էր նախարարաց կողմանցն այնոցիկ» Գազավոն Կամսարականը, սակայն Գազավոնը շուտով հեռացավ Հունահայաստանից, և տեղացի նախարարներն ամբողջությամբ զրկվեցին ինքնավարության որևէ իրավունքից:

\* Հապավումների ցանկը տե՛ս գրքի վերջում:

Հարավային մասում, որը կազմված էր հինգ թե վեց նախարարական տիրույթից, վիճակն այլ էր: Անցնելով կայսրության հովանավորության ներքո, երկրի այդ ծայրամասը արդեն 298 թ. սկսած, լրիվ չէր ենթարկվում Հայոց թագավորին: Սակայն կախումը կայսրությանից ավելի ձեւական էր: Տեղացի «սատրապները», ինչպես անվանում էին նախարարներին հույները (այդ բառը խորթ չէր նաև հին հայերենին), շարունակում էին օգտվել ինքնավարության իրավունքներից, շնայած և տուրք էին վճարում կայսրին և ճանաչում, անշուշտ, նրա գերագույն իշխանությունը: Այդպիսի պայմաններում նրանք մնացին մինչև VI դ. 30-ական թվականները:

Ճամփորդը անցնում է վերջին սահմանագիծը, այն է՝ «Մեծ Հայք» թագավորության ու Բյուզանդական կայսրության պետական սահմանը, որի մասին խոսվեց քիչ առաջ: V դ. Մեծ Հայքի տարածքը կրճատված է եղել ոչ միայն արևմուտքում. մի շարք ծայրամասային հողեր միացվել են Արևելյան Վրաստանին և Աղվանքին: Փալստոս Բուզանդ պատմիչը 387 թ. բաժանման մասին գրում է՝ «բազում գաւառք կրժեալք հատեալք այսր անդր»: Արշակ և Խոսրով թագավորներին (որոնք տիրում էին յուրաքանչյուրն իր հատվածում), մնացել էր «սակաւ մասն յաշխարհաց» [Փալ. Բուզ., 2, 1]: Կարծիք կա, սակայն, որ հողերը հօգուտ Աղվանքի կտրել են 428 թ. կամ անգամ 451 թ.<sup>2</sup>: Այսպես թե այնպես, մայրաքաղաքը մնացել էր նույնը. դա Արտաշատն էր, որը հիմնել էր դեռևս Արտաշես Ա թագավորը (189—160): Դրսաշխարհում այն կարծիքին էին, որ Արտաշատի նախագիծը կազմել է փյունիկյան հուշակավոր զորապետ, Հոմիի կատաղի թշնամի Հաննիբալը: Արտաշատը տարանցիկ առևտրի կենտրոններից մեկն էր, այստեղ էին խաշաձևվում մի շարք ճանապարհներ:

Մեր երևակայական ճանապարհորդը մայրաքաղաքում էարող էր տեսած լինել Մեծ Հայքի թագավոր Վոամշապուհ Արշակունուն: Հիշենք, որ մեր խոսքը V դ. սկզբի մասին է,

իսկ Վոսմշապուհը գահակալել է մոտավորապես 388—414 թվականներին:

Վոսմշապուհը վերջին հայ թագավորներից է. 428 թ. դադարում է հայ արքաների իշխանությունը, իսկ Արշակունիները որպես թագավորական հարստություն վերանում են պատմաբանից: Բայց դարեր շարունակ հենց նրանք են որոշել Հայոց պատմության ընթացքը:

Հայերի բախտը բազմիցս կախված է եղել զորեղ պետությունների հարևանությունից: Հայաստանի աշխարհադրական դիրքն այնպիսին էր, որ հակադիր ուժերի համար երկիրը դառնում էր ինչ-որ կռվախնձոր: Այդպիսին էր վիճակը արդեն I դ. կեսերին, երբ Հայոց երկրի համար կատաղի պատերազմ էին վարում Պարթևաստանն ու Հռոմը: Երկուսն էլ աշխարհակալական ձգտումներ ունեին, երկուսն էլ շահագրգռված էին ամուր հաստատվել Հայաստանում: Այդ երկիրը, ուրիշ առավելություններից բացի, հնարավորություն էր տալիս գերագույն տիրոջը իր իշխանությունը տարածել Այսրկովկասյան նաև այլ երկրների վրա: Ղազար Փարպեցու պատմելով, հայ ուրացող նախարար Վարազվադանը համոզում էր Հազկերտ արքայից արքային՝ «յորժամ Հայք սերախւ մեր լինին՝ Վիրք և Աղուանք այնուհետև մեր իսկ են» [Ղազ. Փարպ., էջ 43. 8—9]: Նման գաղափար կարող էին հուշած լինել նաև պարթևների Վաղարշ Ա թագավորին, որը Հայաստանին տիրանալու համար երկարատև պատերազմ էր մղում հռոմեացիների դեմ (հայերն իրենք կըտրուկ հակահռոմեական դիրք էին ընդունել և որպես դաշնակիցներ մասնակցում էին այդ կռիվներին): 54 թ. Վաղարշի եղբայր Տրդատը իրեն հռչակել էր Հայոց թագավոր, սակայն Հռոմի դիմադրությունը արքային թույլ չէր տալիս լրիվ իրագործել իշխանությունը: Բայց երբ հռոմեական զորքերը մի շարք պարտություններ կրեցին, կայսրությունը ավելի զիջող գտնվեց: Երկու պետությունները համաձայնության եկան, որ Տրդատը իրոք լինելու է Հայոց թագավոր, բայց իշխանության նշանակները նրան կհանձնի կայսրը: Եվ ահա Տրդատը, իր պսակը դնելով ներոն կայսեր կիսանդրիի առջև,

Զ-ամսյա ճանապարհորդութիւնն է ձեռնարկում դեպի Հոռոմ: Միաժամանակ լինելով քրմապետ, Տրդատը ջուրը շարժելու համար շէր կարող ճամփորդել ծովով: Ցամաքով նա հասնում է Հոռոմ, ուր կայսրը նրա գլխին է դնում այն թագը, որը Տրդատը հանել էր վերջինիս արձանի առջև: Մայրաքաղաքում և արվարձաններում խնջույքներ են կազմակերպվում, այնուհետև Տրդատը վերադառնում է տուն: Այսպես՝ 66 թ. Հայաստանում հիմք է դրվում Արշակունյաց հարստութեան հայոց ճյուղին<sup>3</sup>:

Թագավորական հարստութիւնը (դինաստիա), որի գոյութեան պայմաններում իշխանութիւնը անցնում էր սերունդ-սերունդ նույն ազգատոհմի շրջանակներում, Հայոց երկրում սկզբնապես շձեւավորվեց: Նման ավանդույթի մասին հաստատապես կարող ենք խոսել միայն II դ. վերջերից, երբ Վաղարշ Բ Արշակունուց (186—198) գահն անցավ իր խոսրով Ա որդուն (198—215): Հետագայում ևս եղել են այդ սկզբունքի խախտումներ, այնուամենայնիվ գաղափարը հազթական եղավ, այնպես որ III դ., երբ Սասանյանները վերջ տվեցին Արշակունյաց հարստութեանը Պարսկաստանում, Հայոց թագավոր խոսրով Բ Արշակունին որպես սպանված Արտավան Ե Արշակունի թագավորի ազգական՝ վրեժխնդիր գտնվեց, ցուլց տալով, որ ինչպես պարթև, այնպես և հայկական ճյուղը մի արմատից են սերում:

Խոսրով Բ-ի օրոք Արշակունիները վաղուց հայացել էին, ասել է՝ հանդես էին գալիս որպես տեղական՝ հայկական շահերի ներկայացուցիչներ ու պաշտպաններ:

Պարթևաստանի և Հոռոմի համաձայնութիւնը Հայոց աշխարհի վերաբերյալ փոխզիջման ծնունդ էր և շէր կարող ապահովել կայուն հավասարակշռութիւն: Պարթևները, ինչպես նաև իրենք՝ հայերը, ժամանակ առ ժամանակ փորձում էին ահռահեղ շահեր իրավունքները, իսկ կայսրութիւնը, այդպիսի վարմունքից դրդված դիմում էր զենքի: 114—117 թթ. Տրայանոս կայսրը մեծ արշավանք է ձեռնարկում դեպի արևելք՝ սկսելով Հայաստանից: Հայոց թագավոր Պարթամասիրը վերացվում է արշավանքի սկզբին, Մեծ Հայքը

հայտարարվում է հոռմեական վարչական միավոր (պրովինցիա) և այնուհետև միացվում Կապադովկիային: Բայց Տրայանոսի հաջողությունները կարճատև էին՝ հայերը և մյուս նվաճված ժողովուրդները շուտով ապստամբեցին, իսկ Տրայանոսի հաջորդ Հադրիանոսի օրոք (117—138) Հայաստանի նախկին կարգը արդեն վերականգնված էր, Հռոմի համաձայնությամբ հայոց գահի վրա էր հաստատվել վաղարշ Ա Արշակունի թագավորը (117—140):

Միառժամանակ հետո Հռոմի դրածո Սոհեմ թագավորի դեմ է դուրս գալիս Պարթևաստանը, Սոհեմը գահընկեց է արվում, իշխանությունն անցնում է Բակուր թագավորին: Հռոմի բանակը ներխուժում է Ասորիք, Հայաստան, Միջագետք, հոռմեական լեգեոնները գրավում են Արտաշատ մայրաքաղաքը: Հռոմը մտադիր էր Հայաստանը նորից դարձնել կայսրության վարչական միավոր, սակայն 166 թվականին պարթևների ու Հռոմի միջև խաղաղության պայմանագիր է հաստատվում: Նախկինի պես Հայաստանում տիրում են Հռոմի դրածոները:

224—226 թթ. Պարսկաստանում խոշոր փոփոխություններ են տեղի ունենում: Վերջ տալով Արշակունյաց հարստությանը, իշխանության գլուխ են անցնում Սասանյանները: Եթե անցյալում ինչպես քաղաքական, այնպես էլ մշակութային ոլորտում հայերը կապված են եղել Արշակունյաց Պարթևաստանի հետ, ապա այժմ դրությունը փոխվում է՝ Սասանյանները հանդես են գալիս որպես թշնամի, որոնք ձգտում են տիրանալ հայոց երկրին, ստրկացնելով ժողովրդրդին, խախտելով նրա պատմամշակութային բոլոր ավանդույթները:

Գրվանագիտական առումով Հայաստանը դիտվում էր որպես Հռոմի «բարեկամն ու դաշնակիցը»: Նոր պայմաններում այդ բանաձևը կարծես իրական բովանդակություն ըստացավ. դա բացահայտ դարձավ հատկապես III դ. վերջերից:

296 թվականին, նպատակ ունենալով ետ վերցնել 288 թ. կորցրած Միջագետքը, արքայից արքա Ներսեսը ռազմական

գործողութիւններ սկսեց Ղոռմի դեմ: Գալերիոս կայսրը պարտութիւն կրեց, իսկ պարսիկները մտան Միջագետք: Բայց հաջորդ՝ 297 թ. Գալերիոսին հաջողվեց (այս անգամ Հայաստանում) ջախջախել թշնամուն: Շահանշահի կանանոցն ու գանձարանը ընկան հռոմեացիների ձեռքը: 298 թ. Մծբին քաղաքում պարսիկները ստիպված եղան ստորագրել հաշտութեան պայմանագիր, որի համաձայն Միջագետքը և Հայաստանի մի շարք հարավային մարզեր անցան Ղոռմին: Պարսիկները ճանաչեցին նաև հռոմեացիների գերագույն իշխանութիւնը Հայաստանի և Վիրքի նկատմամբ: Հայոց գահն անցավ Խոսրով Բ թագավորի որդի Տրդատ Դ Մեծին: Հոր սպանութիւնից հետո Տրդատին փախցրել էին Ղոռմ, նա այնտեղ էր մեծացել և հետո ժամանել Հայաստան, որպեսզի, իր նախնիների գահին տիրանալով, միաժամանակ ապահովի հռոմեական քաղաքականութեան նվաճումները Հայաստանում: Հայոց թագավորի իշխանութիւնը տարածվում էր նաև Ատրպատականի ու որոշ շափով «անդրտիգրիսյան» այն մարզերի վրա, որոնք, ձևականորեն պատկանելով կայսրութեանը, իրականում Հայաստանի կազմի մեջ էին:

Մծբինի դաշնագրութեան «հայկական» հոդվածները մի քանի տասնյակ տարվա համար կանխորոշեցին Հայաստանում կայսեր գերագույն իշխանութիւնը: 314 թ. քրիստոնեութիւնը ճանաչվեց Հայաստանի պետական կրոն, քրիստոնեութեան նկատմամբ նույն միտումը առկա էր նաև կայսրութիւնում: Հետագայում, դավանական կապերի շնորհիվ Հայաստանը ավելի մերձեցավ կայսրութեանը:

Մինչև IV դ. 70-ական թվականները Հայաստանում թագավորական իշխանութիւնը կողմնորոշվում էր, անշուշտ, դեպի Կոստանդնուպոլիսը (որը 330 թ. մայիսի 30-ից դարձել էր կայսրութեան մայրաքաղաք), Կոստանդիանոս Ա կայսրը հատուկ դաշնագիր էր կնքել Տրդատ Դ-ի հետ: Երբ մասքութենների թագավոր Սանեսանը ներխուժեց Հայաստան, նրա դեմ հայերի հետ միասին դուրս եկան նաև հռոմեացիները: Մի ժամանակ Հայոց Տիրան թագավորը (339—350) ապաս-

տանել էր կայսրութեան սահմաններում: Կոստանդինոս Բ կայսեր և Արշակ Բ թագավորի բանակցութիւններն ավարտվեցին նրանով, որ Հայաստան ժամանեց ու, ամուսնանալով Արշակի հետ, Հայոց թագուհի դարձավ Օլիմպիան, որը Կոստաս կայսեր նախկին հարսնացուն էր եղել (ըստ Ն. Գարսոյանի, դա տեղի է ունեցել մոտավորապես 358 թ.):

Պարսկաստանի և կայսրութեան միջև 359 թ. սկսվեցին ռազմական գործողութիւններ: 360 թ. Կոստանդինոս Բ ժամանեց Արևելք և Կեսարիա քաղաքում իր մոտ հրավիրեց Արշակ Բ-ին: Կոստանդինոսը Արշակին ընդունեց սիրալիբ, համոզելով նրան մնալ հռոմեացիների հավատարիմ բարեկամն ու դաշնակիցը: Արշակի մտքով անգամ չէր անցնում, եզրակացնում է Ամիանոս Մարկելինոս պատմիչը, որ նա (կայսրը) կարող է հետագայում խախտել ու դրժել իր խոստումը:

Երբ իշխանութեան գլուխ անցավ Հուլիանոսը (այն կայսրը, որը մի անհույս փորձ կատարեց, թոթափելով քրիստոնեութիւնը, վերականգնել հին հեթանոսական հավատքը, ինչի համար և անվանվեց «Ուրացող»), պարսիկների հետ ծրագրված պատերազմում շատ ժողովուրդներ նրան օգնութիւն առաջարկեցին, սակայն կայսրը հրաժարվեց, պատճառաբանելով, որ հռոմեական տիրակալութեանը վայել չէ դրսից օժանդակութիւն ստանալ, նա ինքը կարող է պաշտպանել իր բարեկամներին ու դաշնակիցներին: Միայն Արշակին հանձնարարվեց զորք գումարել ու սպասել հետագա կարգադրութիւններին:

Հուլիանոսի պարսկական ռազմարշավը ավարտվեց պարտութեամբ, 363 թ. հունիսի 26-ին նա ընկավ պատերազմի դաշտում: Ասենք, պարսիկների վիճակն էլ գրեթե նույնն էր, բայց երբ արքայից արքա Շապուհ Բ խաղաղութեան բանակցութիւններ սկսեց, Հովիանոս կայսրը (363—364) շտապեց ընդունել պարսից բոլոր առաջարկները: Պարսիկները տիրացան այն երկրներին, որոնք երբևէ նրանց էին պատկանում, նաև մի շարք հայկական հողերի: Պատ-

միշտ նշում է, որ պայմանագիրը ուներ մի հավելված, որը հռոմեացիների համար «կորստաբեր էր ու ամոթալի», այն է. «այդ համաձայնութունից հետո, եթե մեր մշտական և հավատարիմ Արշակ բարեկամը օգնութուն խնդրի պարսիկների դեմ մաքառելիս՝ ապա նրան մերժել»: Ներկայացնելով այդպիսի պահանջ, եզրակացնում է պատմիչը, պարսիկները ուզում էին պատժել Հայոց թագավորին (քանի որ Հուլիանոսի ռազմարշավի ժամանակ նա հարձակում էր ձեռնարկել պարսկական իլիլիոկոմ ամրոցի վրա) և բարենպաստ պայմաններ ստեղծել հարմար առիթով Հայաստան ներխուժելու համար: Այսպիսով, Հայոց թագավորը, շարունակելով մնալ կայսրության «բարեկամն ու դաշնակիցը», Պարսկաստանի դեմ կռվելիս կարող էր հենվել միայն սեփական ուժերի վրա: Բայց այդ ուժերն էլ էին կրճատվել: 363 թ. դաշնագիրը երկրում աշխուժացրեց կենտրոնախույս ձգտումները: Մայրամասային մի շարք գավառներ հրաժարվեցին ենթարկվել Արշակ Բ-ին: «Սատրապութունների» կախումը Արշակունիներից առհասարակ պայմանական բնույթ էր կրում: Արշակ Բ-ի պայքարը Սասանյանների դեմ ավարտվեց նրանով, որ թագավորը պարտութուն կրեց և իր կյանքն ավարտեց Անհուշ բերդի զնդանում: V դարում այդ դեպքերի մասին գրել է Փավստոս Բուզանդը, XIX դարում պատկերը վերակենդանացրել է Բաֆֆին:


368—369 թթ. Շապուհ Բ մի շարք արշավանքներ ձեռնարկեց դեպի Հայաստան: Պարսից գերակշռութունը դառնում էր ավելի ակնառու: Կայսրության քաղաքականութունն իր հերթին ավելի ու ավելի զգուշավոր երանգ էր ստանում: Երբ 369 թ. Վաղես կայսրը Հայոց գահի վրա հաստատեց Արշակ Բ-ի երիտասարդ որդի Պապին, նա սիրտ շարեց իսկույն և եթ նրան թագավորական պատիվ պարգևել: Միաժամեկ տարուց հետո, երբ Հայաստան մտան Արինթեսոս Կոմեսի զորքերը, Պապը դարձավ լիիրավ արքա: Նա պետության գլուխ կանգնեց մինչև 374 թ., երբ զոհ գնաց հռոմեական զորավարների կազմակերպած դավադրությանը:

Պապը Մեծ Հայքի այն վերջին թագավորն էր, որը ձրգտում էր ապահովել երկրին ինչ-որ անկախութիւն: Նրա ժառանգներն անզոր էին թե՛ Սասանյանների և թե՛ կայսրութիւն առջև: 375—377 թթ. պարսկահռոմեական բանակցութիւնների ժամանակ խոսք էր բացվել երկրի բաժանման մասին: Իսկ 387 թ. ստեղծվեց այն վիճակը, որը կարող էր դիտել մեր ճանապարհորդը կայսրութիւնն անցած հատվածում ու Պարսկահայաստանում: Մեծ Հայքը իրապես բաժանվեց Պարսկաստանի և Հռոմեական կայսրութիւն միջև:

Արդեն ասացինք, որ արեւմուտքում թագավորական իշխանութիւնը վերացավ 390 թ.: Արեւելքում Վուամշապուհի օրոք սկսվել էր որոշ բարեկեցութիւն շրջան, բայց այն շատ շուտ ավարտվեց: 422 թ. Հայոց գահի վրա բարձրացավ Արտաշէս Ե Արշակունին: Նախարարների մեքենայութիւնները նպաստեցին, որ նա զրկվեր իր գահից: Արշակունիների հարստութիւն գոյութիւնը դադարեց, նրանց հետ թագավորական իշխանութիւնն առհասարակ վերացավ: Անցավ ավելի քան չորսուկես դար, երբ Հայոց կաթողիկոսը առիթ ունեցավ հանդիսավոր պայմաններում օծել «Մեծ Հայքի» նոր թագավորին: Դա տեղի ունեցավ 886 թ., երբ միապետական իշխանութիւնն անցավ Աշոտ Ա Բագրատունու ձեռքը:

\* \* \*

Հայերը մուտք գործեցին V դ., անցնելով հասարակական դարգացման երկար ուղի: Հայոց հողի վրա է առաջացել, հասել հզորութիւն ու պատմական բեմից վերացել Ուրարտու պետութիւնը: Արձագանքելով մ. թ. ա. VII—VI դդ. տեղի ունեցած պատմական դեպքերին, երբ սկզբնավորվել էր հայկական պետականութիւնը, առասպելը պահպանել է առաջին հայ թագավորի (իհարկե երեւակայական) անունը՝ Պարուլը: Մոտ երեք դար անընդմեջ հայերը մնացին Արեւմեանյան պարսից աշխարհակալութիւն կազմում, իսկ IV դ. ստեղծեցին մի նոր թագավորութիւն (կամ թերևս վերականգնեցին հինը): Այս թագավորութիւնը վերաբերող կա-



քեր տեղեկութիւնները պատմական ընույթ են կրում, հայտնի է տիրող հարստութեան անունը՝ Երվանդունի: 334 թ. (Ճ. թ. ա.) Փոքր Ասիա ներխուժեցին Մակեդոնիայի 22-ամյա թագավոր Ալեքսանդրի զորքերը: Երեք տարվա ընթացքում հույները հիմնովին տապալեցին Աքեմենյանների անխորտակելի թվացող բազմազգ պետութիւնը, 328 թ. Ալեքսանդրը հասավ նույնիսկ մինչև Հնդկաստան: Աքեմենյանների փլատակների վրա կառուցվեց աշխարհակալ մի նոր պետութիւն, որը, սակայն, իր հիմնադրի մահից հետո (320) շատ շուտ բաժանվեց մի շարք առանձին տիրակալութիւնների: Աքեմենյանների տեղը ժառանգել էին Ալեքսանդրի զորավար Սելևկոսը և նրա հաջորդները: IV դ. վերջերից հայերը գտնվում են Սելևկյանների գերիշխանութեան ներքո:

190 թ. Ճ. թ. ա. Փոքր Ասիա առաջին անգամ ոտք դրին հռոմեական լեգեոնները: Մագնեսիայի ճակատամարտում նրանք ջախջախեցին Սելևկյան թագավոր Անտիոքոս Գ-ի զորքերին, իսկ հաջորդ՝ 189 թ. Անտիոքոսի զորավարներ Արտաշեսն ու Զարեհը անջատվեցին նրանից ու իրենց հայտարարեցին անկախ թագավորներ: Առաջինը տիրում էր Մեծ Հայքում, երկրորդը՝ Մոփրում: 10—20 տարի անց անջատվեց նաև Փոքր Հայքը: Այսպիսով, Եփրատ գետից արևմուտք և արևելք հայերը ձեռք բերեցին անկախութիւն: Դա այն շրջանն է, երբ մեր նախնիներն ավարտում էին իրենց ձևավորումը իբրև առանձին ժողովուրդ: Այդ ընթացքի կարևորագույն հանգամանքներից մեկը ընդհանուր լեզուն էր: Հայերը, ասում է Ստրաբոնը Արտաշեսի ու Զարեհի մասին խոսելիս, «միալեզու են»:

Ալեքսանդր Մակեդոնացու նվաճումներով Եվրոպայում և Ասիայում սկսվեց նոր՝ հելլենիզմի շրջանը: Էլլենիզմ հունական և արևելյան քաղաքակրթութեան ու մշակույթի խառնուրդ, հելլենիզմը որակապես նոր երևույթ էր մարդկութեան զարգացման ճանապարհին: Այդ շրջանում հիմնադրվում են բազմաթիվ նոր քաղաքներ, աշխուժանում է միջազգային առևտուրը, նոր թափ է ստանում քաղաքային կյանքը, վերելք են ապրում գրականութիւնը, գիտութիւնը, արվեստը:

Հայաստանը, անցնելով հելլենիզմի շրջանը, հաղորդակից ու մասնակից է դառնում նրա բոլոր նվաճումներին: Հայերը ստեղծում են անկախ պետություն, իսկ Տիգրան Բ-ի օրոք (95—55 թթ. մ. թ. ա.) այն ստանում է աշխարհակալական բընույթ: Հայերն իրենց պատմության ընթացքում առաջին և վերջին անգամ զգալիորեն լայնացնում են պետական սահմանները՝ զգալիքն սահմանների համեմատությամբ: Այդ շրջանում է, որ հիմք է դրվում Արտաշատ և Տիգրանակերտ մայրաքաղաքներին, Հայաստան է մուտք գործում հունական թատրոնը: Հելլենիստական ավանդույթներին են հետևել Գառնիի հեթանոսական տաճարի կառուցողները, այդ անման շինվածքը կերտելիս:

I դ. առաջին կեսին, հելլենիստական շրջանի վերելքից հետո, Հայաստանը ճգնաժամ է ապրում: 2—51 թթ. ընթացքում գահ են բարձրանում 11 հոգի, որոնք մեծ մասամբ Հռոմի դրածոներ էին: Սակայն մ. թ. 52 թ., երբ պարթևների թագավոր Վաղարշ Ա-ն Մեծ Հայքի թագավոր է հայտարարում իր Տրդատ եղբորը, իրադրությունը փոխվում է: Դա այն Տրդատն է, որը 66 թ. իր թագը կրկին ստացավ Հռոմի ներոն կայսրից և Արշակունյաց հարստության հայկական ճյուղի հիմնադիրը դարձավ:

Պարզ է, որ V դ. հայերը, անցնելով պատմական այդպիսի երկար ու բարդ ուղի, հասարակական զարգացման զգալի փորձ էին կուտակել: Հասարակական ու մշակութային ոլորտին պատկանող այն բոլոր քիչ թե շատ աչքի ընկնող երեւույթները, որոնք մենք դիտում ենք, V դ. բազմադարյան առաջընթացի արդյունք են:

Մինչև այժմ, հայոց անցյալի մասին խոսելիս, մենք կանգ առանք հիմնականում քաղաքական պատմության վրա: Այժմ փորձենք վերականգնել մեր ժողովրդի պատկերը որպես հասարակական մարմնի, մի օրգանիզմի, որն ունի բարդ կառուցվածք՝ իրեն հատուկ ներքին հակասություններով, որն ապրում է իր բուռն կյանքով:

Մովսես Խորենացու «Հայոց պատմության» հոչակավոր դուրսերից մեկը կրում է հետևյալ վերնագիրը՝ «Յօրինուած

Թագաւորութեանն, եւ թէ ուստի՛ զնախարարութիւնսն կար-  
գեաց, ո՛րպէս և զհարդ կենցաղավարել հրամայեաց» [Մով-  
սոր., Բ, 7]: «Կարգերը» ու «հորինվածները» տարածվում են  
տների (տվյալ դեպքում՝ առանձին ավատական տիրույթնե-  
րի), ազգերի, քաղաքների, շեների, դաստակերտների վրա,  
դրանք ընդհանուր օրենքներ են, որոնք վերաբերում են թա-  
գավորական իշխանությանը և նրան առնչվող զորքերին, զո-  
րապետներին, կողմնակալներին և նրանց նմաններին:

Այդ նորամուծութիւնները հեղինակը վերագրում է Վա-  
ղարշակ թագավորին, Պարսից Արշակ թագավորի եղբորը,  
որը և Հայոց գահի վրա է բազմեցրել առաջինին: Խորենա-  
ցու ասելով, քաջ և խոհեմ Վաղարշակը «ընդարձակ տիրեաց  
ի վերայ սահմանաց իւրոց, և կարգս կենցաղականս, որչափ  
մարթէր, սահմանեաց աշխարհիս» [Մով. Խոր., էջ 104. 12—  
13]: Վաղուց պարզված է, որ, Վաղարշակի կերպարը հա-  
վաքական բնույթ ունի, բայց նա ավելի նման է Տրդատ Ա  
Արշակունուն: Նոր հարստության հիմնադրի հետ է առնչվում  
նաև բարենորոգչական գործունեությունը, շնայած շատ բա-  
ներ, որ Խորենացին վերագրում է Վաղարշակ-Տրդատին,  
իրականում եղել են ավելի վաղ:

Մեր պատմիչի ասելով, թագավորը նախ և առաջ «օրի-  
նադրէ ... զինքն և զտուն իւր» ապա օրինական ձև է տալիս  
նախարարական տիրույթներին և այնտեղ նշանակում իշ-  
խաններ: Հետևելով Մովսես Խորենացուն և դիմելով մյուս՝  
հայ և օտար սկզբնաղբյուրներին, վերականգնենք «Մեծ  
Հայք» թագավորության կառուցվածքը և տեսնենք, թե թա-  
գավորական իշխանության տապալումից հետո ինչ էր մնացել  
դրանից:

Պետության գլուխ, հասարակական սանդուղքի ամենա-  
բարձր աստիճանի վրա կանգնած է թագավորը կամ արքան  
(տարբերությունը զուտ ոճական է), արամեական արձանա-  
գրութիւններում նա հանդես է գալիս որպես մալիք, պար-  
սիկների համար շահ է, իսկ ըստ հույների՝ βασιλεύς կամ  
βασιλεύς τῶν βασιλέων (արքայից արքա): Իբրև օրենք, նա  
Արշակունյաց տոհմից է (շնայած դինաստիական սկզբունքը

իրականում հաղթահարել է միայն II դ. վերջերին, բացառութիւններ եղել են նաև հետագայում): Իշխանութիւնը անցնում է հորից որդուն: Տեսականորեն թագավորը վայելում է անսահմանափակ իշխանութիւն. ժամանակակից տերմինով ասած՝ պետական ոչ մի մարմին իրավունք չունի սահմանադրական կարգով քննադատել նրան կամ ուղղում մտցնել նրա գործունեութեան մեջ: Ներսես Մեծ կաթողիկոսը Պապ թագավորին ամբաստանելիս հանդես է գալիս իբրև հոգևոր տեր և ոչ թե պետական պաշտոնյա: Բայց թագավորն առհասարակ հաճախակի է լինում նախարարների կամակատարը և կրքեմն զոհ գնում նրանց ոտնձգութիւններին (ինչպես դա եղավ Արտաշես Ե-ի դեպքում):

Հելլենիստական Հայաստանում թագավորական հարստութիւնը դարձել էր պաշտամունքի առարկա, ինքը՝ թագավորը, դիտվել որպես աստված: Տիգրան Գ-ի դրամների վրա եղած հունարեն արձանագրութիւնից պարզվում է, որ տիրակալը եղել է «արքայից արքա» և «աստված»: Արտավազդ Բ-ին համարել են «աստվածային», իսկ Տրդատ Ա Արշակունին Գառնիում փորագրված արձանագրութեան մեջ իրեն հայտարարում է Հելիոս (Արև-աստված):

Արշակունիների թագավորական իշխանութիւնը Հայաստանում վերանում է 428 թ. V դ. Հայաստանի՝ պարսիկներին ենթարկվող հատվածը վեր էր ածվել մարզպանութեան՝ Պարսից պետութեան կազմում գտնվող ռազմավարչական միավորի: Տեսականորեն մարզպանը դիտվել է որպես սասանյան արքայից արքայի կամքը իրականացնող բարձրաստիճան պաշտոնյա, իսկ մարզպանութեան սահմաններում ապրող բնակչութիւնը՝ նույն արքայից արքայի հպատակներ: Ստորև կտեսնենք, թե ինչպես է կիրառվել այդ սկզբունքը Հայաստանի պայմաններում, թե թագավորական իշխանութիւնը վերականգնելու ինչպիսի փորձեր են եղել:

Ըստ պետական կարգի՝ թագավորից հետո գալիս են բոլոր ինքերը: Պարսկերենում այդ բառը նշանակում է հատուկ պաշտոնյա, հայերենում դրա հոմանիշը եղել է սահմանապահ, սահմանակալ, կողմնապահ, կողմնակալ անվանումը: Բը-

դեշխները (թվով շորս) սահմանամերձ մարզերի տիրակալ-վարչապետեր էին, որոնք պիտի ապահովեին Մեծ Հայքի պետական սահմանների անվտանգութունը: Հնուց ի վեր նրանք սովորական նախարարների շարքից դուրս են եղել: Արդեն IV դ., երբ Տրդատ Գ-ն տեղեկանում է, որ հռոմեացիների կայսր Կոստանդինոսը քրիստոնեութուն է ընդունել, ուղևորվում է նրա մոտ (իր հետ վերցնելով նաև Գրիգոր Լուսավորչին): Ազաթանգեղոսը հաղորդում է [Ազաթ., § 873], որ նրա ջբախմբում առաջինները եղել են շորս բղեշխներ: Խոսքն այստեղ Նոր Շիրականի, Ասորեստանի, Արվաստանի և Մազքթաց «կողմերի» սահմանակալների մասին է: Ճանապարհորդության փաստը կասկած է առաջացնում, սակայն այն դերը, որը պատմիչը վերագրել է բղեշխներին, համապատասխանում է իրականությանը:

Բղեշխություններն աստիճանաբար անշատվեցին Մեծ Հայքից: Վերջինը Գուգարքն էր (Ազաթանգեղոսի Մազքթաց տունը), որը Մեծ Հայքի կազմից դուրս եկավ 363—387 թթ. և հետագայում մտցվեց Վրաց մարզպանության մեջ: Բայց Գուգարքի կապը հայերի հետ V դ. շատ ամուր էր: Բղեշխությունն իր դերն էր կատարել ինչպես 450—451, այնպես և 482—484 թթ. ապստամբությունների ժամանակ:

Բղեշխներից հետո գալիս են նախարարները, նրանք կազմում են իշխող դասի կորիզը: Նախարարները սկզբնապես եղել են առանձին վարչական միավորների կառավարիչներ, ապա դարձել են այդ հողերի սեփականատերերը, ձեռք բերելով լայն իրավունքներ նաև ստորին դասը կազմող բնակչության նկատմամբ: Նախարար բառի հետ մեկտեղ օգտագործվել են նաև նահապետ, իշխան, տանուտեր, տէր, ազգապետ տերմինները: Առաջին հայացքից թվում է, թե այդ տերմիններն արտահայտում են նախարարական կազմակերպության տարբեր կողմերը, նախարարները հանդես են գալիս մերթ որպես վարչապետներ, մերթ՝ սեփականատերեր, մերթ՝ տոհմապետեր: Սակայն տպավորությունը խաբուսիկ է, օգտագործված բառի երանգը հնարավոր է կոահել (այն էլ ոչ բոլոր դեպքերում), ելնելով միայն լայն կոնտեքստից:

Յուրաքանչյուր նախարար ունի իր իշխանազորը: Մեզ է հասել մի կարևոր վավերագիր, որը կոչվում է Զորանամակ: Այստեղ թվարկված է 86 տոհմանուն, ըստ որում՝ յուրաքանչյուրի դիմաց նշված է իշխանազորի մեծութունը: Պարզվում է, որ Մեծ Հայքը բաժանված է եղել 4 «դռներին»՝ Արևմտյան, Արևելյան, Հյուսիսային, Հարավային: Հայոց զորքը, ըստ Զորանամակի, կազմված է եղել 120.000 ձիավորից: Սյունյաց իշխանի տրամադրությունն տակ եղել է 19400 զորական, կաղմեացիներին՝ 13200, Գուգարքի բղշխի՝ 4500, Աղձնիքի բղշխի և Ընծային տոհմի՝ 4000, Անգեղ տան զորքի թիվը եղել է 3400, Կասպեցիք և Բզնունիները ներկայացրել են 3000 հոգի: 16 նախարար գալիս էին պատերազմի՝ ունենալով 1000 հոգի, 2-ը ունենալով 600, 5-ը՝ 500, 20-ը՝ 300, 4-ը՝ 200, 16-ը՝ 100 և 14-ը՝ 50:

Զորանամակը մեզ է հասել ուշ շրջանի ընդօրինակություն, այն չի պահպել իր նախնական ձևով: Այնուամենայնիվ, այդ վավերագիրն ընդհանուր առմամբ ճիշտ է պատկերում զինվորական ուժերի բաշխումը առանձին նախարարական տոհմերի միջև: Նախարարները վարել են նաև պետական պաշտոններ, մասնակցել արքունիքի բարդ կյանքին, ստանձնելով հատուկ պարտականություններ (և արևմրտահայերենում, և արևելահայերենում նախարար բառը օգտագործվել է, մասամբ շարունակվում է օգտագործվել իբրև ժամանակակից մինիստր բառի հոմանիշ): Այդպիսի ծառայությունը կսչվել է գործակալությին: Գործակալությունները սովորաբար ժառանգական են եղել, մեկ նախարարական տոհմի սահմաններում անցել են սերնդից-սերունդ: Մեծ Հայքի պետական կառուցվածքը նմանություններ ունի Պարթևաց պետության հետ, որը ինչ-որ չափով օրինակ է ծառայել Հայաստանի համար: Գործակալությունները հաճախ իրենց ղուգահեռներն ունեն ինչպես Արշակունյաց, այնպես էլ Սասանյան Պարսկաստանում: Փորձենք թվարկել Մեծ Հայքի գործակալությունները, բաժանելով դրանք առանձին դասերի:

Հայոց գորքի գլխավոր հրամանատարը կոչվել է սպարապետ, զորավար, ստրատիլատ: Պետական գործակալությունների շարքում սպարապետութունը կարևորագույններից մեկն է, եթե ոչ ամենից կարևորը: Սպարապետութունը սովորաբար վստահված էր Մամիկոնյաններին: IV դ. սպարապետ են եղել Արտավազդ Մամիկոնյանը, նրա որդի Վաչեն, Վաչեի որդի Արտավազդը, Արտավազդի որդի Վասակը, ապա Արտաշեսի որդի Մանվելը, Մանվելի որդիներ Արտավազդը և Համազասպը, ընդամենը 7 հոգի: Հիշենք, որ V դ. ապստամբութունների հերոսները՝ Վարդանը և Վահանը երկուսն էլ Մամիկոնյան տոհմից են, երկուսն էլ եղել են սպարապետ:

Պարսկաստանում ևս սպարապետ է եղել, կոչվել է սպահպատ:

## Բ. Տնտեսություն, ֆինանսներ

Երկրի տնտեսական բարեկեցությունը հոգում էր հազարապետը, որը և ապահովում էր տուրքերի գանձումը: Հարկատու շինականներն անմիջապես նրան էին ենթարկվում, ցուցաբերելով աշխարհատես խնամակալութիւն, հազարապետը պիտի հանդես գար որպես շինականաշէն (Փաւ. Բուզ., Դ, 2): Տիրան թագավորի օրոք հազարապետ է եղել Անձիտի իշխան Վաղարշը: Արշակ Բ-ն հազարապետութունը հանձնեց Գնունի տոհմին: Մաշտոցի երիտասարդության տարիներին հազարապետ էր Առավանը:

Հազարապետներ են եղել նաև Պարսկաստանում, բայց այնտեղ Հայաստանի համեմատությամբ պաշտոնը ավելի լայն բնույթ է կրել: Պարսից հազարապետը (աշխարհիկ վարչության ոլորտում) թագավորից հետո, ըստ երևույթին, եղել է առաջին դեմքը:

## Գ. Արդարադատութիւն

Մովսես խորենացին պնդում է, որ Վաղարշակ թագաւորը հաստատած է եղել «Իրաւարարս ի տանն արքունի, իրաւարարս և ի քաղաքս և յաւանս» [Մով. խոր., էջ 117. 18—19]: Շահապիվանի կեղեցական կանոններում, որոնք ընդունվել էին V դ. 40-ական թվականներին, հիշատակված են ազատ ու ի դատաւորաց և ավագ դատավորներ [Կան., Ա, էջ 453. 10]: Լինելով նշանակված դատավորներ, սրանք են, որ ապահովել են արդարադատութիւնը: Բացի այդ, դատական ֆունկցիաներ են ստանձնել նախարարները և ինքը՝ թագավորը: Մովսես խորենացու վկայութեամբ Վաղարշակը պահանջում էր, որ թագավորն ունենա երկու «հիշեցնող», մեկը պիտի բարի սրողումներ հուշեր, մյուսը՝ դատապարտող, ընդ որում՝ առաջինը պարտավոր էր կանխել արքային, եթե նա բարկութեան պահին անարդար վճիռ կայացներ [Մով. խոր., էջ 117]: Դժվար է ասել, որչափ է հավաստի Պատմահոր վերջին հաղորդումը:

Շատ դեպքերում ելնում էին սովորութային իրավունքից, երբ վճիռը կայացնում էին քաղաքային կամ գյուղական համայնքի ներկայացուցիչները:

Դատաւարական ֆունկցիաներ ունեին նաև հոգևորականները՝ բուրմերը, իսկ քրիստոնեական շրջանում այդ ասպարեզում գլխավոր դեմքը եպիսկոպոսն էր, դատ կարող էր վարել նաև ավելի ցածրաստիճան հոգևորականը, հույժ կարևոր դեպքերում դիմում էին անգամ կաթողիկոսին: Բայց հիմնական դերը վիճակված էր եպիսկոպոսին, որը և պիտի ապահովեր օրինապահութիւնը: Այդպիսին է եղել IV դ. առաջին կեսին ապրած Դանիել եպիսկոպոսը, որին վստահված էր «մեծ դատավարութեան» գործակալութիւնը Տարոնում [Փաւ. Բուզ., Գ, 14]:

## Գ. Թագավորի անձնավորութիւնը

Վաղարշակի նորամուծութիւնների մասին խոսելիս Մովսես խորենացին հայտնում է՝ «նախ և առաջին օրինադրէ թագաւորն զինքն և զտուն իւր, սկիզբն առնելով ի գլխոյ իւրմէ

և ի թագէ՞» [էջ 110. 1—2. հեղինակի պարզամտութիւնն այստեղ ժպիտ է առաջացնում]: Պարզվում է, որ Բագրատին (որից հորեհնացին սերում է Բագրատունի նախարարական տունը) էր հանձնարարված թագավորի գլխին թագ դնելը, այնուհետև նա կոչվել է թագադիր: Այդպիսի մի պաշտոն վկայված է նաև Արտաշես Ա (189—160) թագավորի օրոք փորագրված արամեական արձանագրութիւններից մեկում: Արշակունյաց Պարթևաստանում թագադիր են եղել Սուրեն տոհմի ներկայացուցիչները:

Լինելով թագադիր, Բագրատունիները կրել են նաև պատվավոր ասպետ մականունը կամ տիտղոսը: Եթե առաջնորդվենք հարևան Պարսկաստանի օրինակով, ապա ասպետին պիտի դիտենք որպես հեծելազորի հրամանատար:

Հայոց թագավորը բնականաբար ունեցել է թիկնապահների հատուկ ջոկատ, որի սլետը կոչվել է մաղխազ: Մաղխազության գործակալութիւնը հանձնված է եղել հորիստունիներին: Սասանյան Պարսկաստանի համապատասխան պաշտոնը կոչվել է փուշախպանաճ սաղար [Ղազ. Փարպ., էջ 128. 21]:

Մովսես հորեհնացին շարունակում է՝ «Եւ զգեցուցանողս իւր զձեռէս ի զաւակէ Քանանացւոց [Մով. հոր., էջ 110. 9]: Ձեռէք (հայց. ձեռէս) հին հայերենում նշանակել է ձեռնոց, և շատ գիտնականներ կարծում են, որ հիշատակված գործակալը (Գնթունիների տոհմից) թագավորին ձեռնոց էր հագցնում: Տարածված է, սակայն, նաև այն կարծիքը, որ այս նախադասութեան մեջ հորեհնացին հիշել է պարզապես Ձեռէս անձնանունը<sup>5</sup>: Դժբախտաբար, Ձեռէս անունը այլուր չի վկայված, մյուս պատմիչները կրկնում են հորեհնացուն՝ այս կամ այն շափով խմբագրելով տվյալ նախադասութիւնը, և հարցը մնում է առկախ:

Արժրունիները թագավորի առջև կրում էին արծվանշան գրոշները, Գնունիները հոգում էին նրա ըմպելիքների մասին, և հորեհնացին ստուգարանում է այդ տոհմանունները, կապելով առաջինը՝ առձուխ, իսկ երկրորդը՝ գինի բառի հետ [Մով. հոր., էջ 111. 1—10]:

Այս և նախորդ բաժնի մասնատելը պայմանական բնույթ է կրում՝ արքունական կյանքը այսպես թե այնպես պատվում էր թագավորի շուրջը: Գեղամի ցեղից Գառնիկի որդի Գատին Վաղարշակը կարգում է «ի վերայ որսաց արքունականաց», ոմն Գաբաղին (որից սերում է Գաբեղյան նախարարական ընտանիքը) նշանակում է «ի վերայ կուտից», այսինքն վրաստահում է արքունիքին ցորենի մատակարարումը [Մով. Խոր., էջ 110. 14—17]: Սպանդունիներն իբրև թե ղենարանների, այսինքն սպանդանոցների հոգան են տարել, իսկ Հավնունիները հղել են բազեակիրներ և բազեակալներ: Զյունականները հղել են ամառանոցների պահակները և, հավանաբար, հետևել են, որ ձյունը մնա մինչև ամառ և այդ կերպ մթերքը շփշանա [Մով. Խոր., էջ 111. 11—15]:

Ինչպես տեսնում ենք, Խորենացին մի շարք դեպքերում ձգտում է կապ գտնել տոհմանվան և գործակալության միջև, այսինքն յուրովի ստուգաբանել տոհմանունները, ուստի նրա տեղեկությունները այս մասում կարող են լինել և ոչ վավերական: Սակայն ընդհանուր պատկերը ճիշտ է նկարագրված, նման գործակալություններ հղել են ինչպես Արևելքի, այնպես էլ Արևմուտքի արքունիքներում:

Արքունի դռան պաշտպանության համար Վաղարշակը 4 դունդ է սահմանում, յուրաքանչյուրի անձնակազմը՝ 10.000 հոգի: Մովսես Խորենացին դրանց անվանում է բուն ոստան [Մով. Խոր., էջ 111. 16—18]: Պաշտպանների թիվը ահռելի է՝ 40.000, եթե այդ թիվը իրական է, ապա արքունիքի պաշտպանությունը, հավանաբար, պետք է ընդլայնված հասկանալ և ենթադրել, որ այդ ստորաբաժանումները կոչված էին ապահովել երկրի, այսպես ասած՝ ներքին անվտանգությունը:

Արքունիքի կյանքում (նաև արքունիքից դուրս) մեծ դեր է կատարվել Հայր-մարդպետը՝ ավագ սենեկապետը: Տարածված է այն կարծիքը, որ մարդպետները հղել են Մարդպետական գավառի ժառանգական տերերը, այսինքն՝ կազմակերպող են նախարարական տոհմերից մեկը: Այդ տեսակետը

սխալ է թեկուզ այն պատճառով, որ մարդպետները լինելով ներքինի, ուստի և հայրության ունակությունից զուրկ, իսկական «հայրեր» երբեք չեն եղել: Կ. Թումանովի տեսակետի համաձայն, մարդպետները, հետևելով կայուն սովորությանը, պարզապես դառնում էին Մարդպետականի անձնական սեփականատերեր, յուրացնելով զավառի ժառանգական տերերի և՛ իրավունքները, և՛ տոհմանունը<sup>6</sup>: Նման ֆունկցիաներ կատարողները ներքինի են եղել նաև Պարսից արքունիքում:

Մարդպետների հսկողության ներքո էին թագավորական գանձերն ու զգեստները, բայց թագավորը կարող էր նրանց հարկադրել կատարել նաև արտակարգ ծառայություն. IV դ. Գլակ մարդպետին նշանակում են սահմանափակ կամ սահմանափակալ: Գլակը դավաճանում է Պապ թագավորին, և վերջինս նրան դատապարտում է մահվան: Որպեսզի առավել խայտառակեն Գլակին, նրան սպանում են «թագաց» կամ «պատմուճակաց» տաճր, այն առարկաների առջև, որոնց մասին և պիտի հոգար Գլակը: Փալստոս Բուզանդը այդ դեպքի մասին հաղորդում է պերճախոս մանրամասնություններ [Փալ. Բուզ., Ե, 6]:

Բերված տեղեկությունները մենք քաղել ենք հիմնականում Մովսես Խորենացուց, որը այդ նորամուծությունների հետ կապված բոլոր նշանակությունները վերագրում է Վաղարշակ Արշակունուն: Ասացինք, որ այդ «Վաղարշակը» հավաքական դիմանկար է, որն ավելի հիշեցնում է Տրդատ Ա-ին: Հիմք կա ենթադրելու, որ Խորենացին ազդվել է նաև Արտաշես Ա-ի մասին եղած անխոս հիշատակություններից: Եվ եթե պաշտոնների բաժանումը, իրոք, կարելի է վերագրել նախ և առաջ Տրդատ Ա-ին, ապա նախարարական հողատիրությունը առաջացած պիտի լինի դեռևս Արտաշեսի շրջանում: Նրա օրոք և նրանից հետո է, որ հողը սկսվել է բաժանվել նախարարների միջև (որոնք այդ շրջանում դեռևս վարչապետեր են), տրվել քաղաքներին, տաճարներին: IV դ. կեսերին Ներսես Ա կաթողիկոսը հիմք է ունեցել հայտարարելու դժգոհ նախարարներին՝ «... ամենքեան դուք կեցեալ էք յազգէդ Արշակունոյ. ոմանք ի ձէնջ դաւառատեարք լեալք ի նոցա-

նէ, և ոմանք մեծամեծք աշխարհաց, ոմանք աւագ աւագ աւանաց, գեղից և գանձուց տեարք լեալ էք և պեսպէս դաստակերտացն» [Փաւ. Բուզ., Գ, 51]: Արտաշես Արշակունի չի եղիլ, ներսեսի խոսքն էլ ստեղծել է Փալատոսի երևակայությունը, բայց բուն ընթացքի վերջնակետը միանգամայն ճիշտ է ներկայացված<sup>7</sup>:

Արքունական գործակալների շարքում կորենացին հիշում է վերջապես Արեւիկն, որը եղիլ է սպասարար և գահարար. պատմիչը այդ Արեւից է սերում Արեղյան տոհմը [Մով. Խոր., էջ 110. 17—19]: Սպասարար բառը տվյալ հատվածում անորոշ է. արդյո՞ք նշանակել է արքունական սպասավորների: պետ և եղիլ է ապասկապետի հոմանիշը (Ագաթանգեղոսի մոտ հիշատակված է զիշխանն սպասկապետութեանն, էջ 460. 5—6)<sup>8</sup>: Ինչ վերաբերում է գահարարին, ապա դատարողական է, այն անձնավորությունը, որը հետևում էր, որպեսզի ընդունելությունների ժամանակ բոլորը գրավեն իրենց տեղերը և առհասարակ վարվեն ըստ հաստատված կարգի<sup>9</sup>: Այդ կարգի մասին հարկավոր է առանձին խոսել:

XIX դ. կեսերին թիֆլիսեցի բժիշկ Գևորգ Հախվերդյանը, որին մենք պարտական ենք Սայաթ-Նովայի ժառանգությունը կորստից փրկելու համար, հայտնաբերել էր մագաղաթյա մի թերթիկ, ինչ-որ ցուցակով: Թերթիկի ծալքի վրա եղած անցքերը ապացույց էին, որ այն ծառայել էր ձեռագիր մատյանի պահպանակ՝ գրչագիրը պահպանելու համար: Կռահելով այդ թերթիկի կարևորությունը, Գ. Հախվերդյանը այն տրամադրել էր Լազարյան ճեմարանի ականավոր ուսուցչապետ Մկրտիչ էմինին, որը և 1858 թ. հրատարակել էր այդ թերթիկը Հետագայում այդ թերթիկը (թե նրա լուսանկարը) բնկնում է վենետիկի մխիթարյան Ղևոնդ Ալիշանի ձեռքը և նա իր «Ալբարատ» աշխատությունում հրատարակում է պահպանակի վերաբրտագրությունը: Գ. Հախվերդյանի գտածը եղել է Արշակունյաց Հայաստանի Գահնամակը:

Արշակունյաց շրջանի Հայաստանում պալատական ընդունելությունների ժամանակ հրավիրված ընտրյալները բազ-

մում էին հատուկ գահերի ու բարձրի վրա: Նույն կարգը ընդունված էր նաև սասանյան արքունիքում: Բայց գահն ու բարձր, եղել են ոչ միայն կահույքի առարկա, այլև խորհրդանշան, որով որոշվում էր նախարարի տեղը հասարակական սանդուղքի վրա: Գահնամակի մեզ հասած օրինակում թվարկված են 70 անուն: Առաջինը՝ Սյունյաց տերն է, երկրորդը՝ Բագրատունին, երրորդը՝ Արժրունին և այլն: Ընդունելության ժամերին նախարարներն այդ հերթականությամբ պիտի գրավեին իրենց տեղերը, միաժամանակ ցուցադրելով իրենց հասարակական դիրքը: Այդ հերթականությունն էր, որ որոշում էր ազնվականի «պատիվը»: Պատիւ բառը առնչվում է պատիվ բայի հետ. հնում այդպես է կոչվել այն կապը, որը լինում էր ազնվականի ճակատին, գահի և բարձի նմանությամբ խորհրդանշելով նախարարի տեղը հասարակական ոլորտում<sup>10</sup>:

Ընդունելությունների ժամանակ նախարարները ըստ կարգի գրավում էին իրենց տեղերը (ճիշտ այնպես, ինչպես այժմ՝ դիվանագիտական ընդունելությունների դեպքում): Պիտի ենթադրել, որ այդ կարգը ապահովողը վերևում հիշատակված գահարար-արարողպետն էր:

Ասացինք, որ Գահնամակն էր արձանագրում նախարարի պաշտոնական տեղը հասարակական սանդուղքի վրա, իսկ այդ տեղը ժամանակ առ ժամանակ վեճի առարկա էր լինում: Հայտնի են դեպքեր, երբ տեղերը փոփոխվում էին վերից վար ու հակառակը, բայց դա լինում էր արտակարգ պայմաններում: Սկզբունքն ինքնին պահանջում էր կայունություն, համակարգը իր էությամբ պիտի լիներ անշարժ: Գահնամակի և Զորանամակի միջև նմանություն կա՝ երկուսն էլ ընդգրկում էին նախարարական տոհմերի նույն կազմը: Կա նաև էական տարբերություն: Զորանամակում նախարարները կազմում էին մեծ մասամբ առանձին դասեր՝ 1000 զինվոր ունեցողների, 300, 200, 100 և այլն, իսկ Գահնամակը բացառում է որևէ դաս. ամեն մի նախարար գրավում է առանձին, միայն իրեն հատկացված տեղը:

Մինչ այժմ մենք խոսեցինք Արշակունյաց Հայաստանի գլխավորապես պետական կառուցվածքի մասին, թվարկելով այն ինստիտուտները (թագավորական իշխանություն, սպարապետություն, հազարապետություն և այլն), որոնք գոյություն են ունեցել և գործել այդ շրջանում: Գահնամակը ևս վերջիվերջո արձանագրել է այն հարաբերությունները, որոնք նախատեսել (կամ ճանաչել է) պետական իշխանությունը: Այժմ անդրադառնանք հասարակական բնութագրին, այն հարաբերություններին, որոնք բխում էին հասարակության բուն էությունից և որոշում նրա տեսակը:

IV—V դդ. հայ հասարակությունը վաղուց ի վեր բաժանված է եղել երկու հիմնական շերտի՝ ազատների և անազատների (հոգևորականությունն իր էությունով այդ բաժանումից բնոճանրապես դուրս էր, այդ մասին ստորև): Ինչպես սլաօսիկների, այնպես և հայերի մոտ ազատ նշանակել է՝ ա) ազնատ, այսինքն ընտանիքի մի նախահորից ծագող կամ նույն իրավունքները վայելող որդեգրված անդամ. բ) ազնվական, տոհմիկ<sup>11</sup>: Այստեղից է գալիս նաև ընդհանուր իմաստը՝ ազատը նա է, ով չի ենթարկվում ուրիշի կամքին, կարող է շարժվել ու գործել ըստ իր կամքի: Ազատը որպես ազնվական հակադրվում է ռամիկ, շինական, գեղջուկ, մըշակ, ծառայ, ստրուկ և նման հասկացություններին: Հայ ազատանին՝ նախարարները, հանդես են գալիս, ինչպես ասացինք, իբրև գործակալներ, իբրև իշխանազորի պարագլուխներ, լինելով միաժամանակ հողի սեփականատերեր: Արշակունյաց Հայաստանում, ճիշտ այնպես, ինչպես առհասարակ հելլենիստական աշխարհում, հողերը եղել են գանձագին, պարզևական, հայրենիք, վերջին տեսակը ամենից տարածվածն ու սովորականն էր. դա այն հողն էր, որը ժառանգում էր նախարարի սերունդը, իբրև օրենք՝ ավագ որդին, սեպուհը: Հայ նախարարները ձգտում էին, որպեսզի հողային տիրույթները չլլատվեն, մնան նույն տոհմի սեփականություն:

Նախարարական կազմը միասնական չէ, վկայված են ավագ և կրտսեր նախարարներ: Իշխանի շուրջը եղած ազնը-

վականները հասարակական առումով ավելի ցածր աստիճանի վրա են գտնվել, ենթարկվել են այդ իշխանին, մտել իշխանագործի կազմի մեջ և կրել ազատ հատուկ անունը: Այսպիսով, ազատ են կոչվել ինպես ազնվական դասի բոլոր ներկայացուցիչները, այնպես և նրանց մի հատուկ դասը: Սկզբը նաղբյուրներում միշտ չէ, որ հնարավոր է կռահել տվյալ բանի ճիշտ երանգը: Իսկ Հայոց Կիլիկյան թագավորության պայմաններում (XI—XIV դդ.) ազատ (ինչպես նաև ճարտ) կոչվել են վասալները:

Արշակունյաց շրջանում և նրան հաջորդող 2—3 հարյուրամյակների ընթացքում նախարարական կազմը բավականին կայուն է: Արարական տիրապետության ժամանակ նախարարությունները սկսվում են քայքայվել, առանձին ազնվական տոհմեր աստիճանաբար վերանում են պատմաբանից: Բագրատունյաց շրջանում (IX—XI դդ.) որոշիչ դեր են կատարում ընդամենը մի քանի մեծատոհմիկ ազգ: Այսպես, եթե Արշակունյաց «Մեծ Հայքի» նախարարությունների թիվը պատվում էր 50-ի շուրջ, ապա Բագրատունյաց «Մեծ Հայքում» (որի սահմանները, ճիշտ է, անցյալի համեմատությամբ շատ էին կրճատվել) տնօրինում են միայն իրենք՝ Բագրատունիները, ապա՝ Պահլավունիները և Հայկազնները (հանձին, օրինակ, վեստ Սարգսի):

Թե՛ հին, և թե՛ միջնադարյան Հայաստանում հասարակական մարմնի խարխուլը կազմել է գյուղացիությունը: Հովհաննես Թումանյանի երգած գյուղացին ունեցել է բազմադարյան պատմություն: Բայց շափազանց մուգ է այդ պատմությունը: Կտրելով երկիրը հարավից դեպի հյուսիս, 401—400 թթ. մ. թ. ա. մեր հին հայրենիքով է անցել հույն գրող Քսենոփոն Աթենացին, որը ճակատագրի բերմամբ դարձել էր զորավար, բայց գրիչը վայր չէր դրել: Հունական զորամասի գլուխ կանգնած՝ Քսենոփոնը հանգրվան էր գտել մի շարք հայկական գյուղերում և գրի առել իր տպավորություններն ու դիտողությունները: Քսենոփոնը խոսում է գյուղական տան կերակրի մասին, ստեղծում է գյուղապետի տպավորիչ պատկերը, բայց համարյա ոչինչ չի ասում գյուղացու

հասարակական դիրքի մասին: Քսենոփոնից հետո սկզբնադրյունները գյուղացիության մասին մեռյալ լուսնուն են պահպանում գրեթե մեկ հազարամյակ: Այդ լուսնունը խախտվում է միայն V դ., երբ հայ գյուղացու մասին սկսում են խոսել գրողներն ու օրենսդիրները:

Արտաշես-Տիգրանի ու առաջին Արշակունիների օրոք Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման խնդրի շուրջ եղած վեճերը այսօր էլ շարունակվում են նույն կրթոտությունը: Բոլորն էլ ընդունում են, որ համատեղվել է մի քանի կացութաձև, որ եղել է ազատ և կախյալ գյուղացիություն, վերջինս շահագործվել է առանձին տերերի և պետության կողմից, դրանց կողքին եղել են նաև ստրուկներ: Բայց ինչպե՞ս են հարաբերակցվել այդ ձևերը, ո՞րն է եղել որոշիչը՝ ահա այդ հարցերի շուրջ է ընթանում վեճը:

Մեր նպատակն է ներկայացնել հայոց կյանքը V դ., ուստի անցնում ենք IV—V դդ. հայ գեղջուկին պատկերող տեղեկություններին, որոնք այնքան էլ առատ չեն, այնուամենայնիվ հնարավորություն են տալիս կազմել հավաքական մի աիպար, որը լրացվում է անուղղակի տվյալներով:

IV—V դդ. հասարակայնության բոլոր ստորին խավերը կոչվել են ռամիկ: Ռամիկ կամ անարգ են եղել նաև շինականները՝ գյուղացիության հիմնական տարրերը: Շինականները բնակվում էին գյուղերում, ունեին իրենց տունը, տնտեսությունը, նրանք մանր սեփականատերեր էին: Վճարելով պետական հարկեր, հարկի արժույթի, նրանք ընդհանրապես ազատ էին, ունեցել են անձնական իրավունքներ, կարող էին հայց ներկայացնել և դատվել եկեղեցական դատարանում: Շինականները կարող էին նոր գույք ձեռք բերել կամ կտակագրել եղածը:

Շինականներն ունեին իրենց հատուկ կազմակերպությունը՝ գյուղական համայնքը: Պետության համար դա մի հաստատություն էր, որն ապահովում էր հարկերի գանձումը, իսկ գյուղացու համար շահագործման և ոտնձգությունների դեմ պայքարելու ինչ-որ միջոց էր: Համայնքներն ունեին իրենց պետերը. Փավստոս Բուզանդը նրանց անվանում է

դատապետ Զինականաց, Մովսես Կաղանկատվացին՝ գիտապետ, իսկ Պարտավի եկեղեցական կանոններում տիտղոսը ձևավորված է գեղջաւագ: Հետաքրքիր է՝ ինչ կապակցութեամբ է հիշատակվում գեղջավագը այդ վերջին դեպքում: Պարզվում է, որ արարողութեան ժամին նա կարող է եկեղեցու դուռը փակել տալ «բռնավորին», որպեսզի ապահովի հարկերի գանձումը: Բայց ժողովի կանոնի համաձայն, այդպիսի հանցանքի համար նա ենթարկվում է նզովքի «ի կեանս եւ ի մահ» [Կան., Բ, էջ 16. 6—8]:

Լինելով համայնքի անդամներ, գյուղացիները մնում են մանր սեփականատերեր, իրենց տնտեսութեան հետ կազմում մի ամբողջություն՝ «երդումարդ»: «Մարդուն» ըստ երևույթին շէին կարող բաժանել իր «երդից», բայց «երդումարդի» ճակատագիրը կարող էր որոշել թե՛ թագավորը, թե՛ հարեան ազատը:

Շինականները խորն են զգում իրենց ազգային պատկանելութունը, նրանք գործնական մասնակցություն են ցուցաբերել V դ. հակասասանյան և՛ առաջին, և՛ երկրորդ ապստամբություններին: Դա բացատրելի է՝ որոշ առումով նրանք հասարակության նույնպիսի անդամներ են, ինչ որ ազնվականները, նրանք մասնակցում են համազգային հարցերի լուծմանը: Երբ պարսիկները Տիրան արքային կուրացրին և գերի տարան, հայերը որոշեցին օգնություն խնդրել հույներին: Հատուկ ժողով հրավիրվեց, որին մասնակցեցին «նախարարք մեծամեծք, աւագք, կուսակալք, աշխարհակալք, ազատք, զօրագլուխք, դատաւորք, պետք, իշխանք, բայց ի զօրավայրացն, այլ և ի շինականաց անգամ ռամիկ մարդկանն» [Փաւ. Բուզ., Գ, 21]:

Գյուղական համայնքի անդամները կարող են շահագործվել թե՛ պետութեան, թե՛ առանձին նախարարների կողմից: Ենթադրվում է, որ հնում ազարակների և դաստակերտների աշխատավորները եղել են ստրուկներ, այժմ նրանց տեղը զբաղում են ճորտացվող գեղջուկ-շինականները: Շինականի հասարակական դիրքը ինչ-որ առումով համեմատաբար բարձր է: Դա իր արտահայտությունն է գտել եկեղեցական

օրենսդրութեան մեջ: Եթէ մեկը առանց որեւէ պատճառի թողնում է իր կնոջը, ապա, եթէ ազատ է, տուգանքը կազմում է 300 դրամ, եթէ շինական է՝ 600: Գեղշուկը, այսպիսով, տուգանք է վճարում ընդամենը 2 անգամ ավել, քան ազատը: Բայց շինականի վիճակը առհասարակ ծանր է, և Եղիշեն «փափկացեալ ազատին» հակադրում է «վշտացած գեղշուկին» [Եղ., էջ 67]: Իր հայտնի դրվագում զոհվածների և արտրվածների կանանց մասին Եղիշեն ասում է, որ այդ փափկասուն տիկիները «ամենևին չհիշեցին մայրենի ազատութեան փափկութեան անունը, այլ իբրև այնպիսի մարդիկ, որոնք հենց սկզբից նեղութունների են համբերել շինական սովորութունների օրինակով և տանջելով են անցկացրել իրենց կյանքը, նրանցից էլ ավելի մեծ վշտերի համբերել հանձն առան» [Եղ., էջ 200. 5—9]<sup>12</sup>:

Որոշ տեղերում, երբ հանցավոր է գտնվում ազատը, նա տուգանք է վճարում, իսկ նույն օրենքը խախտող անազատը մարմնական պատժի է ենթարկվում (և ապա, եթէ շինական է, «գան յուով արբցէ», Կան., Ա, էջ 433, հմմտ. 438, 441. 2, 442): Բայց ամենից սոսկալին այն էր, որ մի ուրիշ հանցանքի համար ազատը դարձյալ տուգանքով էր գլուխը փրկում, իսկ շինականին իբրև պատիժ ուղարկում էին գողենոց (ուրկանոց), որպեսզի նա այնտեղ ցորեն աղա [Կան., Ա, էջ 437, 442, 461, 462]: Այս տեղեկութունները քաղում ենք Շահապիվանի եկեղեցական ժողովի կանոններից: Ժողովը գումարով էր 440-ական թվականներին, ուստի նրա որոշումներն արտացոլում են այն իրադրութունը, որը ստեղծվել էր վարդանանքի նախօրեին:

Շինականները, բնականաբար, ազատներից տարբերվել են: Երբ ուսումը եղել է ոչ միայն եկեղեցականների, այլև աշխարհիկ նախարարների մենաշնորհը, ապա շինականները մեծ մասամբ մնացել են անուս: Եղիշեն պատմում է, որ Պարսկաստան տարած հոգևորականները մեկ օր սեղան նըստելիս կասկածեցին իրենց բախտակից մի երեցի վրա. նա իր կյանքը անց է կացրել շինականների մեջ, հետևաբար

անտեղյակ պիտի լիներ Ս. Գրքի մխիթարանքին [ՅՂ., էջ 153. 10—12]:

Շինականների կողքին աշխատում էին նաև ստրուկներ, բայց նրանց մասին դատել շատ դժվար է: Գիտենք, որ նրանք կոչվել են ստրուկ, ծառայ, հավանաբար մշակ, հաստատապես գիտենք նաև, որ նրանք տարբեր են եղել աշխատավոր դասի մյուս հատվածներից:

Կասկած չկա, որ Հայաստանում, ճիշտ այնպես, ինչպես նաև հարևան երկրներում, կիրառվել է ստրուկի աշխատանք: Այդ մասին են վկայում սկզբնաղբյուրների թեկուզ հազվագեպ, բայց և շատ կոնկրետ տեղեկությունները: Ստրուկներն իրենց էությամբ մյուս արտադրողներից տարբերվել են և՛ իրավական, և՛ իրական առումով: Բայց երբ փորձում ենք պատկերացում կազմել ստրուկների հատկանշական կողմերի մասին, երբ ձգտում ենք կռահել, թե հատկանիշների ի՞նչ համալիր է եղել ստրուկ կոչվածը, ապա հանդիպում ենք սկզբնաղբյուրների կատարյալ լռությանը:

Ստրկատիրական կարգերի մասին հանգամանորեն խոսել են մի շարք գիտնականներ, հատկապես Հ. Մանանդյանը, Ս. Երեմյանը, Գ. Սարգսյանը<sup>13</sup>, Վերջինս պնդում է, որպեսզի Հայաստանում ստրկատիրական կարգերի հետազոտողը նախ և առաջ վերացարկվի այն պատկերացումներից, որոնք գոյոթյուն ունեն անտիկ Հունաստանի և Հռոմի ստրկության մասին: Բայց զուգահեռները արևելյան երկրների հետ նույնպես քիչ բան են տալիս, որովհետև համեմատվելիք առարկան՝ Հայաստանում շահագործվող ստրուկը մեզ հայտնի է (այն էլ ոչ միշտ) միայն իր կոչական անունով: Մասնագիտական գրականության մեջ նույն օրինակն է վկայաբերվում: Իշխան Ներսեհ Կամսարականը, պատերազմելով բահլուճիների դեմ, շատ գերիներ է վերցնում, ապա նրանց բաժանում պարսից թագավորի, արքայորդու, դարիկպետի, սպարապետի միջև: Վերադառնալով հայրենիք, գերիների մնացած մասը տալիս է իր Հրահատ և Սահակ եղբայրներին, հայ ազատներին, Վաղարշապատի մայր եկեղեցուն, մյուսներին պահում իր մոտ<sup>14</sup>: Օրինակը որքան պատ-

կերավոր է, նույնքան և անորոշ. ինչպե՞ս են օգտագործվել այդ գերի վերցված և ստրկացված բահլուճիները, ինչպիսի՞ն է նրանց հասարակական վիճակը:

Խոսելով արտադրողների մասին, մենք մինչև հիմա փորձել ենք պարզել նրանց իրավական դիրքը, մոտեցել նրանց արտադրական հարաբերությունների տեսանկյունից: Իսկ ի՞նչ են արել նրանք իրապես, ինչ՞ով են զբաղվել, ապահովելով և՛ իրենց, և՛ ողջ հասարակության գոյությունը:

Հայաստանը երկրագործների և անասնապահների երկիր էր: Չկար մի գավառ, որտեղ զբաղվեին գյուղատնտեսության միայն առաջին կամ միայն երկրորդ ճյուղով, շնայած բնական պայմանների թելադրանքով առաջնությունը տրվում էր կա՛մ երկրագործությանը, կա՛մ անասնապահությանը: Երկու դեպքում էլ հայ գյուղացին հետևել է անհիշելի ժամանակներից եկող փորձին: Ամենուրեք ցորեն են աճեցրել, իսկ լեռնային վայրերում՝ նաև աշորա: Կարմիր բլուրի պեղումներից պարզվեց, որ դեռևս ուրարտական շրջանում այստեղ աճեցրել են տարբեր տեսակի ցորեն, գարի, կորեկ: Ոռոգումը արհեստական է եղել, և մինչև այժմ էլ կան ջրանցքներ, որոնք մնացել ու գործում են հնագույն ժամանակներից: Հողը և ջուրը դիտվել են համատեղ (տե՛ս, օրինակ Կան., Բ, էջ 207. 3, 11, 209. 9 ևն), մեկն առանց մյուսի արժեզրկվում է: Հողը հերկել են գութանով: Ցորենը աղացել են երկանքով, ջրաղաց դեռևս չի եղել: Ցորենի ալյուրից լավաշ են թխել նույն՝ այսօրվա թոնրում:

Այգիներում աճել է տանձ, խնձոր, սալոր, ծիրան, կեռաս, նուռ, ընկույզ, նուշ, սերկևիլ, թուզ: Այդ պտուղները մեծ մասամբ հիշատակված են Անանիա Շիրակացու «Աշխարհացոյցում»<sup>15</sup>: Վանա լճի շրջակայքը հայտնի է իր սեխով, ձմերուկի սերմ է գտնվել Կարմիր բլուրում:

Հատուկ տեղ է գրավել խաղողագործությունը (այգի բառը նշանակել է գերազանցապես խաղողի այգի), «Աշխարհացոյցից» գիտենք, որ իր այգիներով հռչակված է եղել Գողթնը: Գինեգործությունը ևս շատ հին պատմություն ունի, Կարմիր բլուրի ուրարտական շրջանի բերդում պեղել են մի

քանի պահոց, տասնյակ կիսաթաղ կարասներով: Գինին վա-  
յելում էին հեթանոսական տոնակատարությունների ժամա-  
նակ, այն անփոխարինելի է եղել նաև քրիստոնյա եկեղեցի-  
ներում, հաղորդության խորհրդին:

Գետերի հովիտներում, նաև սարահարթերում բանջարե-  
զեն են աճեցրել, դրանք ճաշակելով թարմ վիճակում և պա-  
շար պահելով նաև ձմռան համար: Սակայն այսօրվա հա-  
մեմատությամբ տեսակների ցուցակը համեստ է, բացակա-  
յում են լուխիլը, բադրիջանը, պղպիղը, կարտոֆիլը, սրանք  
սկսել են տարածվել նոր շրջանում: Իսկ համեմունքը եղել  
է թերևս ավելի տարածված, քան այսօր:

Հնագույն ժամանակներից ի վեր ուտելիքների շարքում  
մեծ տեղ է գրավել ձեթը: Զիթհանների միջոցով քնշութից  
մզած ձեթը մնում էր մարդկանց, իսկ քուսպը (որից այսօր  
հալվա են պատրաստում) տալիս էին անասուններին:

Խոշոր եղջերավոր անասունները՝ եզներ ու գոմեշներ, նաև  
ձի, էշ, ոչխար, այծ, խոզ, պահել են ստորին էնեոլիթյան  
շրջանից, դրանց ոսկորները հայտնաբերվել են Գառնիի պե-  
ղումներից<sup>16</sup>: Անասուն են պահել մսի, կաթի, բրդի, կաշվի  
համար, իսկ թրիքից աթար են պատրաստել (անտառասա-  
կավության պայմաններում վառելիքի հարցը բարդ էր): Գե-  
րակշռում էր մանր եղջերավոր անասունը. ամռանը ոչխարը  
քշում էին ալպյան մարգագետինները (դրանք մենք այժմ,  
օգտագործելով թուրքերենից փոխառյալ բառ, յայլա կամ  
յայլաղ ենք կոչում): Հենց այստեղ էլ խնոցիներում կարագ  
էին հարում, պանիր պատրաստում: Տեսնում ենք, որ այս-  
օրվա հովվի կյանքը ձևավորվել է դեռևս հին Հայաստանում:  
Քսենոփոնի ասելով, հայկական սեղանի վրա (դեռևս մ. թ.  
ա. 401—400 թթ. ձմեռը) եղել է ոչխարի, այծի, խոզի, երըն-  
ջի միս, իսկ հացը թխել են ցորենի ու գարու ալյուրից:

Հայաստանում հատուկ ճյուղ է կազմել ձիաբուծությու-  
նը: Դրա պատմությունը ևս հին է: Հայերը ձի էին ուղարկում  
և՛ Մարաստանի, և՛ Աքեմենյան Պարսկաստանի տիրակալնե-  
րին: Արաբական շրջանում ձիաբուծության կենտրոնը գտնը-  
վել է Ուրմիա լճի մոտերքում, հենց այստեղ էլ վարժեցնում

էին ձիերին: Սեպագիր արձանագրութիւններից գիտենք, որ Ուրարտուի Մենուս թագավորը Արծիբի (հմմտ. հին հայերեն արծուի, ժամանակակից արծիվ բառի հետ) անուն կրող ձիով 11,2 մ երկարութամբ թռիչք է կատարել: Զիարուծութիւնը մեծ դեր է կատարել հասարակութեան կյանքում: Հայոց զորքը եղել է գերազանցապես հեծելազոր: Պարսկաստանի արևելքում կամ հարևան Աղվանքում հեծյալներն էին մասնակցում սասանյան թագավորների ռազմարշավներին և նույն հեծյալները, երբ ժամանակը հնարավորութիւն էր տալիս, փորձում էին տապալել այդ Սասանյանների տիրապետութիւնը մայրենի երկրում:

Եթե մեր պատմութիւնը վերաբերեր Արտաշես Ա-ի կամ Տիգրան Բ-ի ժամանակներին, մենք շարադրանքի մեծ մասը կնվիրեինք, հավանաբար, ոչ թե գլուղական, այլ քաղաքային կյանքին: Իրոք, դա մի շրջան էր, երբ քաղաքաշինութիւնը դարձել էր պատմական զարգացման ամենից էական կողմերից մեկը: Հայաստանի շուրջ 10 քաղաքները բուռն կյանքով էին ապրում: Գտնվելով միջազգային տարանցիկ առևտրի ճանապարհների վրա, դրանք կապված էին թե՛ արեւելքի, թե՛ արևմուտքի հետ: Արհեստագործների թիվը այդ քաղաքներում հասնում էր տասնյակ հազարների, այստեղ առաջանում էր քաղաքին հատուկ տարատեսակ մշակույթ: Քաղաքային համայնքն իր մի շարք գծերով մոտենում էր հելլենիստական պոլիսի կազմակերպությանը: Գլուղը ենթարկվում էր քաղաքին, քաղաքացիք ավելի բարձր էին դասված, քան շինականները: Այդ կարգը արտահայտվել է վաղարշակ թագավորին վերագրված մի հրովարտակում: Ըստ վաղարշակի հրամանի՝ քաղաքացիների հարգանքն ու պատիվը պիտի ավելի բարձր լիներ, քան գեղջուկներինը: Գեղջուկները պիտի իշխանների պես պատվեին քաղաքացիներին, իսկ վերջիններս պարտավոր էին եղբայրաբար վերաբերվել շինականներին ու չպարծենալ նրանց մոտ [Մով. Խոր., էջ 117. 19—118. 4]:

Բայց IV—V դդ. վիճակն այլ է: IV դ. 60-ական թվականների պատերազմները հրի ու սրի մատնեցին Հայաս-

տանը, կործանիչ հարված հասցրին քաղաքային կյանքին: Մյուս կողմից երկիրը ավելի ու ավելի ֆեոդալական բնույթ էր ստանում, կյանքը գնալով դառնում էր գյուղական: Տնտեսության մեջ հողագործությունը և առհասարակ գյուղատնտեսությունն էր գերակշռում: Քաղաքները պահպանել էին իրենց վարչական դերը, բայց դրանք այլևս առևտրի ու արհեստի կենտրոններ չէին, ինչպես դա եղել է նախորդ հելլենիստական շրջանում: Տիգրանակերտի և Արտաշատի փառքն անցել էր, իսկ Անին դեռ նոր պիտի մտներ իր փառքի ճամփան:

Այժմ մի քանի խոսք հայոց եկեղեցու մասին:

Քրիստոնեական քարոզը Հայաստանում սկսվել էր շատ ավելի առաջ, քան նոր ուսմունքը կճանաչվեր իբրև պետական կրոն: Ճիշտ է, Քաղեոս և Բարդուղիմեոս առաքյալների գործունեությունը Հայաստանում պետք է դիտել որպես առասպել: Հայտնի է, սակայն, որ արդեն I դ. վերջերին քրիստոնեությունը հասել էր Կապադովկիա և Պոնտոս, որոնք անմիջապես հարևան են եղել Հայաստանին: II դարում քրիստոնյաներ հայտնի են Եդեսիա և Մելիտենե քաղաքներում (այժմյան Ուրֆա և Մալաթիա), իսկ շուրջ 200 թ. հռչակավոր շատագույժ Տերտուլիանոսը (որին թյուրիմացությունք վերագրել են «հավատում եմ, որովհետև անհեթեթ է» թեև վոր արտահայտությունը) քրիստոնեության օջախների մասին խոսելիս, հիշատակում է նաև Հայաստանը: 260 թ. Աղեքսանդրիա քաղաքի եպիսկոպոսը նամակագրության մեջ էր հայ Մեհրուժան եպիսկոպոսի հետ: Ենթադրվում է, որ այդ Մեհրուժանը պատկանելիս է եղել Արծրունյաց տոհմին, իսկ նրա նստավայրը տեղադրում են Մոփքում՝ Եփրատի վերին հոսանքում: 312 թ. քրիստոնյա հայերը զոհ են դառնում Մաքսիմինոս կայսեր ձեռնարկած հալածանքներին: Կայսրը ներանց մղում է հեթանոսական զոհաբերությունների, դարձնելով բարեկամներին՝ թշնամի, իսկ դաշնակիցներին՝ հակառակորդ<sup>17</sup>:

314 թ. (և ոչ թե 301 կամ 303, ինչպես սխալմամբ նըշվում է հաճախ) քրիստոնեությունը Մեծ Հայքում ճանաչվեց

պետական կրոն: Այդ մեծ շրջադարձը կապված է Գրիգոր Լուսավորչի գործունեության հետ: Տապալված հեթանոսական սրբարանների փլատակների վրա, սեփականելով կործանված մեհյանների հարստությունը, հաստատվում է քրիստոնյա եկեղեցու կառուցվածքը: Եկեղեցին ձեռք է բերում հսկայական քաղաքական և տնտեսական ուժ: Նրա բարոյագիտական ազդեցությունը ավելի ու ավելի է մեծանում:

Քրիստոնեությունը Հայաստան է թափանցում երկու հիմնական օջախներից: Առաջինը Կապադովկիայի մայրաքաղաք Կեսարիան է: Քահանայապետական տեսանկյունից հայոց եկեղեցին նրան է ենթարկվում: Մյուս օջախը Եղեսիան է: Ի տարբերություն հունախոս Կեսարիայի՝ Եղեսիան արամեախոս է, այստեղ տարածված ասորերեն լեզուն արամերենի տարբերակներից մեկն է: Ասորերենով ստեղծվել է ճոխ գրականություն, դրա նմուշներից շատերը թարգմանվել են հայերեն: Հունական և ասորեական ազդեցությունները մրցակցում են Հայաստանում, ընդ որում՝ այդ մրցակցությունը աճում է ոչ միայն մշակութային, այլև քաղաքական հողի վրա:

Քրիստոնեական եկեղեցին, իր ստեղծման օրից, անընդհատ խմորման մեջ է եղել: Տասնյակ ու հարյուրավոր առանձին հոսանքներ ձգտել են հաստատվել ու միաժամանակ խեղդել մրցակիցներին: Տեղական բազմաթիվ ժողովներից բացի գումարվել են «Տիեզերական» ժողովներ (325, 381, 431, 451 թթ.), որոնց մասնակցել է ողջ քրիստոնեական աշխարհը: Այստեղ դրվում ու լուծվում են (կամ թվում է, թե լուծվում են) դավանաբանական կարևոր հարցեր: Առաջին 3 ժողովը ընդունում է նաև հայոց եկեղեցին: Այդ շրջանում նա ամբողջությամբ մնում էր տիեզերական եկեղեցու գրկում: Կեսարիայում են ձեռնադրվել Գրիգոր Լուսավորիչը, Ներսես Մեծը, Սահակ Պարթևը:

Հայոց եկեղեցին արևելյան մյուս եկեղեցիների նման ձգտել է ինքնուրույնություն ձեռք բերել: Հետագայում դրան նպաստել է նաև այն հանգամանքը, որ հայերը մեծամասնությամբ գտնվել են Պարսկաստանի գերիշխանության տակ,

ուստի Կոստանդնուպոլսի «օրթոդոքս» եկեղեցու հետ սերտ կապը ինքնին կասկած է առաջացրել: IV դ. վերջերին հայ եկեղեցին փորձել է ձեռք բերել անկախություն, բայց այդ փորձը ապարդյուն է անցել: 451 թ. Քաղկեդոն քաղաքում գումարվեց IV Տիեզերական ժողովը: Այստեղ մեկ անգամ ևս արժարժվեց քրիստոսաբանության ամենից կարևոր հարցերից մեկը՝ Քրիստոսի բնության հարցը: Քանի բնություն է ունեցել մարմին ստացած Բանը՝ մեկ թե երկու, միայն աստվածային թե՛ և՛ աստվածային, և՛ մարդկային: Հաղթանակեց երկրորդ տեսակետը, և որոշումը ցնցում առաջացրեց ողջ Արևելքում: Արևելյան եկեղեցիները կտրականապես մերժեցին Քաղկեդոնի բանաձևը, որը նրանց պատկերացմամբ հակառակ է եղել արևելքի դավանաբանական ավանդույթին: Հայերը այդ պահին զբաղված էին իրենց ներքին հարցերով՝ վարդանանց ապստամբությունը շարունակվում էր: Հայտնի չէ, հայոց եկեղեցին ժողովին մասնակցելու հրավեր ստացել էր, թե ոչ: Ամենայն հավանականությամբ, հայ եկեղեցին ժողովի նկատմամբ շեղոք դիրք էր գրավել: 482 թ. Զենոն կայսրը փորձում է վերացնել պառակտումը, խաղաղություն մտցնել քաղկեդոնականների և հակաքաղկեդոնականների միջև, հրապարակելով իր Հենոտիկոն («միասնական») հրովարտակը: Այդ գրությունը ճանաչեց նաև հայ եկեղեցին և 505/6 թթ. այդ գրության ոգով արտահայտվեց Քաղկեդոնի ժողովի դեմ: Սակայն իսկական մերժումը տեղի ունեցավ 554 կամ 555 թ., Դվինում գումարված եկեղեցական ժողովում<sup>18</sup>:

Բայց V դ. սկզբներին հայ եկեղեցին տիեզերական եկեղեցու հավատարիմն էր, և նրա հոգսերը դեռևս բոլորովին այլ էին: Մեկ դար անգամ չի անցել քրիստոնեությունից պաշտոնական ճանաչումից, երկրում մնացել են բազմաթիվ հեթանոսներ, և նրանց հարկավոր է, ինչ գնով էլ լինի, ճիշտ հավատքի բերել: Հերձվածները տարածվել են արևելքով մեկ, հերձվածողական գաղափարները արմատ են ձգել նաև Հայաստանում: Բայց անգամ նրանք, ովքեր հակված են ընդունել նոր ուսմունքը կամ արդեն ընդունել են՝ նրա խորքը չեն թափանցում, որովհետև գիրն ու գրականությունը ստեղծ-

վել են միայն V դ. սկզբին, և գրագիտության սահմանները ավելի քան նեղ են, իսկ առանց գրագիտության դժվար է իսկապես ընկալել Քրիստոսի ավանդը: Եվ հայոց եկեղեցին իրեն մատչելի բոլոր միջոցներով պայքարում է այդ վտանգավոր երևույթի դեմ:

Հայաստանում ձևավորվել է եկեղեցական քահանայապետություն, աճում է եպիսկոպոսների թիվը (ներառյալ նստած են քաղաքներում կամ վարչական խոշոր այլ կենտրոններում), գլուղում գործերը տնօրինում են «գլուղական եպիսկոպոսները»՝ քորեպիսկոպոսները: Հոգևոր տերերի ձեռքն է, ինչպես ասացինք, արդարադատությունը: Եկեղեցին խոշոր կալվածատեր է, աշխարհականներից զանձվող տուրքերը (տասանորդ, պտուղ ևն) իրենց հերթին նպաստում են եկեղեցու տնտեսական զորեղացմանը:

Եկեղեցին ունի քաղաքական հսկայական կշիռ, բայց նրա և թագավորական իշխանության միջև խաղաղությունն ու համերաշխությունը չկա: Թշնամությունը առաջացնում է բախումներ, որոնք հանգեցնում են ողբերգական արդյունքների:

V դ. ազատագրական շարժումներին եկեղեցին մասնակցում է առավել գործնական եղանակով, հոգևորականները հերոսության օրինակներ են ցուցաբերում: Ի տարբերություն նախարարների, որոնք հեռու են միասնական լինելուց, հայոց եկեղեցին հավատարիմ է «ուխտին» և իր օրինակով ոգեկոչում է տատանվողներին:

\* \* \*

Այսպիսով, մենք փորձեցինք ուրվագծել Հայաստանի վիճակը Արշակունյաց թագավորության վերացման նախօրեին, միաժամանակ էքսկուրսիներ կատարելով դեպի անցյալը: Արդեն V դ. համար «անցյալը» շատ հարուստ է եղել բոլոր առումներով: Հայերը թևակոխել են V դ., անցած լինելով պատմական զարգացման բարդ, ողբերգական և փառավոր ուղի, ունենալով վիթխարի պատմական փորձ: Մովսես Խորենացուն է պատկանում թևավոր դարձած խոսքը՝ «Զի թէ-

պէտ և հմք ածու փոքր, և թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ,  
և զօրութեամբ տկար, և ընդ այլով յոլով անգամ նուաճեալ  
թագաւորութեամբ՝ սակայն բազում գործք արութեան գտա-  
նին գործեալ և ի մերում աշխարհիս, և արժանի գրոյ յիշա-  
տակի ...» [Մով. Խոր., էջ 10. 15—19]: Հայ ազգը՝ մի ածու  
է (մարգ, տնկարան), բայց որքա՛ն հարուստ է ու բովանդա-  
կալից նրա պատմութիւնը: Պատմահայրը մի նախադասու-  
թյամբ կարողացել է բնութագրել ժողովրդի պատմական ողջ  
ուղին: Շարունակելով իր միտքը, Մովսես Խորենացին կըշ-  
տամբում է Հայոց առաջին թագավորներին, որովհետև նրան-  
ցից ոչ մեկը «պէտ յանձին կալաւ» (այսինքն՝ հոգ շտարով)  
մատենագրել անցյալում տեղի ունեցած արիութեան գործերը:  
V դարին, որի պատմութեանն է նվիրված այս գիրքը, այդ  
նախատինքը բարեբախտաբար չի վերաբերում: Այդ շրջանի  
արիութեան գործերը արձանագրվել են մի շարք ճշմարտա-  
պատում երկերում: Հետևելով նրանց՝ հաջորդ գլուխներում  
մենք կշարադրենք դարաշրջանի մշակութային կյանքը և քա-  
ղաքական անցքերը:

## «ՄԱՆԱԶԵԼ ԶԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԶԽՐԱՏ...»

Նախորդ գլխում մենք խոսեցինք Հին Հայաստանի հասարակարգի, պետական կառուցվածքի, տնտեսության մասին, փորձեցինք ցույց տալ, թե ինչպիսի բարձր աստիճանի էր հասել հայկական քաղաքականությունը բառիս լայն իմաստով: Առաջացել էր հատուկ հասարակական հոգեբանություն, աճում էին մարդու պահանջները, զարգանում ու հարստանում պատկերացումներն աշխարհի մասին: Շարունակելով մեր ուղին, մենք մտնում ենք արդեն մշակույթի ոլորտը:

Հնում հոգևոր կյանքի ընթացքը բնորոշում ու պայմանավորում էին ամենից առաջ հավատալիքները, պաշտամունքը: Երբ քննության ենք առնում հայոց հին դիցարանը, այստեղ գտնում ենք նույն անուններն, ինչ և պարսիկների, ասորեստանցիների, բաբելացիների մոտ: Առաջին հայացքից կարող է թվալ, որ հայերը երկրպագել են նույն աստվածներին, ինչ աստվածների որ երկրպագել են նրանց հարևան ժողովուրդները: Իրական պատկերը, սակայն, այլ է: Հակառակ անունների նույնությանը, հայ աստվածների էական հատկանիշները շեն համընկնում, ասենք, պարսից աստվածների ատրիբուտներին: Հայտնի է, որ Պարսկաստանում իշխող զրադաշտության հիմքը կազմում էր շար ու բարի սկզբունքների պայքարը: Չարի աստված Ահրիմանը մշտնջենական կռվի մեջ է եղել բարի Ահուրամազդայի դեմ: Մինչդեռ հայոց Ահուրամազդան՝ Արամազդը, շուեի շար հակառակորդ, հայոց դիցարանում չի եղել որևէ Ահրիման\*:

\* Ճիշտ է, հայերը ևս ճանաչել են Ահրիմանի ծառաներ դեերին:

Արամազդը եղել է Հայոց զլխավոր աստվածը: Նա երկրնքի ու երկրի մեծ և արի արարիչն է: Նրանից են գալիս լիությունն ու պարարտությունը: Արամազդի տաճարը եղել է Անի-Կամախում (Արևմտյան Հայաստան), այտեղ էին գտնուվում հայոց թագավորների դամբարանները:

Արամազդի դուստրն է Անահիտը: V դ. պատմիչ Ագաթանգեղոսը գրում է, որ Անահիտը եղել է «մեր ազգի փառքն ու կեցուցիչը ... ամենայն առաքինությունների մայրը, մարդկային ողջ բնության բարերարը», «նրանով է մնում ու կենդանություն առնում մեր Հայոց երկիրը» [Ագաթ., էջ 31, 38], իսկ հույն աշխարհագիր Ստրաբոնից տեղեկանում ենք, որ դիցուհու պաշտամունքը (համենայն դեպս Հայաստանի արևմուտքում) ստացած է եղել սրբազան պոռնկության ձև: Ստրաբոնը գտնում է, որ մարերը և հայերը պաշտել են նույն աստվածներին, ինչ որ պարսիկները: «Անահիտի պաշտամունքը Հայոց մեջ գերազանցում է բոլորից. զանազան տեղեր նրա անվան տաճարներ են կանգնեցրած և հատկապես Եկեղիբում: Նշանակել են այդ տեղերում ստրուկներ և ստրուկուհիներ: Այս բոլորը զարմանալի չէ, այլ այն, որ ժողովրդի ամենանշանավոր մարդիկ իրենց կույս աղջիկներին նվիրաբերում են աստվածուհուն և նրանք ըստ Օրինի երկար ժամանակ պոռնկում են աստվածուհու համար, որից հետո ամուսնանում են, և ոչ ոք անվայել չի համարում կենակցել նրանց հետ: Գրեթե նույնը պատմում է Հերոդոտոսը Լյուդիացոց մասին»<sup>1</sup>:

Սրբազան պոռնկությունը հատուկ է մի շարք կրոններին, Անահիտի պաշտման այդ եղանակը բացառություն չի եղել: Անահիտի տաճարները ցրված են եղել երկրով մեկ, զլխավորները՝ Եկեղյաց գավառի Երեզ ավանում (այժմ Երզնկա), ապա՝ Արտաշատում և Տարոնի Աշտիշատում:

Պարսկական դիցարանում ծնունդ առած Միհրը մի շարք ժողովուրդների մոտ ընդունված է եղել որպես աստվածություն: Նրան պաշտել են անգամ հին Հռոմում (հռոմեական Միհրը, սակայն, շատ էր հեռացել իր պարսկական նախատիպից): Արամազդի որդի Միհրը եղել է կրակի աստված:

Ատրուշաններում հանուն Միհրի անշիշ կրակ էին վառում: Միհրի հետ կապված էր Արևի և Լուսնի պաշտամունքը:

Հայերը պաշտել են Արամազդի դուստր Նանեին, ապա՝ Տիր կամ Տյուր աստծուն: Տիրը առնչություն է ունեցել գիտելիքների հետ, մարդկանց հրազներ ներշնչել: Երազամույն կոչված վայրում քրմերը մեկնել են այդ հրազները: Հայոց դիցարանում հատուկ տեղ է գրավել Նոր տարվա աստվածը՝ Ամանորը: Ագաթանգեղոսը նրա կողքին հիշում է նաև օթևան տվող և առհասարակ օգնության հասնող Վանատուր աստծուն: Ամանորին և Վանատուրին հաճախ նույնացնում են, բայց դա սխալ է:

Անմահ աստվածների և մահկանացու մարդկանց միջև տեղադրվել են դյուցազունները, սրանց մեջ աչքի է ընկնում հատկապես Վահագնը: Վահագնը պայքարում էր շար վիշապների դեմ, այստեղից է նրա Վիշապաքաղ մականունը: Վահագնը հանդես է գալիս որպես հնդիկների Ինդրա, պարսիկների Վրրտրազնա աստվածությունների հայկական տարբերակը: Բայց շատ է հեռացել նա իր նախատիպերից:

Աստվածներին առատ նվիրաբերություններ են անում: Ագաթանգեղոսը պատմում է, որ Սասանյան արքայից արքա Արտաշիր Պապականին հաղթելուց հետո Հայոց թագավոր Խոսրովը դեսպաններ է ուղարկում, որպեսզի 7 մեհյաններում հատուկ երկրպագեն տեղի աստվածների պատկերներին: Խոսրովը աստվածներին մեծարում է սպիտակ ցուլերով ու սպիտակ նոխազներով, սպիտակ ձիերով ու սպիտակ ջորիներով, ոսկի պաակներով ու արծաթե զոհարաններով, թանկարժեք զարդերով, մետաքսներով, հագուստներով [Ագաթ., էջ 18—19]: Խոսրովը նվիրատվություններով մեծարում էր միաժամանակ իր նախնիներին, վերջիններիս պաշտամունքը ևս տարածված է եղել Հայաստանում:

Պաշտամունքից, հավատալիքներից անանջատ է առասպելաբանությունը: Հայոց առասպելաբանաստեղծական մարգարիտներից է Վահագնի ծննդյանը նվիրված երգը, որը դեռևս Մովսես Խորենացու օրոք ասում էին Գողթան գավառում:

«Երկնում էր երկինքը, երկնում էր երկիրը  
Երկնում էր և ծովը ծիրանի,  
Երկունքը բռնել էր ծովում  
Նաև կարմրիկ եղեգնիկին:  
Եղեգնի փողով ծուխ էր ելնում,  
Եղեգնի փողով բոց էր ելնում  
Եվ բոցից դուրս էր վազում  
Մի խարաչաշ պատանեկիկ:  
Նա հուր մազեր ուներ,  
Բոց մորուք ուներ,  
Եվ աշիկներն էին արեգակներ»<sup>2</sup>:

Գիտնականները կրկին ու կրկին դիմում են մեզ հասած  
տողերին, ձգտում են վերականգնել այն դժբերք, որոնք կա-  
պում են «Վահագնի ծնունդը» ընդհանուր հնդեվրոպական  
պոեզիային<sup>3</sup>:

Երբ հարցին մոտենում ենք այսօրվա տեսանկյունից,  
նկատում ենք, որ առասպելը հեքիաթային բնույթ ունի: Բայց  
հնում մարդիկ տարբերել են հեքիաթն ու առասպելը՝ հեքիա-  
թը միշտ հնարովի է, իսկ առասպելն իբր արատահայտում է  
իրականությունը: Առասպելաբանելով փորձում էին բացատ-  
րել, մեկնել պատմական անցյալը: Այդպիսի առասպելներ  
ստեղծել են նաև մեր նախնիները: Խոսքը ամենից առաջ Հայկ  
Նահապետի ու Բելի առասպելին է վերաբերում: Երբ Բելը  
փորձում է տիրանալ բարելացվոց ողջ աշխարհին, Հայկը ըմ-  
բոստանում է Բելի դեմ և իր ամբողջ գերդաստանով (որդի-  
ներ, դուստրեր, թոռներ, զորավոր մարդիկ, ընտանիքում  
ծնված ծառաներ և եկվորներ՝ ընդամենը 300 հոգի) հեռա-  
նում է Հայաստան: Այստեղ է գալիս նաև Բելը. երկու հսկա-  
ների միջև մենամարտ է տեղի ունենում: Հաղթում է Հայկը  
և ապահովում Հայոց երկրի անկախությունը: «Իսկ աշխարհս  
մեր կոշի յանուն նախնւոյն մերոյ Հայկայ՝ Հայք», գրում է  
Մովսես Խորենացին [Մով. Խոր. էջ 37. 10]: Ավելի մանրա-  
մասն՝ ստորև:

Հայ մշակույթն իր զարգացման ընթացքում կրել է տարբեր ազդեցություններ, շփվել է հարևան ժողովուրդների մշակույթների հետ, բաղադրիչ հատված դարձել ավելի ծավալուն մշակույթի, սակայն միաժամանակ մնալով բնածին ու ինքնատիպ: Աստվածային և դուցազնական այն կերպարները, որոնց մասին խոսք եղավ վերևում, ամբողջությամբ պատկանում են արևելքին, կազմում են արևելքում առաջացած բարդ ու բազմազան դիցարանի մասը: Բայց ահա Փոքր Ասիա են ներխուժում Աղեքսանդր Մակեդոնացու զորքերը: Կարճ ժամանակում կեսաշխարհի քաղաքական քարտեզը հիմնովին փոխվում է՝ Արևելքը ենթարկվում է երիտասարդ զորավարին, իսկ Աղեքսանդրի մահվանից հետո՝ հնազանդվում նրա ժառանգորդներին, դիագոբոսներին: Գոյանում է մի բոլորովին նոր քաղաքակրթություն՝ հելլենիստական, որը ոչ արևելյան էր, ո՛չ էլ արևմտյան, այլ այդ երկուսի օրգանական խառնուրդը: Այդ հուժկու ալիքը հասնում է նաև Հայոց երկիրը, որը ժառանգում է հելլենիստական պետականության և մշակույթի էական հատկանիշները: Այստեղ կառուցվում են նոր տիպի քաղաքներ՝ թատրոններով, հայ թագավորները հունալեզու արձանագրություններ են թողնում ու դրամներ կտրում: Գառնիում կառուցված փոքրիկ սյունազարդ տաճարը հարևանն է այն տաճարներին, որոնք տարածված են եղել Փոքր Ասիայով մեկ: Հայոց թագավոր Արտավազդը (55—34) հունարեն ողբերգություններ, ճառեր ու պատմություններ էր գրում: Այդ շրջանում Հայաստան են մուտք գործում հունական աստվածությունները, ձուլվում տեղականների հետ, և ահա Արամազդը նույնացվում է Դիոսի (Զևսի) հետ, Անահիտը՝ Արտեմիսի, Միհրը և Բարշամինը՝ Հեփեստոսի, Վահագնը՝ Հերակլեսի, Ասողիկը՝ Ափրոդիտեի, Խանեն՝ Աֆենասի, Տիրը՝ Ապոլոնի հետ: Դրսից այդ աստվածությունների արձաններ են բերվում ու դրվում մեհյաններում (և ոչնչացվում՝ երբ քրիստոնեությունը պետական կրոն է հռչակվում): Դժվար չէ կոահել, որ այդ արձանները կերտված են եղել հելլենիստական արվեստի ոճով:

Ինչ խոսք, Հայաստան թափանցած հունական մշակույթի մի զգալի մասը մատչելի է եղել միայն ընտրյալներին: Արտավազդ թագավորի ստեղծագործություններն ընթերցել են ոչ այնքան նրա հայրենիքում, որքան դրասաշխարհում: Հայաստանին վերաբերող այն տեղեկությունները, որոնք աստիճանաբար կուտակվել են հունահռոմեական պատմիչների մոտ, բավարարել են օտարի հետաքրքրասիրությունը: Սակայն պաշտամունքի հետ կապվածը սեփականացվել էր բոլորի կողմից: Արևելյան աստվածները ողջ հասարակությանն են ներկայացել իրենց հունական կերպարներով: Ընդհանուր առմամբ՝ հելլենիստական մշակույթի ավանդույթները վերապրել են իրենց դարաշրջանը և ինչ-որ շափով հիմք հանդիսացել բոլորովին այլ՝ քրիստոնեական մշակույթի համար, միտքը նախապատրաստել նոր գաղափարների ընկալմանը:

Հելլենիզմի դարաշրջանում հայերը մշակույթի զարգացման նոր շրջան են թևակոխում: Քաղաքակրթությունը ապրում է աննախընթաց վերելք: Եվ, այնուհանդերձ, Հայոց երկիրը շարունակում է զուրկ լինել սեփական գրից: Քաղաքակրթության շրջանում մշակույթի ամենից կարևոր գործոններից մեկը գիրն է: Գիրը աստիճանաբար թափանցում է մարդկային գործունեության բոլոր ոլորտները՝ գործավարությունից մինչև աստվածապաշտություն և մտերմիկ հարաբերություններ: Ինֆորմացիան՝ բառիս լայն իմաստով՝ ավելի ու ավելի է արձանագրվում գրի միջոցով: Լինելով խոհականության ծնունդ, գիրն իր հերթին նպաստում է բանականության զարգացմանը:

Ինչպե՞ս էին բավարարում գրի պահանջները հայերը, վրացիները, աղվանները, բազմաթիվ այլ ժողովուրդներ, որոնք գտնվում էին Առաջավոր Ասիայի տնտեսական ու քաղաքական ոլորտում, բայց զուրկ էին սեփական գրից: Պարզապես դիմում էին օտար լեզվին ու նրան համապատասխանող գրությանը: Հատկապես մեծ դեր է կատարել սեմական լեզվախմբին պատկանող արամեերենը: Աքեմենյանների օրոք այն դարձել էր Պարսից պետության պաշտոնական լեզուներից մեկը, այդ լեզվով էր կատարվում գործավարու-

թյունը, նամակագրությունը: Եգիպտոսից ու Փոքր Ասիայից մինչև Հնդկաստան արամեերենը եղել է առևտրական հիմնական լեզուն: Ազգային սահմաններ չճանաչող այդ «ազատ» (lingua franca) լեզուն իրար էր կապում տասնյակ ժողովուրդների: Հայոց աշխարհը բացառություն չէր կազմում, մեզանում ևս տարածված է եղել արամեերենը: Դրա վկայությունն են արամեական (համենայն դեպս՝ արամեատառ) արձանագրությունները, որոնք Հայաստանում սկսվել են հայտնաբերվել 1940-ական թվականներից: Այդ գրությունների մի զգալի մասը կապված է Արտաշես Ա (189—160) թագավորի կողմից կատարված հողային ռեֆորմի հետ: 1940 թ. երկու արամեատառ արձանագրություն է գտնվել նաև Վրաստանի Արմազի վայրում:

Օտար գրերի կիրառության մասին որոշ տվյալներ ենք քաղում մեր պատմիչներից: Ղազար Փարպեցին ասում է, որ Մաշտոցից առաջ արքունի դպիրները ասորի և հույն գրով էին կատարում գործավարությունը, այդ լեզուներով էին կազմում թագավորական վճիռներն ու հրովարտակները [Ղազ. Փարպ., էջ 13. 8—12]: Իսկ Մովսես Խորենացու մի շարք վկայություններից պարզվում է, որ գործավարությունը ընթացել է պարսկերեն [Մով. Խոր., էջ 325. 11—12]: Նույն պատմիչի ասելով, հայտնի են բազմաթիվ պարսկերեն ու հունարեն մատյաններ, որտեղ թվարկված են գյուղեր, գավառներ, առածին «տներ» (տոհմեր), արձանագրված են ընդհանուր վեճերն ու դաշինքները, հատկապես նրանք, որոնք առնչվում են ազնվական տոհմերի սեփականության իրավունքին [Մով. Խոր., էջ 11. 6—11]: Արարողությունը եկեղեցում կատարվել է հունարեն [Մով. Խոր., էջ 301. 22—33]:

Ասորերենը նույն արամեերենի Եդեսիա (Ուռհա) քաղաքի և նրա շրջակայքի գրական ձև ստացած բարբառն է: Ասորերենը հատկապես մեծ դեր է կատարել քրիստոնեության տարածման շրջանում՝ քարոզիչների մի զգալի մասը եղել են ասորիներ: Ասորերենից ունենք բազմաթիվ թարգմանություններ: Խոսելով ասորերենի ուսման հետ կապված դժվարու-

Քյունների մասին (տե՛ս ստորև), Ղազար Փարպեցին նշում է, որ եկեղեցական արարողութիւնը կատարվում էր ասորերեն. Ս. Գիրքն այդ լեզվով էր ընթերցվում եկեղեցում («պաշտօն եկեղեցւոյ և կարգացմունք գրոց ասորի սւամամբ վարէին ի վանորայս և յեկեղեցիս Հայաստան ժողովրդոցս», Ղազ. Փարպ., էջ 13. 34—36):

Սասանյան շրջանի պարսկերենը գիտութեան մեջ կոչվում է միջին պարսկերեն կամ փեհլևի (տարբերվել է Արշակունյաց շրջանի պետական լեզվից՝ պահլավերենից, որից սակայն առաջացել է փեհլևի բառը): Այդ շրջանի պարսկերեն գիրն ունեցել է մի շատ կարևոր, աչքի ընկնող առանձնահատկութիւն: Այն շատ հաճախ օգտագործել է արամեերեն բառեր ու բառակապակցութիւններ իրենց հարազատ գրութեամբ (ընդ որում՝ պարսից գիրն իր հերթին արամեականի տարբերակներից մեկն է եղել): Այդ արամեական հատվածները հղել են արամեատառ, այսինքն գրվել են արամեերեն, սակայն ընթերցվել պարսկերեն: Այդ երևույթը կոչվում է այլագրութուն (ուսերենում՝ гетерография): Այլագրութեան օրինակներ կարելի է բերել նաև արդի հայերենից: «Արաբական» կոչված թվանշանները փոխառութիւն են, բոլոր գրութիւններում ունեն նույն ձևը, սակայն արտասանվում են տվյալ լեզվով: Նույնը կարելի է ասել այնպիսի նշանների մասին, ինչպիսիք են Ռ, Տ և այլն (հայերենում դրանց համապատասխանում են հայերեն բառեր, ուսերենում՝ ուսերեն և այլն): Բերենք մի օրինակ նաև միջին պարսկերենից: Արքայից արքա հասկացութիւնը արտահայտելու համար օգտվում էին MLK'n MLK' գաղափարագրից, որոնք արամեերեն պիտի արտասանվեին malkān malkā, մինչդեռ պարսկերեն հնչում էին šāhān šāh:

Մեզ չի հասել ասորերեն, պարսկերեն որևէ արձանագրութիւն կամ վավերագիր, որը կապված լիներ հայերի գրային պրակտիկայի հետ: Ինչ վերաբերում է հունարենին, ապա այդպիսի օրինակները հայտնի են վաղուց: Հիշեցինք, որ հելլենիստական շրջանում դրամների արձանագրութիւնները եղել են հունարեն: Հին հայերը հունարեն գրութեան հետ

շփվել են առաջին հերթին այդ դրամների միջոցով: Քանգա-  
րաններում պահվում են հելլենիստական շրջանի հայ թագա-  
վորների հունարեն արձանագրություններով բազմաթիվ դը-  
րամներ: Բացի այդ՝ մեզ են հասել նաև շուրջ 16 հունարեն  
վիմագիր արձանագրություններ, որոնցից հատկապես հայտ-  
նի է Գտնիի արձանագրությունը: Դա մի հրովարտակ է՝ փո-  
րագրված Տրդատ Ա թագավորի անունից: Տիգրանակերտի  
քաղաքային համայնքի հայ բնակիչներին հունալեզու արձա-  
նագրության միջոցով է դիմել մեկ ուրիշ հայոց թագավոր:  
Վերնախավի գոնե մի մասը խոսել է հունարեն, այս կամ  
այն շափով եղել է անշուշտ գրագետ\*:

Մշակութային ընդհանուր վերելքը և սեփական գրի բա-  
ցակայությունը ահռելի հակասություն են կազմում: Արդյո՞ք  
նույն կերպ են ընկալել այդ վիճակը նաև մեր նախնիները:  
Սակայն հաստատ գիտենք, որ սեփական գրի ու գրականու-  
թյան բացակայությունը խոչընդոտել է քրիստոնեության տա-  
րածմանը (անգամ այն շրջանում, երբ նոր ուսմունքը ճա-  
նաչված է եղել որպես պետական կրոն) և հենց այդ իրողու-  
թյունն է ստիպել Մաշտոցին ձեռնամուխ լինելու հայոց նշա-  
նագրերի ստեղծմանը: Մաշտոցի գործունեության օրյեկտիվ  
հետևանքները քրիստոնեական քարոզի սահմաններից շատ  
են դուրս եկել: Ազգային գրի շնորհիվ հայերի հոգևոր զար-  
գացումը միանգամից հսկայական թռիչք կատարեց, հասավ  
սկզբունքորեն այլ՝ մինչ այդ անհասանելի աստիճանի: Բո-  
լորովին այլ որակ ստացավ նաև ազգային ինքնագիտակցու-  
թյունը: Սակայն անմիջական դրդապատճառը կապված է  
եղել զուտ հոգևոր խնդրի՝ քրիստոնեական քարոզի հետագա  
տարածման հետ:

\* Գտնվել են նաև մի շարք լատիներեն արձանագրություններ, սակայն  
բոլորը եկվորների անունից են: Հայերի շփումը հռոմեական պետության  
(ուստի և լատինական մշակութի) հետ տեղ է մի քանի հարյուրամյակ,  
բայց մշակութային առումով եղել է բոլորովին անստուգ՝ այդ շրջանում ևս  
Հայաստանի համար «արևմուտք» է եղել հելլենիստական, ապա քրիստոնյա  
Արևելքը: Լատինական մշակութի հայկականի մեջ սկսել է թափանցել զը-  
խավորապես XIII—XIV դդ., այս երևույթը կապված է եղել կաթոլիկության  
տարածման հետ:

Քրիստոնեական քարոզը, պաշտամունքը, դավանաբանութիւնը անբաժան են գրից: Քրիստոնեյա ուսմունքի հիմնական սկզբնաղբյուրը կոչվում է Գիրք-Բ (հուն. Βίβλια, հոգնակի): Գիրքը ընթերցվում է եկեղեցում, Գիրքը պիտի կարդա յուրաքանչյուր հավատացյալ: Հոգևորականները պիտի հետևեն դավանաբանական գրականութանը, կարդան սրբերի վարքերը, ծանոթանան եկեղեցական ժողովների կանոններին, ուսումնասիրեն աստվածապաշտութեանը վերաբերող ձեռնարկները: Եկեղեցին ի սկզբանե պայքարել է այլախոհների դեմ, այդ պայքարը տարվել է նաև գրավոր խոսքի միջոցով:

Ընդհանուր առմամբ եկեղեցին հաստատում է իր դիրքը՝ օգտվելով նաև գրավոր խոսքից: Այս կամ այն ժողովրդին հաղորդակից դարձնելով քրիստոնեութեանը, եկեղեցին շահագրգռված էր, որպեսզի հաղորդակցութունը կատարվի նաև գրի միջոցով: Եվ երբ տվյալ ժողովուրդը զուրկ է եղել ազգային գրից, եկեղեցին նպաստել է դրա ստեղծմանն ու տարածմանը: Այդպես է եղել գոթերի, հայերի, վրացիների, աղվանների, հետագայում սլավոնների դեպքում\*: Ծիշտ է, այդ գաղափարը կարող էր իրացվել, երբ դրա համար մշակված հող էր լինում: Անդրկովկասում այդպիսի պայմաններ առաջացան միայն V դ. սկզբներին:

Ասվեց, շուրջ 314 թ. քրիստոնեութունը ճանաչվել էր պետական կրոն: Սրի ու հրի մատենելով հեթանոսական տաճարները, կործանելով հին աստվածներին, տիրանալով մեհայանների հողերին ու հարստութեանը, եկեղեցին վերածվեց տնտեսական և քաղաքական մեծ ուժի: Հաղթանակը, սակայն,

---

\* Գրի տարածման կապակցութեամբ եկեղեցու դերը քննելիս պիտի հաշվի առնենք հետևյալ կարևոր հանգամանքը: Աստվածաշունչը մնում է Սուրբ Գիրք անկախ նրանից, թե ինչ լեզվով է այն շրջանառութեան մեջ մտել: Հունարեն, հայերեն կամ ղզաթի տարբերակները այդ տեսակետից հավասար են: Այդ գաղափարը մի հավելյալ գործոն էր, որպեսզի եկեղեցին նպաստի ազգային գրերի առաջացմանը: Աստվածաշնչի նկատմամբ ունեցած վերաբերմունքով քրիստոնեութունը էպես տարբերվում է, առհնք, իսլամից, որը Ղուրանը ճանաչում է միայն իր սկզբնական՝ արաբալեզու խմբագրութեամբ:

վերջնական շէր: Բերովի կրոնը միաձայն շէր ընդունվում: Հեթանոսական ավանդույթները շէին կորցրել իրենց կենսունակութիւնը, և որոշ դեպքերում եկեղեցին ստիպված էր հարմարվել նրանց: Քարոզին շենթարկվող հեթանոսները տարածված էին երկրով մեկ: Եկեղեցու և պետութեան համար վտանգը կրկնապատկվում էր նրանով, որ հեթանոսները այս կամ այն շափով նույն գրադաշտականներն էին, իսկ գրադաշտութիւնը Սասանյանների օրոք շափազանց մարտնչող դիրք էր գրավել: Այդ պայմաններում քրիստոնեութիւնը հանդես էր գալիս որպէս ազգային կրոն, այն վերածվել էր ոչ միայն վերացական, դավանական սկզբունքների համակարգի, այլ դարձել էր ազգային ինքնագիտակցութեան խորհրդանիշ: Մաշտոցի օրոք դավանական հարցը ստացել էր վառ արտահայտված քաղաքական երանգ:

Ընդհանուր առմամբ, հայոց, ինչպէս նաև վրաց և աղվանից գրերի գլուտը պատճառաբանված է եղել պատմամշակութային զարգացման հատուկ պայմաններով, սակայն, մոտենալով հարցին ավելի անմիջականորեն, հաշվի առնելով կոնկրետ պարագաները, տեսնում ենք, որ գրերը եղել են մեկ մարդու՝ Մաշտոցի ստեղծագործական մտքի և հասարակական գործունեութեան պտուղ: Մաշտոցի կենսագրութիւնը գրել է նրա աշակերտ Կորյունը, մնացած հայերեն գրավոր աղբյուրները կախում ունեն այդ երկից: Կորյունի աշխատութեան իսկական խորագիրը հայտնի չէ, Մանուկ Աբեղյանի հրատարակութիւնը հետևյալ կերպ է վերնագրված՝ «Պատմութիւն վարուց և մահուան առն երանելոյ սրբոյն Մաշթոցի վարդապետի մերոյ թարգմանչի՝ ի Կորիւն վարդապետէ յաշակերտէ նորին» [Կոր., էջ 22. 1—6]: Այդ աշխատութիւնն, անշուշտ, վարք է, այսինքն սրբի կենսագրութիւն: Արդեն IV դարում, գրական այդ տեսակի կանոնները լրիվ ձևավորվել էին, հունական և ասորական գրականութեան մեջ առաջացել էր կայուն ավանդույթ: Վարքը պիտի ունենա վերնագիր, հերոսի մակդիր, առաջաբան, այստեղ պիտի խոսվի սրբի ծնողների, նրա ծննդյան, նրա անվան, ձեռնադրութեան (մանուկ հասակից), հարստութեան, դաստիարակութեան, ճրգ-

նության, հետագա կյանքի, մահվան նախանշանների և հանգամանքների, վերջապես նրա հետ կապված հրաշքների մասին: Վարքն ունենում է վերջաբան, ուր հերոսը համեմատվում է Հիւն և Նոր կտակարանների անձնավորութիւնների հետ: Այսպիսով, վարքագրության օրենքները կանխորոշում են ոչ միայն վարքի կառուցվածքը, այլև ինչ-որ չափով բովանդակութիւնը, թելադրում այն հանգամանքները, որոնք պիտի արձագանք գտնեն այդ յուրատեսակ պատմվածքի մեջ: Եվ, բոլոր պարագաներում, վարքը ներկայացնում է հերոսի իդեալականացված դիմանկարը, որին պիտի հետևեն ընթերցողները՝ ընդունելով այն որպես օրինակ: Մոտենալով վարքին իբրև պատմական սկզբնաղբյուրի, նրա մեջ եղած փաստերը պիտի վերլուծենք հատուկ եղանակով, հաշվի առնելով վարքի ժանրային առանձնահատկութիւնները:

Գրականագիտության մեջ ընդունված է տարբերել այն վարքերը, որոնք գրված են սրբի վախճանից քիչ հետո և նրբանք, որոնք ստեղծվել են որպես գրական վարժութիւնների, ճարտասանության փորձեր: Հակառակ կաշկանդող բոլոր հանգամանքներին, առաջին տիպի վարքերը հաճախակի առատ նյութ են տրամադրում ոչ միայն սրբի կենսագրության, այլև նրան ժամանակակից պատմական անցքերի մասին<sup>4</sup>: Ահա այդ տիպի վարք է եղել Կորյունի աշխատութիւնը, որն, ի դեպ, արտաքնապես ամբողջութեամբ համապատասխանում է վերևում բերված ուրվագծին:

Ժամանակին Կարապետ Մելիք-Օհանջանյանը կարծիք է հայտնել, որ իր աշխատութիւնը գրելիս Կորյունը հետևել է «Յաղագս պիտոյից» աշխատութեան ցուցումներին: Հունարենից թարգմանված «Յաղագս պիտոյից» գիրքը ճարտասանության յուրատեսակ ձեռնարկ է, և բնական է, որ «Վարքը» որոշ կողմերով համապատասխանում է նրա հանձնարարութիւններին: Ավելի հավանական է, սակայն, որ Կորյունը հաշվի է առել իր ժամանակի գրական պրակտիկան, իր աշխատութիւնը նմանեցրել վարքագրական եղանակով գրված երևէ այլ աշխատութեան: Վերջին կարծիքն առաջին անգամ հայտնել է Կիմ Մուրադյանը, ենթադրելով, որ Կորյունին որ-

պես նախագաղափար օրինակ ծառայել է Գրիգոր Նազիանզացու (IV դ.) «Ի Բասիլիոս Կեսարացի» երկի հայերեն թարգմանությունը<sup>5</sup>։ Հարցադրումը միանգամայն ճիշտ է, սակայն, երկու հուշարձանների միջև եղած աղերսը այնքան էլ բացահայտ չէ, որքան դա թվում է հետազոտողին։

Կորյունին վիճակված է եղել աշակերտել Մաշտոցին, նա իր երկը գրել է ի պատասխան Հովսեփի և Մաշտոցի մյուս աշակերտների կոչին։ Ժամանակին, անշուշտ, Մաշտոցի և Սահակ Պարթևի հանձնարարություններ, գնացած է եղել արտասահման՝ թարգմանություններ կատարելու։ Կորյունն, այսպիսով, պատկանել է վարդապետի նեղ շրջապատին՝ նախ և առաջ դրանով է բացատրվում նրա լավատեղյակությունը։

Վարքը գրվել է վարդապետի մահվանից մի քանի տարի անց, 443—449 թթ. միջև։ Այդ թվագրությունն ընդունված է բոլոր գիտնականների կողմից և, իրոք որ, վստահելի է։ Հեղինակն ասում է, որ Մաշտոցի մահվանից անցավ 3 տարի և նրա գերեզմանի վրա վահան Ամատունին տաճար կառուցեց<sup>6</sup>։ Մաշտոցը վախճանվել է 440 թ. սեպտեմբերի 17-ին։ Կորյունին ծանոթ է մի դեպք, որը կատարվել է 440+3 = 443 թ., ուստի նա իր աշխատությունը գրել է այդ թվականից հետո։ Մյուս կողմից, հեղինակը ճանաչում է վահան Ամատունուն որպես հազարապետ Հայոց Մեծաց, իսկ Եղիշեից գիտենք, որ 449 թ. վահանը զրկվել էր իր բարձր պաշտոնից։ Այսպիսով, Կորյունն իր երկը պիտի ավարտեր ոչ ուշ, քան 449 թ.։

Մի հանգամանք ևս վկայում է, որ Վարքը գրվել է վարդանանքից առաջ։ Ապստամբության պահին իր գրաված դիրքի համար վասակ Սյունի մարզպանը ճանաչվեց դավաճան, այդպիսին է նա հանդես գալիս թե՛ Եղիշեի, թե՛ մյուս հեղինակների մոտ։ Իսկ Կորյունը անվանում է նրան «քաջն Միսականն վասակ, այր խորհրդական և հանճարեղ և յառաջիմաց, շնորհատուր իմաստութեամբն Աստուծոյ» [Կոր., էջ 62. 2—3]։ Հասկանալի է, որ վարդանանքից հետո այդպիսի մակդիրներն անհնարին կլինեին։

Կորյունը գրեթե չի շեղվում դեպքերի իրական հերթա-  
կանութունից: Վարքը, թեև գրված է ճոռոմ լեզվով, սակայն  
կոնկրետ ընույթ է կրում, ընդհանուր առմամբ ներկայաց-  
նում է գրերի ստեղծման և Մաշտոցի ողջ կենսական ուղու  
իրական պարագաները: Հեղինակն, անշուշտ, ենթարկվում է  
գրական իր ընտրած տեսակի պահանջներին և շատ բան  
լռության է մատնում, պատմութունը թերի է: Բայց այն,  
ինչ որ ասված է, իր էական կողմերով համապատասխա-  
նում է իրականությանը:

Վարքի հերոսը՝ Մաշթոցը, ծնվել է Տարոնի Հացեկաց  
գյուղում, հոր անունը՝ Վարդան: Գրականության մեջ տարա-  
ծում է գտել Մեսրոպ Մաշտոց արհեստական կապակցույթու-  
նը: Մինչդեռ թե՛ Կորյունը, թե՛ Ղազար Փարպեցին վարդա-  
պետին անվանում են միայն Մաշթոց: Մովսես Խորենացին  
է, որ մի տեղ հիշում է նրան որպես Մաշտոց (Մաշտոց),  
իսկ մյուս տեղերում՝ միայն Մեսրոպ (Մեսրոբ, Մեսրովբ,  
Մեսրովպ): Հայտնի չէ, թե դրա համար ի՞նչ հիմք է ունե-  
ցել մեր Պատմահայրը: Նիկողայոս Ադոնցը գտնում է, որ  
մինչև խնդրի պարզելը գերադասելի է անպայման Մաշթոց  
ձևը<sup>7</sup>:

Տարոնը գտնվում է վանա լճից դեպի արևմուտք, Մաշ-  
տոցի օրոք հղել է Մամիկոնյանների ժառանգական տիրույ-  
թը: Փավստոս Բուզանդը Տարոնում գիտի կարճազատների  
Հացեաց գյուղ (Փաւ. Բուզ., Գ, 20): Կարճազատները հավա-  
նարար կազմել են ազատների դասի ինչ-որ ստորին շերտը:  
Բոլոր պարագաներում՝ Մաշտոցը ազնվական ընտանիքից չէ,  
հակառակ դեպքում նշված կլիներ (եթե Մաշտոցը վանական  
անունն է) նրա Վարդան հոր տոհմանունը:

Ապագա վարդապետը մանուկ հասակում ընտելանում է  
հելլենական դպրությանը, ապա Արշակունիների դռանը ծա-  
ռայության անցնում արքայական դիվանում՝ Առավան հազա-  
րապետի հսկողության ներքո: Արքունիքում նա կատարում է  
գինվորական քարտուղարի պարտականութուններ: Հմտա-  
նում է աշխարհական կարգերի մեջ, գինվորական արվեստով  
սիրելի դառնում գինվոր ընկերներին: Եվ, միաժամանակ, ծա-

առայելով իշխաններին, ընթերցում աստվածային գրքեր [Կոր., Գ]:

Միառժամանակ հետո Մաշտոցը թողնում է աշխարհիկ հոգսերը և մտնում միայնակյացների կարգը, ինչպես հարկն է՝ հոգին վարժելու և ամրապնդելու համար տարբեր «վշտակեցություններ» է կրում, այն է՝ միանձնություն, լեռնակեցություն, քաղց ու ծարավ, բանջարաճարակություն, մնում է անլույս արգելարաններում, խարազանազգեստ քնում գետնատարած անկողնում, իսկ շատ անգամ էլ, հրաժարվելով քնից, գիշերը ոտքի վրա լուսացնում: Այդ կամ նման վարժությունները պարտադիր էին դարձել միայնակյացի համար: Այդ էր թեև դրոմ ժամանակի գործնական բարոյագիտությունը: Մաշտոցի համբավը աստիճանաբար տարածվում է, նա աշակերտներ է ունենում և ահա իր հետևորդների ուղեկցությամբ իջնում Գողթնի «անկարգ և անխնամ» մնացած տեղերը: Մաշտոցի նպատակն է՝ քրիստոնյա դարձնել հեթանոս մնացածներին: Գողթնի Շաբիթ իշխանը օգնության է դալիս Մաշտոցին, վարդապետը հաջողությամբ է սերմանում «զբանն կենաց» կենսատու խոսքը: Սակայն նրա գլխավոր նպատակն է՝ նույն արդյունքին հասնել ողջ հայության նրկատմամբ (նույնպես առաել հոգ ի մտի արկանէր զհամաշխարհականս սփոփելոյ)—[Կոր., Ե.]: Եվ անընդհատ տրրամության մեջ էր՝ ինչպիսի ելք գտնի այդ բանի համար:

Գողթն գավառը ընդգրկում էր այժմյան Ապրակունիսի և Օրդուբադի շրջանները (Նախիջևանի ինքնավար հանրապետության սահմաններում): Այդ ծայրամասը հեթանոսության հենարաններից մեկն էր: Այդ մասին է վկայում նաև Մովսես Խորենացին, նշելով բնակիչների սերը հին հեթանոսական առասպելների ու երգերի նկատմամբ: Սակայն հեթանոսությունն իր դիրքերը չէր զիջել նաև մյուս վայրերում: Հեթանոսական հավատքը, մրցելով քրիստոնեություն հետ, տարածված էր դեռևս ինչպես Հայոց աշխարհում, այնպես էլ հարևան Վիրքում ու հատկապես Աղվանքում: Հնուց, երբ հայերը դեռ նոր էին ընդունել քրիստոնյա անունը, յուրացրին այն ոչ թե ջերմ հավատով, առ րոկ իբրև ինչ-որ մարդ-

կային կրոն, իբրև մարդկային մոլորութիւն, այն էլ՝ հարկադրված: Փալստոս Բուզանդը այսպես է նկարագրում վիճակը, նկատի ունենալով Տիրան Թագավորի (338—350) ժամանակակիցներին, բայց հիմքեր կան այդ պատկերը տարածելու նաև Մաշտոցի դարաշրջանի վրա: «Կրոն» բառը այս դեպքում նշանակում է ոչ թե բուն հավատքը, այլ վերջինիս ձևական, արտաքին կողմը, որը կարող էր հակասել նույնիսկ ներքին զգացմունքին: Քրիստոնեութիւնը, շարունակում է պատմիչը, ինչպես պետք է շէր առնչվում ո՛չ գիտութեան, ո՛չ հույսի, ո՛չ էլ հավատքի հետ: Նրանք, ովքեր ինչ-որ չափով յուրացրել էին հելլեն կամ ասորի դպրութիւնը, հասու էին նոր ուսմունքին: Իսկ գիտութիւնից հեռու կանգնած մարդկանց վիճակը, լինեին դրանք նախարարներ, թե շինականներ, այլ էր: Եթե վարդապետների ասածը հորդահեղ անձրևի պես օր ու գիշեր հոսեր դրանց վրա՝ շէին հասկանա ու մտքում շէին պահի «ոչ մի ոչ, և ոչ մի բան, և ոչ կէս բանի, և ոչ դոյզն յիշատակ ինչ, և ոչ նշմարանս ինչ» [Փալ. Բուզ., Գ, 13]: Չէ՞ որ նրանք մանկուց անտեսել են պիտանին ու կարևորը, նրանց միտքը սխալ ուղղութեամբ է ընթացել՝ «ի հնութիւն հեթանոսութեանց սովորութեանց»: Նրանք սիրել են վիպասանների երգեր-առասպելները, հավատացել նրանց [Փալ. Բուզ., Գ, 13]:

Ասորերենը յուրացնում էին դժվարութեամբ: Ծիշտ է, այդ տեղեկութիւնները հաղորդում է այնպիսի մի բացարձակ հելլենասեր, ինչպիսին էր Ղազար Փարպեցին, ուստի դրանք մասամբ արտահայտում են հեղինակի անձնական ճաշակն ու վերաբերմունքը հայերենից այնքան հեռու ասորերենի նկատմամբ: Այնուամենայնիվ, այդ վերապահումով ևս կարող ենք պատկերացում կազմել իրական դժվարութիւնների մասին: Երբ Մաշտոցը տեսնում էր, թե ինչպիսի ջանքեր էին թափում հայ մանուկները ասորերենը սերտելիս, ինչպիսի ծախսերի հետ էր կապված դա, տրտմութեան մեջ էր ընկնում (խոսքն ըստ երևույթին, ժամանակ վատնելու մասին է): Ասորի դպրոցներում ուսումը պահանջում էր մեծ օրապահիկ և երկար ժամանակ, քանի որ ընթանում էր հեռու վայրերում:

նկեղեցական արարողութիւնը և Ս. Գրքի ընթերցումը կատարվում էին ասորերեն, և Հայաստանի նման մեծ երկրում մարդիկ դրանից ոչ մի օգուտ չէին ստանում. «և ինէր պաշտօնէիցն աշխատութիւն և ժողովրդոցն անշահութիւն յանլուծենէ լեզուին ասորւոյ» [Ղազ. Փարպ., էջ 13. 30—38]:

Այսպիսով, միայն հելլեն կամ ասորի դպրութիւնը հաղորդակից անձինք են ըմբռնել քրիստոնեւոթյան էութիւնը: Նկատի ունենալով Հին և Նոր կտակարաններում արձագանք գտած երկրները, Կորյունն գրում է, որ Հայոց աշխարհը «անունն անգամ չէր լսել այդ կողմերի» [Կոր., էջ 56. 17—18], ասել է՝ գաղափար շունբը Աստվածաշնչի բովանդակութեան մասին: Ընդհանուր առմամբ հեթանոս տարերքը: դեռևս իրեն զգացնել էր տալիս ամենուրեք: Փալատոս Բուզանդի նկարագրութիւնից կարելի է գալ այն եզրակացութեան, որ ո՛չ հունական, ո՛չ էլ ասորական դպրութիւնը տարածված չի եղել: Մյուս կողմից, օտար դպրութեամբ հարցն առհասարակ չէր լուծվի: Հակառակ նրան, որ ըստ Կորյունի, Գողթնում ծավալված գործունեւոթյունը պսակվեց հաջողութեամբ, հենց այնտեղ Մաշտոց-քաղցիչը գտավ ճիշտ ուղին, այն է՝ սեփական գրի, մշակումը:

Վարքի հաջորդ գլուխները նվիրված են հայոց նշանագրերի գյուտի հետ կապված անցքերին: Սակայն այստեղ մենք պիտի միառժամանակ հեռանանք Կորյունի շարադրանքից:

Մաշտոցի գործունեւոթյան արդյունքները համոզում են, որ նա եղել է շատ խոշոր գիտնական: Բնածին տաղանդը նրա մեջ համատեղվել է բազմազան գիտելիքների հետ: Այդ արտասովոր մարդը որտե՞ղ է ստացել իր կրթութիւնը: «Ի մանկութեան տիսն վարժեալ հելլենական դպրութեամբն», նրա մասին գրում է Կորյունը [Կոր., էջ 36. 8]: «Ի տիս մանկութեան իւրոյ ուսեալ զդպրութիւն գյոյն», կրկնում է Ղազար Փարպեցին [Ղազ. Փարպ., էջ 13. 8—9]: Քարտուղարի պաշտոնը ենթադրել է տալիս, որ նա իմացել է պարսկերեն: Մովսես Խորենացին (որը գրերի պատմութիւնը շարադրելիս որոշ կետերում շեղվում է Կորյունից) ասում է, որ Պարսից վրամ

Քաղաքները իբր իր մոտ է կանչում Հայոց Վառձապուհ Քաղաքներին և վերջինս նեղութիւնն է կրում քարտուղար շունենալով: Մեսրոպը (Մաշտոցը) լքել էր արքունիքը, իսկ մընացած դպիրների մեջ մի ճարտար մարդ չկար՝ մինչդեռ «պարսկականանան վարէին գրով» [Մով. Խոր., էջ 325. 9—11]: Անկախ նրանից, թե նկարագրված միջադեպը որչափ է համապատասխանում իրականությանը, երևույթն ինքնին ճիշտ է վերարտադրված: Մաշտոցը իրոք պիտի ծանոթ լիներ պարսկերեն գրին:

Ինչպես ցույց կտանք ստորև, հայոց նշանագրերը, ամենայն հավանականությամբ, ծագումով կապված են եղել արամեական գրերին: Դժվար չէ հետևեցնել, որ Մաշտոցը ծանոթ է եղել արամեերենին, հավանաբար նրան մոտեցել նրա ասորերեն տարբերակի միջոցով: Մաշտոցի անվան հետ է կապված վրաց և աղվանից գրերի գյուտը: Նշանակում է՝ նա գոնե ընդհանուր պատկերացում է ունեցել վրացերենի և աղվանից այն լեզվի մասին, որն ընտրվել է որպես աղվանից գրերի հիմք:

Հունարենի և ասորերենի գիտելիքները Մաշտոցը կարող էր ստանալ հայրենիքում: Փալստոս Բուզանդը վկայում է՝ ներսես Մեծ կաթողիկոսը «կարգէր՝ ի տեղիս դպրոցս յունարէն և ասորերէն յամենայն գաւառս Հայոց» [Փալ. Բուզ., Դ, 4]: Դրանք եղել են անշուշտ վանքերին կից դպրոցներ, որոնք չէին կարող շատ բան տալ աշակերտին: Նման դըպրոցներում ուսումը սահմանափակվում էր սաղմոսների, ավետարանի, առաքյալների թղթերի ընթերցանությամբ: Ավարտելով այդ դպրոցներից մեկը, Մաշտոցը դրանով միայն նախնական կրթութիւնն պիտի ստանար:

Նա պարսկերեն կարող էր սովորել նաև գործնական եղանակով, արքունի դպիր դառնալու կապակցությամբ: Դըպրոցից ստացած գիտելիքները նա, ամենայն հավանականությամբ, լայնացրել էր ինքնուրույն ընթերցանությամբ: Բավակա՞ն էր դա, արդյոք, որպեսզի մարդ հասնի գիտության բարձունքներին: Զէ՞ որ Մաշտոցը եղել է իր ժամանակի ամենից գիտուն մարդկանցից մեկը:

1925 թ. մեծանուն պատմաբան և բանասեր Նիկողայոս Աղոնցը (1871—1942) ուշադրութիւն հրավիրեց հունարեն մի աղբյուրի վրա, որը հայագիտութեան մեջ չէր օգտագործուել։ IX դ. բյուզանդական պատրիարք Փոտը սովորութիւն է ունեցել կազմել իր կարդացած գրքերի ամփոփումը։ Այդ եղանակով է առաջացել նրա հռչակավոր «Գրադարան» աշխատութիւնը։ «Գրադարանի» շնորհիվ մենք ծանոթանում ենք միշտ բերկերի հետ, որոնք մեզ շնն հասել։ Բայց նրա արժեքը միայն դրանով չի սահմանափակվում։ Հետաքրքիր է Փոտի ընտրութիւնը, նրա դիտողութիւններն այս կամ այն գրվածքի մասին։ Արդ՝ այդ «Գրադարանի» բաժիններից մեկը վերնագրված է՝ «Թէոդորոս Երիցու յաղագս որ ի Պարսս մոզութեան, ի ճառս Երիս»<sup>6</sup>։ Փոտը նշում է՝ «կարդացել եմ Թեոդորոսի գիրքը՝ Յաղագս որ ի Պարսս մոզութեան և զինչ է բարեպաշտ հաւատոյ զանազանութիւն յերիս ճառս»։

Նա ուղղում է դրանք (այսինքն այդ երեք ճառերը — Կ. Յ.) Մաստուրիոսին, ծագումով Հայաստանից, որը քրեպոլիսկոպոս է եղել։ Այնուհետև Փոտը համառոտակի շարադրում է աշխատութեան բովանդակութիւնը և ավելացնում՝ «Այս Թեոդորոսը թվում է որ Մոպսուեստացին է, որովհետև նեստորի աղանդի մասին մանավանդ երրորդ ճառում հաստատապես նախաքարոզ է լինում, այլև մեղավորների վերականգնման մասին է բանդագուշում»<sup>7</sup>։

Մաշտոցի ժամանակակից, Անտիոքի երեց, ապա Կիլիկիայի Մոպսուեստիա (կամ Մամուեստիա) քաղաքի եպիսկոպոս (վախճանվել է 428 թ.) Թեոդորոսը իր բազմաթիվ աշխատութիւններում նախապատրաստել է այն ուսմունքը, որը, կապված լինելով նրա աշակերտ նեստորիոսի հետ, կոչվեց նեստորականութիւն և տարածվեց քրիստոնյա Արևելքով մեկ։ 431 թ. նեստորականութիւնը բանադրանքի ենթարկվեց Եփեսոս քաղաքում գումարված III Տիեզերական ժողովի կողմից, սակայն շարունակեց տարածվել հատկապես պարսկահայատակ քրիստոնյաների մեջ։ Ստվեր ընկալ նաև Թեոդորոսի գրութիւնների վրա։ Ահա թե ինչպես ընկալեց այդ

փոփոխությունները հայոց եկեղեցին: «Այն ժամանակ բեր-  
վեցին, երևացին Հայաստան աշխարհում Թեոդորոս անու-  
նով մի հոռոմ մարդու սուտապատում գրքերը, դատարկաբան  
ալիլորդությունները: Սուրբ եկեղեցիների սինհոդոսական  
հայրապետներն<sup>10</sup> այդ մասին գրելով իմաց տվին ճշմարտա-  
հավատ փառաբանիչներ Մահակին և Մաշտոցին: Եվ նրանք  
ճշմարտասեր ջանքով մեջտեղից վերացրին այն, աշխարհից  
հալածելով՝ իրենց սահմաններից դուրս վանեցին, որպեսզի  
ոչ մի սատանայական ծուխ չխառնվի լուսավոր ուսմանը»  
[Կոր., ԻԳ.]<sup>11</sup>:

Ն. Ադոնցը գտնում էր, որ «Մաստուրիոսը» Մաշտոց  
անվան աղճատված ձևն է: Թեոդորոսը Անտիոքում երեց է  
եղել 383—392 թթ., հենց այդ շրջանում էլ Մաշտոցին է ձո-  
նել իր աշխատությունը: Այդ քայլը անձնական ծանոթու-  
թյան հետևանք է, որը տեղի է ունեցել հենց Անտիոքում:

Արդ՝ եթե Ն. Ադոնցի առաջարկած «Մաստուրիոս» և  
«Մաշտոց» անունների նույնացումը ճիշտ է, եթե երկուսն էլ  
վերաբերում են նույն անձնավորությանը, ապա այդ փաստը  
լույս է սփռում գրերը ստեղծած գիտնականի կենսագրու-  
թյան մի բոլորովին անհայտ էջի վրա: Անմիջապես պատաս-  
խան է ստանում նրա կրթության հարցը: Բայց իրո՞ք Մաշ-  
տոցին է վերաբերում այդ հատվածը:

Ընդհանուր առմամբ, Փոտի հաղորդման մեջ չկա որևէ  
բան, որ հակասեր իրադրությանը: Մաշտոցը (ճիշտ այնպես,  
ինչպես V դ. նրա աշակերտները) իր իմացածը լրացնելու և  
կատարելագործելու նպատակով կարող էր այցելել քրիս-  
տոնյա Արևելքի, անգամ Արևմուտքի գիտության օջախները:  
Անտիոքը համեմատաբար մոտ է Հայաստանին, ճանապար-  
հորդությունը միանգամայն հնարավոր էր: Թեոդորոսի գրքի  
բովանդակությունը մոտ պիտի լիներ հայ վարդապետի սըր-  
տին, չէ՞ որ իր հայրենիքում նա պայքարում էր հենց մո-  
գությունը հարող հեթանոսների դեմ: Զարմանալի չէր լի-  
նի, եթե «Մաշթոց» անունը հունարենում այնքան աղավաղ-  
վեր, որ դառնար «Մաստուրիոս»: Ընդհանուր առմամբ բա-  
ցատրելի է նաև Կորյունի լուսավոր. վարքագիրը կարող էր

լուելլայն անցնել իր հերոսի կենսական ուղու այն դրվագները, որոնք կապված են եղել հեթանոս աշխարհի կամ հերետիկոս թեոդորոսի հետ: Կրկնում ենք՝ Փոտի հաղորդման մեջ չկա որևէ բան, որ բացառելի Մաստուրիոսի և Մաշտոցի նույնացումը\*: Սակայն անվան նմանությունից բացի չկա այդ նույնացումը հաստատող որևէ այլ հանգամանք: Ուստի, որևէ կերպ չմերժելով այդ հաղորդման կարևորությունը, մենք ղրկված ենք վճռական պատասխան տալու հնարավորությունից\*\*:

Ինչպես ասացինք, Մաշտոցի գործունեությունը Գողթնում, ըստ Կորյունի, հաջողություն ունեցավ: Քարոզիչը, սակայն, մտածում էր ողջ հայություն մասին: Անցնում է օրերի մի երկար շարան: Մնալով նույն մտածմունքի մեջ, Մաշտոցը դիմում է Մեծ Հայքի կաթողիկոս Սահակ Պարթևին: Սահակը ևս տարվում է նույն հոգսով: Աղոթում են երկուսով, որպեսզի քրիստոսաբեր փրկությունը հասնի բոլոր մարդկանց, ապա հայոց նշանագրերի հարցը լուծելու նպատակով եկեղեցական խորհուրդ են հրավիրում՝ (եկանէր նոցա պարգևական յամենաբարին Աստուծոյ ժողովել զաշխարհահոգ խորհուրդն երանելի միաբանելոցն, և ի գիւտ նշանագրաց Հայաստան ազգին հասանել): Երկար հարցուփորձից ու որոնումներից հետո, հանդիպելով մեծ դժվարությունների, որոշում են դիմել Հայոց թագավոր Վուսնշապուհին: Իսկ

\* Բացառությամբ, թերևս, այն դեպքի, որ «Մուստուրիոսը» եղել է քորեպիսկոպոս, իսկ Մաշտոցը, ըստ Կորյունի և ողջ հայ գրական ավանդության՝ լուկ վարդապետ: Ի տարբերություն եպիսկոպոսների, ողոնց իրավասության ներքո են եղել քաղաքները, քորեպիսկոպոսները հովվապետ են եղել գյուղական համայնքներում: Անկախ նրանից, թե որչափ է սազում այդ տիտղոսը Մաշտոցի մեզ հայտնի կերպարին, անբացատրելի է մնում՝ նրա հայ կենսագիրը ինչու պիտի թաքցներ այդ դեպքը: Մանրամասնությունները տե՛ս Ե. Տեր-Մինասյան, Հայոց գրերի գյուտի թվականի և այլ հարակից խնդիրների մասին (Պատմա-բանասիրական հետազոտություններ, էջ 443—448):

\*\* Սույն տողերը ընդունելի կլինեն հարկավ նրանց համար միայն, ովքեր գիտեն, որ հին պատմության և բանասիրության բնագավառում վերջնական «այո»-ն կամ «ոչ»-ը ցավոք շատ հազվադեպ է լինում:

արքան նրանց պատմում է մի ազնվական ասորի եպիսկոպոսի մասին, Դանիել անունով, որն իրեն համար անապասելի կերպով գտել է հայերեն նշանագրեր: Քազավորը ոմն Վահրիճի հրովարտակով ուղարկում է Դանիելի մերձավորներից մեկի՝ Հաբել երեցի մոտ: Հաբելը շտապում է եպիսկոպոսի մոտ, ծանոթանում գրերին և ապա ուղարկում արքային՝ նրա թագավորութւյան հինգերորդ տարում: Վոսմշապուհը, Սահակ կաթողիկոսը, Մաշտոցը ուրախանում են այդ նշանագրերով:

Անապասելի կերպով ձեռք բերելով այդ տառերը, Սահակն ու Մաշտոցը աշակերտներ են վերցնում և ընտելացնում Դանիելի նշանագրերին: Երբ այդ երիտասարդներից շատերը յուրացնում են գրերը, թագավորը կարգադրում է, որպեսզի ամենուրեք կրթեն նույն նշանագրերով: Այդ պարագաներում, հասնելով վարդապետի աստիճանի, Մաշտոցը եղած տառերով ուսուցչութւյուն էր անում: «Իսկ երբ հասկացան, որ այդ նշանագրերը բավական չեն հայերեն լեզվի սիղոբաները — կապերն ամբողջութեամբ արտահայտելու համար, — մանավանդ որ նշանագրերն էլ իսկապես ուրիշ ղրարութւյուններից թաղված և հարութւյուն առած հանդիպեցին, — ապա դարձյալ երկրորդ անգամ նույն հոգսի մեջ ընկան և մի քանի ժամանակ մի ելք էին փնտրում դրան» [Կոր., 2]:

Ի՞նչն է հատկապես կարևորը այս՝ վեցերորդ գլխում: Գոյութւյուն ունեն հայոց նշանագրեր, որոնք տարածում չեն գտել, Դանիելը հայտնաբերել է դրանք պատահամամբ, «որոյ յանկարծ ուրեմն գտեալ նշանագիրս աղփաբետաց հայերէն լեզուի», իսկ շահագրգռված անձնավորութւյուններից միայն արքան է տեղյակ դրանց մասին, այն էլ հիշել է հատուկ պայմաններում: Մաշտոցն ու Սահակը որոշ ժամանակ իրենց աշակերտներին ընտելացրել են այդ գրերին (այսինքն՝ փորձել են գրել ու կարդալ հայերեն): Փորձը ցույց է տվել, որ գրերն անհարմար են, չեն կարող ամբողջութեամբ վերարտադրել հայերեն վանկերը (չեն բավական նշանագիրքն՝ ողջ ածել զսիւղորայս՝ զկապս հայերէն լեզույն), ուստի և մերժելի են:

Նախքան առաջ անցնելը, պիտի ուշադրութիւն դարձնենք սեմական լեզուների (մասնավորապես արամեերենի) գրային համակարգերին համապատասխանող մի առանձնահատկութեան վրա: Եթե այստեղ բաղաձայն հնչյուններն արտահայտված են լինում լրիվ, իրենց սեփական նշաններով, ապա ձայնավորների նշանները մեծ մասամբ բացակայում են: Այդ երևույթը կապված է սեմական լեզուների յուրօրինակութեան հետ՝ բառի ընդհանուր իմաստը, գաղափարը արտահայտված է լինում բաղաձայնների միջոցով, իսկ ձայնավորները նշում են նրա քերականական պարագաները՝ խոսքի ի՞նչ մաս լինելը, բայի սեռը, ժամանակը և այլն: Այսպես, արաբերեն Յ բաղաձայն ktb արտահայտում են գրելու միտքը, իսկ ձայնավորները այդ ընդհանուր մտքին հաղորդում են քերականական կոնկրետութիւն. այսպես, kataba — նա գրեց, kātib — գրիչ, ընդօրինակող, kitāb — գիրք, kutub — գրքեր<sup>12</sup>:

Հնդեվրոպական լեզուները (հունարեն, հայերեն, ռուսերեն և այլն) այդ առումով էպես տարբերվում են սեմականներից: Իմաստազատիչ դեր են կատարում հավասարապես թե՛ ձայնավորները, թե՛ բաղաձայնները: Եթե վերցնենք երկու հնչյուն [s] և [r], ապա նրանց պարզ կապակցութիւնն առանց ձայնավորի ոչ մի իմաստ չունի: Իսկ ձայնավորների հետ այդ նույն հնչյունները իսկույն իմաստավորվում են՝ սաբ, սեր, սէր\*, սուր: Ինչպես տեսնույ՞մ ենք, բառերի նշանակութիւնները միանգամայն տարբեր են: Տարբեր իմաստներ են ունենում բառերը նաև այն դեպքում, երբ նույն ձայնավորը փոխում է իր տեղը (հմմտ. սաբ, աւր, սրա): Երբ հնդեվրոպական որևէ լեզու արտահայտվում է սեմական գրութեան միջոցով (ասենք միջին պարսկերենը), առաջանում են հատուկ դժվարութիւններ, իսկ գրագիտութիւնը կապված է լինում երկար և բարդ պատրաստութեան հետ:

Պետք է մտածել, որ Դանիելյան կոշված նշանագրերը սեմական որևէ այբուբենին պատկանող տառանշաններ էին՝

\*Գրաբարում սեր նշանակում է սերունդ, սէր բառն ունի նույն նշանակութիւնը, ինչ որ և աշխարհաբարում:

հարմարեցված հայերենի հնչյունական համակարգին: Այդ այբուբենը հայերենի համար եղել է թերի, անկարող վերարտադրելու վանկերը, այսինքն՝ վանկերի ձայնավորները: Երկու տարվա փորձը Մաշտոցին համոզեց, որ Դանիելյան նշանագրերը հայերենի համար կիրառելի չեն: Արդյունքը եղել էր ոչ գոհացուցիչ, ուստի հարկավոր էր այլ ելք փնտրել:

Վառաձայուհի հինգերորդ տարում Մաշտոցը աշակերտների հետ ուղևորվում է Ասորիք՝ նախ Եդեսիա, ապա Ամիդ: Ներկայանում է հոգևոր բարձրագույն մարմիններին, ապա իր խումբը բաժանում երկու մասի: Մի մասը մնում է Եդեսիայում և զբաղվում ասորի դպրությամբ, իսկ մյուս խումբն անցնում է Սամոսատ և իրեն նվիրում հունարենին: Այդպիսի բաժանումը ուներ գործնական հիմքեր՝ Եդեսիայում իշխում էր ասորերենը, իսկ Սամոսատում՝ հունարենը:

Կենսագիրը հայտնում է, որ Մաշտոցը, անհանգիստ վիճակում լինելով, անընդհատ աղոթում էր՝ «շատ նեղությունների քաշեց իր ազգին՝ մի բարի օգնություն գտնելու համար»: Ամենաշնորհ աստվածը եկավ օգնության, և Մաշտոցը «իբսուրբ աջով հայրաբար ծնեց նոր և սքանչելի ծնունդներ — հայերեն լեզվի նշանագրեր»: Նույն Եդեսիայում այդ գրերը շշուշով նշանակեց, անվանեց ու դասավորեց, հորինեց սիրորաներով՝ կապերով:

Եդեսիայում գտնվեց Հռոփանոս անունով «հելլենական դպրության մի գրագիր»: Նա վերջնական ձև տվեց նշանագրերին՝ բարակին ու հաստին, կարճին ու երկայնին, առանձինին ու կրկնավորին, և Մաշտոցը անցավ թարգմանության: Վարդապետի հետ էին նաև նրա երկու աշակերտները՝ Հովհանը՝ Եկեղյաց գավառից և Հովսեփը՝ Պաղնատունից: Սկսեցին Աստվածաշնչի այն գրքից, որը կոչվում է «Առակք Սողոմոնի որդույ Դավթի թագաւորի Իսրայելի»: Կորյունի ասելով, այդ գիրքը սկզբից կոչ է անում հաղորդակից լինել իմաստությանը՝ «ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ» [Կոր., է—Ը]:

Այդ պահին ծնունդ է առնում հայ դպրությունը:

Մաշտոցը ստեղծել է այն այբուբենը, որից մենք օգտւ-  
 վում ենք առ այսօր: Նկատի ունենք, անշուշտ, ոչ տա-  
 ուերի ձևերը: Չեռագրերում եղած ամենահին տառաձևերն  
 անգամ հեռացած են իրենց նախատիպերից: Դարերի ընթաց-  
 քում առաջացել են նոր գրատեսակներ՝ երկաթագիրն իր դիր-  
 քերը մասամբ զիջել է բոլորգրին, վերջինիս հետ ժամանա-  
 կի ընթացքում գործածության մեջ է մտել նոտարագիրը, ապա  
 շղագիրը, որը հիմք է ծառայել նաև ժամանակակից ձեռագրին:  
 Պնդելով, որ այբուբենը մնացել է անփոփոխ, նկատի ունենք  
 նրա կորիզը, հիմնական կազմը: Մաշտոցը ստեղծել է 36  
 տառ, այդ տառերով են գրված մեզ հասած գրի հնագույն  
 օրինակները (XIII դ. մուտք են գործել երկու տառ ևս՝ ֆ և օ):  
 Այսպիսով, մենք սպառիչ նյութ ունենք դատելու նրա գոր-  
 ծունեության արդյունքների մասին: Կորյունի և մյուս հեղի-  
 ակաների ասածից կարող ենք պատկերացում կազմել, թե  
 ինչպիսի ուղի է անցել գիտնականի ստեղծագործական միտքը:

Ինչպես գիտենք, Դանիելյան նշանագրերը շէին կարող սողջ  
 ածել զսիւղոբայս զկապս հայերէն լեզունսն» [Կոր., էջ 46. 2]:  
 Մյուս կողմից, Եղեսիայում Մաշտոցը «նշանակեալ, անուանե-  
 ալ և կարգեալ, յօրինէր սիւղոբայիւք կապօք»: [Կոր., էջ 48.  
 10—11]: Գրաբարի սիւղոբայ-ը (կան նաև այլ գրություններ)  
 հուն. συλλαβή բառի տառադարձումն է: Ինչպես հունարե-  
 նում, այնպես և հայերենում այն նշանակում է հնչյունակա-  
 պակցություն, վանկ: Կապք բառը, որը օգտագործում են  
 Կորյունը և նրան հետևող հեղինակները, հունարեն բառի հա-  
 յերեն զուգահեռն է: Կենսագիրն ընդգծում է, որ, ի տարբե-  
 րություն Դանիելյան նշանագրերի, Մաշտոցն այնպես է  
 կազմում իր գիրը, որ հնարավոր լիներ արտահայտել հա-  
 յերենի վանկերը, այսինքն՝ նաև ձայնավորները: Գիտնակա-  
 նը ձգտել է վերարտադրել հայերենի հնչյունական ողջ  
 հարստությունը, և այդ նրան լրիվ հաջողվել է: Մաշտոցը  
 ստեղծել է իսկական այբուբեն:

Իհարկե, ոչ մի այբուբեն ի վիճակի չէ արտահայտել  
 տվյալ լեզվի հնչյունական ողջ կազմը: Դա ոչ միայն անհնա-  
 րին է, այլև անիմաստ: Լեզուն վերարտադրելու համար բա-

վական է նախատեսել գրային մի համակարգ, որը համապատասխանի լեզվի հնչույթային կազմին: Ի՞նչ է նշանակում հնչույթ կամ ֆոնեմա, ինչո՞վ է նա տարբերվում հնչյունից: Ահա այդ լեզվաբանական տերմինի բացատրությունը. «լեզվի արտահայտության պլանի նվազագույն միավոր, որը ներկայացնում է որոշակի տարբերակիչ հատկանիշների ամբողջությունը, կարող է կատարել իմաստազատիչ դեր և իրացվում է համապատասխան հատկանիշներով բնորոշվող հնչյուններով»<sup>13</sup>: Յուրաքանչյուր լեզու կարող է ունենալ հարյուրավոր առանձին հնչյուններ կամ դրանց տարբերակներ: Սակայն իմաստազատիչ դեր են կատարում դրանցից մի քանի տասնյակը: Հայերենում առանձին խուլ բաղաձայններ կարող են հակադրվել ձայնեղներին (օր. տոլ/դոլ): Հնչյունները կարող են տարբերվել շնչեղացման առկայությամբ կամ բացակայությամբ (օր. քաբ/կաբ): Հայերենը, ի տարբերություն ռուսերենի և բազմաթիվ այլ լեզուների, ունի կոշտ ք և հասարակ ք, որոնք հանդես են գալիս որպես զանազան հնչույթներ. օր. սառ (գրաբարում՝ սառնամանիք, սառույց) և սաբ: Չայնավորների իմաստազատիչ հատկությունների մասին պատկերացում են տալիս այն օրինակները, որոնք բերեցինք հնդեվրոպական և սեմական լեզուների տարբերությունը բացատրելիս (տես էջ 62): Բոլոր օրինակներն այնպես են ընտրված, որպեսզի տարբերվեն միայն խնդրո առարկա հնչյուն-հնչույթները: Դանիելյան նշանագրերը թերի են եղել ձայնավորների իմաստով, ուստի չեն արտահայտել հայերենի իմաստազատիչ բոլոր հնչյունները: Մաշտոց-բանասերի առջև մի մեծ խնդիր էր ծառայել՝ գտնել հայերենի հնչույթային համակարգը, որոշել այն հնչյունները, որոնք անպայման պիտի ունենան իրենց գրավոր զուգահեռները: Իհարկե, նա առաջնորդվել էր մեծ մասամբ իր ներըմբռնմով (հնչույթային տեսությունը սկիզբ է առնում XIX դարից), բայց բոլոր պարագաներում նրա ստեղծածը եղել է կայուն և, ինչպես ցույց տվեց մեկուկես հազարամյակի փորձը, վերին աստիճանի հաջող այբուբեն:

Այդ տիպի հնագույն այբուբենը հունարենն է: Կասկած չկա, որ Մաշտոցը առաջնորդվել է հունարենի օրինակով: Նա նախատիպից յուրացրել է ամենից կարևորը՝ հնչյունային (իսկ եթե օգտագործենք ժամանակակից տերմինը՝ հնչու-թային) սկզբունքը: Հայոց այբուբենը, ինչպես և հունարենը, խտրություն չի դնում ձայնավորների և բաղաձայնների կարևորության միջև, ձգտում է արձանագրել բոլոր իմաստազատիչ հնչյունները: Նմանությունը հունականին արտահայտվել է նաև որոշ ոչ էական հատկություններով: Հայոց տառերը դասավորված են հունարեն կարգին զուգահեռ, հունարենի համեմատությամբ հավելյալները միջանկյալ տեղեր են գրավում: Հունարենում [ս] հնչյունը հղել է երկբարբառ, ըստ այնմ էլ արտահայտվել է օ և Ս տառերի կապակցությամբ՝ օս: Հայերենում ու-ն պարզ հնչյուն է, սակայն կազմված է դարձյալ երկու տառանիշից, ընդ որում՝ առաջինը համապատասխանել է հուն. օ, իսկ երկրորդը՝ հուն. Ս-ին: Կորյունի ասելով, Հոսփանոսը աշխատել է բարակ ու հաստ, կարճ ու երկայն և այլն տառերի վրա: Հունարեն հնչյուն-տառերի բաժանման սկզբունքը այստեղ տարածված է հայկականի վրա:

Հունարենի օրինակով առաջնորդվել են մի շարք ժողովուրդներ: Այդպես են վարվել ղպտիները (քրիստոնյա եգիպտացիները): Նրանք առհասարակ յուրացրել են հունարեն այբուբենը, ավելացնելով պակասող 7 տառ: IV դ. երկրորդ կեսին գոթերի եպիսկոպոս Վուլֆիլան ձեռնամուխ է եղել Աստվածաշնչի թարգմանությանը, ստեղծելով հատուկ գոթական նշանագրեր: Վուլֆիլան ևս հասել է հունարենի սկզբունքին: Մաշտոցը այդ ուղիով է ընթացել ոչ միայն հայերեն, այլև վրացերեն և աղվաներեն գրերը ստեղծելիս: Վերջապես, IX դարում, երբ Կյուրեղ-Կոստանդինը և Մեթոդիոսը ստեղծեցին սլավոնական այբուբենը, նրանք իրենց հերթին հավատարիմ մնացին հունական սկզբունքին: Մաշտոցի հանձարեղությունը ոչ թե գրերը նոր մոտեցմամբ ձևվելու մեջ է, այլ նրանում, որ նա լիովին քմտոնել և հետև-

դականորեն կիրառել է ժամանակի ամենից առաջադեմ միտումը:

Հոռոտանոսի դերը պարզ է, նա ոճավորել է հայ նշանագրերը, դրանք միաժամանակ նմանեցնելով հունարեն գրվածքին: Բայց նա ի՞նչ նյութ է ունեցել ձեռքի տակ: Ի՞նչ ձև են ունեցել Մաշտոցի աշուղ նկարված տառերը: Տասնյակ գիտնականներ փորձել են պատասխան տալ այդ հարցերին, բերելով բազմաթիվ օրինակներ, որոնց իբր հետևել է Մաշտոցը: Այստեղ, դժբախտաբար, մեր հիմքերը խախուտ են, մանավանդ որ գործ ունենք տառերի որոշ շափով արդեն վերափոխված և կայունացած ձևերի հետ: Ինքնագործ ծագումը հարկավոր է բացառել: Հնում տառերի բոլոր համակարգերը այս կամ այն շափով յուրացված են եղել հարևաններից: Պետք է մտածել, որ այս դեպքում ևս յուրացումը կատարվել է հարևան ժողովուրդներից: Մաշտոցն օգտվել է այն գրերից, որոնց նա ծանոթ է եղել գործնականորեն: Տեսականորեն հնարավոր էր օգտագործել հույների, ասորիների, պարսիկների փորձը, օգտվել բուն արամեերեն գրությունից, որի ավանդույթը դեռևս ողջ էր: Հենց այդպիսի լուծում է առաջարկում Ա. Փերիխանյանը: Ելնելով թե՛ պատմամշակութային պարագաներից, թե՛ հնագրության տվյալներից նա գտնում է, որ հայոց նշանագրերը ձևելիս Մաշտոցը իբրև հիմք ընդունել է Հյուսիսային Միջագետքի մեզ չհասած արամեական մի համակարգ<sup>14</sup>: Խոսք կարող է լինել օգտագործման մասին ընդհանուր ձևով, առանձին տառեր Մաշտոցը կարող էր վերցնել մյուս աղբյուրներից, կամ ինքը ստեղծել: Վաղուց արդեն ուշադրություն են դարձրել, որ հայերեն ճ-ն հար և նման է դպտի՝ նույն հնչյունն արտահայտող ճ-ին: Հայերեն կոշտ ու-ն դիտում են որպես երկու փափուկ ր-երի կապակցություն Րր, իսկ վ-ն առաջացնում են երկու փոքրատառ ւ-երից՝ վ\*: Սրամիտ առաջարկների ցուցակը կարելի է երկարացնել, սակայն դրանք մեծ մա-

\* Ի դեպ, եթե դա այդպես է, ապա արդեն Մաշտոցի օրոք պիտի առաջանային ոչ միայն երկաթագրի, այլև բոլորագրի սաղմերը. չէ՞ որ երկաթագրի վրձը ունի ի ձև, իսկ ւ-ն բխում է բոլորագրից:

սամբ կռահումներ են, որոնք շատ դժվար է ինչպես ապացուցել, այնպես էլ հերքել: Պետք է ասենք, որ որքան էլ հետաքրքիր լինի այդ հարցը, այնուամենայնիվ այն երկրորդական նշանակութունն ունի: Ինչպես ասացինք, Մաշտոցի իսկական ներդրումը եղել է համակարգի ընտրութիւնը և ոչ թե նրան համապատասխանող նշանների ձևավորումը:

Հայոց նորաստեղծ գրերն արժանացան Ասորիքի հոգեւորականների գովասանքին: Մաշտոցն իր աշակերտների հետ վերադարձավ Հայաստան: Կորյունի ասելով դա եղել է Վռամշապուհի վեցերորդ տարում: Մաշտոցը մոտենում է նոր քաղաքին՝ Վաղարշապատին, այժմյան էջմիածնին: Հայտնում են թագավորին ու կաթողիկոսին և, «ներանք նախարարագունդ ավագանու բոլոր բազմութիւնն առնելով՝ քաղաքից դուրս եկան, Ռահ գետի ափին դիմավորեցին երանելիին» (Ռահ գետը, հավանաբար, Երասխ-Արաքսն է): «Եվ ցանկալի ողջույնը միմյանց տալուց հետո՝ այնտեղից ցնծութիւն ձայներով և հոգևոր երգերով ու բարձրաձայն օրհնութիւններով հա դարձան քաղաքը, և տոնական ուրախութիւնով անցկացրին օրերը» [Կոր., Թ]:

Ե՞րբ են ստեղծվել հայոց նշանագրերը. ահա մի հարց, որի վրա տքնել է գիտնականների 2—3 սերունդ: Առկա տվյալները հակասական են: Բերենք երկու օրինակ: Դանիելյան նշանագրերը Մաշտոցի ձեռքն են ընկնում Վռամշապուհ արքայի հինգերորդ տարում՝ այսպես է ասված Վարքի՝ գիտական շրջանառութիւն մեջ մտած բնագրում: Մաշտոցը այդ գրերով երկու տարի մանուկներ է կարդացնում, ապա հուսահատվում է և դարձյալ Վռամշապուհի հինգերորդ տարում գնում է արտասահման: Վարքի վերջին՝ ԻԹ գլուխք ամբողջութիւնով կազմված է ժամանակագրական հաշիվներից: Այդ հատվածի՝ Կորյունի գրչին պատկանել-չպատկանելուց անկախ, այն շատ կարևոր է և ցույց է տալիս հեղինակի լավատեղյակութիւնը անցքերի հերթականութիւնն ու ժամանակագրութիւնը: Այստեղ ասված է, որ հայոց դպրութիւնից մինչև սրբի վախճանն անցել է 35 տարի: Այժմ կարելի է ապացուցված համարել, որ Մաշտոցն իր մահկանացուն

կնքել է 440 թ. փետրվարի 17-ին, շաբաթ օրը: Այսպիսով, գրերի գյուտը տեղի է ունեցել 405—406 թթ.: Իսկ Ղազար Փարպեցին հայտնում է, որ Վուամշապուհը գահի վրա է հաստատվել պարսից Շապուհ Գ-ի օրոք (383—388), ուստի կորյունի հաղորդած հինգերորդ տարին (երբ ստեղծվել են գրերը) 393 թ. այս կողմ չի անցնում: Նման հակասությունների թվարկումը կարելի է շարունակել:

Դեպքերի ժամանակագրությունը որոշելու ուղղությամբ կատարված մեծ աշխատանքը հնարավորություն է տվել անշատել առավել վստահելի տվյալները սխալներից (վերջիններս հաճախ առաջացել են բնագրերի հետագա աղճատումներից) և հանգել քիչ թե շատ վստահելի արդյունքների, այն է՝ հայոց նշանագրերի ծննդյան թվականն է՝ 405—406 թթ.: Ներկա գրքում դժվար թե անհրաժեշտություն լինի ավելի մանրամասն կանգ առնել այդ՝ ինքնին թե՛ կարևոր, և թե՛ հետաքրքիր հարցի վրա<sup>15</sup>:

Վերադառնալով հայրենիք, Մաշտոցն ու իր աշակերտները զբաղվում են թարգմանությամբ, գրչագրեր են ընդօրինակում, դասավանդում: Հայոց գրերի գաղափարը սկզբից ևեթ մոտ է եղել Սահակ կաթողիկոսին: Այժմ նա Մաշտոցին հավասար հովանավորում, խրախուսում ու ճիշտ ընթացք է տալիս այդ գործունեությանը: Ինքը՝ վարդապետը, շրջում է երկրով մեկ, դուրս գալիս նաև հայրենիքի սահմաններից: Նրա ճանապարհորդությունների երեք երթուղու վրա հատուկ պիտի կանգ առնենք:

Հայաստան վերադառնալուց և Սյունիք այցելելուց միառժամանակ հետո, — ասում է վարքագիրը, — Մաշտոցը հոգ տարավ նաև «բարբարոսական» կողմի համար՝ վրացերեն լեզվի նշանագրեր հորինեց: Գրեց, դասավորեց, հարդարեց, ինչպես ընդունված էր: Իր հետ վերցնելով մի շաբթ լավագույն աշակերտների, իջավ Վրաց աշխարհը: Ներկայացավ Բակուր թագավորին և աշխարհի Մովսես եպիսկոպոսին: Թագավորը, ազնվականները, ողջ երկիրը խոնարհվեցին նրա առջև [Կոր., ԺԵ]:

Այդ շրջանում Վիրքի (Արևելյան Վրաստան, Քարթլի) թե՛ քաղաքական վիճակը, թե՛ մշակութային զարգացումը էապես չէր տարբերվում Հայաստանից: Հայոց երկրի արեւելյան մասի նման, Վիրքը գտնվում էր պարսից ճնշման տակ (ճիշտ է, թագավորական իշխանությունն այստեղ հարատեւեց, մինչդեռ Հայաստանում այն տապալվեց դեռս Մաշտոցի օրոք): Պետական կրոնն ճանաչված քրիստոնեությունը խոր արմատներ դեռևս չէր ձգել, հեթանոսական տարերքը (ինչպես և Հայաստանում) եղել է զորեղ: Եվ ճիշտ այնպես, ինչպես և Հայոց երկիրը մի քանի տարի առաջ, Վիրքը զուրկ էր սեփական գրերից (այդ նկատի ունի Կորյունը, երկիրն անվանելով «բարբարոսական կողմ»): Տիպաբանական նմանություններն ակներև են:

Քրիստոնյա Վիրքը, ինչպես նաև քրիստոնյա Աղվանքը Հայաստանի բնական դաշնակիցներն են եղել: Հաջորդ գրություններում ցույց կտանք, որ պարսից ճնշման դեմ ըմբոստությունը միասնական է եղել, իր հերթին դրացիներին կապելով միմյանց: Հայ գրականության մեջ տարածված «Հայք, Վիրք, Աղուանք» երրորդության բանաձևը (սկիզբ է առնում արդեն Կորյունի մոտ, էջ 78. 13, հատկապես տարածված է Ղազար Փարպեցու Պատմության մեջ) արտահայտում է ճակատագրի միասնության գաղափարը: Զարմանալի չէ, որ Մաշտոցի նման լայնախոհ քաղաքականագետը ձգտել է գիր ստեղծել նաև հարևան ազգերի համար:

Մաշտոցը Վիրքում վրացերենի Ջաղա անունով թարգման է գտնում, «այր գրասէր և ճշմարտահաւատ»: Բակուր արքան հրաման է արձակում մանուկներ ժողովել և հանձնել Մաշտոցին: Վարդապետը դրանց անց է կացնում ուսման բովից, ազատում հին հավատքի մնացորդներից: «Նրանց,—ասում է Կորյունը,— որ այնքան առանձին և բաժանված լեզուներից ժողովվեցին, մեկ աստվածային պատգամներով կապեց, դարձրեց մեկ ազգ, մեկ աստծու փառաբանիչներ» [Կոր., ԺԵ]:

Այս հատվածում, ինչպես և ամենուրեք, վարքագիրը ձգտում է կերտել իր հերոսի ընդհանրացված դիմանկարը:

Մանրամասնութիւնների, առանձնահատկութիւնների մեջ չի մտնում, ընդգծում է էականը՝ Մաշտոցը հոգ է տանում Վիրքի համար, մշակում վրաց այբուբեն, աշակերտներ հավաքում, վաճառում հեթանոսութեան հետքերը, վրացիներին դարձնելով մի ազգ։ Դիմանկարը ամբողջութեամբ կառուցված է տիպային մանրունքներից, և արժեքավորելով հաղորդածի իսկութիւնը, մենք պարտավոր ենք ելնել վարքագրի հաղորդած ընդհանուր գաղափարի հավաստիութիւնից։ Մաշտոցի ոչ մի քայլը չի հակասում պատմամշակութային այն իրադրութեանը, որը ստեղծվել էր Վիրքում V դ. սկզբներին։ Վրաց գրերը առաջացել են նույն պայմաններում, նույն գործոնների ազդեցութեամբ, ինչ որ հայկականները։ Եվ նրանք կապված են նույն անձնավորութեան՝ եկեղեցական գործիչ և քաղաքականագետ Մաշտոցի անվան հետ։ Մաշտոցն այստեղ հանդես է գալիս ոչ թե որպէս մի հայ, որը ժամանել է Վիրք, նպատակ ունենալով լուծել վրացիներին հուզող առանձնահատուկ խնդիրներ, այլ որպէս համընդհանուր հոսանքի պարագլուխ։

Գնահատելով Մաշտոց-գիտնականի ներդրումը, ուշադրութիւն ենք դարձնում նախ և առաջ, որ վրաց այբուբենը հենվում է ճիշտ այն սկզբունքների վրա, ինչ որ և հայկականը։ 38 միավորից բաղկացած՝ դա կատարյալ հնչյունային այբուբեն է։ Ինչպէս և հայկականը՝ այն մեզ է հասել առանց էական փոփոխութիւնների և փայլուն կերպով ծառայում է իր նպատակին։ Հայերենի պէս վրաց այբուբենը պատկանում է այն անբակտելի շղթային, որի առաջին օղակը հունարեն նշանագրերն են։ Վրաց գրերի առաջացման պարագաներն ու ժամանակը որոշելիս պիտի ելնել ընդհանուր պատմամշակութային իրադրութիւնից։

Ասացինք, որ վրաց նշանագրերը կազմում են տիպիկ հնչյունային այբուբեն, այստեղ ևս նրա հեղինակին հաջողվել է որոշել լեզվի հնչութային կազմը։ Որչա՞փ գիտեր Մաշտոցը վրացերեն, տիրապետե՞լ է արդյոք այդ լեզվին՝ ահա հարցեր, որոնց պատասխանը կարող է միայն մտահայեցողական, ենթադրական լինել։ Մաշտոցն ունեցել է վրացի

կամ վրացագետ խորհրդատուներ՝ այդ առումով Զաղա թարգմանչի կերպարը ինչ-որ չափով խորհրդանշական է դառնում: Վրաց այբուբենում իրացվել է հնչյունային համակարգի սկզբունքը, իսկ այդ սկզբունքը տվյալ պայմաններում պատկանել է Մաշտոցին: Մաշտոցը ներշնչել է իր հիմնական գաղափարը օգնականներին և մտել պատմության մեջ որպես վրաց նշանագրերի հեղինակ նախ և առաջ հենց այդ առումով:

Մենք կանգ չենք առնում վրաց նշանագրերի ձևի հետ կապված հարցերի վրա: Հայկականի և վրացականի նմանությունները բացահայտ են, սակայն սխալ կլինեք մեկը անմիջապես բխեցնել մյուսից: Գրային ստեղծագործությունը ունեցել է ավելի բարդ ուղի. ինչպես և հայերենի դեպքում, այդ հարցը ենթակա է նոր ուսումնասիրության:

Վերագառնալով Հայաստան, Մաշտոցը շարունակում է իր սովորական աշխատանքը, նպատակ ունենալով «զորացնել, նորոգել և հաստատել» երկրի այն գավառները, որոնք նրան արդեն ճանաչել էին որպես ուսուցչի: Միաժամանակ նա հոգում է նաև «վասն կէս ազգին Հայոց, որ էր ընդ իշխանութեամբ թագաւորին Հոռոմոց»: Կորյունի շարադրանքից կարելի է կռահել, որ կես ազգ ասելով, Մաշտոցը նկատի է ունեցել ոչ միայն 387 թ. բաժանումից հետո Բյուզանդիային անցած Մեծ Հայքի բնակչությունը, այլև Փոքր Հայքի հայերին՝ այն երկրի, որն արդեն մ. թ. I դարում դարձել էր կայսրության գավառներից մեկը: Որքան և տարբեր լինեն այդ հատվածները իրենց քաղաքական, սոցիալ-տնտեսական, նաև մշակութային զարգացման տեսանկյունից, միասնությունը չէր խզվել (ասածս վերաբերում է հատկապես Մեծ Հայքի արևմտյան հողերին): Թե՛ պարսից շահանշահի, թե՛ բյուզանդական կայսեր հայ հպատակները խոսում էին նույն լեզվով, հավատարիմ էին նույն ավանդույթներին, պաշտում էին նույն աստծուն:

Մաշտոցն ուղևորվում է «հունաց կողմերը»: Բյուզանդական ռազմական կառավարիչ Անատոլիոսը Թեոդոս կայսրին հրովարտակով հաղորդում է հայ վարդապետի գալստյան

մասին: Մինչդեռ Մաշտոցն անցնում է Երկրորդ Հայքի գըլ-  
խավոր քաղաք Մելիտենեն, ներկայանում տեղի եպիսկոպոս  
Ակակիոսին: Այստեղ թողնելով իր աշակերտներից Ղևոնդին,  
նա շարունակում է ուղին դեպի Կոստանդնուպոլիս: Ըստ Կոր-  
յունի, մայրաքաղաքում նրան փառահեղ ընդունում են կայս-  
րը, կայսրուհին, Ատտիկոս պատրիարքը: Հրովարտակ առ-  
նելով կայսրից, Մաշտոցը վերադառնում է Անատոլիոսի մոտ,  
և նա, ի կատարումն կայսեր կամքի «պատգամավորներ  
ուղարկեց կայսրի իշխանության մեջ հղած հայոց կես ազգի  
գավառները՝ բազմաթիվ մանուկներ ժողովելու և նրանց թո-  
շակ նշանակելու հարմարավոր տեղերում, ուր և երանելին  
իր ուսուցչութունը գործադրում և քաղցրացնում էր ժողով-  
վածների համար» [Կոր., ԺԶ]:

Միայն գրերի տարածման հարցը չէր, որ ստիպել էր  
Մաշտոցին կտրել Վաղարշապատից Կոստանդնուպոլիս տա-  
նող երկար ուղին: Արևմտյան Հայաստանում տարածվել էր  
բարբարիանոսների (մյուս հեղինակների մոտ՝ բորբորիա-  
ների) աղանդը: Աղանդների նկատմամբ, որոնք սպառնում  
էին քակտել կրոնական միասնությունը, եկեղեցին միշտ անո-  
ղոք է հղել: Այս դեպքում ևս հերձվածողներին տանջում էին  
բանտերում, գելարաններում, իսկ երբ տեսան, որ նրանք չեն  
հրաժարվում իրենց ուսմունքից՝ սկսեցին ենթարկել սաստիկ  
ծեծի, խաչեցին, մրեցին, խայտառակեցին ու աշխարհից դուրս  
քշեցին [Կոր., ԺԶ]:

Թվում է, որ հերձվածը պիտի անհանգստութուն պատ-  
ճառեր ամենից առաջ Կոստանդնուպոլիսի եկեղեցուն, մինչդեռ  
աղանդավորների հալածման տհաճ գործն իր վրա է վերցնում  
Մաշտոցը: Արդյոք դա մի վկայություն չէ՞, որ Բյուզանդա-  
կան Հայաստանի գոնե նոր ձեռք բերված հողերը դեռևս  
գտնվում էին հայ եկեղեցու իրավասության ներքո:

Ղևոնդից բացի, արևմուտքում մնացին 2 աշակերտ ևս՝  
Ծնովքն ու Դանան: Ինքը՝ Մաշտոցը, իր հիմնական խմբով  
վերադարձավ նոր Քաղաք, ներկայացավ Սահակ կաթողի-  
կոսին և Արտաշես Ծ թագավորին: Ատտիկոսը պատրիարք է  
հղել 405—425 թթ., Արտաշեսը գահակալել է 422—428 թթ.:

Այդ տվյալների շնորհիվ կարելի է պարզել, որ Մաշտոցը արևմուտք է մեկնել ոչ ուշ, քան 425 թ. և Հայաստան վերադարձել դեռևս Արտաշես Ե-ի օրոք:

Տակավի՛ն արտասահմանում եղած ժամանակ Մաշտոցի մոտ էր եկել Բենիամին անունով մի աղվան քահանա: Մաշտոցը «հարցրեց ու քննեց աղվաններն լեզվի բարբարոս խոսքերը, ապա վերուստ պարզեցած իր սովորական կորովամբուսությամբ նշանագրեր հորինեց և Քրիստոսի շնորհքի աշողությամբ, կշռադատեց, կարգավորեց, հաստատեց» [Կոր., էջ 69. 24—28]: Այնուհետև, նա Հայաստանից ուղևորվեց Աղվանք: Ներկայացավ Երեմիա եպիսկոպոսին, Արսվաղ թագավորին, նրա շրջապատի ազնվականներին, բացատրեց իր գալու նպատակը (այն է՝ տարածել իր ստեղծած աղվանից գրերը): Եպիսկոպոսն ու թագավորը «հանձն առան ընդունել դպրությունը և հրամայեցին իրենց իշխանության գավառներից ու տեղերից դպրության արվեստի համար բազմաթիվ մանուկներ բերել, ժողովել, արժանավոր ու հարմարավոր տեղերում դասատներ-դպրոցներ [կազմել] և [նրանց] ապրուստի համար թոշակ նշանակել» [Կոր., Ժէ]:

Երեմիա եպիսկոպոսը անցավ աստվածային գրքերի թարգմանությանը, «որով իսկույն մի ակնթարթում Աղվանքի վայրենամիտ և դատարկասուն և անասնաբարո մարդիկը մարդարեազետ և առաքելածանոթ և ավետարանի ժառանգների դարձան»: Արսվաղ թագավորը հրամայեց իր «սատանայակիր և դիվամուլ ժողովրդին՝ ձեռք քաշել, ազատվել հնացած դատարկ բաներից և հնազանդվել Քրիստոսի ամենահեշտ լծին»: Հիշենք, որ այդ բոլորը կատարվում էր մի երկրում, ուր քրիստոնեություն քարոզը սկսվել էր միայն IV դ. առաջին կեսից:

Աղվանքից հեռանալով դեպի Բաղասական երկիրը, Մաշտոցը, որպես վերակացու, թողնում է իր աշակերտներից մի քանիսին. վերջիններիս միանում է արքունական դռան քահանա Հովնաթանը, որը «մեծ հոժարություն էր ցույց տվել նրա (Մաշտոցի) վարդապետության համար» [Կոր., Ժէ]:

Այն հանգամանքները, որոնք ստիպել էին Մաշտոցին հոգ տանել հայոց և վրաց նշանագրերի համար, առկա են եղել նաև Աղվանքում: Ավելին. իր աշխարհագրական դիրքի պատճառով Աղվանքը հեռու էր քրիստոնյա Արևելքի նշանավոր կենտրոններից, ուստի ավետարանի քարոզը այստեղ հանդիպում էր հատուկ բարդությունների: Աղվանքը չէր հասել կոնսուլիդացման այն մակարդակին, որը հատուկ էր արդեն Հայաստանին և (ավելի նվազ չափով) Վրաստանին: Եվ եթե հայերի ու վրացիների մոտ քրիստոնեական քարոզը, նոր ուսմունքի տարածումը հեռու էր իր ավարտից, ապա դա առավել չափով աչքի էր ընկնում Աղվանքի դեպքում: Սակայն երկրի պատմամշակութային զարգացման միտումը եղել է նույնը, ինչ որ հարևանների մոտ, նույնն է եղել նաև հետևանքը: Եվ ոչ այլ ոք, քան սեփական դպրութայան գաղափարակիր Մաշտոցը կերտում է նաև աղվանից նշանագրեր:

Աղվանքում ծավալած Մաշտոցի գործունեությունը Կորյունը շարադրում է գրեթե այնպես, ինչպես Վիրքում և Արևմբլտյան Հայաստանում: Մաշտոցը գտնվում է իշխանության հովանավորության ներքո, ներկայացնում է իր ստեղծած գրքերը: Այնուհետև աշակերտներ են հավաքում, դպրոցներ բացում, Մաշտոցը ընտրում է իր աշակերտներին կամ գաղափարակիցներին, և նրանք անցնում են թարգմանություն: Շարադրանքի տիպարանական նմանությունը ստիպում է ընդունել Կորյունի հաղորդածի միայն էությունը և շտարվել մանրամասնություններով: Սակայն էություն վերաբերյալ կասկածի տեղիք չկա, Մաշտոցի կազմած նշանագրերով սկսեցին թարգմանել Աստվածաշունչը՝ «Ծրեմիայի եպիսկոպոսի ի ձեռն առեալ՝ վաղվաղակի զաստուածային գրոց թարգմանութիւնս ի գործ արկանէր» [Կոր., էջ 70. 25—26]: Բայց աղվանից գրերի ճակատագիրը այլ էր:

Մեզ է հասել 52 տառանիշ պարունակող աղվանից այբուբենը՝ այստեղ կիրառված է հնչյունային նույն սկզբունքը: Հայտնաբերվել են մի քանի արձանագրություններ, սակայն դրանց վերծանությունը բավարար արդյունքներ չի տվել:

Հայտնի է, որ դեռևս VI դ. այսրկովկասյան երեք եկեղեցիներն զրազրությունը ընթացել է համապատասխան լեզուներով՝ հայերեն, վրացերեն, աղվաներեն, բայց Աղվանքի գրություններից ոչ մի նմուշ չի պահպանվել: Չեն մնացել նաև աղվանից գրչագրեր, շնայած այդպիսիք անշուշտ եղել են: Ամենայն հավանականությամբ, որպես հասարակության կողմից ճանաչված երևույթ, աղվանից դպրությունը չի հասել այն մակարդակին, ինչ հայկականը և վրացականը: Աղվանից գրերը կիրառվել են սահմանափակ ոլորտում: IV թե V դ. Աղվանից պետության կազմի մեջ են մտնում հայկական շրջանները, և բուն աղվանական մշակույթը հայկականի հետ մրցակցելիս պարտություն է կրում: Հավանաբար այդ է պատճառը, որ աղվանից դպրության նմուշները մեզ են հասել շնչին քանակությամբ: Ավելացնենք, որ «աղվանից լեզու» արտահայտությունը պայմանական է: Մաշտոցը գրեր է ստեղծել Աղվանքում տարածված տասնյակ լեզուներից մեկի համար, որը և պիտի ճանաչվեր համընդհանուր (հավանաբար պետական) և, անտարակույս, եկեղեցական լեզու: Բազմալեզվությունն էլ, հավանաբար, իր հերթին է խոչընդոտել գրական միակ լեզվի ամրապնդմանը:

\*\*\*

Ինչպես ասացինք վերևում, Մաշտոցը վախճանվեց 440 թ. փետրվարի 17-ին: Նրանից 6 ամիս առաջ կյանքից հեռացել էր Սահակ կաթողիկոսը: Երկուսն էլ տեսան, թե ազգային դպրություն ստեղծելու ուղղությամբ ինչպիսի՞ արդյունքներ ունեցավ նրանց գործունեությունը: Ի՞նչ բնույթ է ունեցել այդ դպրությունը:

Ասվեց, որ հայ գրականությունը սկսել է Սողոմոնի առականների թարգմանությունից (որպես սույն գլխի վերնագիրը ընտրվել են այն բառերը, որոնք առաջին անգամ գրվել են հայերեն նշանագրերի միջոցով): Ելնելով կորյունի մի շարքակնարկներից, կարելի է հետևեցնել, որ Մաշտոցի և Սահակի ձեռքով թարգմանվել են Աստվածաշնչի Մենդոց գիրքը, մարգարեական գրքերը, ավետարանները, Պողոսի և մյուս

առաքյալների թղթերը, Հովհաննու Հայտնությունը, իսկ եթե «ամենայն աստուածատուր աւանդութեանցն» արտահայտությունը հասկանանք բառացի, ապա ամբողջ Աստվածաշունչը<sup>16</sup>: 431 թ. հետո արտասահմանից Հայաստան վերադարձան Եզնիկ Կողբացին, Ղևոնդը, Կորյունը: Նրանք իրենց հետ բերեցին Աստվածաշնչի ստույգ օրինակները: Հին թարգմանության մեջ մուծվեցին անհրաժեշտ ուղղումներ: Նույն Սահակը հայերենի էր փոխադրել «զեկեղեցական գրոց գումարութիւնն», այսինքն այն գրքերը, որոնք անհրաժեշտ են արարողության համար: Թարգմանել են Աստվածաշնչի մեկնություններ, հայրաբանական գրականության առանձին կոթողներ<sup>17</sup>: Ահա այդ երկերն են կազմել մեր միջնադարյան գրականության կորիզը, մի գրականություն, որը հարստացել ու ճոխացել է ընդհուպ մինչև XIX դարը: Այդ գրականությունը բաժանվել է զանազան տեսակների: Հին և Նոր կտակարանի (դրա կողքին՝ Նոր կտակարանի մեջ մտած չորս ավետարաններից բացի նաև պաշտոնական ճանաչում չգտած պարականոն ավետարաններ), դավանաբանություն, մեկնություններ, ջատագովություններ, քարոզներ, աստվածապաշտության գրքեր, պատմություն, փիլիսոփայություն, վարքագրություն, նամականի, եկեղեցական կանոններ, իրավաբանություն, քերականություն, հոգոր և աշխարհիկ բանաստեղծություններ, տարբեր տեսակի բառարաններ, տոմար, մաթեմատիկա, քիմիա, բժշկություն և գրական այլ տեսակներ են ներկայացված հայերեն գրչագրերում: Նույն ժանրերը մենք կգտնենք հունական և ասորական, վրացական և հաբեշական գրականություններում: Այդ դպրության հիմնական շերտը թարգմանական է: Պատմամշակութային տեսակետից, — իրավամբ պնդում է ժամանակակից գրականագետը, — թարգմանական և ինքնուրույն երկերի զանազանումը սոսկ պայմանական նշանակություն ունի, քանի որ թե՛ բովանդակության, թե՛ ձևի առումով դրանք ներկայացնում են միասնական գրական իրողության հավասարաբեք կողմերը: Միջնադարում, ըստ էության, նրանց տարբերությունը բոլորովին չի գիտակցվել, և հայ ընթերցողի կողմից միևնույն պատ-

վին են արժանացել ինչպես ազգային, այնպես և օտար հեղինակները: Դրա վկայութունն են հայկական բազմահազար ձեռագրերը, որոնցում ինքնուրույն և թարգմանական գործերը հանդես են գալիս կողք-կողքի, առանց տարանջատման, և հազվադեպ կարելի է հանդիպել ձեռագիր ժողովածուների, որոնք կազմված լինեն միայն հայ հեղինակների երկերից»<sup>18</sup>:

Աշխատութունները, թարգմանելով ու խմբագրվելով, անցնում էին մի դպրութունից մյուսը և ամենուրեք որդեգրվում, ամենուրեք դիտվում որպես մայրենի հողի հարազատ պտուղներ: Դրական ժանրերի նույնութունը և թարգմանական հուժկու շերտը հիմք են տալիս արևելաքրիստոնեական գրականութունը դիտելու ոչ միայն որպես ազգային դպրութունների մի հավաքածու, այլ նաև որպես միասնական գրականութուն, որը իրեն դրսևորում է լեզվային զանազան տարբերակներով: Պետք է ասել, որ հայերեն տարբերակը առանց բացառության արտահայտում է այդ գրականության ողջ հարստութունը: Այդ գրականության բոլոր ժանրերը այս կամ այն չափով ներկայացված են հայերեն:

Եթե ոչ Մահակի ու Մաշտոցի օրոք, ապա գոնե նրանց ապրած դարում այդ գրականութունը մեծ մասամբ ձևավորվել էր, համենայն դեպս որոշվել էին նրա հիմնական միտումները: Յուրացնելով, սեփականելով հունալեզու և ասորալեզու հուշարձանները, հայերը ի վիճակի էին ստեղծել նաև սեփական աշխատութուններ: Մենք կանգ կառնենք միայն պատմագրության վրա, գրական մի տեսակի, որտեղ դրսևորվում է ոչ միայն այս կամ այն հեղինակի, այլև ողջ հասարակության անկրկնելի դիմանկարը: Պատմագրութունը ինքնատիպ է թեկուզ այն պատճառով, որ ինքնատիպ լու անկրկնելի են յուրաքանչյուր ժողովրդի պատմական անցյալն ու ներկան:

«Պատմութուն» ասելով նկատի ունենք ոչ այնքան տվյալ գործի ժանրային հատկութունները, որքան այդ ճյուղին պատկանող երկերի գործառական, ֆունկցիոնալ դերը: «Մաշտոցի վարքը», Ագաթանգեղոսի աշխատութունը, Ղազար Փարպեցու «Հայոց պատմութունը»՝ բոլորը պատկանում են վաղ

միջնադարյան պատմագրութեանը, բայց որքա՛ն տարբեր են դրանք գրականագիտական առումով: Պատմական երկի հետոս են լինում թե՛ անհատները, թե՛ հասարակութիւնը (բաժանումն, անշուշտ, պայմանական է), բայց բոլոր դեպքերում նրանք դիտվում են ընթացքի մեջ: Պատմութիւնը միշտ անցյալ է, սակայն այդ անցյալը կարող է լինել և՛ հեռավոր, և՛ անմիջական: Բոլոր դեպքերում՝ այդ անցացլը դիտվում է պատմագրի տեսանկյունից, ուստի և արտահայտում իր ժամանակակից վերաբերմունքը: Որքան և անձնական լինի պատմագրի տեսակետը, այն միաժամանակ նաև հասարակական հայեցակետ է, հասարակական կարծիք: Անցյալին գնահատական են տալիս, ելնելով ժամանակակից շափանիշներից:

Եթե պատմագրութեան սահմանները որոշենք այդ ճշուղին պատկանող երկերի ֆունկցիոնալ նշանակութիւնից ելնելով, ապա ինքնուրույն առաջին գործը Կորյունի «Մաշտոցի Վարձն» է: Նախորդ էջերում առիթ ունեցանք ինչ-որ շափով վերլուծելու այդ հոյակապ երկը, որը թե՛ Մաշտոցի, թե՛ նրա դարաշրջանի պատմութիւնն է: Վարքը տիպիկ միջնադարյան գործ է: Կորյունը գրել է այն ոչ թե սեփական նախաձեռնութեամբ, այլ ենթարկվելով Հովսեփ Վայոցձորեցու և Մաշտոցի մյուս աշակերտների հորդորներին [Կոր., էջ 22. 15—17]: Հետագայում ճիշտ նույն կերպ Դավիթ Մամիկոնյանի կողին կարձագանքի Եղիշեն, Վահան Մամիկոնյանի առաջարկին՝ Ղազար Փարպեցին, Սահակ Բագրատունու պատվերին՝ Մովսես Խորենացին: Զեռնարկած գործն իհարկե եղել է «առուել քան զկար մեր» [Կոր., էջ 22. 18], ինքնանվաստացումը միջնադարյան քրիստոնյա մտայնութեան բնորոշ կողմերից մեկն է: Սակայն ամենից բնորոշը, ամենից հատկանշականը թաքնված է (եթե այն ճիշտ ենք ընկալում) հետևյալ նախադասութեան մեջ: Կորյունը հարց է տալիս՝ թույլատրելի է արդո՞ք կատարյալ մարդկանց վարքը շարադրել ոչ թե «արվեստախոսելով», ոչ թե ելնելով սեփական «կարծիքից», այլ քո առջևը կանգնածին՝ բարձրացնել տրված օրինակների օգնութեամբ: Արուեստախօսեմ բայն,

անշուշտ, հուն. τεχνολογέω -ի բառապատճենն է: Հունարենի գլխավոր նշանակութիւններէց մեկն է՝ կանոններ հաստատել, նույն իմաստով է օգտագործված նաև հայերեն բառը: Կորյունը մերժում է այն եղանակը, երբ մարդ կերպար, ստեղծելիս իր սեփական մոտեցումն է հաստատում, այսինքն՝ երբ նա ելնում է իրեն հատուկ շահանիշներէց: Սեփական կարծիքը դարձյալ մերժելի է: Բայց ի՞նչ է նշանակում կարծիք: Տվյալ դեպքում դա սխալ կարծիքն է: Նոր հայկազյան բառարանը (հ. Ա, էջ 1070) օրինակներ է բերում, երբ «կարծիքը» բնորոշ կերպով հակադրվում է ճշմարտությանը՝ «ճշմարտապէս ոչ կարծեօք», «զկարծիս քան զճշմարտութիւն կարծեցին պատուական»: Ճիշտ կերպարը կարելի է կերտել «տվյալ օրինակների» օգնութեամբ, իսկ օրինակները, որոնց դիմում է Կորյունը հաջորդ գլուխներում, ամբողջութեամբ վերցված են Հին և Նոր կտակարաններից: Թվարկվում են ներանք, ուլբեր գովքի են արժանացել իրենց կենդանութեան օրոք: Այսպիսով, գովաբանելով ընդդիմակացին (տվյալ դեպքում՝ Մաշտոցին), հարկավոր է շարադրանքը համակերպել Աստվածաշնչի պատկերներին, հրաժարվել իրական կյանքի անմիջական ընկալումից: Այսպես մեկնելու դեպքում այդ նախադասութիւնը հանդես է գալիս որպես ոչ միայն Կորյունի, այլև, առհասարակ, միջնադարյան աշխարհընկալման դասական բանաձև<sup>19</sup>:

Մաշտոցի իրական կերպարը հնարավոր է կերտել ժամանակակից գիտական եղանակով: Ինքը՝ Կորյունը, ձգտում է ներկայացնել հավաքական բնույթի դիմանկար, այստեղ շատ բան ծայրահեղ ձևով ընդհանրացված է: Այդ հանգամանքը ընդգծում է հենց հեղինակը: Իհարկե նա (իր իսկ տեսակետից) հավատարիմ է ճշմարտութեանը: Լինելով Մաշտոցի ու Սահակի աշակերտը, գործակիցը, գաղափարակիցը, պատկանելով նրանց շատ մոտ կանգնած մարդկանց շրջապատին, նա հնարավորութիւն է ունեցել մանրամասն պատկերացում կազմել իր հերոսների մասին: «... Ոչ թե հին զրույցներից տեղեկանալով և մատենագրելով կարգեցինք, — գրում է նա, — այլ մենք հենց ականատես եղանք նրանց

կերպարանքներին, և ընթերակա՝ (ներանց) հոգևոր գործերին, և լսող՝ նրանց շնորհապատում ուսման, և նրանց արբանյակն՝ ըստ ավետարանական հրամանների»: Բայց միաժամանակ «...շատը թողնելով, (իսկ ճիշտը) նշանավոր գիտակներից քաղելով, այս համառոտը գրեցինք»,— շարունակում է նա: Անհնարին է ներկայացնել Մաշտոցի ու Սահակի ողջ կյանքը՝ «ուստի պատասպարվեցինք այս ավելի հեշտ ու դյուրինով — առաքելականով: Սրբերի բազմախուռն վաստակները թողեցինք, որպեսզի մանրամասնորեն պատմենք կարևորագույն հանգամանքները [Կոր., ԻԸ]: Սրբի կյանքը պիտի օրինակ ծառայի նրա աշակերտներին, հոգևոր զավակներին, ապագա սերունդներին՝ այդ հանգամանքն է պայմանավորում այն ձևն ու եղանակը, որոնցով պիտի կրճատվի ու փոփոխվի՝ խմբագրվի իրական կենսագրությունը:

Մենք մանրամասն կանգ առանք Կորյունի ստեղծագործության ելակետների վրա, որովհետև դրանք այս կամ այն շափով հատուկ են ողջ միջնադարյան գրականությանը: Նրա ընդհանուր սկզբունքներն առկա են հայ դպրության արդեն անգրանիկ գործերում:

Ստեղծման հերթականության կարգով վարքից հետո գալիս է Եղիշիի հռչակավոր երկը: Նրա առաջին մասը գրվել է 458 թ. հետո, իսկ երկրորդը՝ ոչ ուշ, քան 464 թ.: Այդ կոթողի բուն վերնագիրն է՝ «Բան վասն Հայոց պատերազմին»: Բան նշանակում է խոսք, ավելի նեղ իմաստով՝ պատմություն<sup>20</sup>, Պատեհազմ բառը օգտագործված է, ըստ երևույթին, երկու իմաստով. նշանակում է այսօրվա հասկացողությամբ թե՛ պատերազմ, թե՛ ճակատամարտ, ընդ որում՝ հեղինակը նկատի ունի Ավարայրի ճակատամարտը, 450—451 թթ. ապստամբության գագաթնակետը:

«Բան վասն Հայոց պատերազմին» վերնագրված աշխատությունը բազմապլանային է, հեղինակը իրեն շրջապատող իրականությանը մոտենում է մի շարք տեսանկյուններից: Այստեղ բուն պատմական շարադրանքը զուգակցվում է վրկայաբանությանը, ներբողը՝ ողբին, բանակռիվը՝ ջատագովությանը: Եղիշեն քարոզիչ է, նրա աշխատության խրատա-

կան եղանակը բացահայտվում է ամենայն պարզությամբ: Հայերի և Սասանյան իշխանության միջև եղած բախումը Եղիշեն նկարագրում է մանրամասնորեն, հարցին մոտենալով որպես լայնախոհ պատմաբան:

Գործը շարադրելիս Եղիշեն աչքի առաջ է ունեցել մի քանի գրական օրինակներ, նախ և առաջ Աստվածաշնչի առանձին գրքեր և «Վկայք արևելից» ասորական վարձագրական ժողովածուի հայերեն թարգմանությունը: Շատ դեպքերի մասին նա խոսում է այդ աղբյուրներից քաղված առանձին բառերով, նախադասություններով և պարբերություններով: Այդ գիծը, սակայն, հատուկ է ողջ միջնադարյան գրականությանը, և ժամանակակից պատմաբանը միջնադարյան երկերը վերլուծելիս և գնահատելիս միշտ հաշվի է առնում այդ հանգամանքը:

Մի շարք գիտնականներ փորձել են ցույց տալ, որ Եղիշեն ապրել է ոչ թե V դ., այլ ավելի ուշ: Վիեննայի մխիթարյան Բաբկեն Կյուպեսերյանի կարծիքով՝ Եղիշեն իր երկը կազմել է, հետևելով V դ. վերջերին կամ VI դ. սկզբներին գրված Ղազար Փարպեցու «Պատմության» համապատասխան դրվագներին, այսինքն ապրել է VI դ. և ո՛չ ականատես է եղել նկարագրված անցքերին, ո՛չ էլ ժամանակակից: Վիեննայի անվանի գիտնական Ներսես Ակինյանի համոզմամբ, 450—451 թթ. ապստամբությունը նկարագրելիս Եղիշեն ազդվել է 571—572 թթ. դեպքերից, երբ մեկ ուրիշ վարդան Մամիկոնյան ապստամբել էր պարսիկների գերիշխանության դեմ: Բայց եթե ընդունենք այդ տեսակետները, եթե Եղիշեին տեղափոխենք V դ. 50—60-ական թվականներից VI դար, ապա անբացատրելի կմնա սկզբունքային մի հարց: Ինչպե՞ս է պատահել, որ եկեղեցու՝ Եղիշեի պես հավատարիմ զավակը, ապրելով VI դ. և նկարագրելով կրոնական պատերազմը (Եղիշեի աչքում «Հայոց պատերազմը» նախ և առաջ կրոնական բնույթ է կրում), չնչին ակնարկով անգամ չի անդրադարձել Գրիգոր Լուսավորչին, որը հեթանոս հայերին դարձրեց թրիստոնյա ժողովուրդ. չէ՞ որ, ըստ էության, նրա ժառանգությունն էին պաշտպանում Վարդան Մա-

միկոնյանը և նրա ընկերները: Պատճառը հասկանալի է՝ կորյունի, Մաշտոցի մյուս աշակերտ Եզնիկ կողբացու պես Եղիշեն ևս ապրել է այն շրջանում, երբ Լուսավորչի պաշտամունքը դեռևս հաստատված չի եղել: Այդ պաշտամունքն առաջացել էր «Վարդանանքից» հետո, հավանաբար 60-ական թվականներին, համենայն դեպս՝ այն ժամանակ, երբ Եղիշեն արդեն ավարտել էր իր գիրքը, իսկ Լուսավորչին նվիրված հիմնական, պաշտոնական գունավորում ունեցող «Ազաթանգեղոսը» դեռևս չէր տարածվել<sup>21</sup>:

Վարդանանց պատերազմին վերաբերող մեր գիտելիքները բխում են գլխավորապես Եղիշեից: Եղիշեի երկը եղել է այն անդրանիկ կոթողներից, որոնք հայերին ընտելացնում էին քրիստոնյա բարոյագիտության դեռևս նոր արժեքներին, ծանոթացնում երկու նոր կերպարի հետ: Մեկը վկան է: Տվյալ դեպքում վկա բառն ունի հատուկ իմաստ: Վկան նա է, որին թշնամիները հարկադրում են հետ կանգնել քրիստոնեությունից, սակայն, կյանքի գնով նա հավատարիմ է մնում իր կրոնին: Երկրորդ կերպարը խոստովանողն է: Անմարդկային պայմաններում խոստովանողը ևս մերժում է ուրացությունը, սակայն, խոստովանելով իր հավատքը, ողջ է մնում: Սովորաբար այդ երկուսը սուրբ են հռչակվում:

Ուրացողը վկայի և խոստովանողի հակապատկերն է. հրապուրվելով նյութականով (հարստություն, պաշտոն, պատիվ և այլն) նա ընդմիշտ կործանում է իր հոգին:

Վկայաբանության, խոստովանության, նաև ուրացության թեման բազմիցս մշակվել է հայ հեղինակների կողմից: Հակառակ նրան, որ այդ կերպարներն առհասարակ ստեղծվել են գրական կայուն օրինակներին, ընդունված կաղապարներին հետևելով, այդ ոլորտում ևս կան բարձր գեղարվեստականության հասած շատ նմուշներ:

Եղիշեին լայն ժողովրդականություն ապահովողը միայն պատմական բովանդակությունը չի եղել: Մեկ ու կես հազարամյակի ընթացքում ընթերցողին մոտ են եղել նաև Եղիշեի գաղափարները, որոնք իրենց դերն են կատարել ազգային ինքնագիտակցության ձևավորման ընթացքում: Եղիշեից

է սկսւում ազգային ճակատագրի ողբերգական ընկալումը, որը վերածւում է ազգային յուրատեսակ հոգեբանության: Այսօր ևս մենք գտնւում ենք ընտիր ոճով շարադրված այդ երկի ազդեցության տակ (օտարելով Եղիշեի աֆորիզմները հարազատ մշակութային կոնտեքստից, երբեմն ընկալում ենք այլ կերպ, տալով հեղինակային բնագրին ոչ հատուկ բովանդակություն): Եղիշեն մեր ամենից «դասական» հեղինակներից մեկն է:

Կորյունի, Եզնիկ Կողբացու, Եղիշեի երկերից հետո հայ գրականութիւնը հարստանում է ևս մեկ կոթողով, որի հեղինակը եղել է «Ագաթանգեղոսը»: Ինչո՞ւ ենք վերցնում այդ անունը շակերտների մեջ: Գրողը հայտնում է, թե ինքը եղել է Տրդատ թագավորի քարտուղարը, այսինքն ապրել է IV դ. սկզբներին: Այնինչ նրա հեղինակությամբ հայտնի գործը իրականում գրվել է V դ. երկրորդ կեսին: Այդ հանգամանքը բավական է, որպեսզի «Ագաթանգեղոսը» դիտենք իբրև շինծու անուն, որը մեզ անհայտ, անանուն հայ հեղինակի գրչի ծնունդ է: Կանգ շենք առնում այն հարցի վրա, թե ինչ հողի վրա է առաջացել հենց այդ անունը (հունարենն՝ Ἀγαθάγγελος նշանակում է «բարի հրեշտակ»): Բավարարվենք ընդգծելով, որ Ագաթանգեղոսի՝ մեզ հայտնի հայերեն տարբերակը հայ գրողի ստեղծագործութիւնն է, շնայած նա օգտագործել է Լուսավորչի դարաշրջանին վերաբերող (գուցե և պատկանող) մի շարք հունալեզու աշխատութիւններ:

Ագաթանգեղոսի մեզ հասած բնագիրը<sup>22</sup> ինքնուրույն բրնույթ է կրում, թարգմանութիւն չէ ո՛չ հունարենից, ո՛չ էլ ասորերենից: Ընդհակառակը, այդ բուն հայերեն Ագաթանգեղոսից են բխում (անմիջապէս կամ անուղղակի կերպով) մի շարք փոխադրութիւններ՝ հունարեն, արաբերեն, ղպտիերեն, եթովպերեն, լատիներեն, սլավոններեն: Իր աշխատութիւնը գրելիս հեղինակն օգտագործել է անշուշտ հայերեն և օտարալեզու գրավոր աղբյուրներ, սակայն շարադրության ոճից երևում է, որ նա դրանց հետեւել է շատ ազատ եղա՜նակով:

Պատմութիւննից բացի, գոյութիւնն ունի նրանից տարբերվող Գրիգոր Լուսավորչի Վարքը, որի հայերեն խմբագրութիւնը դեռևս չի հայտնաբերվել, սակայն երբեմնի գոյութիւնն մասին վկայում են օտար տարբերակներ՝ հունարեն, արաբերեն, հավաստվում է նաև ասորերեն տարբերակի գոյութիւնը:

Վերջին տասնամյակների ընթացքում գտնվել են Ագաթանգեղոսի՝ թե՛ Պատմութիւնն, և թե՛ Վարքի օտար նոր խմբագրութիւններ: Դրանց ուսումնասիրութեամբ զբաղվել են հատկապէս Արամ Տեր-Ղևոնդյանը և Պարույր Մուրադյանը՝ մեզանում, Ժերար Գարիտը, Միշել Վան-էսբրոկը և Ռոբերտ Քոմսոնը՝ արտասահմանում. Ագաթանգեղոսի գրական պատմութիւնը դարձել է գիտական հետազոտութեան հարց<sup>23</sup>:

Ընդհանուր առմամբ Ագաթանգեղոսի երկը նվիրված է հեթանոս Հայաստանի քրիստոնեութեան դարձին. գլխավոր հերոսը Գրիգոր Լուսավորիչն է: Նրա կապակցութեամբ հեղինակն անդրադառնում է պատմական մի շարք անցքերի, ընդ որում վեպն ու հավաստի, արժանահավատ պատմութիւնը միմյանց են հյուսվել, այնպես որ շատ դեպքերում հեշտ չէ դրանք անջատել:

Արդ, ի՞նչ է ասում Ագաթանգեղոսը, որը եղել է «ի քաղաքէ ի մեծն Հոռովմայ, և վարժեալ հայրենի արուեստիւ, Հոռոմայերէն և յունարէն ուսեալ դպրութիւն, և ոչ կարի ինչ անտեղեակ լեալ ձեռնարկութեան նշանագրաց» [Ագաթ., էջ 9]: Ի՞նչ է բովանդակում այն գիրքը, որը նա գրել է իբր թե Մեծ Հայքի թագավոր, քաջ Տրդատի հրամանով:

Սասանի որդի Արտաշիբը սպառնում է պարսից արքա Արտավանին ու հաստատում սեփական իշխանութիւնը: Հայոց թագավոր Խոսրովը, ինչպէս և Արտավանը, Արշակունի է. նա ուզում է իր ազգականի վրեժը լուծել և 10 տարի, առանց դաշնակիցների, հաղթական կռիվներ է վարում Արտաշիբի դեմ: Արտաշիբը տեսնում է, որ ի վիճակի չէ դիմադրել Խոսրովին, պատիվներ, պարգևներ, վարձատրութիւն է խոստանում նրան, ով կկարողանա Խոսրովին մեջտեղից

վերացնել: Արտաշիրի նախարարներից Անակ անունով մեկը, Պարթև տոհմից, հանձն է առնում սպանել Խոսրովին: Անցնում է Հայոց երկիրը, հարմար առիթ գտնում և կործանիչ հարված հասցնում Խոսրովին: Մահամերձ Խոսրովը հրաման է տալիս Անակի ողջ տոհմը սրի քաշել: Հաջողվում է փրկել միայն Անակի երկու որդիներին, որոնցից մեկին փախցնում են Պարսկաստան, մյուսին՝ Հունաց կողմերը: Արտաշիրն ասպատակում է Հայաստանը, գերի տանում բնակիչներին: Ինչ-որ մեկը թշնամու ձեռքից ազատում է Խոսրովի մանկահասակ Տրդատ զավակին, դայակների հետ նա ասպատան է գտնում Հունաց կայսեր դռանը: Մինչդեռ Տրդատը ուսում է առնում ոմն Լիկիանոս կոմսից, իսկ Անակի որդի Գրիգորը քրիստոնյայի պատրաստութուն է ստանում Կապադովկիայի Կեսարիա քաղաքում:

Դայակներից իմանալով իր ծագումը, Գրիգորը ներկայանում է Տրդատին և իր ծառայությունն առաջարկում: Այն ժամանակ Հունաց թագավորը սկսում է հալածել քրիստոնյաներին, նույն կերպ է վարվում նաև Տրդատը Գրիգորի նկատմամբ: Իր մարտական կարողությունները գործի դնելով, Տրդատը վերադառնում է հայրենիք, վանում պարսիկներին: Երեզ գյուղում գոհեր է մատուցում Անահիտ դիցուհու տաճարում, պահանջում է, որ Գրիգորը ևս պսակներ և թարմ շիվեր դնի Անահիտի պատկերի առջև: Գրիգորը հրաժարվում է, անցնում քրիստոնեական ուսմունքի ջատագովությանը: Երկխոսությունը գնալով ավելի ու ավելի է լարվում, Տրդատը Գրիգորին ենթարկում է նախ 2, ապա 10 տարվա տանջանքի, սակայն նա շարունակում է աղոթել և հետ չի կանգնում իր հավատքից: Տրդատին հաղորդում են Գրիգորի ով լինելը՝ նրա հայրը սպանել է թագավորի հորը, երկիրը մատնելով կորստի և խավարի: Տրդատի հրամանով շրթայակապ Գրիգորին ուղարկում են Արտաշատի բերդը և իջեցնում տեղի խոր վիրապի մեջ: Այդ փոսում Գրիգորը անց է կացնում 13 տարի: Այնուհետև Տրդատը երկու հրովարտակ է հրապարակում, մեկով՝ արգելում քրիստոնեությունը, մյուսով՝ կոչ անում երկրպագել հեթանոս աստվածներին:

Հենց այդ ժամանակ հռոմեացիների Գիոկղետիանոս կայսրը նկարիչներ է ուղարկում այննուրեք, որպեսզի նրանց բերած դիմանկարներով իր համար հարսնացու ընտրի: Հռոմում մի վանք է լինում, Գայանե կույսի գլխավորութեամբ: Կայսրը ցանկանում է ամուսնանալ այդ վանքի միանձնուհի, գեղեցկուհի Հռիփսիմեի հետ: Նա միաժամանակ հալածանքներ է ձեռնարկում կայսրութեան մեջ բնակվող քրիստոնյաների դեմ: Մինչդեռ Հռիփսիմեն կտրականապես մերժում է Գիոկղետիանոսին, կույսերը փախչում են Հայոց երկիրը, հաստատվում Վաղարշապատում: Կույսերից մեկը ապակեգործութեամբ է զբաղվում, ուլունք պատրաստելով պահում իրեն և ընկերուհիներին:

Գիոկղետիանոսը թուղթ է հղում Տրդատին, խնդրելով կույսերից վրեժ լուծել, իսկ Հռիփսիմեին ուղարկել կայսրին: Մինչդեռ Տրդատը ինքն է սիրահարվում Հռիփսիմեին, բայց վերջինս նրան էլ է մերժում: Թագավորին ոչ մի կերպ չի հաջողվում կոտրել Հռիփսիմեի դիմադրությունը: Ի վերջո՝ կույսերը եղբրական ձևով ավարտում են իրենց կյանքը: Տրխութեան ու տրտմության մեջ ընկած Տրդատը 6 օր սուգ է անում, ապա սթափվում, գնում ուրսի, սակայն կատարած ոճրի համար խոզի կերպարանք է ստանում: Գլխահարութեամբ պատժվում են նաև կույսերի տանջանքների համար մեղավոր քաղաքի բնակիչները:

Եվ հենց այդ ժամանակ Տրդատի խոսքովի դուխտ քրոջը տեսիլ է հայտնվում՝ միայն Գրիգորը կարող է ապաքինել թագավորին և մյուսներին: Ի զարմանս բոլորի, պարզվում է, որ Գրիգորը ողջ է, նրան բերում են Վաղարշապատ, որտեղ նա առաջին հերթին պատառոտած հագուստներով ծածկում է կույսերի անվնաս և անապական մնացած մարմինները: Սկսում է աղոթել, ապա երկար (գրքի մոտ երրորդ մասը կազմող) վարդապետական խոսքով է հանդես գալիս: Խոզի կերպարանք ընդունած Տրդատը և ողջ ժողովուրդը շարունակ Գրիգորի կողքին են, աղաչում են փրկել իրենց: Գրիգորին տեսիլ է հայտնվում, նա պահանջում է, որպեսզի կույսերի համար երեք վկայաբան կառուցեն և մարմինները հանձ-

նեն հողին: Ամեն մի վկայարանի վրա մեկական սյուն (միա-  
ժամանակ նաև խաչ) է կանգնեցնում, իսկ շորրորդ սյունը՝  
հրեղեն է: Նա բոլորին ցույց է տալիս այդ հրեղեն սյան տե-  
ղը, որը և շրջապատում են բարձր որմով և մի խաչ կանգ-  
նեցնում<sup>24</sup>:

Թագավորն ու ժողովուրդը Գրիգորի աղոթքով բուժվում  
են: Սկսվում է քրիստոնեության քարոզը, ապա Գրիգորն ու  
Տրդատը մեկը մյուսի հտևից կործանում են հեթանոսական  
տաճարները, իսկ հին աստվածներին շաստվածներ հռչակում:  
Տաճարային հողերն անցնում են եկեղեցուն, իսկ սպասա-  
վորները և քուրմերը դառնում ստրուկ: Կեսարիա քաղաքում  
Գրիգորը ձեռնադրվում է քահանայապետ<sup>25</sup>:

Հայաստան են ժամանում Գրիգորի որդիները, ապա  
Գրիգորն ու թագավորը մեծ շքախմբով ուղևորվում են դեպի  
Հոռոմ, այնտեղ փառահեղ ընդունելության արժանանում Կոս-  
տանդին կայսեր կողմից: Կոստանդնի օրոք Նիկիայում գու-  
մարվում է եկեղեցական ժողով, որպես Հայաստանի պատ-  
վիրակ այդ ժողովին մասնակցում է Գրիգորի որդի Արիստա-  
կեսը: Մինչև կյանքի վերջը Գրիգորը ճառեր, առակներ ու  
նման գրություններ է հորինում, աղոթում, աստծո պատվի-  
րանները տարածում մարդկանց մեջ:

Անգամ չոր, ակամայից համառոտ վերապատմումից իսկ  
դժվար չէ նկատել, որ Ազաթանգեղոսի մոտ խոսքը պտտվում  
է մի քանի թեմայի շուրջ: Դա և՛ հայերի պատերազմն է Սա-  
սանյանների դեմ, և՛ կույսերի վկայաբանությունը, և՛ Տըր-  
դատի խոզ դառնալը, և՛ ամենից գլխավորը՝ Գրիգորի վարքը՝  
Եթե անգամ հիմնովին հանենք գերբնականը, մնացածն էլ  
կլինի ոչ այնքան պատմություն, որքան վեպ: Իրականությու-  
նը, բացառությամբ մի շարք միջադեպերի, այստեղ արտա-  
հայտվել է ամենից ընդհանրացված ձևով: Յուրաքանչյուր քիչ  
թե շատ մեծ հատվածի համար կարելի է գտնել բազմաթիվ  
գրական զուգահեռներ: Որպես պատմական սկզբնաղբյուր,  
Ազաթանգեղոսը պահանջում է հատուկ գիտական քննադա-  
տություն: Սակայն, երբ այդ քննադատությունը ճիշտ է կա-  
տարվում՝ Ազաթանգեղոսի աշխատությունը բացվում է իր

քուր արժանիքներով և շատ հարուստ նյութ տրամադրում բուն, իրական պատմութիւնը վերականգնելու համար:

Ազաթանգեղոսի պատմութիւնը առաջին երկն է, ուր ամփոփ ձևով շարադրվում են Հայաստանի քրիստոնեացման դրվագները, հայոց դարձը: Այնուհետև նույն ձևով այն կյուրացվի միջնադարյան հայ գրողների կողմից և նույն ձևով էլ կհասնի նոր ժամանակվա գիտութիւնը, երբ այդ կոթողը կդառնա լուրջ (և շատ դժվարին) գիտական վերլուծութիւն առարկա: Փորձենք ինչ-որ չափով մեկնաբանել Ազաթանգեղոսը որպես հասարակական մտքի հուշարձան:

Ասացինք, որ Ազաթանգեղոսի Պատմութիւնը տարածվել է V դ. երկրորդ կեսին, բոլոր պարագաներում՝ Եղիշեից հետո: Դժվար է ասել, երբ է ծագել Գրիգոր Լուսավորչի վարքը, որը և կազմում է, ամենայն հավանականութեամբ, Պատմութեան կորիզը: Սկզբունքային նշանակութիւն ունի այն հարցը, թե երբ է պաշտոնական լայն ճանաչում գտել Գրիգոր Լուսավորչի պաշտամունքը: Մնալով առկա սկզբնաղբյուրների սահմաններում, այն կապում ենք Ազաթանգեղոսի աշխատութեան հետ: Այսպիսով, ոչ շուտ քան V դ. 60-ական թվականներին Հայաստանում տարածում է գտնում մեզ հայտնի բնագիրը: V և VI դդ. սահմանագծին Ղազար Փարպեցին կրնութեազրի այն իբրև Հայոց Առաջին պատմութիւն: «Առաջին» ածականը թերևս երկիմաստ է՝ նշանակում է, թե կարգով առաջին, թե «հին», «սկզբնական»: Վարդանանց ապրատամութիւնից հետո, շնայած ձեռք բերված որոշ ազատութեանը, տարած լինելով բարոյական մեծ հաղթանակ, հայերն ապրում էին, ամնուամենայնիվ, ծանր միջնորատում: Գրերի գլուտը մեծ չափով նպաստել էր քրիստոնեութեան ամրապնդմանը (կրկնում ենք, որ քրիստոնեական վարդապետութիւնը հայերի, ինչպես նաև վրացիների, աղվանների և մի շարք այլ ժողովուրդների համար միաժամանակ եղել է ազգային ինքնագիտակցութեան, քաղաքական կողմնորոշման խորհրդանիշ): Սակայն դարաշրջանի ծանր պայմաններում հավատարմութիւնը այդ ուսմունքին ենթարկ-

վել է մշտական փորձության: Հաջորդ գլուխներում մենք  
ցույց կտանք, թե ինչքան վտանգավոր է եղել ուրացութունը  
դուռ քաղաքական առումով: Անհրաժեշտութուն էր առա-  
ջացել կրկին նոր հռչակ, նոր փայլ տալ եկեղեցուն: Հարկա-  
վոր էր մարդկանց հոգիները ընտելացնել ոչ միայն տիեզե-  
րական եկեղեցու ինչ-որ շափով վերացական գաղափարին,  
այլև ամրացնել սեփական եկեղեցու նկատմամբ եղած զգաց-  
մունքը: Անհրաժեշտ էր ցույց տալ, որ այն հայ պատմական  
անցյալի ծնունդ է, ունի տեղական ավանդույթ, հանդես է  
գալիս որպես հայկական հաստատութուն: Ամենայն հավա-  
նականությամբ, այդ է եղել Գրիգոր Լուսավորչի պաշտամուն-  
քի առաջացման ընդհանուր պատճառը, հասարակական մի  
երևույթ, որը և արձագանքվել է Ագաթանգեղոսի Պատմու-  
թյան մեջ:

Ագաթանգեղոսին հատուկ է դրա հետ կապված մի յուր-  
օրինակ հատկություն: Գրքի երրորդ մասում, որը նվիրված է  
Հայաստանում Գրիգորի գործունեությանը որպես ճանաչված  
քարոզչի, կան բազմաթիվ մեջբերումներ Մաշտոցի Վարքից:  
Հեղինակը քաղում է ոչ միայն առանձին նախադասություն-  
ներ, այլև պարբերություններ և էջեր, վարպետորեն կապե-  
լով դրանք Գրիգորին նվիրված իր շարադրանքի հետ: Նշանա-  
գրերի ստեղծման կապակցությամբ Կորյունը Մաշտոցի մա-  
սին գրում է՝ «Եվ այսպես նա շատ նեղություններ քաշեց  
իր ազգին մի բարի օգնություն գտնելու համար: Ամեն բան  
շնորհող աստծուց իսկապես պարգևվեց նրան (այդ) բախտը-  
նա իր սուրբ աջով հայրաբար ծնեց նոր և սքանչելի ծնունդ-  
ներ—հայերեն լեզվի նշանագրեր» [Կոր., էջ 49. 6—9]: Աննը-  
շան տարբերությամբ նույն հատվածը գտնում ենք նաև Ագա-  
թանգեղոսի մոտ, սակայն այն կապված է Գրիգորի գործու-  
նեության հետ, նրա նպատակի՝ «մկրտութեամբ միւսանգամ  
վերստին ծնանել, առնել, կատարել, սրբել, դրոշմել մի ժո-  
ղովուրդ Տեառն» [Ագաթ., էջ 433. 3—4]: Մաշտոցի՝ Աղվան-  
քում եղած ժամանակ Արսվաղ թագավորն ու Երեմիա եպիս-  
կոպոսը հրաման են տալիս, որպեսզի «ի գաւառաց և ի  
տեղեաց իշխանութեանն իւրեանց բազմութիւն մանկանց յա-

րուեստ դպրութեանն ածել և գումարել ...» [Կոր., էջ 70. 21—22]: Իսկ Ագաթանգեղոսի մոտ ասված է՝ «Եւ ի տեղեաց տեղեաց սահմանացն Հայոց՝ տայր հրաման թագաւորն Տրդատ՝ իւրոյ իշխանութեանն յաշխարհաց և ի գաւառաց բազմաթիւն մատաղ մանկտոյ ածել յարուեստ դպրութեան ...» [Ագաթ., էջ 437. 14 ևն]: Եվ վերջին օրինակը, Կորյունը նկարագրում է Մաշտոցի գրական գործունեութիւնը՝ «Ապա յետ այնորիկ դարձեալ՝ այնպիսի առաւել և բարձրագոյն վարդապետութեամբն՝ սկսեալ երանելոյն Մաշթոցի ճառս յաճախագոյնս, դիւրապատումս, շնորհագիրս, բազմադիմիս ի լուսաւորութենէ և ի հիւթոյ գրոց մարգարէականաց կարգել և յօրինել, լի ամենայն ճաշակօք անտարանական հաւատոցն ճշմարտութեան» [Կոր., էջ 78. 1—6]: Գրեթէ նույնն է ասում Ագաթանգեղոսը Գրիգորի մասին՝ «Ապա յետ այսպիսի գործոց դարձեալ առաւել բարձրագոյն վարդապետութեամբ սկսեալ երանելոյն Գրիգորի ճառս յաճախագոյնս դժուարապատումս, առակս խորիմացս, դիւրալուրս, բազմադիմիս, շնորհագիրս, յարդարեալս ի զօրութենէ և ի հիւթոյ գրոց մարգարէականաց, լի ամենայն ճաշակօք կարգեալս և յօրինեալս անտարանական հաւատոցն ճշմարտութեան» [Ագաթ., էջ 466. 5—10]:

Գրական աղբյուրների այդպիսի օրինակներ կան ամեն քայլափոխում: Ամենից տարածված են եղել, անշուշտ, փոխառութիւնները Սուրբ Գրքից: Քաղելով առանձին բառեր ու նախադասութիւններ, հեղինակը կերտում էր բոլորովին այլ կերպար, որն Աստվածաշնչի հերոսին կարող է և շնմանվել: Փոխառութիւններ էին անում տարբեր դարաշրջաններին պատկանող զանազան երկերից: Դա երբեք գրագողութիւն չի դիտվել, հեղինակային իրավունքի գաղափարը խորթ է եղել միջնադարին: «Քերթողական արվեստի»<sup>26</sup> սկզբունքներից մեկը եղել է նմանողութիւնը: Նմանվելով նախագաղափար օրինակին, հեղինակը դրսևորում էր իր գիտելիքներն ու ճաշակը, նկատի ունենալով, անշուշտ, որ ընթերցողին ևս ծանոթ է այդ օրինակը և նա կգնահատի ընթերցվելիք երկի արժանիքները: Տվյալ դեպքում, սակայն, Ագաթանգեղոսը գնում է ավելի հեռու: Քաղվածքներ անելով Մաշտոցի վար-

քից, ի մի ձուլելով այդ հատվածները, Գրիգոր Լուսավորչին վերաբերող իր շարադրութեան հետ, նա ձգտել է ինչ-որ շափով իրար մերձեցնել այդ երկու կերպարները: Ազաթանգեղոսի ընթերցողի մոտ ակամայից զուգորդութիւններ են առաջանում Մաշտոցի հետ, և հենց այդ է եղել հեղինակի նպատակը: Զէ՞ որ Մաշտոցն իսկական լուսավորիչ է եղել՝ տարածել քրիստոնյա քարոզը, չէ՞ որ Գրիգորի պես անընդհատ պայքարել է խավարի՝ հեթանոսութեան դեմ: Գրիգորին նմանեցնելով Մաշտոցի կայունացած, ընդհանուր ճանաչում ըստացած կերպարին, Ազաթանգեղոսը ճանապարհ էր հարթում նաև գրական նոր հերոսի համար, հայտնի օրինակի օգնութեամբ ներկայացնում մեկին, որը պիտի դիտվի որպէս առաջին լուսավորիչ:

Հենց այդպէս էլ ստացվեց: Հիշատակելով ճառս յաճախագոյնս, Կորյունը նկատի է ունեցել մեզ հասած «Յաճախապատում ճառք» վերնագրով ժողովածուն: Դրանց իսկական հեղինակը Մաշտոցն է, սակայն հետագայում այդ երկը վերագրվեց Գրիգոր Լուսավորչին: Մեզ հասած ձեռագրերը կրում են ոչ թե Մաշտոցի, այլ Գրիգորի անունը: Հակառակ նրան, որ Գրիգորի կերպարը ստեղծվել է ինչ-որ շափով Մաշտոցի օրինակով, տարիների ընթացքում առաջնութիւնը հենց նրան է անցնում, և Մաշտոցին սկսում են անվանել երկրորդ Լուսավորիչ:

Մենք արդեն նշեցինք, որ Ղազար Փարպեցու պատկերացմամբ Ազաթանգեղոսի աշխատութիւնը կազմում է հայոց պատմութեան առաջին գիրքը: Երկրորդը շարադրել է «Փոստոս<sup>27</sup> ոմն Բուզանդացի», պատմելով «գիրս բազմափոփոխս աշխարհիս Հայոց, զբարեաց և զչարեաց, զվարս և զգործս զարանց սրբոց և զպղծոց, զժամանակի պատերազմաց և զխաղաղութեան» [Ղազ. Փարպ., էջ 1. 9—12]: Եթե Ազաթանգեղոսի գիրքը «անուանեալ կոչեն Գրիգորիսի», ապա Փավստոսինը, ըստ Փարպեցու կրել է «Հայոց պատմութիւն» վերտառութիւնը:

Աշխատութեան ընդհանուր վերնագիրը, որտեղ կարող էր եղած լինել հեղինակի անունը, մեզ չի հասել, սակայն առա-

շին մասի վերջում հետագա խմբագրի ձեռքով մի նշում է արված՝ «Կատարեցաւ երրորդ դարդ (մաս, դրվագ) Փաւտեայ Բիւզանդեայ մեծ ժամանակագրի, որ է ժամանակագիր Յունաց»։ Նման տվյալներն են ահա հիմք ծառայել Ղազար Փարպեցուն, որպեսզի նա իր ժամանակակցի կամ կրտսեր ժամանակակցի անունը կապի Բյուզանդիոնի, այն է՝ Կոստանդնուպոլսի անվան հետ<sup>28</sup>։ Բայց ընդունելով հանդերձ Փավստոսի առնչութունը կայսրութեան մայրաքաղաքի հետ, Ղազարը միաժամանակ պնդում է, որ պատմիչը իսկական «Բյուզանդացի» չէ։ Նա բաժանում է այն տեսակետը, որ ճշգրտաբան Ագաթանգեղոսի համեմատութեամբ, Փավստոսի խոսքերը «չարմարք և դիպողք» չեն, իսկ շարադրանքն անպատշաճ է։ Հնարավոր է արդյոք, որ նման մի գործ դուրս գա ուշալ բյուզանդացու գրչի տակից։ Չէ՞ որ Բյուզանդիոնի թե՛ անցյալը, թե՛ ներկան փառավոր են, գիտութեան վտակները թագավորական քաղաքից հոսում են զանազան ուղղութեամբ։ Արդ, գիտուններով լցված այդպիսի քաղաքում կարո՞ղ էր Փավստոսը (եթե նա իրոք գիտութեան տեր է), գրել այդպիսի մի անշնորհ պատմություն։ Երբեք։ Մնում է ենթադրել, որ դա մեկ ուրիշի գործ է, հեղինակի ոճը գոհհիկ է, գրել է ինչ որ պատահել է։ Ինչ խելքին հկել, այն էլ գրել է։ Հնարավոր է նաև, որ ինչ-որ անկար հեղինակ, վնաս հասցնելով իր «աչաբանութեամբ», սխալները ծածկել է Փավստոսի անվամբ։ Ահա այսպիսին է եղել Փարպեցու կարծիքը Փավստոսի մասին [Ղազ. Փարպ., էջ 3—4]։

Ղազարի ճաշակը ձևավորվել է իր դարաշրջանում՝ դասական համարվող գրականութեան ընթերցմամբ։ Դասական է եղել նրա ոճը՝ հարթ, սահուն։ Ոչ միայն որպես գրասեր, այլև որպես գրող նա չէր կարող ընդունել Փավստոսին, որը շարադրում էր «չանդուգն և անհրահանգ բանիւ»։ Եվ նրա մտքովն իսկ չէր անցնի, որ մեր օրերում հենց շարադրութեան (լայն իմաստով) եղանակի շնորհիվ Փավստոսի պատմութունն ընկալվում է որպես անզուգական մի գործ։ Փավստոսն իր էութեամբ իրոք որ «բյուզանդացի» չէ։ Իր ոճով ևս նա հայ է, ավելի հայ քան նրա ժամանակակից գրողներից որևէ մեկը։

Ծրբ փորձում ես շոշափելի զուգահեռ գտնել դասական նոր գրականության մեջ, ապա հիշում ես առաջին հերթին Հովհաննես Թումանյանի արձակը:

Ինչ վերաբերում է հեղինակի անվան ծագմանը, ապա Ստ. Մալխասյանցը ժամանակին տվել է դրա բացատրությունը: Պատմության առանձին մասերը կապված են ընդհանուր վերնագրով՝ «Բուզանդարան պատմութիւնք». բուզանդարան բառը նշանակել է պատմությունների, պատմվածքների ժողովածու. աշխատության խմբագիրը, չհասկանալով բառի նշանակությունը, դրա հիման վրա ստեղծել է «Բուզանդացի» կամ «Բյուզանդացի» մականունը, հիմնավոր կամ անհիմն կերպով որոշելով նաև հեղինակի անունը՝ Փավստոս: Այդ տեսակետը գտել է լայն ընդունելություն: Վերջերս, անդադառնալով անվան ստուգաբանությանը, Ա. Փերիխանյանը այն մեկնել է որպես «երգիչ, պատմող, հագներգու», իսկ բուզանդարանը՝ «հագներգությունների (պատմությունների) ժողովածու»: Այսպիսով, այժմ Փավստոս Բուզանդ անունը օգտագործվում է պայմանական ձևով:

Փավստոսը սկսել է այնտեղից, որտեղ կանգ է առել Ագաթանգեղոսը՝ Տրդատի հաջորդ Խոսրով Կոտակ թագավորի տարիներից: Նրա պատմության վերջին դրվագն է՝ Հայաստանի բաժանումը երկու մասի՝ Պարսկաստանի և կայսրության միջև: Որպես քաղաքական պատմության սկզբնաղբյուր, Փավստոսի աշխատությունը այնքան էլ վստահելի չէ. հեղինակը հաճախ շփոթում է դեպքերը, ժամանակագրական տվյալները իրապատում չեն: Սակայն IV դ. համար Փավստոս Բուզանդը մնում է գլխավոր սկզբնաղբյուր, հետագա պատմիչները կրկնել կամ վերաշարադրել են նրան: Ժամանակակից գիտությունը հաջողվել է շատ դեպքերում պարզություն մտցնել հեղինակի շարադրանքի մեջ: Սակայն եթե պատմական անցքերը միշտ չէ, որ ճիշտ են ներկայացված, ապա հայ հասարակության պատկերն ուսումնասիրելու համար Փավստոսը մի գանձարան է: Արշակունյաց շրջանի պետական, հասարակական կառուցվածքն այստեղ արտացոլվել է մանրամասնությամբ: Այդ առումով Փավստոսի երկը մեր ամենից կարևոր

սկզբնադրյուններից մեկն է, այդ իմաստով նրան դնում ենք Մովսես Խորենացու կողքին:

Աննման են Փավստոսի կերտած գրական դիմանկարները: Իհարկե, այստեղ ևս շատ բան ընդհանրացված է, կենսագրական նյութեր տրամադրելով, հեղինակը ձգտում է, որպեսզի ստացված նկարագիրը լինի նախ և առաջ ուսանելի: Բայց նա իր հերոսներին ներկայացնում է ոչ թե իբրև խցում փակված, իրական կյանքից կտրված գիտնական, այլ որպես ժողովրդական փորձը մարմնավորող մեկը: Փավստոսի աղբյուրներն, ըստ երևույթին, բանավոր են, արձանագրում է այն, ինչ որ V դ. պահել էր IV դ. անցքերի մասին: Այդ պատճառով պետք չէ թերագնահատել նրա ճշտությունը: Հնում մարդկանց հիշողությունը ի վիճակի է եղել պահելու անցյալի ջնջին մանրամասնություններ, հետևելով բացարձակապես բանավոր ավանդությանը: Ավելացնենք նաև, որ այդ ավանդույթը Փավստոս Բուզանդին հասել էր վիպական շարքի ձևով՝ պատմիչը գործ է ունեցել գեղարվեստորեն վերամշակված նյութի հետ, որը և շատ դեպքերում առանց փոփոխության գետեղել է իր շարադրանքի մեջ:

Հետևելով գերազանցապես Բուզանդի տվյալներին, նախարարական Հայաստանում տիրող վարք ու բարքի ընդհանուր պատկերը ներկայացրել է Մանուկ Աբեղյանը<sup>29</sup>: Փավստոս գրող-պատմիչի մասին հստակ պատկերացում կազմելու համար մենք կրավարարվենք երեք օրինակով:

Արշակ Բ թագավորի հավատարմությունը փորձելու համար պարսից Շապուհ թագավորը հրաման է տալիս, որպեսզի խորանում (սրահում) հատակի կեսը ծածկեն Հայաստանից բերված հողով և հայկական ջուր ցանեն, իսկ մյուս կեսը մնա ինչպես որ է, այսինքն լինի պարսկական գետնի մաս: Բռնելով Արշակի ձեռքից, Շապուհը զբոսնում է խորանում, հարցնելով իր հյուրին՝

«Ընդէ՞ր եղեր իմ թշնամի, Արշակ արքայ Հայոց,  
Զի ես որպէս զորդի սիրեցի զքեզ,  
Եւ կամեցայ տալ քեզ զդուատը իմ ի կնութիւն,  
Եւ որդի ինձ առնել զքեզ.

Իսկ դու խստացար ընդ իս,  
եւ քովք կամօք՝ առանց իմոց կամաց՝  
Եղեր ընդ իս թշնամի.  
Եւ այս լի հրեսուն ամ է,  
Զի պատերազմեցար ընդ իս»:

Արշակը խոստովանում է, որ, իրոք, ճանաչում չգտնելով իր սխրանքների համար, որոնք ցուցաբերել է Շապուհի թշնամիների նկատմամբ, լքել է Պարսից թագավորին: Իսկ այժմ մեղանշում է՝

«Եւ աւասիկ ծառայ քո ի ձեռս քո կամ,  
Զինչ և պէտք է քեզ,  
Արա զիս, զինչ և կամ իցէ.  
Սպան զիս,  
Զի ես, ծառայ քո առ քեզ  
Կարի յանցաւոր եմ, մահապարտ եմ:

Բայց ահա Արշակը հայկական հողին է կանգնում և իսկույն ըմբոստանում՝

«Ի բաց կաց յինէն\*,  
Մառայ շարագործ տիրացեալ տերանցն քոց.  
Այլ ոչ թողից\* զքեզ և որդոց քոց  
Զվրէժ նախնեաց իմոց  
Եւ զմահն Արտեւանայ<sup>30</sup> արքայի,  
Զի այժմիկ ձեր ծառայից  
Զմեր տերանց ձերոց զբարձ կալեալ է.  
Բայց ոչ թողից\*,  
Եթէ ոչ տեղիդ մեր առ մեզ եկեսցէ»:

Տարօրինակ պտույտը տեսնում է մի ամբողջ օր: Ամեն անգամ, երբ Արշակը պարսից հողի վրա է լինում՝ խոնարհվում է Շապուհի առաջ, զղջում արածի համար: Բավական է, սակայն, որ ոտքը հայկական հողին կալի՝ «ևս խստագոյն քան զառաջինսն բարբարէր»:

\* Յինէն — ես դերանվան բացառական հոլովն է՝ ինձնից:

Շապուհը երեկոյան խնջուլքի է կանչում Արշակին. օտքէնք էին, — ասում է պատմիչը, — զի թագաւորն Պարսից և թագաւորն Հայոց ի միում տախտի բազմէին, ի միում գահոյս: Իսկ այս անգամ Արշակին տրամադրել էին վերջին տեղը: Բայց այդ տեղի տակ Հայաստանից բերված հողն է եղել, և Արշակը համարձակ խոսքեր է նետում Շապուհին՝

«Ի՛մ այդ տեղի, ուր դո՛ւդ ես բազմեալ,  
Յո՛ւն կաց այդի, թող ես այդր բազմեցայց\*,  
Զի տեղի ազգի մերոյ՝ այդ լեալ է.  
Ապա եթէ յաշխա՛րհն իմ հասից,  
Մեծամեծ վրէ՛ժս խնդրեցից\* ի քէն»:

Այդ խոսքերից հետո Արշակին շղթայակապ են անում և մինչև կյանքի վերջը պահում Անհուշ կոչեցյալ բերդում [Փաւ. Բուզ., Գ, 54]:

Չողը մարդուն ուժ է հաղորդում՝ այդ միտքն արտահայտված է եղել արդեն Անթեյի՝ հին հունական առասպելում: Դա կուահելով՝ մենամարտի ժամանակ Հերակլեսը պոկում է նրան գետնից և միայն այդ եղանակով է կարողանում հաղթել: Փալստոսի մոտ այդ գաղափարը յուրահատուկ ձևով է մեկնաբանվում՝ ուժ է ապահովում ոչ թե հողն առհասարակ, այլ մայրենի հողն ու ջուրը: Վիպական շարքի այդ հոյակապ կտորը Փալստոս Բուզանդի գրչի տակից դուրս է գալիս իբրև մեր հին գրականության թանկարժեք գոհարներից մեկը:

Արշակը ունեցել է Դրաստամատ անունով մի հավատարիմ ռոստիկան»: Անգեղ Տուն գավառում նա հսկում էր թագավորական բերդերը (բերդերից մեկում պահվում էին Արշակունիների գանձերը): Քուշանների դեմ վարած պատերազմում այդ Դրաստամատ ներքինին Շապուհին փրկում է մահից և փոխարենը Արշակին Անհուշ բերդում այցելելու թույլտրվություն խնդրում: «Եիստ է պահանջը, — պատասխանում է Շապուհը: — Պարսից թագավորության հաստատման օրվանից, երբ բերդը Անհուշ է կոչվել, մեկը չի եղել, որ հա-

\* Բուն ապոնի, եզակի, առաջին դեմք:

մարձակվի հիշեցնել թագավորին՝ բերդում կալանքի տակ թագավոր է գտնվում, որ այնտեղ է գտնվում առհասարակ որևէ մեկը: Խաղալով կյանքի հետ, դու խախտեցիր օրենքը, սակայն մեծ վաստակների համար թող շնորհվի քեզ այդ արտոնությունը»:

Փուշտիպանը Դրաստամատին ուղեկցում է դեպի Անհուշ բերդը: Մոտենալով իր բուն տիրոջը, Դրաստամատը «արձակեաց զԱրշակ ի կապանացն երկաթեաց ի ձեռակապացն և յտիցն երկաթոց և յանրոց պարանոցէն շղթայիցն սարեացն\* և լուաց զգլուխ նորա, և լոգացոյց զանձն նորա: Եւ ազոյց նմա պատմուճան ազնիւ. և էարկ նմա բազմականս, և բազմեցոյց զնա. և եղ առաջի նորա ընթրիս ըստ օրինաց թագաւորաց, և եղ առաջի նորա գինի որպէս օրէն էր թագաւորացն. սթափեաց զնա, և մխիթարեաց, և ուրախ առնէր զնա զուսանօք:

Եւ ի ժամ աղանդեր մատուցանելոյ՝ եղին առաջի նորա միրզ, խնձոր և վարունգ և ամիճ, զի կերիցէ և եղին դանակ նմա, որպէս զի հատցէ և կերիցէ զիարդ և կամեցցի: Եւ Դրաստամատ մեծապէս ուրախ առնէր զնա. կայր յտուն և մխիթարէր զնա»: Գինին ընկավ Արշակի գլուխը, նա վայ տվեց իր դժբախտ վիճակին: «Եւ զայս ասացեալ, զդանակն՝ զոր ունէր ի ձեռինն, որով զմիրզն կամ զամիճն կամէր ուտել, եհար ի սրտի իւրում. և անդէն սատակեցաւ, և մեռաւ ամրէն ի նմին ժամուն մինչ դեռ կայր ի բազմականին»: Տեսնելով այդ՝ Դրաստամատը ցատկում է տեղից, հանում Արշակի մարմնից նույն դանակը և ինքն իրեն մահաբեր հարված հասցնում [Փաւ. Բուզ., Ե, 7]<sup>31</sup>:

Փավստոսը գովերգում է ծառայի հավատարմությունն իր տիրոջ նկատմամբ: Իսկ ժամանակակից ընթերցողն այդ էջերն ընկալում է որպես համամարդկային արժեքների փառաբանություն:

Ողբերգականը մեծ տեղ է գրավում Բուզանդի շարադրություն մեջ, բայց նույն գրքում նա հանդես է գալիս եր-

\* Անտր՝ պարանոցին հագցված օղակը, սարիք՝ կապ, շղթա:

բեմն իբրև երգիծաբան: Երգիծանքի առարկան մեզ արդեն ծանոթ Փառենի որդի Հոհան եպիսկոպոսն է: Նրան նվիրված էջերը եզակի են վաղ միջնադարյան հայ գրականության մեջ:

Մեկ անգամ այդ Հոհանը անցնում է ինչ որ մեկի խաղողի այգու մոտով: Այգետերը ձայն է տալիս նրան՝ «Տեր եպիսկոպոս, օրհնիր մեզ և մեր այգիները»: Եպիսկոպոսը պատասխանում է՝ «Թող փուշ և տատասկ բուանի»<sup>32</sup> և անմիջապես պատասխան ստանում՝ «մեզ իզուր անիծելու դիմաց, թող քո մարմնի վրա փուշ և տատասկ բուանի»: Այգորդի անհծքը տեղ է հասնում, եպիսկոպոսի մարմինը ծածկվում է փշերով: Հոհանը երկար տառապելուց հետո իր մոտ է կանչում այգեպանին, աղաչում նրան, որպեսզի աղոթքով փրկի նրան՝ եպիսկոպոսին: Մարդը հակառակում է՝ ո՞վ եմ ես, որպեսզի կարողանամ մեկին օրհնել կամ անիծել, այն էլ՝ եպիսկոպոսին: Հոհանը բռնադատում է նրան (այլևս ոչ թե աղաչում, այլ ստիպում. «բռնադատէր» բայը իսկույն կյանք է տալիս կերպարին), և այգորդը սկսում է իր աղոթքը՝ «Տէր աստուած, դու գիտես՝ զի ես այր մեղաւոր եմ և անարժան, ոչ գիտեմ զաղմուկս՝ յորում ըմբռնեցայս. դու փրկեա զիս յայս ի շարէս, զի ասեն՝ թէ զայր եպիսկոպոս դու անիծեր, և ասեն՝ քո բանիւ եղև: Զի լաւ էր ինձ մահ. քանզի չգիտեմ զայս՝ զոր ինչ զինէն ասեն»:

Այդ խոսքերով էր, որ եպիսկոպոսը բժշկվեց՝ մարմնի վրա եղած փուշերը վայր ընկան՝ «և էր իբրև զփուշ խոտոց» [Փաւ. Բուզ., Զ, 9]:

Վերջապես մեկ ուրիշ հատված, որտեղ տրվում է շարաճճի եպիսկոպոսի ողջ բնութագիրը: Կեղծավոր էր Հոհանը, ասում է Փավստոսը, ուստի մարդկանց երևում էր քուրձն ուսերին, առանց ոտնամանի՝ ամառ-ձմեռ տարբեր ձևի պարանով էր փաթաթում ոտքերը: Ազահությամբ տարված, վախ չունեի աստծու առաջ: Մեկ անգամ, ձիով անցնելիս, մի ուրիշ ձիավոր է հանդիպում՝ օտար պատանի մի աշխարհական հեծեալ ի ձի, սուսեր ընդ մէջ, թուր զգօտույ, աղեղնակապարճ զմիջովն. լուացեալ զհերս իւր, օծեալ մերձեալ, վար-

սակալ եղեալ ի գլուխ իւր, և օղիկ արկեալ զուսովք իւր»<sup>\*</sup>։  
Հեծյալի ձին է, որ գրավում է եպիսկոպոսի ուշադրությունը։  
Երբ մարդը մոտենում է նրան, Հոհանը բռնում է ձիու երա-  
սանակներէց և ասում՝

«—էջ դու վաղվաղակի ի ձիոյ այտի, զի բանք են ինձ  
ընդ քեզ»։

Իսկ մարդը պատասխանում է՝

«—Ոչ դու զիս գիտես, և ոչ ես զքեզ, զի՞նչ այն բանք  
իցեն, զոր դու ընդ իս իցես խօսելոյ»։

Այդ մարդը, ենթադրում է Փաւստոսը, հավանաբար  
ավազակութունից էր վերադառնում, հանդիպման պահին  
հարբած էր և փորձեց ընդդիմանալ։ Բայց Հոհանը ստիպեց  
նրան իջնել ձիուց, ճանապարհից մի կողմ տարավ և հայտա-  
բարեց, որ երեց է ձեռնադրում նրան։ Մարդն առարկեց, թե՛  
«այր աւազակ սպանող շարագործ և խառնագնաց լեալ ի ման-  
կութենէ իմմէ, ես ոչ ինչ եմ արժանի այդպիսի իրաց. և այժմ  
դեռ ի նմին գործ կամ»։

Ձայրացած մարդը փորձեց համառել, տաքացավ նաև  
եպիսկոպոսը, ծնկաշոք արեց նրան, երեց ձեռնադրեց, ապա  
ստիպեց, որպեսզի նա հանի վերարկուն և գցեց նրա ուսին  
իր փիլոնը. հրամայեց որպեսզի գնա իր գլուղը և այնտեղ  
երեցություն անի. և շգիտեր էլ, թե ո՞ր գլուղից է ձեռնադրը-  
վածը։ Իսկ ձին, ասաց, ինձ թող լինի վարձատրություն։ Բռնի  
կերպով առավ ձին ու մարդուն ճամփու գցեց։ «Եւ այս ամե-  
նայն իրքս վասն ձիոյն եղեն»,— եզրակացնում է հեղինակը։

Դրանով պատմությունը չի վերջանում։ Փիլոնը հագած  
նորելուկ երեցը տուն է վերադառնում, դիմում կնոջն ու ըն-  
տանիքին՝ եկեք աղոթենք։ Նրանք զարմացած հարցնում են,  
արդյոք նա խելքը չի կորցրել («Մոլիս դու, դե՞ ուրեմն հա-  
րաւ ի քեզ»)։ Մարդը պնդում է, եկեք աղոթենք, որովհետև  
ես երեց եմ դարձել։ Սրանք մեկ ամաշում են, մեկ ծիծաղում,  
վերջապես համաձայնում, երբ կինը հանկարծ հիշում է, որ

\* Մերձեալ՝ մազերը մոտ բերված (սանրված)։ Օղիկ՝ ոչխարի կամ  
գառի մորթուց մուշտակ։

ամուսինը անգամ մկրտված չէ: Մարդը պատասխանում է՝ այնքան ապշեցրեց, որ մոռացա ասել նրան դրա մասին. ինձ երեց ձեռնադրեց, ձին՝ իր սանձով ու թամբով առավ ու գրնաց: Ընտանիքը համոզում է, որպեսզի հեթանոս մնացած «երեցը» զնա եպիսկոպոսի մոտ, նա ենթարկվում է տնեցիների կամքին և ներկայանում եպիսկոպոսին, ասելով՝ «Ես մկրտեալ չեի, զի՞ արարեր զիս երէց»: Հոհանը իրեն չի կորցնում՝ «Սափորով միով ջուր բերէք»: Զուրը լցնում է գըլխին, ասում՝ «Երթ, մկրտեցի զքեզ» և անմիջապես գլխառադ անում [Փաւ. Բուզ., 2, 8]:

Հնում «գեղեցիկ» գեղարվեստական գրականության դազափարը բացակայել է: Փավստոսի երկը դիտվել է Պատմություն, Փավստոսը՝ պատմաբան (հիշենք, որ Ղազար Փարպեցու համար նա Հայոց Երկրորդ պատմության հեղինակն է): Ամենևին չթերագնահատելով Բուզանդի երկի որպես պատմական սկզբնաղբյուրի արժանիքները, պիտի նկատել, որ նա հանդես է գալիս նաև որպես մեծ արձակագիր՝ բառիս ժամանակակից իմաստով: Պետք է խոստովանել, որ այդ առումով գրականագիտությունը դեռ շատ անելիք ունի: Մաշտոցի դարաշրջանում ապրող հայերի գեղագիտական աշխարհը ձևավորվել ու հարստացել է նաև Փավստոս Բուզանդի Պատմության շնորհիվ:

Եթե Հայոց պատմության առաջին գիրքը գրել է Ագաթանգեղոսը, երկրորդը՝ Փավստոս Բուզանդը, ապա երրորդ պատմության հեղինակը՝ Ղազար Փարպեցին է:

Ղազար Փարպեցու Պատմությունը բաղկացած է առաջաբանից և 3 մեծ դրվագներից: Աշխատությունը գրել է Հայոց սպարապետ և մարզպան Վահան Մամիկոնյանի հանձնարարությամբ: Հեղինակին վերաբերող կենսագրական տվյալները Պատմության մեջ ավելի քան սակավ են, մինչդեռ Վահանին ուղղված Թղթում Ղազարը նկարագրում է իր ամբողջ կյանքը: Ամենայն հավանականությամբ՝ Թուղթը նախորդում է Պատմությանը (թվարկելով իր արժանիքները, Ղազարն այդ աշխատության մասին ոչինչ չի ասում): Ղազար Փարպեցու կենսական ուղու մասին կխոսենք ստորև, այժմ նշենք, որ

Պատմութեան հեղինակը արտասահմանում ստացած է եղել լավ պատրաստութիւն, նա հունական («հոռոմ») գիտութեան սիրահար է, ուստի և գրում է իր կյանքը գրքերի հետ անցկացրած մարդու ոճով: Եւրոպականքն ընդհանուր առմամբ սահուն է, փաստերը նկարագրում է իրական հերթականութեամբ:

Առաջին դրվագը սկսվում է 387 թ. բաժանումից, երբ Արշակ Գ թագավորը լքեց Այրարատ գավառը և անցավ Հունաց կողմերը: Հայերի խնդրանքով պարսկական մասում նըշանակվեց խոսրով Գ Արշակունին, որը նախարարների բանսարկութեան հետևանքով շուտով կորցրեց իր գահը: Իշխանութիւնն անցավ նրա եղբայր Վռամշապուհին, որից հետո կրկին գահ բարձրացավ խոսրովը, իսկ վերջինիս մահից հետո արքայից արքա Հագկերտ Ա-ն Հայոց երկրի թագավոր կարգեց իր Եսպուհ որդուն: Եսպուհից հետո իշխանութիւնն անցավ Վռամշապուհի որդի Արտաշեսին:

Խոսելով Արշակ Գ-ի գաղթի մասին, Ղազարը տալիս է Արարատյան դաշտավայրի գունեղ նկարագիրը, իսկ երբ անցնում է Վռամշապուհի թագավորութեանը՝ շարադրում գրքերի գլուտի պատմութիւնը: Այս մասում Ղազարի սկզբնաղբյուրը նույն Կորյունն է, սակայն իր նախորդի համեմատութեամբ նա սակավախոս է, շատ բան բաց է թողնում (ոչինչ չի ասում, օրինակ, Վիրքում և Աղվանքում, ինչպես նաև Հունաց կողմերում Մաշտոցի ծավալած գործունեութեան մասին): Եթե Կորյունի գլխավոր հերոսը Մաշտոցն է (չնայած նա մի քանի անգամ խոսում է նրա ու Սահակ Պարթևի մասին իբրև հավասարների), ապա Ղազարը կենտրոնանում է կաթողիկոսի վրա: Հիմք չկա կասկածելու երկուսի ճշտութեան վրա էլ, պարզապես նրանք այդ շրջանին մոտենում են տարբեր տեսանկյունից, ուստի և տարբեր ձևով են դնում շեշտերը:

Երբ նախարարները սկսեցին իրենց թշնամութիւնը Արտաշես Ծ թագավորի դեմ, Սահակը երկար հանդիմանեց նրանց, սակայն ապարդիւն՝ նրանց սաղրանքով թագավորը զրկվեց իր գահից: Այդ ժամանակ Սահակն իր հերթին հրա-

ժարվեց հովվապետութունից: Մեկը մյուսի հակեց հայ եկեղեցու գլուխ անցան մի քանի եկվոր ասորի: Նախարարները զղջացին, աղերսանքով խնդրեցին կաթողիկոսին վերադառնալ իր տեղը, բայց նա մերժեց և պատմեց նրանց իրեն երեււացած տեսիլը (այդ մասը հարկավ ներշնչած է Ագաթանգեղոսի Պատմութեան՝ Գրիգոր Լուսավորչի տեսիլով): Տեսիլից պարզվում է, որ վաղուց ի վեր գուշակված է եղել, որ Արշակունիները կգրկվեն աշխարհիկ իշխանութունից, իսկ Գրիգոր Լուսավորչի ժառանգները (վերջինը՝ հենց ինքը Սահակ Պարթևն է)՝ հովվապետութունից: Բայց կգա ժամանակ, երբ «դարձեալ յառնէ թագաւոր յազգէդ Արշակունեաց, և նորոգի աթոռ հայրապետութեան ի շառաւեղէ սրբոյն Գրիգորի» [Ղազ. Փարպ., էջ 34. 30—32]<sup>33</sup>, Այնուհետև հեղինակը պատմում է Սահակի, ապա Մաշտոցի մահվան մասին և դրանով ավարտում առաջին դրվագը:

Երկրորդ դրվագը ամբողջութեամբ նվիրված է վարդանանց պատերազմին. Եղիշեի համեմատութեամբ տարբերութունները մեծ չեն (դրանց վրա կանգ կառնենք հաջորդ գլխում), սակայն մի հարցում Փարպեցին իր՝ պատմագետի տեղը զիջում է պատմավեպի հեղինակին:

Սյունիքի հզոր իշխան Վասակի դուստրը ամուսնացած էր մեկ այլ սյունեցու՝ Վարազվաղան սեպուհի հետ: Ասում էին, որ ամուսիններն ատում էին միմյանց: Աներն էլ իր հերթին ատում էր փեսային և ձգտում վրեժ լուծել նրանից: Վարազվաղանը փախչում է Հազկերտ արքայի «շարահնար և դժնամիտ» հազարապետ Միհրնբրսեհի մոտ, վերջինիս ազդեցութեան տակ ուրանում հավատքը՝ երկրպագում արեգակին և լուսնին: Հազարապետը մոգութուն չընդունող երկրների մասին զգուշացնում է՝ աստվածների կամքով նրանք կորչելու են հավիտյան: Վարազվաղանը կարող էր հերքել Միհրնբրսեհի ասածը, — հայտնում է պատմիչը, — բայց նա այլ կերպ է դատում: Եթե հայերը ուրանան, ապա նա՝ Վարազվաղանը, կարժանանա արիների կողմից մեծ պարգևների և պատիվների: Իսկ եթե հրաժարվեն ու դիմադրեն՝ կկործանվեն, իսկ նրանց հետ միասին իր վերջը կգտնի թերևս նաև

Վարազվաղանի թշնամին, այսինքն Վասակը: Թեպետ դրանից ես նյութական ոչ մի օգուտ չեմ քաղի,— մտածում է Վարազվաղանը,— «սակայն շատ իսկ է ինչ և բաւական լուրն և տես կորստեան թշնամույ իմոյ քան դամենայն օգուտս և մեծութիւնս որ են յաշխարհի»:

Իմանալով Վարազվաղանի մտքերը և նրան օգնական ճանաչելով, Միհրնեբրսեհը դիմում է Հազկերտին, որպէսզի նա ստիպի հայերին ընդունելու մոգությունը: Վարազվաղանի օրինակին կհետեւեն մյուսները ևս: Լսելով Միհրնեբրսեհի պատմութիւնը, Հազկերտը հայերին է ուղարկում մոգութիւն ընդունելու իր հրովարտակը, որը և պատճառ է դառնում Վարդանանց պատերազմին: Ահա թե ինչպես Վարազվաղանը «եղև պատճառ կորստեան բազմաց և կոտորածի աշխարհիս Հայոց» [Ղազ. Փարպ., ԻԱ—ԻԲ]:

Բացառված չէ, որ Վարազվաղանի ուրացութիւնը և փախուստը պարսիկների մոտ համապատասխանում է իրականութեանը: Ստացվում է, սակայն, այնպես, որ հենց այդ քայլը եղավ կրոնական հալածանքների և դրանց հաշորդող հայերի ապստամբութեան պատճառը: Վիպական տարրը այստեղ հաղթում է պատմականութեանը: Ղազարը բախումը կապում է միայն մարդկային հարաբերութիւնների, անձնական ողբերգութեան հետ, չնայած և այն բարդացնում է ուրացութեան հանգամանքներով: Վարդանանց պատերազմի պատճառները շարադրելիս Եղիշեն ավելի խորաթափանց է գտնվում, քան Ղազարը (տե՛ս Եղիշեի Գ գլուխը):

Ղազար Փարպեցու երրորդ դրվագը բովանդակում է Վահան Մամիկոնյանի ապստամբութեան պատմութիւնը: Այդ անցքերի համար դա ոչ միայն գլխավոր, այլև փաստորեն միակ սկզբնաղբյուրն է, որին հետեւելով և սույն գրքի Դ գլխում շարադրված են ապստամբութեան հանգամանքները:

Ղազար Փարպեցին եղել է V դարի վերջին պատմիչը, նրա ստեղծագործութեամբ ավարտվում է պատմագրութեան այդ հոյակապ շրջանը: Մեծ է մեր առաջին պատմիչների գրական ներդրումը: Պատկանելով ընդհանուր հոսանքին, ներանք դրակորել են միաժամանակ վառ արտահայտված

առանձնահատկություններ, ստեղծել շարադրանքի ուրույն ոճ: Նրանց անհատականությունը աչքի է ընկնում առաջին իսկ հայացքից: Մեծություններ են նրանք, որոնք հայ պատմագրությանը ապահովեցին համբավ և ճանաչում:

Սակայն վերահիշյալ պատմիչներից և ոչ մեկը չէր հասել Մովսես Խորենացու բարձունքներին: Տաղանդների կաճառում Մովսես Խորենացին միակ իսկական հանճարն է: Եթե մյուսները գրի էին առել հայոց պատմության առանձին (թեև խոշոր) դրվագներ, ապա Խորենացին ամբողջացրել էր պատմությունը «բիրլիական» շրջանից մինչև V դարի կեսերը: Այդ աշխատության շնորհիվ «Պատմահայր» տիտղոսը ընդմիշտ ձուլվել է Մովսես Խորենացու անվան հետ:

Մտահղացումը եղել է վիթխարի, կատարումը՝ առավել հոյակապ: Ազգային անցյալը և միաժամանակ պատմության ընթացքը որպես այդպիսին բացված էին ընթերցողին իրենց ողջ բարդությամբ և բազմերանգությամբ: Եվ ինչպիսի գունեղ եղանակով էր այն ներկայացված: Ինչպիսի նոր մտքեր և գաղափարներ էր հաղորդում հեղինակը այդ ընթացքի կապակցությամբ: Մյուսներն ասես միայն պատմել են, Մովսես Խորենացին՝ նաև փրկասփայել:

Խորենացու երկը հայ պատմագրության ամենից բարդ գործն է և անցել է գիտական վերլուծության առավել բարդ ուղի: XIX դարի վերջերից Խորենացու աշխատության քննությունը դարձավ հայ բանասիրության կարևորագույն հարցը: Տարբեր երկրների գիտնականները սկսեցին որոնել Մովսես Խորենացու կողմից օգտագործված սկզբնաղբյուրները, պարզվեց, որ այդպիսիների թիվը պետք է հաշվել տասնյակներով: Հաջողվեց պարզաբանել այդ աղբյուրների օգտագործման եղանակը: Մի շարք դեպքերում Պատմահայրը ստիպված է եղել դիմել ոչ թե անմիջապես նրան հետաքրքրող երկին, այլ բավարարվել է մյուսների մոտ եղած քաղվածքներով: Եվ, վերջապես, հաջողվեց ցույց տալ, որ Խորենացին երբեք բառացի չի արտագրում իր աղբյուրը, այլ վերափոխում է այն՝ հարմարեցնելով իր նպատակին և շատ անգամ հեռանում սկզբնաղբյուրի բուն բովանդակությունից<sup>84</sup>:

Գիտնականները միաժամանակ ուշադրություն դարձրին մի կարևոր հանգամանքի վրա: «Հայոց պատմության» մեջ արձանագրված որոշ փաստեր անհարիր են V դարին<sup>35</sup>, V դարին չեն պատկանում նաև մեզ հասած բնագրում օգտագործված մի քանի գրավոր սկզբնաղբյուրներ<sup>36</sup>: Եվ եկան այն եզրակացության, որ Պատմահայրը ապրել է ոչ թե V դարում, այլ ավելի ուշ (ժամանակը հասցնում էին մինչև IX դարը): Եվ եթե հեղինակը իրեն ներկայացնում է որպես Մաշտոցի ու Սահակի աշակերտ, ցույց տալիս, որ եղել է նրանց կրտսեր ժամանակակիցը, ապա այդ անում է իր աշխատությանը հատուկ կշիռ տալու համար:

Այդ տեսակետը լայն տարածում է գտել, ընդ որում՝ դրա կայունացմանը նպաստել է ևս մի հանգամանք: Մինչև այժմ հայտնի չէ որևէ գրական սկզբնաղբյուր, որը, պատկանելով V—IX դարերին, հականե հանվանե հիշատակեր «Հայոց պատմության» հեղինակ Մովսես Խորենացուն: X դարից սկսած՝ նման հիշատակությունների թիվն աճում է:

Այդ տեսակետն ամուր դիմադրության հանդիպեց: Հայտնի է, որ դարերի ընթացքում գրական կոթողները կարող են ենթարկվել փոփոխության, այս կամ այն չափով խմբագրվել: Խմբագրվել է նաև Մովսես Խորենացու աշխատությունը, պընդում են ավանդական տեսակետի պաշտպանները: Շատ դեպքերում, երբ «քննադատները» նշում են այս կամ այն սկզբնաղբյուրը, որը, նրանց կարծիքով, օգտագործվել է Խորենացու կողմից, «պաշտպանները» հանգում են ճիշտ հակառակ եզրակացության՝ այդ գրավոր երկերն են կախված Խորենացու բնագրից: Ընդհանուր եզրակացությունն այս է՝ Մովսես Խորենացին ճիշտ այն անձն է, որն իր «Հայոց պատմության» զանազան հատվածներում խոսում է առաջին դեմքով որպես երկի հեղինակ:

(Պետք է խոստովանել, որ հրապարակի վրա չկա որևէ աշխատություն, ուր այդ տեսակետը ներկայացված լինի պատշաճ ձևով, այսինքն եղած կարծիքների հանգամանալից քննությունը, հաշվի առնելով բոլոր փաստերը: Միայն այդպիսի բազմակողմանի և անաչառ վերլուծությունը կարող

է բերել համողիչ վերջնական արդյունքներ: Դրա փոխարեն լինում են դեպքեր, երբ զուտ գիտական հարցը ներկայացվում է անտեղի կրթով, իսկ խորաթափանց հետազոտությունը փոխարինվում է անհիմն հայտարարություններով):

Սույն աշխատութեան բնույթը հնարավորություն չի տալիս խորանալ Մովսես Խորենացու հարցի մեջ: Սակայն, ինչպես էլ որ լուծելու լինենք այդ հարցը, նրա «Հայոց պատմությունը» ծնունդ է նախ և առաջ V դարի մտավոր բուռն վերելքի, այն զարթոնքի, որն ապրել է հայոց մշակույթը հատկապես այդ շրջանում: Այն էլ ավելացնենք, որ անկախ նրա ստեղծման ժամանակից, «Հայոց պատմությունը» մնում է մեր հին պատմութեան կարևորագույն սկզբնաղբյուրներից մեկը: Գրաքննադատութեան բովով անցած, այն պահպանել է աղբյուրագիտական իր բոլոր արժանիքները: Ժամանակակից գիտությունը շարունակում է քննութեան ենթարկել Խորենացու Պատմությունը, հայտնաբերելով նրա ճշտութեան նորանոր փաստեր: Այդպիսի մոտեցումը սկիզբ է առնում Ն. Ադոնցից և Հ. Մանանդյանից (երկուսն էլ մերժում էին հեղինակի պատկանելությունը V դարին) և հաջողութեամբ կիրառվում մեր ժամանակակիցների՝ Գ. Սարգսյանի, Գ. Տիրացյանի աշխատություններում (որոնք Մովսես Խորենացուն համարում են V դարի պատմիչ):

Մովսես Խորենացու աշխատությունը բազմաֆունկցիոնալ մի գործ է, որը հարկավոր է գնահատել միջնադարյան ողջ մշակույթի շափանիշներով: Մենք կփորձենք ստորև ներկայացնել այդ կոթողը այնպես, ինչպես այն երևացել է բուն ընթերցողին՝ այն ընթերցողին, որին հասցեագրած է եղել իր աշխատությունը հենց ինքը՝ Մովսես Խորենացին:

«Հայոց պատմությունը» բաղկացած է 3 գրքից կամ «հատվածից»։ հեղինակի խոսքով, առաջինը նվիրված է Մեծ Հայքի ծննդաբանութեանը: Հին Կտակարանի Մենդոց կոչված գրքում ասված է. ազատվելով ջրհեղեղից, Նոյ նահապետը իր երեք որդիներով (նրանց անուններն են՝ Սեմ կամ Սիմ, Քամ, Հաբեթ), իր ամբողջ գերդաստանով դուրս եկավ ցամաք գետին: Օրհնելով Նոյին և նրա որդիներին, Աստված

առաց՝ «Աճեցէք և բազմացարուք և լցէք զերկիր և տիրեցէք դմա»: Աստվածաշնչական առասպելի համաձայն՝ աշխարհիս ազգերը ծագել են Նոյի որդիներից և նրանց սերունդներից: Քրիստոնյա հայերի պատկերացմամբ՝ հայ ազգը եղել է Հաբեթի շառավիղը, ծագել նրա Ասքանազ կամ Թորգոմ Թոռներից (վաղ քրիստոնեական ավանդության համաձայն Ասքանազ և Թորգոմ եղբայրները եղել են Հաբեթի ժոռները): Եվ ահա Կորյունն ասում է, որ Մաշտոցը ստեղծել է «Ասքանազյան ազգի և Հայաստան աշխարհի» գրերը [Կոր., 22. 8], իսկ Ագաթանգեղոսի մոտ նման բանաձևը նկատի ունի «մեր՝ Թորգոմի ազգը՝ Հայաստան աշխարհը» [Ագաթ., էջ 12. 21]: Փավստոս Բուզանդի ասելով, նրա երկը հիշողություն է արթնացնում Հայաստան աշխարհի տոհմերի՝ Թորգոմի որդիների մասին [Փաւ. Բուզ., էջ 1]: Հայերի՝ Թորգոմից սերելու գաղափարը Հայաստան է թափանցել հայրաբանական գրականությունից<sup>37</sup>:

Ահա, ուրեմն, ընկալելով Ասքանազին կամ Թորգոմին որպես նախահայր, մեր նախնիները իրենց տեղ ապահովեցին Ս. Գրքի տոհմաբանական ծառի վրա: Ազգային ինքագիտակցությունը ձևավորվում էր ըստ քրիստոնյա դարաշրջանի պահանջների: Այսպիսով, հայերը հռչակեցին իրենց որպես «Ասքանազյան», «Թորգոմյան», ավելի ընդհանրացված եղանակով «Հաբեթյան» ազգ: Բայց այդ բանաձևերը սկսեցին մշակվել այն ժամանակ, երբ հայերը արդեն ունեին իրենց ծագման ընդարձակ, հարյուրամյակների կյանք ապրած պատմական ավանդություններ: Հնուց եկած առասպելները հարկավոր էր կապել Աստվածաշնչի հետ և դրանով նրանց համար հաստատ տեղ ապահովել նաև պաշտոնական գաղափարախոսական համակարգի մեջ: Այդպիսի մի խնդիր է դրած եղել իր առջև Մովսես Խորենացին, դրա լուծմանը տրամադրելով «Հայոց պատմության» առաջին գիրքը:

Երբ մարդկային ցեղը սկսեց տարածվել երկրով մեկ ամեն մեկը խելագարված սուրն ընկերոջ կողն էր կոխում, ձգտում հաստատել իր տիրությունը: Հանգամանքները նըպաստեցին Բելին, որը բռնանալով տիրեց ամբողջ երկրին:

Բայց Բելի դեմ դուրս եկավ Հայկը՝ «գեղապատշաճ և անձնեայ, քաջագանգուր, խայտակն և հաստաբազուկ»: Հայկը դիմադրում էր նրանց, ովքեր փորձում էին հնթարկել իրենց մյուս հսկաներին և դուրսագուններին: Բարեխոնում ծնվում է Հայկի Արամանյակ որդին, և ապա հսկան, իր ամբողջ գերդաստանով (մոտ 300 անդամ), որն ազգականներից բացի ընդգրկում էր զինվորներին և սարուկներին, իր ամբողջ տունուտեղով քաշվում է դեպի հյուսիսում գտնվող «Արարադ» երկիրը: Իրեն է հնազանդեցնում այնտեղ եղած սակավաթիվ բնակիչներին, նվաճված երկիրը որպես ժառանգական կալված թողնում Արամանյակի որդի Կադմոսին և շարունակում իր ուղին դեպի հյուսիս-արևմուտք: Բնակվում է բարձրավանդակի վրա գտնվող դաշտում, անվանելով այն Հարք, այսինքն այստեղ բնակություն հաստատողները՝ Թորգոմյան ազգի հայրերն են: Շինում է նաև մի գյուղ՝ Հայկաշեն անունով: Դաշտի հարավում եղած մարդիկ նույնպես հնազանդվում են Հայկին:

Մինչդեռ Բելը իր թագավորական իշխանությունը տարածել էր բոլորի վրա, նա որդիներից մեկին ուղարկում է Հայկի մոտ, որպեսզի հյուսիսում մնացած այդ հսկան ևս ենթարկվի նրան: Հայկը հրաժարվում է: Այնուհետև Մովսես Խորենացին պատմում է, թե ինչպես Բելը դուրս է գալիս Հայկի դեմ և մենամարտում սպանվում: Բելի դիակը զմրուսում են ու թաղում, «իսկ մեր երկիրը մեր նախնի Հայկի անունով կոչվում է Հայք» [Մով. Խոր., Ա, 11—12]:

Շարունակելով առասպելը, Մովսես Խորենացին պատմում է նաև Հայկի ժառանգների մասին: Մյուս մանրամասնությունների վրա կանգ չառնելով, թվինք միայն անունները: Պատմահայրը բացատրում է, որ Արամանյակի Խոռ և Մանավազ եղբայրներից սերում են Խոռխոռունի և Մանավազյան նախարարական տոհմերը, իսկ Բզնունիները ծագում են Մանավազի որդի Բազից: Նրանցից են սերում նաև Որդունիները: Արամանյակից է ստանում իր անունը Արագած Վեռը, իսկ կալվածը Արագածոտն (ոտն Արագածոյ):

Արամանյակի որդի Արամայիսը բնակվում է գետի ափին, մի բլուրի վրա, որը և կոչվում է Արամվիր, իսկ Երասխ գետն իր անունն ստանում է նրա Երաստ թոռից: Եիրակ գավառը իր անվամբ պարտական է Արամայիսի որդի Ծարային: Ծարան իբր որկրամուլ է եղել, և գյուղացիները մի առած էին ասում՝ «Եթե դու Ծարայի որկորն ունես, ապա մենք շունենք Եիրակի ամբարները»: Արամայիսի որդին Ամասիան էր: Սրա Փառոս և Յուլակ որդիների անունից են առաջացել Փառախոտ և Յուլակերտ տեղանունները: Իսկ Մասիս անունը՝ Ամասիայից է: Պատմահայրը նման բացատրություններ է տալիս նաև մյուս անուններին, առաջացնելով Գեղն ու Գեղարքունին՝ Գեղամից, Գառնին՝ Գառնիկից ևն: Կարևորն այստեղ գլխավոր գաղափարն է. հայաստանցիների նախնին Հայկն է, որը Թորգոմին գալիս է որդի, Թիրասին թոռ, Գամերին ծոռ, իսկ Հաբեթին թոռան թոռ: Ահա թե Մովսես Խորենացին, հետևելով ու լրացնելով հայերին Թորգոմի սերունդ դիտող Հիպոդիտես Հոռմեացուն, ինչ ձևով է շաղկապում իր ժողովրդին Ս. Գրքի տոհմաբանական համակարգի հետ:

Մննդոց գրքում [Ժ, 22] հիշված է Սեմի որդի Արամը՝ Խորենացու Արամը՝ Հարմայի որդին է, այսինքն սերում է Հայկի աղգատոհմից: Հեղինակի ասելով, մյուս ժողովուրդները մեր երկիրը անվանում են Արամի անունով, հույները՝ Արմէն, իսկ պարսիկներն ու ասորիները՝ Արմէնիկ: Այսպիսով, «Հայոց պատմության» մեջ երևան են գալիս հայերի երկու էպոնիմներ\* . Հայկը, որի հետ կապ ունի հայերի ինքնանունը և Արամը, որի անունով են հայերին կոչում մյուս ժողովուրդները: Թե՛ Հայկի, թե՛ Արամի առասպելները գալիս են, անշուշտ, հեթանոսական շրջանից, բայց Խորենացին դրանք վարպետորեն է պատվաստում Աստվածաշնչի տոհմաբանական ժառին:

\* Հում. ἐπωνυμῶς — այն, որը տալիս է իր անունն ինչ-որ բանի, այն, որի անունով ինչ-որ բան է անվանված: Այդ արմատից ծագող գիտական տերմինները (ЭПОНИМ, ёponyme ևն) մտել են եվրոպական բուրժուականների մեջ:

Բելլի և Հայկի հաջորդների միջև պայքարը շարունակվում է, Մովսես Խորենացին պատմում է Արամի սխրանքի մասին, որը աշխատասեր և «հայրենասեր մարդ էր», գերադասում էր «հայրենիքի համար մեռնել քան տեսնել, ինչպես օտարազգիները կոխում են հայրենիքի սահմանը, ինչպես օտարները տիրում են իր հարազատներին» [Մով. Խոր., էջ 43. 7—11]։ Այդ Արամի որդին էր Արա Գեղեցիկը։ Նրան սիրահարվում է Ասորեստանի հզոր տիրուհի Շամիրամը, սակայն Արան մերժում է թագուհուն, հավատարիմ մնալով իր նվարդ ամուսնուն։ Շամիրամը զորքով շարժվում է դեպի Հայաստան, ճակատամարտում Արան պարտություն է կրում և սպանվում։ Արայի դիակը դնում են ապարանքի վերնատանը, իսկ երբ հայոց զորքը, վրեժխնդիր լինելով, հարձակվում է ասորեստանցիների վրա, Շամիրամը հայտարարում է՝ «Կոչ եմ արել իմ աստվածներին, որպեսզի լիզեն նրա վերքերը և նա կկենդանանա»<sup>33</sup>։ Այնուհետև հրաման է տալիս զարդարել իր սիրելիաններից մեկին, ներկայացնել նրան որպես կենդանացած Արա։ Ընդվզումը դրանով վերանում է։

Շամիրամը շինարարական գործունեություն է ծավալում Հայաստանում, շատ տեղերում արձանագրություններ է փորագրել տալիս, վտանգի պահին հենց Հայոց երկիրն է փախչում և այստեղ սպանվում՝ իր նինվա որդու ձեռքով։

Արա Գեղեցիկից հետո Մովսես Խորենացին անունների մի երկար շարք է բերում, Արայան Արայից մինչև Սկայորդի՝ 28 անուն, բայց մանրամասնություններ է հաղորդում միայն Արայի որդու, Անուշավանի, Զարմայրի և Սկայորդու մասին։ Սրանք դեռևս լոկ «նախնիներ» են։ Բայց ահա Սկայորդու որդի Պարույրը իշխանությունը խլում է Սարդանապալտսի ձեռքից և դառնում Հայոց առաջին թագավորը։ Հատուկ գլխում հեղինակը տալիս է մարաց, ապա Հայոց թագավորների շարքը՝ Պարույրից մինչև Տիգրան՝ ինը անուն։ Մանրամասն խոսում է Տիգրան Երվանդյանի և մարաց Աժդահակ թագավորի արկածներով լի հարաբերությունների, Տիգրանի ժառանգների մասին և այլն։ Հեղինակը պնդում է, որ Տիգրանի երեք որդիներից մեկը հենց վահագնն է (նրա եր-

գը բերված է սույն գլխի սկզբում)։ Մովսես Խորենացին նը-  
շում է, որ ըստ Հոմերոսի՝ հայերը մասնակցել են Տրոյական  
պատերազմին, այնուհետև, որպես հավելված բերում է Բյու-  
րասպի Աժդահակի առասպելը և սրանով ավարտում «Հայոց  
պատմութիան» առաջին գիրքը։ Հին պատմությունը, այն է՝  
Մեծ Հայքի նախնիների և թագավորների ծննդաբանությունը  
պարզաբանված է։

Այսպիսով, առաջին գրքում Մովսես Խորենացին յուրովի  
շաղկապում է իր ժողովրդի պատմությունը Ս. Գրքի հետ։  
Նա միաժամանակ որոնում է հայերի տեղը ոչ միայն բիբ-  
լիական, այլև «համընդհանուր» (աշխարհիկ, ինչպես այն  
հասկացել են հները) պատմության ցանցում։ Շամիրամը,  
Նաբուգոդոնոսորը, Աժդահակը, Կյուռոսը, որոնց հետ բարդ  
հարաբերություններ ունեն հայերը, պատկանում են ոչ միայն  
Ս. Գրքին, այլև «համընդհանուր» պատմությանը։ Տրոյական  
պատերազմը առհասարակ Ս. Գրքի ոլորտից դուրս է։ Երկ-  
րորդ և երրորդ գրքերում այդ միտումը լինելու է առավել շա-  
փով ակներև։

Աշխատության սկզբում իսկ Խորենացին որոշել էր իր  
նպատակը՝ ներկայացնել ինչպես թագավորների, այնպես և  
նախարարական ազգերի և տոհմերի պատմությունը՝ ով  
ումից է ծագել, ինչ է գործել նախարարներից յուրաքանչ-  
յուրը, մեկը՝ մեր ազգից, մյուսը՝ հայացած եկվոր [Մով.  
Խոր., էջ 12. 1—4]։ Արդեն առաջին գլուխներում Խորենացին  
սկսում է իրացնել իր նպատակը՝ ոչ միայն ազգապետերի և  
թագավորների, այլև առանձին նախարարների նկատմամբ։  
Կանգ առնենք միայն մեկ օրինակի վրա։ Խորենացու պատ-  
կերացմամբ՝ հրեաների գերությունը Նաբուգոդոնոսոր արքա-  
յի կողմից («Բաբելոնյան գերությունը») տեղի է ունեցել  
Հայոց Հրաչյա թագավորի օրոք։ Հրեաների գերի ընկած գըլ-  
խավորներից մեկին՝ Շամբաթին, Հրաչյան մեծ պատվով բնա-  
կեցնում է Հայաստանում։ Այդ Շամբաթից է սերում Բագրա-  
տունյաց ազգը, հաստատում է մեր հեղինակը, և ոչ թե Հայ-  
կից, ինչպես ասում են մյուսները։ Բագրատունիների մոտ

տարածված Սմբատ անունը նույն Շամբաթն է [Մով. Խոր., էջ 68—69]:

Առաջին անգամն է, որ գրիչ է վերցնում Բագրատունիների, և ոչ թե, ասենք, Մամիկոնյանների շատագուցը (ինչպես դա եղել է Փավստոս Բուզանդի, հատկապես Ղազար Փարպեցու դեպքում): Բագրատունյաց պատմությունը կարևոր տեղ է գրավում Խորենացու շարադրանքում: Եվ այդ տոհմի ծագմանը վերաբերող զանազան առասպելներից Մովսես Խորենացին ընտրութուն է կատարում՝ հօգուտ հրեական տարբերակի:

Խորենացու երկրորդ գիրքը նվիրված է «միջակ» պատմությանը՝ Մեծ Հայքի «հառաջադիմության» շրջանին: Դա ամենից ծավալուն մասն է, կազմված է 92 գլխից (առաջինն ունի 33 գլուխ և երկու փոքրիկ հավելված, երրորդը՝ 68 գլուխ): Հեղինակը սկսում է Ալեքսանդր Մակեդոնացու շրջանից, ավարտում՝ Տրդատ Մեծի մահվամբ: Մովսես Խորենացին հավատարիմ է իր խոստումին՝ նկարագրել թագավորների և նախարարական տոհմերի պատմությունը: Պատմության առանցքը կազմում է գահակալների հերթականութունը, ընդ որում՝ հայ Արշակունիների ցանկը շաղկապված և համաձայնեցված է մի կողմից պարթև, ապա՝ սասանյան արքաների հետ, մյուս կողմից՝ Ալեքսանդր Մակեդոնացու և նրա հաջորդների, ապա՝ հռոմեական տիրակալների հետ: Խորենացին առաջին գրքում ներկայացրել էր հայոց պատմությունը որպես բիբլիականի օրինավոր ճյուղավորում: Երկրորդ գրքում ազգային անցյալը հեթանոսների պատմության մի մասն է, ապա թոհիք է կատարվում և հայոց պատմությունը շաղկապվում քրիստոնյա ազգերի պատմության հետ: Վերաշարադրել այդ 92 գլխի բովանդակությունը անհնարին է և անիմաստ, կանգ առնենք միայն 2—3 դրվագների վրա, որոնք կարևոր են Խորենացու մտահղացումը ճիշտ ըմբռնելու համար:

Միջին շրջանի հայոց բոլոր թագավորները ծագումով Արշակունի են, սերում են պարթև Արշակունիներից: Ընդհանուր առմամբ՝ իր պարթև ազգականից հետո հայոց արքան

դիտվում է որպես երկրորդ, սակայն բացառիկ պարագաներում նա կարող է գրավել անգամ առաջին տեղը: Հայաստանի առաջին Արշակունեն՝ Վաղարշակին գահի վրա է հաստատել նրա եղբայր Արշակը: Վաղարշակը հանդես է գալիս որպես խոշոր բարենորոգիչ, նա է որոշել հասարակական այն կառուցվածքը, որը հատուկ է Արշակունյաց ողջ շրջանին: Նա է ձևել նախարարական կարգերը: Արշակունյաց շրջանը սկսելով նրանից, Խորենացին այնուհետև ներկայացնում է թագավորների և նախարարների մի երկար շարան, նրանք են գործում որպես պատմական դեմքեր, նրանք են որոշում հայերի բախտը:

Խորենացին ճարտար գրչով ներկայացնում է արևելյան և արևմտյան հարևանների հետ հղած բարդ և բազմակողմանի հարաբերությունները, նկարագրում պատմական կյանքի այն կողմը, որը մենք այսօր կանվանեինք ներքին քաղաքականություն, ապա տնտեսություն և այլն: Հեղինակը հատուկ հետաքրքրություն է ցուցաբերում քաղաքաշինության նկատմամբ, ընթերցողին առաջարկում, օրինակ, Երվանդաշատ քաղաքի հիմնադրման տպավորիչ նկարագիրը: «Սրա (այսինքն՝ Երվանդ թագավորի — Կ. Յ.) ժամանակ արքունիքը Արմավիր կոչված բլրից փոխադրվում է, որովհետև Երասխ գետը [նրանից] հեռացել էր, և ձմեռն երկարելիս, երբ հյուսիսային ցուրտ քամիներ էին փչում՝ վտակը սառչում էր բոլորովին, և թագավորական կայանի խմելու ջուրը բավական չէր: Սրանից նեղվելով, նաև մի ավելի լավ տեղ փնտրելով՝ Երվանդը արքունիքը տեղափոխում է դեպի արևմուտք, քարակտոր մի բլուրի վրա, որի շուրջ պատում է Երասխը, իսկ դիմացից հոսում Ախուրյան գետը: Բլուրը պարսպում է, իսկ պարսպից ներս շատ տեղերում քարերը կտրել տալով իջեցնում է մինչև բլուրի հատակը, գետի [մակերևութին] հավասար, այնպես որ գետից ջրերը հոսեին այդ փորված տեղը, խմելու ջուր մատակարարելով: Միջնաբերդն ամրացնում է բարձր պարիսպներով, պարիսպների մեջ պղնձե դռներ է դնում և երկաթե սանդուղքներ՝ ներքևից մինչև դուռը: Սանդուղքի վրա, աստիճանների միջև,

Թաքնված որոգայթներ է շինում, որպեսզի եթե մեկը, Թաքավորին դավելու ցանկությամբ, գաղտնի բարձրանա՝ ապա բռնվի: Սանդուղքը, ասում են, երկու տեսակ էր սարքված, մեկը ցերեկային ճանապարհ՝ արքունի սպասավորների և ընդհանրապես, ելումուտի համար, իսկ մյուսը գիշերային, դավադիրների դեմ» [Մով. Խոր., Բ, 39]:

Պետք է հատուկ նշել, որ զանազան շինություններ մըշտապես գրավել են Պատմահոր ուշադրությունը:

Խորենացու կերտած «Թագավորական» պատմությունը շատ անգամ վեր է ածվում դյուցազնի գության: Դա հատկապես աչքի է ընկնում Սանատրուկի որդի Արտաշես Թագավորին նվիրված գլուխներով: Արտաշեսը Խորենացու սիրած հերոսներից է, նա մանրամասն նկարագրում է Թագավորի՝ Հայաստանում և նրա սահմաններից դուրս ծավալած գործունեությունը, ընդ որում՝ պատմական Արտաշեսը (պատմական՝ նույն Խորենացու շափանիշներով) իր տեղն է գիշում առասպելների Արտաշեսին: Խորենացու շնորհիվ մեկ անգամ ևս հնարավորություն ենք ստանում ծանոթանալու մեր հին բանահյուսության (այն էլ՝ վարպետորեն վերամշակված) Թանկարժեք նմուշներին:

Ալանների և հայերի, «երկու քաջ և աղեղնավոր» ազգերի միջև պատերազմ է լինում: Ալանները պարտվում են, նրանց Թագավորի որդին գերի է ընկնում: Ալանները հաշտություն են խնդրում, խոստանում այլևս չասպատակել Հայոց երկիրը և ետ են ուզում գերի վերցված երիտասարդին: Արտաշեսը մերժում է, ալանները դիմում են վերջին միջոցին՝ ուղարկում են բանակցելու պատանու քույր Սաթենիկին: Սաթենիկը դուրս է գալիս գետի ափը, բարձրանում բլուրը և Թարգմանների միջոցով դիմում Արտաշեսին: Հայոց Թագավորին հասնում են վեհ պոեզիայի հուզիչ խոսքեր՝

«Քեզ ասեմ, այր քաջ Արտաշէս,  
որ յաղթեցեր քաջ ազգին Ալանաց.  
եկ հաւանեաց բանից  
Աշագեղոյ դստերս Ալանաց՝  
տալ զպատանիդ.»

շի վասն միոյ քինու  
 ոչ է օրէն դիւցազանց՝  
 զայլոց դիւցազանց զարմից  
 բառնալ զկենդանութիւն,  
 կամ ծառայեցուցանելով՝  
 ի ստրկաց կարգի պահել,  
 և թշնամութիւն յաւիտենական  
 ի մէջ երկոցունց՝  
 ազգաց քաջաց հաստատել» [Մով. Խոր., Բ, 50]<sup>39</sup>։

Տեսնելով Սաթենիկին, լսելով նրա իմաստուն խոսքերը, Արտաշեսը սիրահարվում է, նրա փափագն է՝ կին առնել ալանների արքայազն օրիորդին, խաղաղություն հաստատել քաջ ազգերի միջև։ Միրտը բացում է իր դայակ Սմբատ Բագրատունուն, սա դեսպան է ուղարկում Ալանաց թագավորի մոտ։ Բայց չէ՞ որ Սաթենիկի համար գին է հարկավոր.

«Եւ ուստի՞ տացէ քաջն Արտաշէս  
 հաղարս ի հազարաց  
 և բիրս ի բիրուց  
 ընդ քաջազգոյ կոյս  
 օրիորդիս Ալանաց»<sup>40</sup>

Հարց է տալիս Սաթենիկի հայրը։

Բայց մեր Արտաշեսը իսկական դյուցազն է՝  
 «Հեծաւ արի արքայն Արտաշէս  
 ի սեան գեղեցիկ,  
 և հանեալ զոսկէօղ շիկափոկ պարանն,  
 և անցեալ  
 որպես զարծուի սրաթև  
 ընդ գետն,  
 և ձգեալ զոսկէօղ շիկափոկ պարանն՝  
 ընկեց ի մէջք օրիորդին Ալանաց,  
 և շատ ցաւեցոյց զմէջք փափուկ օրիորդին,  
 արագ հասուցանելով ի բանակն իւր»<sup>41</sup>։

Եվ ահա, սկսվում է երջանիկ զույգի հարսանեկան հանդեսը՝

«Տեղ ոսկի տեղայր  
ի փեսայութեանն Արտաշեսի,  
տեղայր մարգարիտ  
ի հարսնութեան Սաթինկանն»<sup>42</sup>,  
[Մով. Խոր., Բ, 50]:

Խորենացին այս գեղեցիկ կտորները քաղում է վիպասանների երգերից: Ժամանակակից ընթերցողը դրանք ընկալում է որպես իրականության զուտ գեղարվեստական վերարտադրություն: Եվ իրոք, հերոսների խոսքն ու վարմունքը ժողովրդի երևակայության ծնունդ է, եթե կան պատմական գծեր, ապա արտահայտված են ավելի քան վերացական հղանակով: Բայց մեր պատմիչը ձգտում է թափանցել դրանց բուն էություն մեջ և հանգում այն եզրակացության, որ իր կողմից կատարված մեջբերումները յուրովի փոխաբերություններ են: Եվ բացատրում է ընթերցողին՝ ոսկեօղ շիկափոկ պարանը՝ դա լալքա<sup>43</sup> է և ոսկի, որոնք Արտաշեսը տալիս է որպես վարձանք: Իսկ ի՞նչ են ոսկին և մարգարիտը, որ տեղում էին հարսանիքին: Պատմիչն ասում է. երբ փեսա-թագավորը հասնում էր դահլիճին, ապա հոռմայեցի աստիճանավորի պես դրամ էր շաղ տալիս. նույնպես էր վարվում նաև հարսնացութագուհին, շաղ տալով մարգարիտը առաջաստի սենյակում: «Այս է ճշմարտութիւն բանիցս», եզրակացնում է Պատմահայրը:

Խորենացու կերտած կերպարների պատկերասրահում՝ Արտաշեսինը թերևս ամենից բարձն է: Շատ դժվար է այստեղ զանազանել պատմականը երևակայականից: Շեշտենք, որ վերջին տասնամյակներում հաշողվեց ապացուցել, որ շատ գծեր, որոնք առաջ թվացել են որևէ պատմականությունից ղուրկ, իրապես համապատասխանում են ճշմարտությանը<sup>44</sup>:

Միջին շրջանի թագավորների շարանը ավարտվում է Տրդատ Մեծի պատկերով: Հետևելով Ագաթանգեղոսին և ավելացնելով որոշ մանրամասներ, պատմիչը ցույց է տալիս, թե ինչպես նրա օրոք Գրիգոր Լուսավորչի ջանքերով երկ-

քում տարածվում և արմատանում է քրիստոնեութիւնը: Սակայն Ազաթանգեղոսի Գրիգորը Հայոց աշխարհի առաջին լուսավորիչն է, մինչդեռ Խորենացու մոտ նա ունեցել է նախորդներ: Ավելին՝ Հայոց առաջին քրիստոնյա թագավորը ոչ թե Տրդատն է, այլ Արգարը: Արգարը հավատում է Քրիստոսին, աղաչում է Փրկչին գալ և բուժել իրեն: Հիսուսը պատասխան նամակում խոստանում է ուղարկել իր աշակերտներից մեկին, Արգարին է պարգևում իր պատկերը: Արգարի նստատեղին Եղեսիա քաղաքն է, այստեղ է ժամանում 70 առաքյալներից մեկը՝ Թադեոսը, բժշկում արքային, քրիստոնյա դարձնում նրան և քաղաքի ողջ բնակչությանը: Թադեոսը այնուհետև գալիս է Հայոց երկիրը, ավետարան քարոզում և սպանվում Շավարշան գավառում, որ այժմ կոչվում է Արտազ, ճշտում է հեղինակը:

Հայաստան է ժամանում նաև Բարդուղիմեոս առաքյալը, որը նահատակվում է «Արեբանոս» քաղաքում: Սրանք են Գրիգոր Լուսավորչի նախորդները, իսկ Թադեոսի և Գրիգորի միջև գոյութիւն ունի խորհրդավոր կապ՝ չէ՞ որ Գրիգորի մայրը հղիացել է հենց Արտազում, այնտեղ, որտեղ հայտնվել են «մեր մեծ և սուրբ առաքյալ Թադեոսի» նշխարները: Հայ եկեղեցին առաքելական է, այսինքն հիմնվել է Քրիստոսի աշակերտների կողմից՝ այդ է սպացուցում Պատմահայրը, իր շարադրանքի մեջ մուծելով Թադեոսին և Բարդուղիմեոսին վերաբերող դրվագները<sup>45</sup>:

«Պատմութիւն» երրորդ գիրքը գրված է գերազանցապես հայտնի աղբյուրների՝ Փավստոս Բուզանդի, Կորյունի և մյուս պատմիչների հաղորդումների հիման վրա: Մեծ մասամբ դա թագավորական պատմութիւնն է, ինչ-որ ձևի թագավորական ողբերգութիւն: Տրդատ Մեծի ժառանգների մի շարան է անցնում ընթերցողի առջև: Իրեն հատուկ արտահայտիչ ոճով Մովսես Խորենացին նկարագրում է Տիրանի կուրացումը, Արշակ Բ-ի աքսորը, Պապի սպանութիւնը: Նրանց կողքին գործում են հոգևոր առաջնորդները՝ վրթանեսը, Հուսիկը, հատկապես Ներսես Մեծ կաթողիկոսը: Աշխատութիւն վերջին դրվագները նվիրված են հույների և պարսիկների միջև երկրի

բաժանմանը, գրեթե գյուտին, վերջապես Արշակունիների դինաստիայի վերացմանը: Շարադրանքը գնալով ավելի ու ավելի անձնական բնույթ է ստանում: 62-րդ գլխում հեղինակը նկարագրում է իր ճանապարհորդությունը գիտություն խոշորագույն օջախները: Իսկ «Հայոց պատմության» վերջին գլուխը կազմում է Խորենացու հռչակավոր «Ողբը», որը լրացնում է հեղինակի կերպարը: Նրան արտասահման են ուղարկել Սահակ Պարթև կաթողիկոսը և «Մեսրոպը»: Մովսես Խորենացին այդ երկուսին դիտում է որպես իր հոգևոր հայրեր՝ «ներանք ինձ ծնեցին և սնուցին իրենց տված ուսումով և ուրիշների մոտ ուղարկեցին կատարելագործվելու»: Նրանք սպասում էին իմ դարձին, — շարունակում է հեղինակը, — որպեսզի փառավորվեին իմ ամենիմաստ գիտությունք և լիակատար պատրաստությունք: Հեղինակը ուրախ սրտով շտապում է հայրենիք, սակայն տեղ է հասնում Սահակի և Մաշտոցի վախճանից հետո: Ո՛վ պիտի հարգի Մովսեսի գիտելիքները, ո՛վ ուրախանա նրա առաջադիմությունք...:

Հասարակական կյանքի երևույթները և կենսագրական պարագաները «Ողբի» մեջ ներկայացված են միևնույն եղանակով, հեղինակը, կարծես, դրանք չի զանազանում: Այդպիսի մոտեցման շնորհիվ «Ողբը» ստանում է անձնական գունավորում: Մինչդեռ «Պատմության» վերջին գլխի հիմնական բովանդակությունը կազմում է Հայաստանի, ողջ ժողովրդի թշվառ վիճակը: «Ողբում եմ քեզ, Հայոց աշխարհ, ողբում եմ քեզ, բոլոր հյուսիսային ազգերի մեջ վեհագույնդ, որովհետև վերացան թագավորդ ու քահանայդ, խորհրդականդ և ուսուցանողդ. վրդովվեց խաղաղությունը, արմատացավ անկարգությունը, խախտվեց ուղղափառությունը, հիմնավորվեց տրգիտությունք շարափառությունք»: Հասարակության բոլոր խավերը քայքայվել են, խոր ճգնաժամ են ապրում: Կրոնավորները կեղծավոր են, ցուցամուլ, սնափառ, ոչ այնքան աստվածասեր, որքան պատվամուլ: Աշխարհականները՝ ամբարտավան, ստահակ, մեծախոս, աշխատանքից խուսափող, արբեցող, վնասատար, [Քրիստոսի՞] ժառանգությունից փախչող<sup>16</sup>:

Զինվորականները՝ անարի պարծենկոտ, գենք ատող, ծուլ, ցանկասեր, թուլամորթ, կողոպտիչ, գինեմուլ, հելուդակ, ավազակներին համարարու:

Իշխանները՝ ապստամբ գողերին գողակից, կաշառակեր, կծծի, ժլատ, ագահ, հափշտակող և այլն:

Ճգնաժամային վիճակի պատճառն է՝ Արշակունյաց թագավորության և Լուսավորչի տոհմի հովվապետության վերացումը: Կատարված դեպքերից հետո Պատմահայրը իր շուրջը չի տեսնում որևէ լավ բան և մեծ արվեստագետի եղանակով նույն տրամադրությունը ներշնչում է իր ընթերցողին: Վերջինս ոչ միայն Մահակի ու Մաշտոցի վախճանին հաջորդող տարիները, այլև հետագա ողջ Հայոց պատմությունը սկսում է դիտել որպես ողբերգություն: Գրքի խիստ հոռետեսական ավարտն իր հերթին նպաստել է հայոց պատմության ողբերգական ընկալմանը<sup>47</sup>: Դարեր անընդհատ ազգային ինքնագիտակցությունը մեծ չափով սնվելու է նաև այդ գաղափարով<sup>48</sup>:

Այն բնութագիրը, որը մենք փորձեցինք տալ «Հայոց պատմությանը» ընդհանուր բնույթ է կրում: Պարզապես ձեռք տեղ ենք ինչ-որ չափով նախագուշակել այն տրամադրությունը, որը պիտի արթնանար միջնադարյան ընթերցողի մոտ: Բայց խորենացու Պատմությունը (ինչպես նաև մեր դասական գրականության մյուս կոթողները) պահպանել են իրենց կենսական ուժը, շարունակում են ապրել: Ժամանակակից ըմբռնման մասին ընթերցողը կարծիք կկազմի դիմելով բնագրին:

\* \* \*

Այն մշակույթը, որին նվիրված է սույն գլուխը, V դ. անկրկնելի իրականության ծնունդ է: Հարցին մոտենալով պատմափիլիսոփայական տեսանկյունից, կարող ենք ասել, որ ընդհանուր առմամբ նրա արարիչը ողջ ժողովուրդն է: Սակայն մշակութային արժանիքներ ստեղծող ժողովուրդը գործել է առանձին անհատների միջոցով: Անուններից բացի, ի՞նչ գիտենք մենք այն մարդկանց մասին, որոնք այդպիսի փայլ տվին ողջ դարաշրջանին:

Շնորհիվ Կորյունի, մեզ հայտնի են Մաշտոցի կյանքի ամենից էական պարագաները. այդ մասին մենք խոսեցինք բավական մանրամասն, ուստի ավելորդ է կրկին անգամ վերադառնալ նույն հարցին: Գ. Սարգսյանի ասելով, հոմարեն ողբերգությունների, ճառերի ու պատմությունների հեղինակ Արտավազդ Բ Թագավորը եղել է հայ առաջին մեզ հայտնի մտավորականը: Իսկ առաջին հայերեն գրող մտավորականը եղել է Մաշտոցը՝ գիտնական, բանասեր, եկեղեցական գրող, արձակագիր և բանաստեղծ (նրա անունով հայտնի են հոգևոր երգեր), միաժամանակ քաղաքական և եկեղեցական գործիչ: Խորապես զգալով իրենց դասային պատկանելությունը, նրա հետևորդները կազմել են մտավորականության մի առանձին շերտ:

IV դ. վերջերին — V դ. սկզբներին Մաշտոցի կողքին խոյանում է Սահակ Պարթև կաթողիկոսի անձնավորությունը: Խոսելով Մաշտոցի մասին, Կորյունը միաժամանակ փառաբանում է նաև կաթողիկոսին, որը խրախուսում է վարդապետին, ընդառաջում նրան, գրերը Հայաստան բերվելուց հետո անմիջապես անցնում Թարգմանությունների՝ Վարդապրի աչքում այդ երկուսը հավասար են: Նրանք «մեր երանելի հայրերն ին», «աշխարհածնունդ հայրեր», «եկեղեցու սյուներ», Մաշտոցը Սահակի «զուգականն» է [Կոր., էջ 56.7, 58.11, 90.1, 96.14]: Մասամբ կրկնելով Կորյունին, Մաշտոցի ու Սահակի լուսավորչական գործունեության մասին խոսում է նաև Ղազար Փարպեցին, սակայն (ինչպես այդ մասին ասվեց վերելում) նրա պատկերացմամբ՝ Սահակ կաթողիկոսը կատարում է, ասես, առաջին դերը: Եվ իրոք, Մաշտոցը կաթողիկոսին պատմում է իր ծրագրի մասին, իսկ Սահակը պատասխանում է՝ «ուր տկարանայք ի կարգել զհեգեհնայսն (այսինքն՝ դժվարություններ ունենաք վանկեր կազմելիս — Կ. 3.)՝ բերեալ առ իս ուղղեմ զայն»: Մաշտոցը ստեղծագործական տարերքի մեջ է, իսկ կաթողիկոսը ուղղում է նրան, գրերը կարգելու դյուրին ճանապարհ ցույց տալիս: Մաշտոցը հայերենի հնչյունները հարմարեցնում է հունարենին ըստ կաթողիկոսի

ցուցումների՝ չէ՞ որ առանց Սահակի «առաջնորդութեան» ոչ  
ոք չէր կարող անսխալ կատարել այդ գործը: Մաշտոցը, թա-  
գաւորը, նախարարները դիմում են Սահակին, որպեսզի նա  
հունարենից հայերեն թարգմանի Աստվածաշունչը, մյուսները  
անկար են, նրանք շեն հասել Սահակի գիտելիքների բարձուն-  
քին: Գիշեր-ցերեկ աշխատելով, — ասում է Ղազար Փար-  
պեցին, — կաթողիկոսը թարգմանեց ամբողջ Աստվածաշունչը  
(մինչդեռ Կորյունից գիտենք, որ առաջինը եղել է ինքը՝ Մաշ-  
տոցը): Աստվածապաշտութունը, ամփոփում է հեղինակը,  
տարածվում է հայոց երկրով մեկ «ի հոգևոր վտակաց սուրբ  
հայրապետին Սահակայ» [Ղազ. Փարպ., գլ. Ժ—ԺԱ]:

Հեղինակի միտումը բացահայտ է: Ընդգծելով Սահակի  
գիտելիքները, նրա կատարյալ հելլենաբանութունը, շեշտե-  
լով կաթողիկոսի ծառայութունն ուսման տարածման բնագա-  
վառում, Փարպեցին նրան ներկայացնում է որպես V դարի  
մշակութային վերելքի առաջնորդ: Թե ինչով է պատճառա-  
բանված այդ միտումը՝ կխոսենք քիչ հետո, այժմ նշենք, որ  
Սահակի դերն իրոք որ մեծ է եղել: Հովանավորելով Մաշտո-  
ցին, ամեն ինչում նրան օգնութեան հասնելով, Սահակը վեր-  
ջինիս նախաձեռնութեանը հասարակական որակ է ապահովել:  
Իսկ ծնունդ առնող հայ գրականութեան բնագավառում նրա  
անձնական ներդրումը կասկածի ենթակա չէ: Մեծարելով  
նրան, Ղազարն, ըստ էութեան, չի հեռանում ճշմարտությունից:  
Հունաց կողմերում մեծացած, հելլենագիտութեան բարձունք-  
ներին հասած, Մաշտոցի հետ մեկտեղ նա այն մարդն է եղել,  
որը սկզբից ևեթ կարողացել է ուղղել հայ դպրութունը դա-  
րաշրջանի հունական առաջավոր ճանապարհով: Իր ծննդյան  
օրվանից այդ դպրութունը մի մեծ բազմալեզու գրականու-  
թեան մաս է կազմել, և Սահակի պես լայնախոհ և գիտուն  
անձնավորութեան ներդրումը իրոք որ մեծ է եղել:

Հայատառ հայոց գրականութունը ուժ է տվել ազգային  
ինքնագիտակցութեան զարգացմանը, իսկ վերջինս մեծ չա-  
փով ապահովել V դարի ապստամբ ոգին: Խորհրդանշական  
է, որ Ավարայրի հերոս Վարդան Մամիկոնյանի ուսուցիչը

եղիլ է հենց Սահակ Պարթևը՝ նրա պապը մոր գծով [Կոր., էջ 58. 19—21, Ղազ. Փարպ., էջ 52. 32—33]:

Մաշտոցն ու Սահակը մենակ չեն գործել՝ ունեցել են աշակերտներ և հետևորդներ: Ասվեց, որ Մաշտոցի հետ արտասահման գնացած խումբը բաժանվեց երկուսի, մի մասը գբաղվեց հույն, մյուսը՝ ասորի դպրությամբ: Սկզբնաղբյուրներից գիտենք այդ սերնդին պատկանող մի քանիսի անունները. դրանցից են մեր վարքագիր Կորյունը, Եզնիկ Կողբացին, Հովհան Եկեղեցացին, Հովսեփ Պաղնացին, Ղևոնդը, Արձանը: Կորյունի մասին խոսեցինք վերևում: Վարքից բացի նա հեղինակել է նաև այլ գործեր և հանդես եկել որպես իր դարաշրջանի ամենից խոշոր գրական դեմքերից մեկը:

Եզնիկի կյանքից հայտնի է հետևյալը: Ծագումով Այրարատ գավառի Կողբ գյուղից է եղել, ուստի և կոչվել է Կողբացի: Հովսեփ Պաղնացու հետ ուղարկվել է Ասորիքի Եզեսիա քաղաքը՝ այնտեղ նրանք ասորերենից թարգմանում էին եկեղեցու հայրերի ստեղծագործությունները: Ավարտելով աշխատանքը (այսինքն՝ յուրաքանչյուրն իր բաժինը), անցնում են Հունաց կողմերը, կարգվում հունարենի թարգմանիչներ: 431 թ. տեղի է ունենում Եփեսոսի երրորդ տիեզերական ժողովը: Եզնիկն այդ ժամանակ Կոստանդնուպոլսում էր, Մաշտոցին մի թուղթ է հղում, հաղորդելով ժողովի որոշումները<sup>49</sup>. Վերադառնալով հայրենիք, թարգմանիչներն իրենց հետ բերում են Ս. Գրքի «հաստատուն օրինակներ», հայրաբանական (այսինքն՝ եկեղեցու հայրերի հեղինակած) գրականություն, նաև Նիկիայի (325) և Եփեսոսի ժողովի կանոնները: Սահակի հետ միասին Եզնիկն, ըստ բերված օրինակների, ուղղումներ է մտցնում Ս. Գրքի արդեն կատարված թարգմանության մեջ, թարգմանում Աստվածաշնչի մեկնություններ:

Վարդանանց ապստամբությանը նախորդող դեպքերից մեկն է Արտաշատի ժողովը: Ժողովականները պատասխան են կազմում պարսից հազարապետ Միհրնեբսեհի նամակին, պաշտպանելով իրենց հավատքը: Ստորագրողների թվում է

նաև Բագրևանդի եպիսկոպոս Եզնիկը՝ հավանաբար մեր Եզնիկ Կողբացին:

Գրականության պատմության մեջ Եզնիկը մտել է որպես «Եղծ աղանդոց», այսինքն՝ «Աղանդների հերքում» աշխատության հեղինակ<sup>50</sup>: Աղանդ ասելով հասկացվել են բոլոր այն ուսմունքները, որոնք հակառակ են ճանաչում ստացած քրիստոնյա դավանանքին: Հեղինակը դուրս է գալիս հունական փիլիսոփայության, զրադաշտության, քրիստոնյա միշարք հերձվածների դեմ, միաժամանակ շարադրում քրիստոնեական վարդապետությունը: Նրա դրույթները հաճախ ներդաշնակ են Մաշտոցի հեղինակած «Հաճախապատումին»:

Այդ երկը զարմանք է պատճառում շարադրության իր եղանակով: Հայոց դպրության արշալույսին ստեղծված Եզնիկի աշխատությունը գրված է ընտիր հայերենով: Պարզվում է, որ մեր լեզուն արդեն այն ժամանակ ի վիճակի է եղել արտահայտել կրոնա-փիլիսոփայական բոլոր նրբությունները, հարազատ մնալով իր ոգուն, հավատարիմ՝ կայունացած քրականական օրենքներին: Եզնիկի աշխատությունը՝ դասական գրաբարի ամենից ընտիր օրինակներից է: Ինչ վերաբերում է բովանդակությանը, ապա Եզնիկը եղել է իր դարաշրջանի հարազատ որդին և շարադրել է առարկայի վերաբերյալ եկեղեցու ընդհանուր տեսակետը: Ընդ որում՝ դրսևորել է թե՛ ճկուն միտք, թե՛ լայն գիտելիքներ:

Ի միջի այլոց, «Եղծ աղանդոց»-ը վկայում է, որ Եզնիկն իրոք որ եղել է քաջ հեղինադետ: Աշխատության մի մասը թարգմանություն է հունարենից, կատարված ամենայն ճշգրտությամբ, այն էլ առանց ընդհանուր ոճից կատարվող շեղումների:

Ղևոնդի մասին Կորյունն ասում է, որ Փոքր Հայքի Մելիտինե քաղաքում եղած ժամանակ Մաշտոցը այնտեղ է թողնում աշակերտների մի խումբ հենց նրա՝ «հավատարիմ և ճշմարտապաշտ» մարդու ղեկավարությամբ: Միառժամանակ հետո Կորյունի հետ միասին նա ուղևորվում է Կոստանդնուպոլիս և այնտեղ միանում Եզնիկ Կողբացուն: Այսպիսով.

Ղևոնդի գրական գործունեության մասին կարող ենք կազմել միայն ընդհանուր պատկերացում:

450 թ. ամռանը Հայոց աշխարհի Անգղ գյուղն է մտնում մոզերի մի մեծ խումբ, որը մոզպետի գլխավորությամբ փորձում է քանդել եկեղեցու դռները, սակայն տեղի երեց Ղևոնդը հավաքելով ժողովրդին, ջարդում, դուրս է շարտում նրանց: Ղևոնդը մասնակցել է Վարդանանց պատերազմին, բանտարկվել, ապա 454 թ. նահատակվել Պարսկաստանի Ապառ աշխարհում: Ղևոնդ երեցը նույն Մաշտոցի աշակերտն է<sup>51</sup>: Ոչազբավ է, որ Մաշտոցի աշակերտը, լինելով գրական խոշոր դեմք, մյուսների նման վարդապետ չէ, այլ գյուղի սովորական երեց:

Մյուս աշակերտների գրական գործունեության մասին հավաստի տեղեկություններ չունենք:

Մաշտոցի, Սահակի և նրանց աշակերտների ջանքերով հայոց նշանագրերը վեր են ածվել հայոց դպրության: Ի՞նչ պատրաստություն են ունեցել նրանք, դիմելով այդ վեհ գործին: Նրանցից բոլորը սովորել կամ կատարելագործվել են արտասահմանում, կրթություն ստացել, ընտելանալով ասորի կամ հունական դպրությանը, հաճախ թե՛ մեկին, թե՛ մյուսին: Ի՞նչ դպրոց են ավարտել արտասահմանում, ու՞մ են ունկնդրել, ու՞մ ղեկավարությամբ են բազմապատկել գիտելիքները: Այդ հարցերի վերաբերյալ սկզբնաղբյուրները պահում են կատարյալ լռություն: Մովսես Խորենացու Պատմության վերջին գլուխներից մեկը կրում է հետևյալ վերնագիրը՝ «Խորհրդածություն վարդապետների, իր անձնավորության և ուսման՝ երկնային զարդին նմանվող ճանապարհորդության մասին» [Մով. Խոր., Գ, 62]\*: Նախորդ գլխից պարզվում է, որ ստանալով Ս. Գրքի նոր օրինակներ, Մաշտոցն ու Սա-

\* Ըստ Նորայր Բյուզանդացու նախորդ գլխի վերջին բառը պատկանում է 62 գլխի վերնագրին, ուստի և ճիշտ ընթերցումն է՝ «Վերաբանություն ի վարդապետան, յինքն և ի ճանապարհորդութիւն ուսմանն, օրինակաւ երկնային զարդու»: Վերնագիրը թարգմանելիս հետևել ենք հենց այդ ընթերցանությանը: Նույնն է նաև անգլերենի թարգմանիչ Ռոբերտ Բամսոնի մոտեցումը:

հակը նորոգեցին նախկին՝ հապճեպ կերպով կատարված թարգմանությունը: Բայց նրանք, ասում է հեղինակը, անծանոթ էին մեր արվեստին, ուստի և թարգմանությունը շատ տեղերում ստացվեց թերի: Այդ իսկ պատճառով, շարունակում է Մովսեսը, Մեծն Սահակը և Մեսրոպը ուղարկեցին մեզ Ալեքսանդրիա քաղաքը, որպեսզի ճեմարանում ընտելանանք պանծալի և ստույգ (հունարեն) լեզվին [Մով. Խոր., էջ 343. 6—11]: Մովսեսը նախ ուղևորվում է Եդեսիա, մի թեթև ծանոթանում տեղի դիվանին, ապա՝ պատրաստությունը շարունակելու համար անցնում Պաղեստին: Պաղեստինից նա քայլերն ուղղում է դեպի Ալեքսանդրիա: Այնտեղի իր ուսուցչին նա հռչակում է որպես «նոր Պլատոն», սակայն անունը չի տալիս:

Խորենացին որոշում է այցելել Ելլադա, տարաբախտաբար քամին նավը քշում է դեպի Իտալիա և մեր ճանապարհորդը միառժամանակ մնում է Հռոմում: Հռոմից, այնուամենայնիվ, անցնում է Աթենք, իսկ ձմռան վերջին Կոստանդնուպոլսի վրայով վերադառնում հայրենիք:

Անկախ նրանից՝ իրական դեպքերի նկարագրություն է այս գլուխը, թե առաջացել է զուտ գրական հողի վրա՝ այստեղ ճիշտ են արձանագրված այն երթուղիները, որոնցով ընթանում էին գիտելիքների մասին երազող հայաստանցի ուսանողները: Եվ իրոք, Եդեսիան, Երուսաղեմը, Գազան, Ալեքսանդրիան, Անտիոքը, Կոստանդնուպոլիսը, Աթենքը, Հռոմը, ինչպես նաև Բեյրութը, Կեսարիան, Մծբինը՝ որպես կրթական օջախներ այդ շրջանում վայելել են մեծ հռչակ: Հեթանոս և հեղեղեցական կրթության մրցակցությունը դեռևս չէր ավարտված: Գոյություն ունեին բազմաթիվ մասնավոր դպրոցներ, ուր ուսուցումն ընթանում էր ըստ հին, անտիկ շրջանից եկող ավանդույթի: Բանասիրական գիտություններն ամփոփում էին երեք ճյուղ՝ քերականություն, տրամախոսություն\*, ճարտասանություն: Այդ բաժանումը գալիս էր դեռևս

\* Տրամախոսություն՝ վիճաբանության մեջ տրամաբանական փաստարկներ կիրառելու հմտություն, գիտելիքից՝ բառիս նախնական իմաստով (հայերեն տերմինը զրա պատճենումն է):

Պլատոնից, արևմուտքում այն հայտնի դարձավ trivium («եռուղի») անվամբ: Նշելով «մեր արվեստը» Մովսես Խորենացին նկատի է ունեցել ճարտասանությունը, նրան հատուկ բանավոր կամ գրավոր շարադրության եղանակները: Ճարտասանությունը բառիս լայն իմաստով նույնն է, ինչ որ քերթողական արվեստը:

Մաթեմատիկական գիտությունները չորսն են եղել՝ թվաբանություն, երաժշտություն, երկրաչափություն, աստղագիտություն (quadrivium — «քառուղի»): Առարկաների ցանկից դժվար չէ կռահել, որ այդ դպրոցներում տիրում էր հեթանոս ոգին: Այնուամենայնիվ, բազմաթիվ եկեղեցական գործիչներ հենց այդպիսի կրթություն ստացածներից էին: Թեոդորոս Մոպսուեստացին, եկեղեցու ամենից խոշոր հայրերից մեկը՝ Հովհան Ոսկեբերանը, դասեր են առել Անտիոքի հռչակավոր ճարտասան, հեթանոս կիբանիոսից:

Կոստանդնուպոլսում, Աթենքում, Ալեքսանդրիայում դասավանդվել են «եռուղուն» և «քառուղուն» համապատասխանող գիտություններ, դրանց հետ մեկտեղ նաև փիլիսոփայություն և բժշկություն: Համալսարաններն ունեցել են իրենց թեքումը: Բեյրութն, օրինակ, հայտնի է եղել որպես իրավաբանության օջախ: Համալսարանի դասախոսները եղել են մեծ մասամբ հեթանոսներ:

Հոգևոր գիտությունների կենտրոնները գտնվել են պատրիարքարաններին կից, հայտնի են եղել և մեծ հռչակ վայելել Հոռմը, Կարթագենը, Անտիոքը, Ալեքսանդրիան, Եդեսիան: Այստեղ էին մշակվում աստվածաբանության հիմնական դրույթները, այստեղ էր հղկվում քրիստոնեական ջատագովությունը:

Ահա այդպիսի հեռանկարներ են բացված եղել թե՛ Սահակի ու Մաշտոցի, թե՛ նրանց աշակերտների ու հետևողների առջև: Հնարավոր կլինի, արդյո՞ք, երբևիցե պարզել, թե ձրգտելով բարձրագույն ուսման, ինչ ընտրություն են արել նրանք: Բոլոր պարագաներում՝ նրանք հասել էին իրենց ժամանակակից գիտության կատարներին, ճիշտ է, այն սահման-

ներում, որոնք թելադրում էր նրանց պատկանելութունը հոգևոր դասին:

Գրասեր մտավորականության հաջորդ սերունդը ձևավորվեց արդեն դարակեսի ազատագրական պայքարի մթնոլորտում: Այդ սերնդից աչքի են ընկնում հատկապես երկուսը: Աբրահամը Տայքի Զենաքս գյուղից էր, Վարդանանց պատերազմի ժամանակ եղել է երեց: Մյուս քահանաների հետ տարվել է Պարսկաստանի Նյուշապուհ քաղաքը, ենթարկվել կտտանքի, ապա աքսորվել Ասորեստան և, 12 տարի մնալով օտարության մեջ, վերադարձել Հայաստան: Դիմանալով փորձությունների և մնալով քրիստոնյա, արժանացել է Խոստովանող պատվական մականվանը: Աբրահամը ասորերենից թարգմանել է արևելյան վկաներին նվիրված մի ժողովածու, որտեղ նկարագրված են Շապուհ Բ (310—379) օրոք նրանց կրած տանջանքները: Թարգմանությունը կատարված է ընտիր լեզվով, դա V դ. գրական լավագույն կոթողներից մեկն է:

Այդ ժողովածուից լայնորեն օգտվել է Եղիշեն, որը և հանդիսանում է մաքառման շրջանի խոշորագույն գրողը: Մի հին ավանդություն է պահպանվել, որի համաձայն Եղիշեն եղել է Վարդան Մամիկոնյանի զինվորը և դպրապետը՝ ականատես «ամենայն անցիցն, որ անցին ընդ զօրսն հայոց ի Յազկերտէ Պարսից արքայէ»: Պատերազմից հետո դարձել է կրոնավոր, մենակյաց Մոկաց աշխարհում, այնտեղ է գրել Պատմությունը: Ըստ այդ ավանդության, վախճանվել է Ռշտունիք գավառում, գերեզմանը դարձել է ուխտատեղի: Մանուկ Աբեղյանը գտնում է, որ ավանդությունը հիմնված է իրականության վրա, սակայն կենսագրական հավաստի աղբյուր է համարում այն տեղեկությունները, որոնք գտնվում են մեր պատմիչի երկերում (պատմությունից բացի նա գրել է մի շարք աստվածաբանական աշխատություններ)<sup>52</sup>: Հայոց պատերազմին նվիրված իր երկից տեղեկանում ենք, որ V դ. 40-ական թվականներին նա եղել է Պարսից Ապառ աշխարհում, վերադարձել է Հայաստան, ականատես եղել ապստամբության անցքերին, հետագայում շփվել պատերազմը վերապրածներից շատերի հետ: Վարքագրական և այլ բնույթի

երկերի հեղինակներն իրենց հաճախ են ներկայացնում որպես նկարագրված դեպքերի ակաճատես, մասնակից և այլն: Առանձին վերցված, այդ նշումները կարող են շհամապատասխանել իրականությանը: Ընդունելով սակայն, որ Եղիշեն իր «Բան վասն Հայոց պատերազմին» աշխատությունը գրել է V դ.՝ Ազաթանգեղոսից առաջ, համենայն դեպս Գրիգոր Լուսավորչի պաշտամունքի հաստատումից առաջ, հիմք չունենք կասկածի ենթարկել այդ երկում հղած կենսագրական տվյալները:

Գծբախտաբար, թե՛ Աբրահամ Խոստովանողի, թե՛ Եղիշեի մասին հղած կցկտուր տվյալները հնարավորություն չեն տալիս պատկերացում կազմել նրանց գրական ուղու վերաբերյալ, չնայած մեզ ծանոթ են այդ ուղին անցած հեղինակների բուն աշխատությունները:

Բայց երբ մենք դիմում ենք V դարի գրասեր մտավորականության երրորդ սերնդին, դրությունն անսպասելի փոխվում է: Նկատի ունենք Ղազար Փարպեցուն, որի կենսական ուղին մեզ հայտնի է բազմաթիվ մանրամասներով: Ընդ որում, մենք կարող ենք պատկերացում կազմել ոչ միայն արտաքին հանգամանքների, այլև գրողի ներքին հույզերի, նրա հասարակական տեսակետների վերաբերյալ: Այդ առումով գրականության պատմության համենայն դեպս վաղ շրջանի համար Ղազարին առնչվող կենսագրական տվյալները բացառություն են կազմում: Եվ այդ բոլոր տեղեկությունները բխում են փաստորեն մեկ վավերագրից՝ վահան Մամիկոնյանին ուղղված Ղազար Փարպեցու մի թղթից [Ղազ. Փարպ., էջ 187—204]:

Նամակագրությունը հնում հատուկ գրական տեսակ էր, նրա առանձին նմուշները կան նաև հայոց գրականության մեջ. պատմիչները հաճախակի իրենց երկերի մեջ էին մտցնում հատուկ կազմած նամակներ, վերագրելով դրանք պատմական այս կամ այն դեմքին: XI դարից մեզ է հասել Գրիգոր Մագիստրոս Պահլավունու նամականին, որը անսպառ աղբյուր է թե՛ քաղաքական, թե՛ մշակութային կյանքն ուսումնասիրելու համար: Հնում նամակը հաճախակի վերածվում

էր գրական երկի, որը լայն շրջանառութեան մեջ էր մտնում: Նամակը գրվում էր հետևելով որոշ կանոնների, հեղինակը հանդես էր գալիս ոչ միայն որպես կենդանի. անձնավորութուն, այլև իբրև գրական կերպար: Երբեմն անձնականը իսպառ բացակայում է: Ղազար Փարպեցու Թուղթը, իր գրական բարձր արժանիքներով հանդերձ, միաժամանակ շատ մարդկային է. գրական շղարշի տակից պարզ երևում են մեր պատմիչի դիմագծերը, նրա ապրումները հուզում են նաև մեզ, մենք սրտատրոփ հետևում ենք՝ ինչպե՞ս է ընթանում նրա տառապանքներով լի կյանքը, ի՞նչ ճանապարհով է մոտենում նա իր անմահ փառքին:

Պատմութեան մեջ հեղինակն իրեն անվանում է Ղազար Փարպեցի, ասել է՝ Արագածոտն գավառի Փարպի գյուղից է: Պետք է ենթադրել, որ նա հասարակ ընտանիքի զավակ է եղել, հակառակ դեպքում կպահպաներ տոհմանունը, ինչպես մի շարք ազնվական ծագում ունեցող պատմիչներ՝ Հովհան Մամիկոնյան, Թովմա Արծրունի, Ստեփանոս Օրբելյան:

Ենթադրում են, որ Ղազարը ծնվել է 443 թ., գուցե մեկ կամ երկու տարի առաջ, համեմայն դեպս Վարդանանց ապստամբութեան ժամանակ (450—451 թթ.) նա դեռևս մանուկ էր: Դժվար է ասել՝ որքան խորն է ապրել ապագա պատմիչը բուն դեպքերը, ինչ հիշողութուն պահպանել դրանց մասին, սակայն ապստամբութեան վախճանից մի քանի տարի հետո նա գտնվում էր մի մթնոլորտում, ուր Վարդանանց պատերազմը, նրա ընթացքը, նրա հետևանքները որոշել էին մարդկանց ճակատագիրը, խառնել նրանց կյանքը, ուստի և դիտվում էին անձնական տեսանկյունից: Ինչպե՞ս է դա եղել:

Վարդանանց պատերազմի նահատակներից մեկը Հմայակն էր, Վարդան Մամիկոնյանի եղբայրը: Նրա երեք որդիները՝ Վահանը, Վասակը և Արտաշեսը ընկել էին Վասակ Մյունու ձեռքը, այնուհետև իբրև պատանդ տարվել Տիգրան՝ պարսից արքունիք: Տղաներից ավագը՝ Վահանը, մեզ հայտնի 482—484 թթ. ապստամբութեան ապագա հերոսն է, Ղազար Փարպեցու Թղթի հասցեատերը: 455 թ. Գուգարքի բղշկն Աշուշային հաջողվում է ազատել երեխաներին և բերել իր

մոտ, այստեղ նրանք ապաստան են գտնում իրենց մոր՝ Հմայեակի այրի Զվիկի հետ միասին: Ինքը՝ Աշուշան, այն նախարարներից էր, որոնք ապստամբութունից առաջ կանչվել էին պարսից արքայի մոտ ու այնտեղ առերես զրադաշտութուն ընդունել: Նախարարները թուլլտվութուն ստացան վերադառնալ հայրենիք, իսկ Աշուշան մնաց որպես պատանդ և, ըստ երևույթին, տարիներ հետո ազատվեց: Զվիկը ծագումով Արծրունի էր, Վասակ Արծրունու գուտրը: Արծրունիներից շատերը ևս նահատակվեցին պատերազմում: Դժվար չէ կոահել, ինչպիսի տրամադրութուն էր իշխում Աշուշայի տանը, ինչի շուրջ պիտի պատվեր խոսակցութունը, և հասալդ գերդաստանի անդամ է դառնում նաև Ղազարը: Թղթում նա իրեն անվանում է Վահան Մամիկոնյանի սննդակից ու խաղակից, Վահանի հետ միասին ստանում է նաև նախնական կրթութունը: Ասես մանուկ հասակից նա պատրաստ էր շարադրել Վարդանանց ապստամբության անցքերը: Եվ իրոք, հետագայում Փարպեցին իր Պատմության երկրորդ դրվագը ամբողջությամբ նվիրեց Վարդանանց պատերազմին:

Որոշ ժամանակից հետո Ղազարը թողնում է Աշուշայի տունը, սկսում է դասեր առնել Զվիկի եղբայր Աղան Արծրունուց, նրա ձեռքով էլ դառնում կրոնավոր<sup>53</sup>:

Փարպեցու կյանքում մի նոր շրջան է սկսվում, երբ հնարավորութուն է առաջանում մի քանի տարով գնալ «հոռոմների» մոտ, այսինքն՝ Բյուզանդական կայսրութուն: Այստեղ նա սովորում է հունարեն, ընթերցում հայրաբանական գրականութուն, որը կազմում էր ժամանակի աստվածաբանության հիմքը, միաժամանակ պարունակում հանրագիտական, փիլիսոփայական, բարոյագիտական, գեղագիտական, տնտեսագիտական գաղափարներ: Բայց հունարենը ճանապարհ է պարզում ոչ միայն դեպի քրիստոնեական գիտելիքները. կամա-ակամա Ղազարը պիտի հաղորդակից դառնար նաև անտիկ, հեթանոս մշակույթին, որի ավանդույթները դեռևս ողջ ու շոշափելի էին հոռոմների երկրում: Հին աշխարհի մնացորդները զգացնել էին տալիս յուրաքանչյուր քայլափոխում, էլ շենք ասում, որ քրիստոնեական մշակույթը բառիս

լայն իմաստով շատ բան էր ժառանգել ու յուրացրել անտիկ մշակութից, հեթանոս գաղափարներից:

Ղազար Փարպեցին ամենաբարձր կարծիքի է հունական գիտութեան մասին: Նա երբեք առիթը չի կորցնում ընդգծել այս կամ այն անձնավորութեան հմտութիւնը հունաբանութեան ասպարեզում. խոսում է Գլուտի կաթողիկոսութեան մասին ի միջի այլոց նկատում, որ «էր նա այր լի գիտութեամբ հայովս և առաւելեալ յունիւն»: Երիտասարդ տարիներին Մաշտոցը սովորել էր հունարեն, պնդում է նա, հետեւելով Մաշտոցի կենսագիր Կորյունին, նշանագրերը ստեղծողը լավ գիտեր հունարեն, սակայն երբ պետք էր թարգմանել Ս. Գիրքը, Մաշտոցն ու իր շրջապատը դժվարութիւնների հանդիպեցին և դիմեցին Սահակ Պարթևին: Որքան էլ Ղազարը պաշտի Մաշտոցին, մեր հեղինակի ուշադրութեան կենտրոնում է Սահակը՝ ամեն ինչում կատարյալ, հատկապես հունագիտութեան մեջ:

Պատմիչը իր մասին համեստ է արտահայտւում՝ հնարավորութիւնների սահմաններում սովորել է հունարեն, տկարամտութիւնը հաղթելու համար կարդացել գրքեր, բայց արդեն գրքերի պատկառելի ցանկը, որը նա բերում է իր Թըղթում, ցույց է տալիս, որ նա վարժ հունագետ է եղել: Ի դեպ, ինչպես ճիշտ նկատել է Մանուկ Աբեղյանը, Ղազար Փարպեցին առաջին հեղինակներից է, որոնք սկսել էին հունարենի նմանութեամբ հայերեն նոր բառեր ձևել, հարստացնելով մեր լեզվի բառապաշարը, հնարավոր դարձնելով ամենաբարդ, ամենից նուրբ հասկացութիւնների թարգմանութիւնը:

Նոր գիտելիքներով զինված՝ Ղազարը վերադառնում է Հայաստան: Կամսարական եղբայրների կողքին լինելով, մասնակցում է նաև սասանյան իշխանութեան դեմ մղված 482—484 թթ. պատերազմին, այնուհետ որոշում նվիրվել ճգնութեանը (հոգևորականի համար դա սովորական քայլ էր): Քաշվում է Սյունիք, այնտեղ մնում 2 տարի, ձմեռն անց է կացնում քարայրում, Մովսես կրոնավորի մոտ, իսկ ամառը Ղազարին իր մոտ է տանում Սյունիքի եպիսկոպոս Մուշն: Այստեղ էլ նրան գտնում է մարզպան դարձած Վահան Մա-

միկոնյանը, տեղափոխում Վաղարշապատ և նշանակում Կաթողիկե եկեղեցու վանքի վանահայր:

Այն ժամանակվա Կաթողիկե եկեղեցին վատ վիճակում էր գտնվում. 484 թ. Վահան Մամիկոնյանը նորոգում է «իր նախնիների հնացյալ կառուցվածքը», սակայն անհաստատ շինվածքը Ղազարի օրոք ևս մի քանի անգամ վնասվում է (ըստ հետին տեղեկությունների<sup>54</sup>, Փարպեցու թշնամիները շենքը կրակի են տվել): Այնուամենայնիվ, նա ջանք չի խնայում Կաթողիկե եկեղեցին ու վանքը բարվոք վիճակում պահելու համար, և առատ նվիրաբերությունների շնորհիվ վանքը պայծառանում է: Շատերի կողմից Ղազարը սեր ու հարգանք է վայելում, նրա դիտելիքները ճանաչում են գտնում, բայց միաժամանակ աճում է նաև թշնամիների նախանձը: Բարկեն կաթողիկոսը, որին դիմում է նա, այդ հարցում ձեռնպահ է մնում: Մամիկոնյանների հովանավորությունը չի փրկում նրան, հուսահատ լքում է հայրենիքը և տեղափոխվում Միջագետքի Ամիդ քաղաքը (այժմյան Դիարբեքիրը): Փարպեցին Ամիդից Վահան Մամիկոնյանին է ուղղում իր Թուղթը, մարզպանը կրկին կանչում է նրան իր մոտ ու հանձնարարում գրել Հայոց պատմություն:

Չարիքների պատճառը Ղազարը համարում է ստախոս արեղանների նախանձը: Պետք է ընդգծել, որ Թղթում, ինչպես նաև մի շարք այլ բնագրերում, «նախանձ» բառը չի նշանակում սոսկ տխրություն, սրտնեղություն, շար զգացմունք, որ մարդ ունենում է տեսնելով մյուսի բարվոք վիճակը, որից ինքը զուրկ է (այդ հասկացությունը նման կերպ մեկնաբանել է դեռևս Արիստոտելը): Նախանձն այստեղ ոչ միայն սրտնեղություն է, այլև շարություն, դիտակալություն, որը դրդում է նախանձողին դիմել ամենաստոր քայլերի:

Մանուկ Աբեղյանը, որը մանրամասն վերլուծել է Թուղթը, ցույց է տալիս, որ արեղանների նախանձը առաջացել է ոչ թե անձնական, այլ հասարակական հողի վրա, նա իրավացիորեն մերժում է այն տեսակետը, որ, իբր, Ղազար Փարպեցու հակառակորդները պատկանել են ասորական հոսանքին: Իրոք, այդ շրջանում ասորական ուղղափառ, ոչ նես-

տորական եկեղեցին Հայաստանում արդեն զրկվել էր իր դիրքերից: Մ. Աբեղյանն առաջ է քաշում իր տեսակետը՝ բախում էր տեղի ունենում երկու կողմնորոշումների՝ պարսկականի և ազգայինի՝ հայկականի միջև: Հունասերների և նրանց հակառակորդների ընդհարումը, որը սկիզբ է առնում Մաշտոցի ու Սահակի շրջից, V դարի երկրորդ կեսին իբր վեր է ածվում «հունական գիտություն սիրող ազգայինների ու պարսկասերների» կռիվ: Որ Ղազարի կողմից հիշատակված «հունասերները» իրոք «ազգային» են եղել, դա փաստ է, հակառակ դեպքում պիտի ենթադրենք, որ Փարպեցու պես հայրենասեր գրողը կարող է դրվատել նրանց լոկ գիտելիքների համար: Մյուս կողմից իր հակառակորդների մասին խոսելիս Թղթի հեղինակը երբեք չի մեղադրում նրանց կարծեցյալ «պարսկասիրության» մեջ: Հայրենասեր կարող է լինել նաև տգետը, ուրիշ բան է, թե ինչ օգուտ է բերում տգետ հայրենասիրությունը:

V դարում հայ մշակույթը ապրում է աննախընթաց վերելք, գլուխ է բարձրացնում նորածնունդ հայ մտավորականությունը, որը ոչ միայն խոսում, այլև գրում ու կարդում էր հայերեն: Միաժամանակ նա հաղորդակից էր եղել նաև «հունական» գիտությունը, դրա շնորհիվ անսահման լայնացրել մտահորիզոնը: Այդպիսին էր Մաշտոցի ու Սահակի շրջապատը, այդպիսին էր ինքը՝ Ղազար Փարպեցին: Կարելի է կռահել, որ այդպիսին են եղել նրա կողմից հիշատակված Մովսես «փիլիսոփոսը», Խոսրովիկ թարգմանիչը և մյուսները (որոնք ևս «նախանձի» զոհ գնացին): Հոգևորականության մեջ մտավոր հողի վրա շերտավորում էր առաջացել: Դժվար չէ պատկերացնել, թե տգետ արեղաները ինչպես պիտի տրամադրված լինեին Ղազար Փարպեցու պես գիտուն մարդու նկատմամբ: Էլ չենք ասում, որ Կաթողիկե եկեղեցու վանքի առաջնորդի պաշտոնը շատ բարձր է դասվել, կապված է եղել բազմաթիվ արտոնությունների և եկամտի հետ, և այն հանգամանքը, որ Ղազարն է գրավում այդ պաշտոնը, ինքնին պիտի նախանձ արթնացնեի: Բացի այդ, նրա հասակն

էլ շէր համապատասխանում այդ պաշտոնին. դա էլ էր զայրութի առիթ դառնում. «մանուկ մի հոգաբարձ տեղւոյն շկարէ առնել», բողոքում էին նրանք: Ղազարին տապալելու համար ինչ մեղք ասես չէին փաթաթում նրա վզին. աղանդավոր է, պոռնկությունը մեղք չի համարում, վանքում հովանավորում է պիղծ ու շարագործ մարդկանց, յուրացնում է վանքի եկամուտն ու նվիրաբերությունները: Առաջ, ասում էին, նա իրոք գիտնաբար է խոսել, այժմ՝ անգիտաբար, եկեղեցում Ս. Գրքի հատվածները անսայթաք է կարդում: Անգերազանց ճարտասան Ղազարը վարպետորեն ջրում է այդ ամբաստանությունները, ընթերցողի աչքում մերկացնելով իր հակառակորդներին: Հալածված լինելով՝ նա բարոյական մեծ հաղթանակ է տանում համախմբված տգետների դեմ, բայց դա չէ ամենից կարևորը:

Ընդհանուր, ինչպես նաև հայոց պատմությունից գիտենք բազմաթիվ դեպքեր, երբ լուսավոր անձինք հալածանքի են ենթարկվում իրենց գիտելիքների համար: Փարպեցու կյանքըն այդ տխուր օրինակափության նմուշներից մեկն է: Առավել կարևորն այստեղ այն է, որ նա ոչ միայն հաղթանակ է տանում իր հակառակորդների նկատմամբ, այլև պաշտպանում մարդկային արժանապատվության գաղափարը: Քրիստոնեական բարոյագիտության մեջ մեծ տեղ է գրավում այն դրույթը, որ մարդս ոչնչություն է, պիտի խոնարհվի աստծո առջև ու անընդհատ նվաստացնի իրեն: Իր դարաշրջանի հավատարիմ զավակ, քրիստոնեական գաղափարի ջատագով ու պաշտպան Ղազարն, անշուշտ, ենթարկվում է այդ կտրուկ պահանջին: Տարիներ հետո ձեռնամուխ լինելով «Հայոց պատմությանը», նա առաջաբանում նշել է, որ հանձն առավ այդ գործը՝ զիջելով Վահան Մամիկոնյանին, վերջինս բռնադատեց հեղինակի «տկարությունը», ստիպեց նրան անցնել մի գործի, որը նրա գիտությունից վեր է: Մեր մատենագրության մեջ պահպանվել է նվաստացուցիչ մակդիրների մի ամբողջ շարան: Հետևելով դարաշրջանի բարոյական թելադրանքին, մատենագիրները, ձեռագիր մատյանների գրիչներն ու ծաղկողներն իրենց անվանում են «տրուպ», «ստոր»,

«անպիտան», «չնշին» և այլն, և այլն, մինչդեռ իրականում այդ «անպիտաններն» ու «անարհեստները» կարող են լինել ականավոր գրողներ ու նկարիչներ\*։ Ենթարկվելով ժամանակի թելադրանքին, հետևելով հատուկ գրական վարվելակերպի, Ղազար Փարպեցին այս հարցում ոչնչով չի դրսևորում իր խառնվածքի յուրահատկությունը։ Բայց իր ոչնչություն մասին խոսում է ի միջի այլոց, և միաժամանակ առաջին իսկ էջերից բարձրաձայն հայտարարություն է անում իր արժանիքների մասին։ Հիշեցնում է, որ այդպիսի վարմունքը մեղք չէ, անգամ Պողոս առաքյալը, կարծես խախտելով Քրիստոսի կանոնները, թվարկել է իր բարի հատկությունները և արարքները, և դա չի խանգարել նրան շարունակել իր առաքելական ծառայությունը։ Եթե Ղազարը, ինչպես ինքն է ասում, «անզգամ» է, ապա նա հետևում է Պողոսի օրինակին, և թող Վահանը ընդունի նրան որպես «անզգամի»։

Թղթի հեղինակը այնուհետև համառոտ նկարագրում է իր կյանքը, սկսած մանկությունից, շարունակ ընդգծելով, որ նա այսպես թե այնպես հավասար է Հայոց մարզպան Վահան Մամիկոնյանին։ Մարզպանին է դիմում այն Ղազարը, որին և՛ հասցեատերը, և՛ մյուսները իր գիտելիքների շնորհիվ համարել են անփոխարինելի՝ «որում ոչ գոյ փոխանակ»։ Այժմ, երբ նախանձի հետևանքով ինքը հալածանքի է ենթարկվում, շատերը կցանկանային նրա տեղը գրավել, բայց արդյո՞ք ի վիճակի են։

Դու գտար ինձ Սյունիքում ու բերիք քո տունը, հիշեցնում է նա մարզպանին, ոչ իբրև աղքատ, ոչ էլ իբրև որևէ մեկի ծառա՝ մենք, կրոնավորներս, ազատ ենք Քրիստոսի անունով։ Ես կրոնավոր եմ դարձել քո քեռու՝ տեր Աղանի միջոցով, ուրեմն, եզրակացնում է Ղազարը, այս առումով ևս հավասար եմ քեզ։ Այնուհետև նա հիշեցնում է իր ու Վահանի մանկության տարիները։ Ծիշտ է, Վահանի սննդակիցն ու խաղակիցը լինելով՝ խաղի ժամանակ կրել է ապագա

\* Երբեմն ասում են, որ նման ածականներն իբր վկայում են մարդկանց համեստության մասին։ Դա նշանակում է բոլորովին չըմբռնել քրիստոնյա միջնաբերդի ուզին։

մարզպանի հազուստը<sup>55</sup>, բայց չէ որ Զվիկը և նրա քույրը՝ Անուշ-Վուամը, Ղազարին սնուցել են Վահանի հետ հավասար. ուրեմն այստեղ ևս Փարպեցին իրեն հավասարեցնում է Վահան Մամիկոնյանին: Եվ նա արժանի է այդպիսի հավասարությանը. չէ՞ որ նա առավել շնորհների տեր է:

Այդ շնորհները նրա գիտելիքներն են: Երբ պատվավոր մեկը ցավում է, որ Ղազարին վանել են, որ անիրավացի է եղել այդ քայլը, Ղազարը եկեղեցու զարդն է, ապա նրան պատասխան են տալիս՝ առաջներում նա իրոք մեծ գիտության տեր էր, սակայն հիմա այլևս համեղ ու զորավոր խոսքեր չի արտասանում, վատ է խոսում: Հակառակորդները, կարծես, պայմանավորվել էին՝ պնդելով, թե Ղազարի արժանիքները չքացել են: Թե որքան անարդարացի են եղել այդ խոսքերը, կարելի է դատել ելնելով թեկուզ Փարպեցու Պատմությունից, որը գրվել է Թղթից հետո: Լինելով մեծ մտքի տեր, պատմիչը զգացել է իր մեծությունը, գիտակցել, թե որքան բարձր է նա շարքային հոգևորականներից: Նրան ստիպում են լքել վանքը, թողնելով այնտեղ իր ամբողջ ունեցվածքը՝ «անգամ հոռոմ (այսինքն՝ հունարեն) գրքերը ինձ չտվին, այժմ այնտեղ վայր են ընկած, դառնալով ցեցի կերակուր»: Այս դիտողությունը կենսագրական փաստ է. մատենագիրը պարզ կերպով ցույց է տալիս, որ նրա ձեռքին գրքերը երբեք ցեցի կերակուր չէին լինի, շատ-շատ անընդհատ կարդալուց կմաշվեին:

Արդեն ասացինք, որ Ղազար Փարպեցու Թուղթը բացառիկ տեղ է գրավում հայ գրականության պատմության մեջ, նա մեզ ծանոթացնում է V դարի մտավորականի հոգեկան աշխարհին, ցույց տալիս, թե որքան բարդ ու հարուստ է եղել այդ աշխարհը և ինչպիսի ուժով է արտահայտվել գրական երկում:

Պատահական չէ, որ Ղազար Փարպեցու Թուղթը գրվել է Միքայել Նալբանդյանի առանձնակի ուշադրությունը: 1862 թ. Պետերբուրգի Պետրոպավլովյան բերդի խոնավ մի խցում, նա, ասես փարատելով իր ցավերը, աշխարհաբարի է թարգմանել ու ծանոթագրել այդ Թուղթը<sup>56</sup>:

## «ՄԱՀ ԻՄԱՑԵԱԼ ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆ Է»

387 թ. Արշակունիների Մեծ Հայք պետությունը բաժանվեց Պարսկաստանի և Հռոմեական (Բյուզանդական) կայսրության միջև: Քաղաքական իշխանությունը կայացած համաձայնություններ իսկույն չվերացավ: Արևելքում գահի վրա էր խոստով Գ, արևմուտքում՝ Արշակ Գ, երկուսն էլ Արշակունի: Սակայն վերջինիս տարիները հաշված էին: Շուրջ 390 թ. նա վախճանվեց և նրա մահվամբ հայկական գահը արևմուտքում դարձավ հիշողություն: Արևելքում վիճակն այլ էր՝ Արշակունիները կարճատև ընդմիջումով իրենց ժառանգական իրավունքները պահպանեցին մինչև 428 թ.: Տեղի ունեցած փոփոխությունների հետևանքը եղավ այն, որ միջազգային իրավունքի ոլորտում հայերը լրիվ զրկվեցին սուլերենությունից, իսկ պետական իրավունքի առումով դարձան արքայից արքայի կամ կայսեր հպատակներ: Հնում ևս Հայաստանը շատ անգամ կախում է ունեցել հարևան պետություններից, եղել նրանց ենթակա\*: Բայց այս դեպքում հարվածն առավել ծանր էր՝ պետականությունից զրկվեց մըշակված, զարգացած վարչական հաստատություններ ունեցող մի ժողովուրդ: Վտանգի տակ էր ողջ հայ քաղաքակրթությունը:

V դ. որոշ պատմիչների աչքում այդ բաժանումը եղել է կատարյալ ողբերգություն: Յուրացնելով ժողովրդական

\* Կրկին հիշենք Մովսես Խորենացու ասածը՝ «և ընդ այլով յուր անգամ նուաճեալ թագաւորութեամբ» [Մով. Խոր., էջ 10]:

էպոսին հատուկ ոճը, Փալստոս Բուզանդը հետեյալ կերպ է նկարագրում եղելությունը: Համաձայնության գալով Հայոց երկրի վերաբերյալ, Պարսից թագավորը և կայսրը նշում էին՝ «ի միջի մերում բնակեալ է այս հզօր և հարուստ՝ թագավորութիւն», լավ կլինի եթե ընդունված որոշման շնորհիվ կարողանանք այդ թագավորությունը քանդել և խորտակել: Արշակունի երկու թագավորներին պիտի փորձենք «կրծել», «աղքատացնել», «արկանել ի ծառայութիւն», որպեսզի նրանք գլուխ բարձրացնել անգամ չկարողանան: Այնուհետև շատ գավառներ «կրծեցին» Հայոց երկրից, թագավորներին մնաց փոքր մասը [Փալ. Բուզ., 2, 1]: Ղազար Փարպեցու ասելով, Հայաստանի արևելյան հատվածը ենթարկվեց Պարսից արքայի «դառը և բռնավոր ծառայությանը»: Որոշելով տեղափոխվել կայսեր կողմերը, Արշակ Գ ողբում է, որ հայրենիքը բաժին է հասել «ամբարհաւաճ և անաստուած ազգին Պարսկաց» [Ղազ. Փարպ., գլ. 2]: Ասենք, Արշակի բողոքը առաջացել էր մասամբ անձնական հողի վրա՝ չէ՞ որ Խոսրովի համեմատությամբ, նրա բաժինը շատ փոքր էր եղել:

VII դ. ապրած ոմն Եզնիկ երեց գոյացած վիճակը մեկ բառով կանվանի «օտարակալություն» [Սամ. Ան., էջ 267]: Օտարակալությունը շարունակվելու է մինչև 886 թ., երբ գահ կբարձրանա Բագրատունի առաջին թագավորը՝ Աշոտ Ա, իսկ նրա պետությունը կկրի նույն անունը, ինչ որ և Արշակունիների օրոք՝ «Մեծ Հայք»:

Բայց ժամանակով դեպքերին համեմատաբար մոտ կանգնած պատմիչները կարծես ավելի սառնարյուն են ընկալում տեղի ունեցած բաժանումը և դրա անմիջական հետևանքները: Կորյունը, որի օրոք վերջին Արշակունի թագավորը զրկվեց իր գահից, հարկ չի համարում արձանագրել այդ փաստը: Ծիշտ է, «Վարքի» կառուցվածքը դա չէր էլ պահանջում: Բայց ահա պատմության այն պարբերացումը, որն առաջարկում է Եղիշեն: Վերջ տալով Արշակունիներին, Սասան պարսկի ազգը իշխանությունը վարում է մոգու-

\* Հարուստ՝ զորեղ:

թյան օրենքներով, պատերազմում նրանց դեմ, ովքեր շե-  
հնթարկվում այդ օրենքներին՝ սկսելով Տիրանի որդի Ար-  
շակից (Արշակ Բ) և պայքարը շարունակելով մինչև Վասմ-  
շապուհի որդի Արտաշեսը (Արտաշես Ե): Իսկ երբ Արտա-  
շեսին էլ են զրկում թագավորությունից, ապա թագավորա-  
կան գործառնություններն անցնում են նախարարներին («Ի  
նախարարսն Հայոց անկանէր թագաւորութիւնն»): Տուրքե-  
րը, շարունակում է Եղիշեն, գանձում էր պարսից արքունիքը,  
բայց այրուձին մնացել էր նախարարների ձեռքում, նրան  
պատերազմի ժամանակ նախարարներն էին առաջնորդում  
[Եղ., էջ 6]:

387 թ. բաժանումը և Արշակունյաց իշխանության վե-  
րացումը Եղիշեն չի դիտում որպես երկու դարաշրջանի բա-  
ցարձակ սահմանագիծ: Իշխանությունը նախարարների ձեռ-  
քըն է անցել և դրա շնորհիվ Հայոց երկրում աստվածա-  
պաշտությունը շարունակում է մնալ «բրևելի»: Այդ վիճա-  
կը տևում է արքայից արքա Շապուհից (Շապուհ Գ, 383—  
388, նրա օրոք է տեղի ունեցել երկրի բաժանումը) մինչև  
արքայից արքա Հազկերտի երկրորդ տարին (Հազկերտ Բ,  
439—457, իշխել է մարզպանության վերածված Հայաստա-  
նի վրա): Իր գահակալության երկրորդ տարում Հազկերտը  
սկսեց պատերազմել կայսրության դեմ, հալածանքի են-  
թարկեց քրիստոնյաներին: Այդ է եղել Հայոց պատմության  
առանձին մի շրջանի սկիզբը:

Եղիշեի ասածը նշանակալից է: Թեև երկիրը զրկվել է  
սեփական թագավորից, սակայն հասարակությունը չի դի-  
մազրկվել, շարունակում է գործել որպես ինքնուրույն հա-  
մակարգ, իսկ նախարարներն իրենց գորքով ապահովում  
են հայկական հասարակական օրգանիզմի կենսագործելու-  
թյուն: Պետք է ասել, որ մեր հեղինակի յուրովի արտա-  
հայտված պատմական լավատեսությունը անհիմն չի եղել:  
Հատկապես նախարարական զորքը՝ ազատագունդը, մեծ-  
կշիռ է ունեցել պարսիկների աչքում: Նույն Եղիշեին է պատ-  
կանում հետևյալ հատվածը, որը բերում ենք (ինչպես և  
նման մյուս դեպքերում) Երվանդ Տեր-Մինասյանի թարգ-

մանությամբ. «Առաջվան ժամանակներում կարգն այն էր, որ երբ Հայաստանից որևէ պատվավոր զորավարի առաջնորդությամբ հեծելազոր էր գնում Դուռը\*, [թագավորը] մարդ էր ուղարկում ընդառաջ և հարցնում Հայոց աշխարհի ողջությունն ու խաղաղությունը, և երկու-երեք անգամ նույնն էր անում. զորահանդեսն էլ [թագավորն] ինքն էր անում և պատերազմ սկսելուց առաջ նրանց իրեն մոտ գալ՝ հասնելն անգամ մեծ շնորհակալության արժանի էր համարում և իր աթոռակիցներին ու բոլոր մեծամեծների առաջ գովասանք էր տալիս ամենքին, հիշում էր նրանց նախնիների ծառայությունները և պատմում նրանցից յուրաքանչյուրի քաջությունը» [Եղ., էջ 44. 5—12]:

Զինյալ ուժերի գլուխ կանգնած է եղել սպարապետը և այդ գործակալությունը, ինչպես ասացինք Ա գլխում, մնացել էր Մամիկոնյան տոհմի առանձնաշնորհը: Այդ առումով Արշակունյաց թագավորության վերացումը զինվորական բընագավառում որևէ փոփոխություն չառաջացրեց: Ավելին. թագավորական իշխանության վերացումից հետո էր, որ նախարարները հանդես եկան որպես երկրի հիմնական հասարակական ուժ: Պատահական չէ, որ Արտաշես Բ Արշակունին զրկվեց իր գահից նաև նախարարների ամբաստանության, ընդհանուր թշնամանքի հետանքով:

Վարչական հաստատություններից որոշ ժամանակ անփոփոխ էր մնացել նաև հազարապետությունը: Ավանդական եղանակը (երբ հազարապետ էր լինում տեղացի իշխաններից մեկը) խախտվեց միայն Վարդանանց պատերազմի նախօրեին: Վահան Ամատունին զրկվեց հազարապետությունից, պաշտոնը հանձնվեց եկվոր պարսկի, և այդ երևույթն իր հերթին նպաստեց հասարակական կրքերի բորբոքմանը:

Հին հաստատություններից փոփոխման չէր ենթարկվել մաղխազությունը՝ այդ պաշտոնը շարունակում էին վարել մտորխոռունիները: Բայց եթե առաջներում նրանք պարտավոր էին ներքին կարգը տպահովել առաջին հերթին հօգուտ հայոց արքայի, ապա այժմ նրանց տերն էր պարսից արքայից արքան:

\* Այսինքն պարսից արքունիքը՝ Տիզբոն մայրաքաղաքում:

Իսկ Ավարայրի ճակատամարտում միջին գնդի հրամանատարը եղել է մարդպետ Միհրշապուհ՝ (Ներշապուհ) Արծրունին [Ղազ. Փարպ., էջ 71. 39—40]:

Որևէ կերպ չէր փոփոխվել, վերջապես, եկեղեցական հաստատությունը: Նոր պայմաններում եկեղեցին վտանգի տակ է եղել, պարսից արքունիքը կարող էր հեռացնել կաթողիկոսին, տեղ ապահովել իր դրածոյին, բայց հաստատությունը մնացել էր նույնը, իսկ հասարակական կշիռը նույնիսկ աճել էր:

Ճիշտ է, Արշակունիների օրոք վերջնական ձև ստացած այդ հաստատությունների կողքին առաջացել էր նորը՝ մարզպանությունը: Մարզպանը եղել է երկրի գլխավոր վարչապետը, ներկայացրել արքայից արքայի գերագույն իշխանությունը<sup>2</sup>: Հայոց երկիրը դարձել էր Սասանյան աշխարհակալ պետության մարզերից մեկը: Բայց պարսից վարչական մտքի այդ ծնունդը ինչ-որ չափով հայանում է՝ մարզպանին դառնում նաև տեղացի, հայ իշխանները՝ արքայից արքայի առջև պաշտպանելով նախարարության և ողջ երկրի շահերը: Վարդանանց ապստամբության ժամանակ Վասակ Սյունին իրեն դրսևորել էր որպես դավաճան, բայց նրան մարզպան նշանակելը ընդհանուր առմամբ մի կարևոր նշան էր, որ պարսից դուռը հաշվի է առնում մարզպանության վերածված Հայոց երկրի սեփական շահերը:

Այսպիսով, տեսնում ենք, որ սեփական պետականությունը կորցնելով, հայ ժողովուրդը այդուհանդերձ պահպանել էր իր ազգային ինքնությունը դեմքը, պահպանել էր հասարակական առավել կարևոր հաստատությունները և, ինչպես ցույց տվեց մոտ ապագան, պատրաստ էր և կարող էր զենքը ձեռքին պաշտպանել պատմական երկարատև զարգացման այդ նվաճումները: Սեփական պետականությունը կորցրած ազգն իր ինքնավարությունն էր ապահովել նաև օտար գերիշխանության ներքո: Հանուն ինքնավարության մղվող պայքարը կազմելու է V—IX դդ. Հայոց պատմության առանցքը, իսկ Բազդատունյաց թագավորությունը ծնունդ է

առնելու որպես նախորդ շրջանի ինքնավարութեան հաստատութիւնների օրինական ժառանգ՞:

Բայց այդպիսի պատկեր է առաջանում այն դեպքում, երբ իրականութիւնը դիտում ենք երկու-երեք հարյուրամյակի սահմաններում, այն էլ այսօրվա աչքով: Մինչդեռ Մաշտոցի, Վարդանի, Վահանի ժամանակակիցները տագնապով ու անհանգստութեամբ էին լցված և նրանց պաշարող վտանգի զգացումը, անշուշտ, հիմք է ունեցել:

Հետագա շարադրանքի մեջ մենք խոսելու ենք գլխավորապես 450—451 և 482—484 թթ. ապստամբութիւններին մասին, որոնք ծավալվել էին մարզպանական Հայաստանում: Բյուզանդական կայսրութեան մաս կազմող հայոց երկրի դերը եղել է անտղղակի և աննշան, հետևաբար ապրատամբական շարժումների կապակցութեամբ այդ հատվածի պատմութեան վրա մենք կանգ չենք առնելու: Ինչ վերաբերում է արևելքին, ապա այստեղ մթնոլորտը գնալով շիկանում էր: 387 թ. բաժանումը պարսկական հատվածին կայունութիւն չապահովեց: Ինչպես ասացինք, այստեղ թագավոր է նշանակվել Խոսրով Դ Արշակունին, բայց շուտով նա արքորվեց, և գահն անցավ նրա եղբայր Վոամշապուհին: Վոամշապուհի օրոք խաղաղութիւն էր տիրում, սկսվել էին տարածվել Մաշտոցի ստեղծած գրերը, որի շնորհիվ եկեղեցու դիրքն ամրացավ: Վոամշապուհի մահից հետո (414)<sup>4</sup> Խոսրովը նորից գահ բարձրացավ, բայց 8 ամիս շանցած՝ վախճանվեց: Նրանից հետո Հայոց թագավոր է դառնում արքայից արքա Հազկերտ Ա որդի Շապուհը: Շապուհի ներկայութիւնը Հայաստանում՝ հայերին պարսկացնելու առաջին աչքի ընկնող փորձն է եղել (այդ մասին ստորև): Հասարակական կարծիքը վիրավորված էր, անշուշտ, «Աստծու օձշալի» տեղում բազմել էր զրադաշտական, դարաշրջանի տերմինաբանութեամբ՝ «մոգ», «հեթանոս» և այլն: Մովսես Խորենացու մոտ պահպանված առասպելախառն ավանդութից կարելի է եզրակացնել, որ Շապուհը լեզու չգտավ իր հայհպատակների հետ և նրան պարզապես վանեցին երկրից: 420 թ. Հազկերտ Ա վախճանվեց, նույն օրը պալատական-

ները սպանեցին պարսից արքունիքում ապաստանած Շապուհին:

Հազկերտին հաջորդեց Վռամը (Վահրամ Ե Գոռը), նրա թագավորության սկզբում հայոց գահը գրավեց Արտաշես Ե Արշակունին, Վռամշապուհի որդին: Ղազար Փարպեցու տրվյալներին ելնելով պիտի եզրակացնել, որ Հայոց վերջին թագավորների բախտը գոնե մասամբ կախված է եղել նախարարության կամքից: Նախարարներն են իրենց թագավոր խնդրում և նույն նախարարները, երբ թագավորը չի ընդառաջում նրանց պահանջներին, դավեր սարքում նրա դեմ, նպաստում, որպեսզի նա գահընկեց լինի: Այդպես է եղել նաև Արտաշեսի դեպքում: Նախարարները թագավոր խնդրեցին Արշակունյաց ազգից, Վռամը ընդառաջեց նրանց ցանկությանը, թագավորեցրեց Արտաշեսին, որը նույն նախարարների սադրանքով 428 թ. ղրկվեց իշխանությունից: Նախարարները դժգոհ էին Արտաշեսի անառակ կյանքից, բայց դժվար թե թագավորի կենցաղը լիներ բուն պատճառը: Պարզապես նախարարությունը ձգտում էր ազատվել թագավորական իշխանության զսպող ուժից և ձեռք բերել ազատություն: Բայց երբ պարզվեց, որ մարզպանական Հայաստանում այդ ազատությունն ավելի է սահմանափակվելու, բողոքողների (կամ նրանց ժառանգների) մի զգալի մասը դիմեց զենքի:

Արտաշես Ե Արշակունու գահընկեցությամբ Հայոց երկրում թագավորական իշխանությունը վերացավ: Տիզբոն գնացած բողոքող նախարարները հայրենիք վերադարձան պարսիկ Վեհմիհրշապուհ մարզպանի ուղեկցությամբ [Մով. Խոր., էջ 349. 8—9]: Ղազար Փարպեցու շարադրությունը մի փոքր այլ է: Նրա ասելով, Արտաշեսի գահընկեցությամբ պաշտոնից հեռացավ նաև Սահակ Պարթև կաթողիկոսը: Նրա տեղը գրավեց Արծկե քաղաքից Սուրմակ անունով մի երեց: Սրա դեմ բողոք բարձրացավ, Սուրմակին վանեցին, և այդ կապակցությամբ արքայից արքա Վռամը Հայաստան ուղարկեց մի պարսիկ մարզպան (հեղինակն անունը չի տալիս): Հա-

յերն ընկան Ժանսորեն պարսից ազգի ծառայութեան լծի տակ» [Ղաղ. Փարպ., էջ 25. 11—18]:

Անկայրճն է հղել նաև հոգևոր իշխանութիւնը: Սահակ Պարթևը հղել է դարաշրջանի ամենից հեղինակավոր անձնավորութիւններէից մեկը: Խոսքով Դ առաջին թագավորութեան օրոք, 387 թ. ընտրվել էր կաթողիկոս, օծվել Կեսարիայում, բայց շուտով ամբաստանվել և հեռացվել: Իր իրավունքները վերականգնել էր Վոսմշապուհի միջնորդութեամբ, սակայն 428 թ. բաղաճայտ կերպով պաշտպանել էր Արտաշես թագավորին և, ինչպես ասացինք վերևում, կրկին հեռացվել: Նրա հաջորդը՝ Սուրմակը, տեղում մնաց միայն մեկ տարի: Նրան փոխարինեց Բրթիշոն, ազգութեամբ ասորի, որին Հայաստան էր ուղարկել Վոսմ թագավորը: Բրթիշոն Հայոց երկիր ժամանեց իր հայրենակիցների մի խմբով: Նորեկներն իրենց բարքերով տարբերվում էին տեղացիներից: Նրանք ժամանել էին կանանցով, մինչդեռ հայոց եկեղեցու կանոնները պահանջում էին (գոնե V դարում), որպեսզի հոգևորականները որոշ աստիճանից պահպանեն անկնութիւնը: Այդ կարգի խախտումը հայերի աչքում հղել է ռեզիլս և անարժան: Նրանք հեռացրին Բրթիշոյին, բողոքեցին Վրոսամին, և արքայից արքան Հայաստան ուղարկեց մեկ ուրիշ ասորի՝ Շմուել անունով: Սա ևս դուր չեկավ հայերին. նրանք դժգոհում էին, որ եկվորներն ընչասեր են, կողոպտում են եկեղեցու ունեցվածքը: Շմուելի մահվանից հետո նրա տեղը կրկին անցավ Սուրմակին:

Պետք է ենթադրել, որ պարսից այդ դրածոները իսկական կաթողիկոսներ չեն հղել, համեմայն դեպս չեն ընկալվել որպես այդպիսիք, մինչդեռ Սահակը պահպանել էր իր ողջ հեղինակութիւնը: Եթե Գահնամակի մեզ հասած առաջարանը վավերական է, ապա հայ նախարարների գահերը հաստատելու համար հենց Սահակն է գնացած հղել պարսից Վոսմ թագավորի մոտ: Սահակը վախճանվեց 439 թ., նրան փոխարինեց (Մաշտոցի ընտրութեամբ) Հովսեփը: Հովսեփը Վայոց ձորի Հողոցիմբ գյուղից էր: Չեռնադրված լինելով երեց, համարվելով հայրապետական աթոռի տեղապահ, նա

այնուամենայնիվ հանդես եկավ որպես երկրի իսկական հոգևոր պետ: Հովսեփի օրոք եկեղեցին կարողացավ համախմբել իր ուժերը, վերականգնել ազգային կերպարը: Շուրջ 445 թ. Հովսեփը գումարեց Շահապիվանի եկեղեցական ժողովը, որն, ի թիվս այլ հարցերի, նզովեց տարածում ստացած մծղնեական աղանդը<sup>5</sup>: Ժողովի որոշումների նախաբանում ասվում է, որ հավաքը տեղի է ունեցել պարսից Հազկերտ արքայի հինգերորդ տարում, երբ հայոց մարզպանն էր Վասակ Սյունին, հազարապետը՝ Վահան Ամատունին, իսկ մաղխազը՝ Վրիվ Խորխոռունին: Նախաբանը մեզ է հասել վերախմբագրված վիճակում, բայց այդ հատվածը հարազատ է թվում: Հայոց եկեղեցին ենթարկվում է պարսից թագավորին, բայց միաժամանակ այն գտնվում է մարզպանի, հազարապետի և մաղխազի (երեքն էլ՝ տեղացի իշխաններ) պաշտպանություն տակ: Անկախունությունը վերացել էր, եկեղեցին լրիվ վերականգնել իր դիրքը և պատրաստ էր դիմադրելու Պարսկաստանից սպառնացող վտանգին: Իսկ բախումը դառնում էր անխուսափելի:

Պատմական Հայաստանը դարեր շարունակ սեղմված է եղել հզոր Արևելքի և ոչ պակաս զորեղ Արևմուտքի միջև: Արևելքից նրան ճնշում էին Աքեմենյանները, ապա՝ Սելևկյանները, պարթև Արշակունիները, Սասանյանները, VII դ. սկսած՝ արաբները: Արևմուտքում վտանգի աղբյուրը եղել է Հռոմը, ապա՝ նրա ժառանգորդ Բյուզանդիան: Հայաստանի աշխարհագրական դիրքն այնպիսին էր, որ, տիրանալով երկրին, Արևելքը կամ Արևմուտքը իսկույն առավելություն էր ձեռք բերում իր հակառակորդի նկատմամբ (այդ երկու ուժերը մշտական հակամարտության մեջ էին): 387 թ. բաժանումը եղել է փոխադարձ զիջման արդյունք: Բավական էր, որ ուժերի հավասարակշռությունը խախտվեր, որպեսզի կայացած համաձայնությունը ենթարկվեր մոռացության: V դ. Սասանյան Պարսկաստանի և Բյուզանդական կայսրության ուժերը մոտավորապես հավասար էին, և այդ երկրները հավատարիմ մնացին իրենց հաստատած պայմանագրին: Այնուամենայնիվ, Սասանյան արքունիքը շարունակել է կաս-

կածով հետեւել հայերին, ենթադրելով, որ հարմար առիթի դեպքում նրանք կանցնեն կայսեր կողմը: Սաստկացնելով ճնշումը Հայոց երկրում, սասանյան քաղաքագետները ցանկացել են իրենց պետութիւնը ապահովագրել մարզպանութեան վերածված Հայաստանի հնարավոր «դավաճանութիւնից»:

Հայոց երկիրը Արշակունյաց օրոք ինչ-որ շափով բարգաւաճում էր, սկզբնապես բարգաւաճում էր նաև մարզպանութեան պայմաններում: Բայց Սասանյանների երկարատև պատերազմները պետութեան արևելյան սահմաններում հսկայական միջոցներ էին կլանում: Հարկերի ծանրութիւնից տնքում էին արքայից արքաների բոլոր հպատակները, հարկերի գանձումը սաստկանում էր նաև Հայոց երկրում: Նախարարական զորքը պարսից զինյալ ուժերի համակարգում կարևոր տեղ էր գրավում: Եղիշեից վերևում բերված հատվածը ցույց է տալիս, թե արքունիքը այդ զորքի հավատարմութիւնն ու մարտական ուժը որչափ բարձր է գնահատել: Բայց հենց այդ հատկութիւնները սասանյան թագավորներին դրդում էին ավելի ու ավելի ներգրավել հայերին պետութեան կողմից վարվող պատերազմներին: Զինվորական պարտականութիւնները գնալով ծանրանում ու բարդանում էին:

Կար, վերջապես, մի հանգամանք ևս, որի հետեւանքով հայերի վիճակը բարդացել էր և որը հնարավոր եղավ վերացնել միայն զինված դիմադրութեամբ: Սասանյան վարչակարգը եղել է բռնապետական: Բռնապետութիւնն ինքնին միասնութիւն է պահանջում, ձգտում է միանմանութեան թե՛ երկրի կառավարման, թե՛ տնտեսութեան, թե՛, վերջապես, գաղափարախոսութեան բնագավառում: Այդ միտումը առկա էր ինչպես պարսիկ, այնպես և բազմաթիւ օտար հպատակների նկատմամբ: Սասանյաններին չէր հաջողվում ամենուրեք տարածել բռնապետական սկզբունքները, բայց նրանք շարունակ ձգտել էին դրան: Պարսից արքունիքը հանդուրժողականութիւն է ցուցաբերել միայն այն դեպքերում, երբ ի վիճակի չի եղել զսպել ու ճնշել հակադիր որևէ ուժ:

Մեր ասածն ամբողջութեամբ վերաբերում է նաև կրոնին: Զբաղաշտութեան այն հոսանքը, որը III դ. վերջերին հռչակավոր քուրմ Կարտիրի գործունեութեամբ պետական ճանաչում գտավ, կոչված էր համախմբելու սասանյան բռնապետութեան բոլոր հպատակներին և ապահովելու նրանց միասնությունը գաղափարախոսական ոլորտում:

Բայց Սասանյան պետութեան սահմաններում բնակվում էին ոչ միայն զրադաշտականներ, այլև այլազավաններ, որոնց մի զգալի մասը քրիստոնյաներ էին: 313 թ. հետո կայսրության սահմաններում քրիստոնեությունը ճանաչվեց սկզբնապես հանդուրժելի, ապա և պետական կրոն: Պատմական այդ իրադարձության հետևանքով քրիստոնյաների վիճակը Պարսկաստանում առավել բարդացավ՝ Սասանյանների աչքում նրանք դարձել էին Հռոմեական կայսրությանը ծառայող յուրատեսակ «հինգերորդ զորասյուն»: 339/340 թ. սկսած՝ քրիստոնյա փոքրամասնությունը (ազգով ասորի) պարբերաբար հալածանքների է ենթարկվում: Միայն Պերոզ արքայից արքայի օրոք (457/459—484), երբ ասորի քրիստոնյաների մի մասը կազմեց նեստորական կոչվող հատուկ եկեղեցի և դրանով իրեն հակադրեց արևմուտքի «տիեզերական» եկեղեցուն՝ այդ փոքրամասնության վիճակը ավելի ապահով դարձավ:

Անընդհատ վտանգի տակ են եղել նաև նվաճված պետությունների քրիստոնյա համայնքները: Բավական էր, որ պարսից իշխանությունը Հայաստանում քիչ թե շատ ամրանար, որպեսզի սկսվեին կրոնական հալածանքներ, բռնի դավանափոխության փորձեր և այլն: Այն պայմաններում, երբ գաղափարախոսությունն արտահայտվում էր կրոնական եղանակով, իսկ կրոնը ընդգրկում էր հասարակության գաղափարախոսությունը թեկուզ իր էական մասով, դավանափոխությունը նշանակում էր մարդու հոգեկան աշխարհի կատարյալ այլակերպում: Խոսքն, իհարկե, ոչ թե անհատների, այլ զանգվածի մասին է: Վերափոխությունները կարող էին լինել տեական, բայց բոլոր պարագաներում դրանք անխուսափելի էին: Հայ հասարակության մի զգալի մասը, գիտակ-

ցարար թի բնազդաբար, կտրականապես մերժում էր մոգությունը: Բնազդը, չգիտակցված վարմունքը իսկապես մեծ դեր էին կատարում: Հայերը պաշտպանում էին քրիստոնյա հավատքը, որովհետև իրենցն էր (համենայն դեպս վաղուց ի վեր դարձել էր իրենցը) և մերժում զբազաշտությունը, որովհետև այն օտար էր: Հեռավոր անցյալում մարդիկ եղել են ավելի պահպանողական:

Զրագաշտությունը, ինչպես և որևէ այլ հին կրոն, զգալի չափով կանխորոշում էր մարդու կենցաղը, ընտանեկան հարաբերությունները: Մոգությունն ընդունած Գուգարքի բղջիկ վազգենը (նրա մասին՝ Դ գլխում) հայտնում է իր տիկնոջ՝ վարդան Մամիկոնյանի դուստր Շուշանիկին, որ մտադիր է մի ուրիշ կին ևս բերել Պարսկաստանից: Քրիստոնյա բարոյագիտության տեսանկյունից նման վարմունքը պիտի դիտվեր որպես զազրելի ու մերժելի:

Ժամանակակից ոճով արտահայտված մեր այս մտքերը ամենևին էլ պատմափիլիսոփայական, վերացական մտորումների արդյունք չեն: Իրականությունը ճիշտ այդպես է մեկնաբանել V դարում ապրած Ղազար Փարպեցին: Մտադրվելով Հայաստանում թագավորեցնել իր Շապուհ որդուն, պարսից շահանշահ Հազկերտ Ա-ն մտովի խորհում է Հայոց երկրի մասին, և ահա թե Ղազար Փարպեցին ինչպես է ներկայացնում արքայից արքայի խորհրդածությունները (դրսեվորելով, անշուշտ, իր տեսակետը): Հայոց աշխարհը, մտածում է Հազկերտը, մեծ է և օգտակար, նա սահմանակից և դրկից է Հունաց պետությանը: Շատ հնարավոր է, որ հույներին և պարսիկներին ենթարկված Արշակունիների մոտ փոխադարձ սեր առաջանա, և նրանք կխոսեն խաղաղության մասին հունաց թագավորի հետ: Նախընտրելով վերջինին և հնազանդվելով նրան, Արշակունիները մեր դեմ կապստամբեն, կսկսեն մեզ նեղել պատերազմներով: Եվ երկրորդ՝ նրանք օտար են մեր օրենքներին, ատում են դրանք, բայց լիովին ընդունում հույների պաշտամունքը և նրանց օրենքները: Արդ, եթե Հայաստանում թագավոր լինի մերոնցից մեկը, ապա Պարսից թագավորությունը կազատվի իր հոգսերից:

Հայերը մինչև վերջ երկյուղով կծառայեն մեզ, նրանց մոտ օտար գաղափարներ չեն առաջանա: Նրանք կընտելանան մեր օրենքնեցիկն, դրան նպաստելու են փոխադարձ խոսքերը և բարեկամութիւնը, որը ծնունդ կառնի մեր և նրանց ընդհանուր որսորդութեան և խաղերի միջոցին: Պարսիկները և հայերը կմերձանան խառն ամուսնութիւնների շնորհիվ, և որպէս արդիւնք՝ Հայոց երկրի բնակչութիւնը կհեռանա իր հին սիրուց և օրենքներից [Ղազ. Փարպ., էջ 18. 26—19. 5]: Այդ «շարաշար» մտքերը ոչ այլ ինչ են, եթէ ոչ հայերին առնմանեցնելու մի մշակված ծրագիր: Բայց ծրագիրը վերջիվերջո տապալվեց, տապալվեց բացարձակ և համառ դիմադրութեան շնորհիվ:

\* \* \*

Վարդանանց ապստամբութիւնը բռնկվել է որպէս հայ հասարակութեան և պարսից բռնապետութեան բախման հետևանք, ընդ որում՝ այդ հակադիր ուժերից երկրորդը առաջինի համար եղել է արտաքին: Ճգնաժամային վիճակ է ստեղծվել այն պահից, երբ նվաճված ժողովուրդների, ինչպէս նաև Բյուզանդական կայսրութեան նկատմամբ պարսից պետութեան քաղաքականութիւնը հանկարծակի փոխվեց բացահայտ թշնամութեան: Եղիշեն (որի երկը լինելու է մեր շարադրութեան գլխավոր սկզբնաղբյուրը) այդ բեկումը թվագրում է Հազկերտ Բ արքայի (439—457) երկրորդ տարով:

Հազկերտը ասպատակում է Բյուզանդական կայսրութեան արևելյան գավառները, հրի մատնում եկեղեցիները, կողոպտում և գերի վերցնում բնակչութեանը: Բյուզանդական զորքը ահաբեկված էր, Թեոդոս Բ կայսրը (408—450) թշնամուն դիմադրելու ուժ չունէր: Հազկերտին մեղմացնելու համար նրա մոտ ուղարկեց «Արևելքի սպարապետ» Անատոլիոսին (այն Անատոլիոսն է, որը բանակցել էր Մաշտոցի հետ՝ վերջինիս արտասահման ուղևորվելու ժամանակ): Արքայից արքայի բարկութիւնը մեղմացնելու համար կայսրը նրան թանկարժեք նվերներ ուղարկեց, ետ վերադարձրեց Կոստանդնուպոլիս փախած քրիստոնյա պարսիկներին: Նրա

կամքը կոտորվեց, նա ամեն ինչում ենթարկվում էր իր հզոր ախոյանին: Հետագայում, իր հպատակ ժողովուրդներին հաղորդելով նոր պատերազմի մասին, Հազկերտը առանձնապես շի շեղվելու իրականությունից, կայսեր դեմ ձեռնարկված արշավանքը ներկայացնելով հետևյալ խոսքերով՝ «Առանց ձեզ որևէ նեղություն տալու ելանք-գնացինք հույների հրկիրը, և առանց պատերազմի սիրով ու մարդասիրությամբ (1) նվաճեցինք ամբողջ հրկիրը մեզ ծառայելու» [Եղ., էջ 9. 18—20]: Թեոդոսը բավարարեց Հազկերտի բոլոր պահանջները, և արքայից արքան վերադարձավ իր Տիզբոն մայրաքաղաքը<sup>6</sup>:

Այդ դեպքերը տեղի են ունեցել 440 թ., նույն թվականին պարսիկները սկսեցին պատերազմական գործողություններ արևելյան թշնամու՝ քուշանների դեմ: Պարսկաստանին ենթակա շատ երկրներում զորահավաք էր հայտարարված, կազմված ահռելի բանակը մեկնեց Ապար աշխարհը (այժմյան Խորասանում): Պարսիկները ոչ մի կերպ չէին կարող հաղթել քուշանների դիմադրությունը, չնայած 'և նեղում էին նրանց: Երկամյա ապարդյուն կռիվներից հետո Հազկերտը հոգնած զորամասերը ետ ուղարկեց, փոխարենը կանչելով թարմ ուժեր: Այնուհետև, 442 թ. արևելքում հիմք դրեց մի նոր նստատեղի քաղաքի, շարունակելով պատերազմել նույն ձևով մինչև 449 թ.: Պատերազմական գործողություններն իսկական հաջողությամբ պսակվեցին միայն Հազկերտի տասներորդ տարում, 450 թ., երբ, հավաքելով մի նոր բանակ, արքայից արքան գրոհեց Տաղական քաղաքը: Քուշանների թագավորը նահանջեց և դիմեց փախուստի, Հազկերտը սկսեց ավերել նրա երկիրը, գերիներին ու ավարը ուղարկելով Պարսկաստան:

Այսպիսով, 440 թ. Հազկերտ Բ-ն անցավ իր արտաքին քաղաքականության լայն ծրագրի իրագործմանն, այն է՝ ապահովել Սասանյան պետության եղած սահմանները, իսկ արեւելքում՝ նրա կազմի մեջ ներգրավել նոր տարածություններ: Երազիրը հաջողվեց: Հռոմեացիները հավատարիմ մնացին դաշինքին. երբ Հազկերտն ամբողջությամբ տարված էր քու-

շանների դեմ մղվող պատերազմով, Բյուզանդական կայսրու-  
թյունը փորձ շարեց օգտվել հանգամանքից և պահպանեց  
իր շեզոքութիւնը: Բյուզանդացիները շեզոք մնացին նաև  
հետագայում, հայերին օգնութեան շեկան ոչ 450—451, ոչ  
էլ 482—484 թթ.:

Ապահով էր նաև հյուսիսային սահմանը: Հազկերտն  
ավերեց հոներին ենթակա մի շարք վայրեր, այնտեղ բնակ-  
վող խայլնդուրները (հոների առանձին մի ճյուղ, ըստ բյու-  
զանդական աղբյուրների՝ օնոգուրներ), այլևս չէին մըտ-  
նում Սասանյան պետութեան տարածքը: Այժմյան Դերբենդի  
մոտերքը, Կասպից ծովի ափին գտնվող Ճորա պահակը նը-  
րանց համար մնացել էր փակ: Իսկ արևելքում քուշանները  
ստիպված էին իրենց հողերի մի մասը զիջել պարսիկներին:

Արևելյան պատերազմին մասնակցում էին նաև հայե-  
րը, վրացիները, աղվանները, անդրկովկասյան մի շարք այլ  
ժողովուրդներ: Նրանց մասնակցութիւնը եղել է սովորույթի  
խախտում, առաջնորդում նրանք ազատ էին այդ վայրերում  
պատերազմելու պարտականութիւնից, հայտնում է Եղիշեն-  
ի [Եղ., էջ 10. 10—11]: Մեր պատմիչի ասելով, նրանք հա-  
վատարիմ կատարում էին իրենց պարտականութիւնները,  
բայց կարգի խախտումը չէր կարող դժգոհութիւն չառա-  
ջացնել:

Ռազմական ծրագիրն իրագործելով՝ Հազկերտ Բ-ն և նրա  
շրջապատը նպատակ են ունեցել ամրացնելու Իրանի դիր-  
քը միջազգային հարաբերութիւնների ոլորտում: Միաժա-  
մանակ ձգտում կար ամրապնդել Սասանյան իշխանութիւնը  
նվաճված կամ ենթակա երկրներում, իսկ դրան պիտի նը-  
պաստեր դավանական միասնութիւնը (որը քրիստոնյանե-  
րի համար նշանակում էր դավանափոխութիւն): Մոգերը  
պնդում էին, որ Հազկերտին ենթարկվող բոլոր ժողովուրդ-  
ներին միակրոն դարձնելով, արքայից արքան կամրապնդի  
իր դիրքը նաև արտաքին աշխարհում:

Հավատարմութիւնը դեպի Սասանյանների գերագույն:  
իշխանութիւնը Հազկերտը և նրա շրջապատը սկսել էին բա-  
ցահայտ կերպով կապել դավանանքի հետ: Ստորև ցույց

Գլխանք, որ մի ընդարձակ գրութիւնն է ուղարկվում Հայաստան, ուր շարադրված են եղել մազդեզանց ուսմունքի հիմունքները: Հայերին առաջարկվում էր հրաժարվել իրենց դավանանքից և ընդունել պարսից կրօնը: Հայոց եկեղեցին քնականաբար մերժեց այդ առաջարկը, բայց տվյալ դեպքում հետաքրքիր է, թե Հազկերտը ինչպես ընկալեց պատասխան թուղթը: Արքայից արքան, պատմում է Ղազար Փարպեցին, իսկույն նկատեց, որ որոշ հարցերում հայերը չիովին ենթարկվում են նրա կամքին, բայց կա մի բնագավառ, որտեղ նրանք բոլորովին անկախ են՝ «է ինչ, զոր ոչ քեզ պարտ է ասել և ոչ մեզ հնար է հնազանդել և յանձն առնուլ»: Մերժումը, ինչպես ասացինք, նկատի է ունեցել դավանանքը, բայց հենց այդ հարցում Հազկերտը չէր ուզում լիջել: Թագավորը և բոլոր Արիք նախ և առաջ սպասում են, որ հայերը կընդունեն մոգութիւնը, դրանով կճանաչվեն պարսից տերութունը և հայերի արդար ծառայութիւնն ու հնազանդութիւնը [Ղազ. Փարպ., էջ 48. 24—30]: Անշուշտ, Փարպեցին է այդ խոսքերը Հազկերտի բերանը դրել, բայց մեզ համար կարևոր է գաղափարը, որն այստեղ արտահայտված է զարմանալի հստակութամբ:

Սկսվեցին կրօնական հալածանքներ: Արտաքին հաշտութիւններից ոգևորվելով, Հազկերտը հրամայեց, որպեսզի Պարսկաստանում բնակվող քրիստոնյաների գույքը բռնագրավվի, մարդկանց սկսեցին ենթարկել մարմնական պատիժների: Հալածանքներ սկսեցին քուշանների պատերազմի մասնակից քրիստոնյա զորականների նկատմամբ: Նրանց պահում էին Պահ դոան ներսում և ենթարկում շարշարանքների: Իսկ երբեմն որպես պատիժ ուղարկում էին հեռավոր անբնակ վայրեր՝ Պարսկաստանը թշնամիներից պաշտպանելու համար, և շատերը հենց այդ տեղերում էլ գտան իրենց մահը: «Եվ բոլորի նշանակված թոշակները պակասեցնում էին, գրում է Ծղիշեն, և քաղցով ու ծարավով տանջում նրանց. ձմեռելու համար դժնդակ տեղեր էին նշանակում նրանց և բոլորի աչքում անարգ ու վատթար նրանց էին ցույց տալիս» [Ծղ., էջ 21. 6—9]:

Մեր պատմիչը որոշ մանրամասնություններ է հաղորդում այդ հալածանքների մասին: Պաշտպանելով քրիստոնյա ուսմունքը, հայ նախարարներից Գարեգին անունով մեկը ընդդիմաբանեց արքային: Կատաղած Հազկերտի հրամանով Գարեգինին երկու տարի տանջեցին, ապա ենթարկեցին մահապատժի: Եղիշեն պատմում է նաև այն մասին, թե ինչպես ճաշկերույթից հետո 4 նախարարների ձեռքերը կապեցին, իսկ խոնջանները կնքեցին: Խոնջանները՝ վարտիքի կամ անդրավարտիքի կապերն են: «Կնքելով» կապերը, մարդկանց հարկադրում էին մնալ իրենց կեղտոտությունների մեջ... Ժանր է եղել նաև այնպիսիների վիճակը, որոնց հաջողվել էր խուսափել նման հալածանքներից:

Եղիշեն պատմում է, որ գտնվելով տանջալից պայմաններում, շարքաշ կյանք վարելով, նախարարներն, այնուամենայնիվ, հաստատ մնացին իրենց հավատքի մեջ: Նրանք ենթարկվում էին նաև այլ, ավելի խորամանկ փորձությունների: Նկարագրելով հատկապես հայ զորականների վիճակը, Եղիշեն գրում է, որ Հազկերտը ռոմանց խաբում էր ոսկով ու արծաթով, և շատերին էլ ուրիշ առատ պարգևներով, ոմանց էլ ագարակներ ու մեծամեծ գյուղեր [շնորհելով] ոմանց մեծամեծ պատիվներով ու իշխանություններով»: Եթե նախարարները հանձն առնեն մոգությունը, համոզում էր արքան, ապա կհասնեն մեծությունների և ավագությունների, կհավասարվեն և անգամ կգերազանցեն իր սիրելի պարսիկ նախարարներին [Եղ., էջ 17]:

Մակայն, նախարարները տոկուն գտնվեցին նաև այդ հրապուրանքների նկատմամբ: Բայց ահա թե ինչ է հաղորդում մեր պատմիչը. «Քանի որ ձեռքը ձգել և բռնել չէր կարողանում,— որովհետև ամենքը միատեղ չէին նրա մոտ միևնույն վայրում,— [Հազկերտն] այնուհետև սկսեց առաջ քաշել կրտսերներին ավագների միջից, և անարգներին պատվականների միջից, և տգետներին գիտոմաների միջից, և վախկոտներին քաջ մարդկանց միջից. և էլ ի՞նչ մեկ-մեկ թվեմ, բոլոր անարժաններին առաջ էր քաշում, իսկ բոլոր արժանավոր մարդկանց հետ էր տանում. մինչև անգամ հորն

ու որդուն բաժանում էր միմյանցից» [Եղ., էջ 16. 16—21]:

Միջնադարյան հասարակարգը ընդհանուր առմամբ եղել է պահպանողական: Հասարակական սանդուղքի վրա իրենց կայուն տեղն են ունեցել ոչ միայն առանձին արտոնյալ դասեր, այլև այդ դասերը կազմող առանձին տոհմեր և անդամներ: Հայաստանի պայմաններում Գահնամակով որոշված է եղել նախարարական տոհմերի հարաբերական ուժն ու կշիռը, և այդ կարգը փոփոխվում էր միայն ծայրահեղ պայմաններում: Թվում է, որ հենց այդպիսի քայլի դիմեց Հազկերտ Բ-ն, երբ «կրտսերներին» առաջ քաշեց «ավագների», անարգներին՝ պատվականների միջից և այլն:

Բայց առաջ քաշվածները ի՞նչ գնով էին գրավում նոր դիրքեր: Դժվար թե սխալվենք պնդելով, որ արտոնությունները բաշխում էին ուրացության դիմաց: Եղիշեն ինքն է ասում, որ երբ Տիզբոն ժամանած վասակ Սյունին, վարդան Մամիկոնյանը և մյուս նախարարները հետ կանգնեցին իրենց հավատքից, ապա Հազկերտը, այլ պարզևների հետ մեկտեղ, վերադարձրեց նրանց իրենց պատիվն ու գահը [Եղ., էջ 50. 20]: Որպես զուգահեռ բերենք Եղիշեից մի այլ հատված: 450 թ. Աղվանք է ներխուժում պարսից մի մեծ բանակ, իր հետ բերելով 300 մոգ: Պարսիկները նեղում են աղվաններին, թագավորի անունից ասում՝ եթե մոգութուն ընդունեք, ապա նրանից պարզևներ ու պատիվներ կստանաք, իսկ ձեր հարկերը արքունիքը կների [Եղ., էջ 70. 20—22]: Նույնը կկրկնվի, վերջապես, 482—484 թթ. ապստամբության նախօրեին, երբ Պերոզ արքան կհետևի իր նախորդի՝ Հազկերտ Բ-ի քաղաքականությանը, և արդյունքը կլինի նույնը (ավելի մանրամասն՝ Դ գլխում):

Ինչպես տեսնում ենք, արդեն վարդան Մամիկոնյանի օրոք ոչ միայն վկայութունն ու խոստովանութունը, այլև ուրացութունը դարձել էր դարաշրջանի հատկանիշներից մեկը:

Իր պատմության առաջին էջերում Եղիշեն ներկայացնում է այն ընդհանուր պատկերը, որն առաջացել էր Հազկերտ Բ-ի նորամուծութունների հետևանքով: Նա միաժամա-

նակ նշում է, որ արքայից արքայի «անկարգություններն» առավել շափով վնասեցին Հայոց երկրին և աստիճանաբար ծանրացրին հատկապես հայերի վիճակը: 449 թ. Հայաստան է ժամանում Հազկերտի վստահելի ծառա Դենշապուհը: Նա եկել էր իբր հարկերը վերացնելու և այրուծին պահելու համար գանձվող տուրքերը կրճատելու նպատակով: Իրականում նրա քայլերը ճիշտ հակառակ ուղղվածությունն ունեցան: Երկրի հարկը նա ավելի ծանրացրեց, ասում է Եղիշեն: Հայտնի է, որ քրիստոնյա երկրում եկեղեցին օգտվում է հարկային իմոնիտետի իրավունքից, իսկ Դենշապուհը եկեղեցու «ազատությունը» «ծառայության» տակ դրեց, այսինքն՝ այն դարձրեց հարկատու: Աշխարհագրի տակ ընկան նաև վանականները, ուստի նրանք ևս պիտի հարկ վճարեին: Հարկերը ծանր էին, շարունակում է մեր պատմիչը, «որովհետև որտեղից պետք էր հարյուր դահեկան առնել, կըրկնապատիկն էին առնում, այսպես էլ [հարկի տակ] դրին եպիսկոպոսներին և երեցներին, ոչ միայն շեն, այլև ավերակ տեղերը: Մանավանդ, ո՞վ կարող է պատմել, թե ինչպիսի ծանր տուրքեր ու սակեր, բաժեր ու հասեր՝ էին նշանակված լեռների, դաշտերի և անտառների վրա: Առնում էին ոչ թե ինչպես վայել է պետական արժանապատվությանը, այլ ավազակաբար հափշտակելով, այն աստիճան, որ իրենք էլ մեծապես զարմանում էին՝ թե մի տեղից որ այսքան գանձ է դուրս գալիս, էլ ինչպե՞ս է շեն մնում այդ աշխարհը» [Եղ., էջ 22—23]:

Որպես շորրորդ կետ Եղիշեն նշում է, որ Դենշապուհը նախարարներին բանսարկությամբ թշնամացրեց միմյանց հետ և ամեն տան մեջ խռովություն գցեց: Պատմիչն, անշուշտ, ակնարկում է, որ նախարարական կարգը շարունակում էր խախտվել, և դա բնական է՝ Դենշապուհը Հայաստան էր ժամանել որպես արքայից արքայի կամակատար: «Եվ այս ամենն անում էր, որպեսզի գուցե քանդի միաբանությունը, և եկեղեցու ուխտը ցրվի, և միայնակյացներին փախցնի, և շինականներին տկարացնի. և շափազանց աղքատության պատճառով ակամա ընդունեն մոգական կրոնը»:

Բայց ամենից վատթարը հինգերորդն է եղել. «որովհետև նա, որ երկրի հազարապետն էր, համարվում էր քրիստոնյա աշխարհականների վերակացու հայրը՝ սրա դեմ գրգռելով ամբաստանութուն հարուցեց, և նրան գործից հանելով՝ նրա փոխարեն մի պարսիկ բերեց [մեր] աշխարհը, և մի մոգպետի էլ աշխարհին դատավոր [կարգեց], որպեսզի եկեղեցու փառքը նսեմացնեն»։ Հազարապետը մեզ հայտնի Վահան Ամատունին է եղել։ Այն, ինչ գիտենք նրա մասին, հիմք է տալիս մտածելու, որ նա պիտի դիմադրեր Դենշապուհի միջոցառումներին։ Այդ կուհուն էր նաև Հազկերտը, որի պահանջով, անշուշտ, Վահան Ամատունին հեռացվեց իր բարձր պաշտոնից։ Նրա հրաժարեցումով հազարապետութունը, թվում է, վերջնականապես զնաց տեղացիների ձեռքից։ Ծիշտ է, Տեկորի տաճարի հայտնի արձանագրության մեջ հիշատակվում է ոմն Մանան հազարապետ։ Սակայն արձանագրության ծագումը դեռևս պարզված չէ, տարբեր կարծիքներ կան փորագրության ժամանակի վերաբերյալ (V դ. վերջից մինչև X դ.), այդ Մանանը այլուր չի հիշատակվում, ուստի հեռու զնացող հետևություններից առայժմ ձեռնպահ պիտի մնալ։

Ինչպես գիտենք Եղիշից, Դենշապուհը իր հետ բերել էր նաև նոր դատավոր։ Վերջինիս ներկայութունը Հայաստանում սահմանափակում էր թե՛ եպիսկոպոսի, թե՛ աշխարհիկ տեղացի դատավորի իրավասութունը, հարված հասցնում հայերի ինքնավարությանը։ Հիշենք, որ նորեկը եղել է ոչ թե սովորական զրադաշտական, այլ մոգպետ, որը հատուկ պիտի նպաստեր պարսից արքունիքի կրոնական քաղաքականությանը Հայոց երկրում։

Թվարկելով Դենշապուհի միջոցառումները, նշելով, որ նրա գործերը դժնդակ էին, Եղիշեն այնուամենայնիվ ամփոփում է, որ «դեռ ոչ ոք հայտնի կերպով ձեռք չէր տվել եկեղեցուն, այդ պատճառով էլ ոչ ոք նրան չընդդիմացավ», թեպետ հարկերը ծանր էին և այլն։ Եվ իրոք, պոռթկումն առաջացավ միայն այն պահին, երբ պարսիկները բացահայտ կերպով խախտեցին եկեղեցու՝ որպես կրոնական հաստատ-

տության իրավունքները: Սակայն շարունակենք հետևել մեր պատմիչի շարադրանքին:

Տեսնելով, որ մասնակի միջոցառումները մեծ արդյունքներ չեն տալիս, պարսից քաղաքականագետները դիմեցին ավելի լայն ծրագրի: Միհրնեբրսեհի Վզուրկ հրամանատարի ստորագրութեամբ Հայաստան է ուղարկվում մի գրություն, որով քրիստոնյա ուսմունքը մոլորություն է հայտարարվում, իսկ որպես միակ ճիշտը դրան հակադրվում է զրադաշտական կրոնը: Այդ թուղթը եղել է բանավեճի յուրատեսակ մի կոչ՝ «եբրկու բան կա ձեր առաջ. կամ կետ առ կետ պատասխան տվեք այս նամակին և կամ վեր կացեք Գուռն եկեք և ներկայացեք մեծ ատյանին»՝ այսպիսի խոսքերով էր վերջանում գրությունը: Մովպետան մովպետից, այսինքն՝ գերագույն քրմապետից հետո Վզուրկ հրամանատարը եղել է ամենից բարձր պաշտոնյան: Միհրնեբրսեհը հատկապես մեծ կշիռ է ունեցել արքունիքում: Եղիշեն գրում է, որ «սա ամբողջ Պարսից պետութեան իշխանն ու հրամանատարն էր, ...և ամենևին ոչ մեկը չկար, որ համարձակվեր նրա խոսքից դուրս գալ: Եվ ոչ միայն մեծամեծներն ու փոքրերը, այլև թագավորն ինքն լսում էր նրա խոսքին» [Եղ., էջ 88. 21—24]: Միհրնեբրսեհի մասին նույնն են ասում նաև օտար աղբյուրները: Միհրնեբրսեհի ստորագրությունը թղթի մեծ կարևորութեան վկայություն է եղել: Ստանալով այդպիսի գրություն, Հայոց եկեղեցին ոչ մի դեպքում չէր կարող այն անուշադրութեան մատնել: Պատասխան նամակը գրվել է Այրարատի եպիսկոպոս (փաստորեն Հայոց կաթողիկոս) Հովսեփի և 17 այլ եպիսկոպոսների անունից: Գրությունը նախապես ընթերցվեց Արտաշատում գումարված մեծ ժողովում: Ստորագրողներից բացի, այստեղ ներկա են եղել բազմաթիվ քրեպիսկոպոսներ և պատվական երեցներ, մեծամեծ նախարարներ [Եղ., էջ 27—28, Ղազ. Փարպ., էջ 44—45]:

Դժվար չէ կռահել, որ պատասխան նամակը բովանդակել է զրադաշտութեան հերքում և քրիստոնյա ուսմունքի շատագովություն: Նամակից միանգամայն պարզ է, որ հայերը կտրականապես մերժում են օտար կրոնը, հավատարիմ

են մնում իրենց դավանանքին: Բայց իր ծրագրից հետ չէր կանգնում նաև Հազկերտը: Առավել դայրանալով ստացված պատասխանից, նա, պատմում է Եղիշեն, իր մոտ կանչեց 10 նախարարների: Նրանց թվում եղել են մարզպան Վասակ Սյունին, սպարապետ Վարդան Մամիկոնյանը, նախկին հազարապետ Վահան Ամատունին, Գաղեշո Խորխոռունին (որի տոհմից էին լինում մաղխազները): Նույն ցուցակը բերում է նաև Ղազար Փարպեցին, ավելացնելով միայն Գուգարքի բղեշխ Աշուշային: Այսպիսով, նախարարների խումբը կազմված է եղել իրապես ոչ թե 10, այլ 11 հոգուց [Եղ., էջ 42—43, Ղազ. Փարպ., էջ 47]: Նախարարների մի մասը ժամանել էր Հայոց երկրից, ոմանք ստիպված էին թողնել իրենց ծառայությունը Ճորա պահակում (ուր սահմանը ապահովում էին հոների ասպատակներից), իսկ ոմանք առանց այն էլ գտնվում էին արքունի բանակում: 450 թ. Զատկի ավագ շարաթ օրը՝ ապրիլի 15-ին, նրանք ներկայացան արքայից արքային:

Տիգրան ժամանելու հրովարտակը արտասովոր խիստ է եղել: Հազկերտը դայրագին խոսքեր էր նետում նախարարներին, որոնք դարձել էին նրա համար «ատելի և անպիտան», մոռացության էր տվել նրանց նախկին ծառայությունները: Փոխված է եղել նաև ընդունելության կարգը: Հնում դեռևս բանակ չհասած նրանց ողջունում էին պատվավոր ձևով, իսկ այժմ արքան նրանց դիմավորեց սպառնալիքներով՝ եթե վաղը ծունր չդնեն արևի առաջ, ապա մեծ պատիժների կենթարկվեն:

Մթնուլորտը գնալով ավելի ու ավելի էր շիկանում: Հազկերտն այն մարդը չէր, որ բավարարվեր սուտ սպառնալիքներով: Ծանր տանջանքներ էին սպասում թե՛ նախարարներին, թե՛ նրանց ընտանիքներին: Արդեն զորք էին հավաքում, որպեսզի նրանց աքսոր քշեն, ինչպես արդեն վարվել էին վրացի բազմաթիվ ազնվականների հետ: Ծիշտ է, հենց այդ ժամանակ քուշաններն ասպատակեցին պարսից մի շարք գավառներ. Հազկերտը շտապեց իր զորականների ետեվից և «խափանեց իր առաջին հաստատուն երդումը» [Եղ.,

էջ 49]։ Պարզ էր, սակայն, որ փրկությունը ժամանակավոր էր։

Եղիշեն և հատկապես Ղազար Փարպեցին պատկերավոր են նկարագրում նախարարների ապրումները վճռական քայլից առաջ, վերաշարադրում նրանց աղոթքներն ու երգումները՝ հավատարիմ մնալ իսկական աստծուն և այլն։ Բայց միակ ելքը կրոնափոխությունն էր, և նրանք ստիպված եղան ենթարկվել Հազկերտի կամքին։ Սրտի խորքում, պնդում են պատմիչները, նրանք մնացին քրիստոնյա, այսինքն մոգությունն (ինչպես ասվում է սովորաբար պատմական ուսումնասիրություններում և ձեռնարկներում) «առերես» ընդունեցին։ Բայց տվյալ դեպքում Հազկերտը հանդես էր եկել ոչ թե որպես հոգեբան, այլ արքայից արքա, և Տիզբոն ժամանած նախարարների ներքին աշխարհը նրան ամենևին չէր մտահոգում։ Վասակը, Վարդանը և մյուսները հրաժարվեցին իրենց աստծուց և հրապարակավ երկրպագեցին արևին՝ այդ պայմաններում խաղի օրենքն ավելին չէր պահանջում։

Նախարարների ընտրած վարքագիծն իսկույն վարձատրվեց։ Ետ ստացան իրենց պատիվն ու գահը, Հազկերտը նրանց ազարակներ ու ավաններ շնորհեց, սիրելի ու բարեկամ անվանեց։ Բայց դրա հետ մեկտեղ Աշուշա բղեղխին և Վասակի երկու որդիներին պատանդ պահեց [Ղազ. Փարպ., էջ 55. 28—32]։ Դավանափոխ իշխանները եղել են հայ նախարարության սերուցքը, արքունիքը սպասում էր, որ այդ օրինակին հետևեն նաև նրանց հայրենակիցները։ Կռապաշտությունը Հայաստանում տարածելու և հաստատելու համար այրուծի է գումարվում, ազնվական մոգպետի գլխավորութեամբ հավաքվում է 700 մոգերից կազմված խումբ։ Հայաստանից բացի, նրանք պիտի քարոզեին նաև Վիրքում, Աղվանքում, Լիհնաց, Աղծնյաց, Կորդվաց, Ծավդեից, Դասն աշխարհներում։ Արդեն վիճակ էին գցում, թե որ ժողովուրդը որ խմբին է աշակերտելու։

Եղիշեն արքայից արքայի հրովարտակը վկայաբերում է վերախմբագրված ձևով՝ քրիստոնյա հեղինակին հատուկ բանաձևերը հանդիպում են ամեն քայլափոխում։ էությունը,

սակայն, ըստ երևույթին հարազատ է, և հրովարտակից կարելի է պարզ պատկերացում կազմել պարսից արքունիքի ծրագրի վերաբերյալ:

«Նավասարդից մինչև նավասարդ (այսինքն՝ ողջ տարին— Կ. Յ.), ասում է [հրովարտակը], մեծ թագավորի իշխանության տակ գտնված բոլոր վայրերում պետք է վերանան եկեղեցու արարողութունները, պետք է փակվեն և կնքվեն սուրբ տաճարների դռները, նվիրական անոթները պետք է գրով ու համարով հարքունիս գրավվեն, լռեն սաղմոսերգության ձայները, և դադարեն անսուտ մարգարեների ընթերցվածքները: Քահանաները չվստահանան իրենց տներում ուսուցանել ժողովրդին, և Քրիստոսին հավասացող այն տղամարդիկ ու կանայք, որոնք բնակված են մեծանոցներում, փոխեն իրենց հագուստը՝ աշխարհական կարգի համաձայն»: Ինչպես տեսնում ենք, հրովարտակի առաջին տողերը նվիրված են պարսից ծրագրի, այսպես ասած, ժխտողական մասին: Բայց ինչպիսի՞ն է լինելու նոր կարգը, որը կգրավի ավանդականի տեղը. հետևենք հրովարտակին՝ «Նույնպես և նախարարների կանայք պետք է ընդունեն մոգերի ուսմունքն ու վարդապետութունը: Ազատների և շինականների տղաներն ու աղջիկները պետք է կրթվեն նույն մոգերի հրահանգների համաձայն: Պետք է կարճվի և արգելվի սուրբ ամուսնության օրենքը, որ ունեին նախնիքներից քրիստոնեության սովորության համաձայն. մեկ կնոջ փոխարեն թող շատ կանայք առնեն, որպեսզի հայոց ազգն աճի-բազմանա: Աղջիկներն ամուսնանան [իրենց] հայրերի հետ, և քույրերը՝ եղբայրների հետ. մայրերը չխորշեն [իրենց] որդիներից, այլ և թոռները մտնեն [իրենց] պապերի անկողինը»: Վերևում առիթ ունեցանք նշելու, թե քրիստոնյա ազգերի աչքում որչափ խորթ ու անսովոր, զազրելի պիտի երևային զրադաշտական ամուսնության այդ սովորույթները: Այնուհետև հրովարտակը խոսում է մուծվելիք նոր ծեսերի մասին՝ «Ձոհելու կենդանիները շմորթվեն առանց [աստվածներից], նվիրվելու, թե ոչխար լինի, թե այծ, թե արջառ, թե թռչուն և թե խոզ: Խմորն առանց փանդամի՞ չհունցվի, ծիրտն ու

քակորը կրակի մեջ չգցվեն, ձեռքերն առանց գումիզի<sup>9</sup> չվացվեն, շրշուններն, աղվեսներն ու նապաստակները չսպանվեն: Օձերն ու մողեսները, գորտերն ու մրջյունները և էլի ինչ-որ խառնափնթոր ճճիներ կան, ոչնչացվեն, և թվով ու համարով մեջ բերվեն արքունի շափի համեմատ: Եվ էլի ինչ-որ այսպիսի ծառայություններ կան՝ դոհելու կամ մորթելու վերաբերյալ, ըստ տարեկան տոների և կապճաթիվ մոխրաշափ կարգով [պետք է կատարվեն]<sup>10</sup> [Եղ., էջ 52—53]:

Նշված է հղել կատարման ժամկետը՝ տարվա վերջը<sup>11</sup>: Ունենալով այդպիսի հրահանգ, մոգերը գիշեր ու ցերեկ շտապում էին հասնել Հայոց երկիրը. նրանք իրենց ժամկետն են ունեցել՝ վեցերորդ ամիսը<sup>12</sup>:

Արդ՝ մի փոքր կանգ առնենք մեր սկզբնաղբյուրների որոշ առանձնահատկությունների վրա, որոնք պատմության իրական ընթացքը վերականգնելիս դժվարություններ են առաջացնում: Ներկայացնելով ապստամբության և հարակից երևույթների նկարագրությունը, և՛ Եղիշեն, և՛ Ղազար Փարպեցին (նաև այն դրվագներում, որտեղ վերջինս շեղվում է Եղիշեից) ունեցել են արժանահավատ փաստեր: Բայց այդ փաստերը բավական չեն հղել, որպեսզի ընթերցողին հրամցրվի որչ պատմությունը հեղինակի ցանկացած և ծրագրված սահմաններում: Եվ ահա, շատ դեպքերում պատմիչը բացը լրացնում է իր երևակայությամբ: Այդպիսի հատվածները բխում են դարաշրջանի, իրադրության ընդհանուր հասկացությունից, բայց դրանք չպիտի դիտվեն որպես իրականության հարազատ պատճեն:

Անցքերը շարադրելիս միջնադարյան պատմիչը խուսափում է առարկայությունից, ստեղծում ընդհանրացված պատկեր: Եղիշեն, օրինակ, ասում է, որ երբ նախարարների ուրացությունը բոթը հասավ Հայաստան, «երևեցան ամենեքեան զինեալք և սաղաարտեալք, սուր ընդ մէջ և վահանի ձեռին» [Եղ., էջ 57. 24—58. 1]: Կենդանի թվացող այդ պատկերն իրականում ներշնչված է Պողոս առաքյալի խոսքով՝ «Եւ ի վերայ ամենայնի առէք զվահանն հաւատոց. որով կարող լինիջիք զամենայն նետս մուխս շարին շիջուցանել: Եւ

առէք զսաղաւարտն փրկութեան և զսուսեր հոգւոյն ...» [Առ  
Եփեսացիս, 2, 16—17]: Երկու դեպքում էլ վահանը, սա-  
ղաւարտը, սուրը՝ բառեր են, որոնք արտահայտում են զեն-  
քի լուրջ գաղափարը, ստեղծում ընդհանրացված, խորհրդա-  
նշային պատկեր: Այն էլ ասենք, որ նման դեպքերում ևս  
հաճախակի առաջանում է գեղարվեստական հուզիչ կերպար,  
և անգամ փորձված աղբյուրագետի համար հեշտ չի լինում  
կոհանել, որ պատկերավոր նկարագրութիւնը բխում է պատ-  
միչի երևակայութիւնից: Այդպիսի նկարագրութիւնները հա-  
տուկ մոտեցում են պահանջում, բայց ենթարկվելով համա-  
պատասխան վերլուծութեան, իրենց հերթին կարող են նպաս-  
տել իրականութեան ճիշտ ըմբռնմանը:

Վերջապես, մեկ առանձնահատկութիւն ևս: Միջնադար-  
յան գրողի աչքում պատմութիւնը զարգանում է ուղիղ գծով,  
առանց շեղումների, դա մեկը մյուսին փոխարինող անցքե-  
րի շարան է: Զուգահեռականութեան գաղափարն ընդհանուր  
առմամբ նրան խորթ է, տվյալ պահի հետ նա կապում է  
միայն մեկ երևույթ: Դեպքերը կարող են տեղի ունենալ տար-  
բեր վայրերում, Հայոց երկրում, Վիրքում, Աղվանքում, Ար-  
յաց աշխարհում, Հունաց կողմերում, բայց պատմիչի համար  
դրանք չեն կարող կատարվել միաժամանակ: Սովորաբար  
նա հտ ու առաջ չի վազում, այլ շարադրում է երևույթները  
հաջորդաբար և դրանով իսկ դրսևորում պատճառ-հետևան-  
քային կապերի իր հասկացութիւնը: Բայց պատմական այդ  
մոդելը, որի հիմքում ընկած է երևույթների գծային զար-  
գացման գաղափարը, հաճախ չի համընկնում իրականու-  
թեան հետ, և ժամանակակից հետազոտողը նրա մեջ մտցնում  
է իր ուղղումները:

Վերադառնանք, սակայն, բուն անցքերի մեր ընդհատված  
շարադրութեանը: Պարսից բանակում կային տարբեր երկըր-  
ներից եկած քրիստոնյաներ: Իմանալով հայ նախարարների  
ուրացութեան մասին, նրանք ծանր վշտի մեջ ընկան, հան-  
դիմանեցին նրանց, պախարակեցին նաև նախարարների հետ  
եղած քահանաներին (այն խոսքերը, որոնք Եղիշեն դնում է  
նրանց բերանը, ճարտասանութեան ընտիր օրինակներ են):

Հողերականները, — պատմում է հեղինակը, — շղիմացան այդ մեղադրանքներին, հեռացան նախարարներից և անհնարին համարելով թաքցնել լուրը՝ սուրհանդակ ուղարկեցին Հայաստան: Հայերի արձագանքի մասին խոսելիս Եղիշեն, թրվում է, պիտի հատկապես ընդգծեր առաջացած անխուսափելի հուսահատությունը: Մինչդեռ նա պատմում է միայն այն գործնական քայլերի մասին, որոնց դիմեցին բացահայտ դիմադրության պատրաստվող մարդիկ: Եպիսկոպոսները ցրվեցին ամեն մեկն իր իշխանությունը, հաղորդում է պատմիչը, քորեպիսկոպոսները սկսեցին շրջել գյուղերը, ազարակները, լեռնային գավառների ամրոցները: «Ռդեցին, հավաքեցին մեծ բազմություն մեր և կին, շինական և ազատ, քահանա և միայնակյաց-խրատեցին, ամրապնդեցին, և բոլորին Քրիստոսի զինվոր դարձրին»: Այդ որոշումը ընդունված է եղել եպիսկոպոսների ժողովի կողմից (որին և ավետել էր ուրացության ծանր լուրը Պարսկաստանից եկած գուժկանը). նույն ժողովը դիմեց հետևյալ կոշով. «Հարազատ եղբոր ձեռքը թող բարձրանա այն մերձավորի դեմ, որ դուրս է եկել աստծու պատվիրանի ուխտից. հայրը շինայի որդուն, և որդին շակնածի հոր պատվից: Կինը կռվի իր ամուսնու դեմ, և ծառան դիմադրի իր տիրոջը: Աստվածային օրենքը թագավորի ամեն բանում, և նույն օրենքից հանցավորներն ըստանան իրենց դատապարտությունն ու պատիժը»: Արձագանքելով այդ կոշին, ասում է պատմիչը, զինվեցին ոչ միայն տղամարդիկ, այլև կանայք [Եղ., էջ 57]:

Ինչպես պատմության բազմաթիվ այլ հատվածներում, այնպես և այստեղ Եղիշեի շարադրանքը չի կարելի բառացի հասկանալ: Նկարագրությունները շատ անգամ ճարտասանական բնույթ ունեն: Բայց էականի վերաբերյալ կասկածելու հիմք չունենք: Իմանալով նախարարների ուրացության մասին, անմիջապես կոահելով դրա հետևանքները, հայերը պատրաստվեցին դիմադրության: Նրանք ասես վաղուց էին ընտելացել ապստամբության գաղափարին:

Այդպիսին է եղել հայրենի երկիրը ըստ Եղիշեի, երբ նախարարները վերադարձան պարսից մայրաքաղաքից, վերա-

դարձան «ողջք և ոչ ողջք, կենդանի կիսամեռ» [Ղազ. Փարսյ., էջ 55. 34—35]: Հաղորդելով այդ մասին, Ղազար Փարսյեցին սպարապետի կյանքից մի միջոցեպ է պատմում, որի մասին Եղիշին պահպանում է կատարյալ լուսթյուն: Ղազարի ասելով, Հայաստանում իբր նոր պիտի իմանային ուրացության մասին: Նորեկներին դիմավորում են հոգևոր երգերով, բայց երբ պարզվում է նրանց ուրացությունը, ողբ ու ճիշ է լսվում, հարազատները հեռանում են նրանցից և այլն: Նախարարները, որոնք դիմել էին այդ քայլին «պատճառանօք և ոչ ճշմարտութեամբ», ուզում են տեղնուտեղն ինքնասպան լինել:

Մինչդեռ մոգերը կրակ էին վառում եկեղեցիներում և նոր ատրուշաններ հիմնում: Տեսնելով այդ, Վարդան Մամիկոնյանը հավաքում է իր ողջ գերդաստանը, խոստովանում, «բ իրապես չի հրաժարվել իր աստծուց, ուրացել է «պատճառանօք», այսինքն առերես: Այժմ այդ քայլի դիմաց նա ուզում է թողնել ամեն ինչ և գնալ «յօտարութիւն» (դեռևս Տիգրանում «յօտարութիւն» գնալը նախարարները դիտում էին որպես փրկության ճանապարհներից մեկը [Ղազ. Փարսյ., էջ 50. 12—13]): Ով որ ցանկանում է, շարունակում է իր խոսքը Մամիկոնյան տերը, թող միանա նրան: Մերձավորները համաձայնություն են հայտնում, սպարապետը ամբողջ գերդաստանով անկցնում է Բագրկանդ գավառի Արաքման գյուղը, որպեսզի այնտեղից շարժվեն դեպի Հունաց աշխարհը: Այդ մասին իմանում են մարզպան Վասակը և մյուս նախարարները: Առանց ազգի առաջնորդի, մտածում են ներանք, մեր Հայոց աշխարհին ոչ մի գործ չի հաջողվի: Սպարապետին անհրաժեշտ է վերադարձնել: Նամակներ են գրում, ավետարանի վրա երգվում և մի պատշաճ պատվիրակություն ուղարկում Արաման գյուղը: Վարդանին համոզում են ոչ միայն մնալ երկրում և միանալ ընկերներին, այլև, «վաղվաղակի յայտնել զիրս ապստամբութեան»: Վարդանը տատանման մեջ է, չի կարող մոռանալ Մամիկոնյանների նրկատմամբ հնում ցուցաբերած անարդարությունը, անհանգիստ է ընկերների, հատկապես պատանդ մնացած Աշուշա

բղեղխի և Վասակի երկու որդիների համար: Բայց նահատակութեան ցանկութունը վեր է ամեն ինչից, և սպարապետը որոշում է մնալ: Գարնան վերջին նա տեղափոխվում է Մաղկուտն (Մաղկոտն) գավառի Անգղ ամրոցը և ամբողջ ամառն անցկացնում այնտեղ [Ղազ. Փարպ., գլ. ԻԹ—ԼԱ]:

Ղազար Փարպեցու շարադրանքը (որի վավերականութունը դժվար թե կասկածի տեղիք տա) կարևոր մի բաց է լրացնում ապստամբության պատմության մեջ: Եղիշեի լուծվումն այդ հարցի շուրջ պատճառաբանված է պարզապես պատմիչի անտեղյակութեամբ, Մամիկոնյանների պատմությանը նրանց ջատագով Ղազարն ավելի լավ է ծանոթ: Մամիկոնյաններից մեկը՝ Վասակը, բյուզանդական Հայաստանում «սպարապետ» է եղել: Մամիկոնյաններն, այսպիսով, հենարան են ունեցել նաև արևմուտքում: Հետագա դարերում ևս նրանք սերտորեն կապված են եղել Բյուզանդիային, ծառայել նրան, իսկ Մամիկոնյան կանանցից մեկը դարձել էր անգամ կայսրուհի: Զարմանալի չէ, որ ողբերգական ապրումներից հետո հայրենիքում շտեմնելով որևէ հեռանկար, Վարդանն իր ամբողջ գերդաստանով որոշել էր քաշվել Հունաց կողմերը:

Ասացինք, որ նախարարների ուրացութունից հետո Հազկերտը մի մեծ բանակ ուղարկեց Հայաստան, որի հետ եղել են 700 մոգեր իրենց մոգպետներով: «Ուսուցիչների» պարագլուխ է եղել մի մոգպետ՝ մեծ իշխաններից: Այդ զորքը Հայաստան մտավ նախարարների գլխավորությամբ: Հենց այդ բանակը, ավելի ճիշտ՝ նրա մի մասը նկատի ունի Եղիշեն, պատմելով Անգղում տեղի ունեցած դեպքերի մասին: Հայոց գունդը, ասում է պատմիչը, «չորրորդ» ամսում հասավ Անգղ գյուղաքաղաքը, նրանց հետ են եղել նաև մոգերը: 25 օրից ժամանեց մոգպետը, որպեսզի քանդի եկեղեցու դռները (ավելացնենք՝ ներսը կրակ վառի, տաճարը պղծի): «Իսկ սուրբ Ղևոնդ երեցը առաջին խորհրդակիցների հետ միաբան այնտեղ պատրաստ գտնվեց: Թեպետև լավ տեղյակ չէր բոլոր նախարարների մտադրություններին և ոչ էլ մոգպետի ուժին ու զորությանը, ամենևին չսպասեց բոլոր եպիս-

կոպոսներին և նույնիսկ մի քիչ էլ չհամբերեց ու շնորհեց անօրին իշխանին, այլ մեծ աղմուկ ու տագնապ առաջացրեց զորքերի և մոգերի մեջ: Որովհետև դապանակները ձեռքներն առած՝ մոգերի և մոգպետի գլուխները ջարդեցին, բուրդին փախցրին իրենց կացարանները, իսկ իրենք պաշտամունքը վերսկսելով եկեղեցում՝ կիրակնօրյա կարգն էին կատարում, շարունակելով այն ամբողջ նույն կիրակի օրը» [Նդ., էջ 58]:

Թվում է, որ Ղազար Փարպեցու մոգերի կոտորածի մասին պատմածը վերաբերում է նույն դեպքերին: Հեղինակը հաղորդում է, որ Վարդան Մամիկոնյանը ժամանում է Մաղկոտն գավառը և բանակ դնում Անգղ բերդի մոտերքում: Այնուհետև նրա և մյուս նախարարների միջև համաձայնություն է հաստատվում՝ ապստամբել: Հատուկ գրություն են կազմում, դաշինքը կնքում իրենց մատանիներով, դնում ավետարանի մեջ, եպիսկոպոսներին և մյուս հոգևորականներին ի պահ հանձնում: Մտնում են եկեղեցի աղոթելու, այդ ժամանակ ռամիկ զորականները, շսպասելով ավազների հրամաններին, վազում են դեպի մոխրանոց (կրակի տաճար կամ բազին, ատրուշան), կրակը ջուրը գցում, մոգերին մեկ օր պահում, իսկ առավոտյան տանում Զարեհավան գյուղը և սպանում [Ղազ. Փարպ., էջ 62—63]:

Շարադրությունից երևում է, որ Անգղը և Զարեհավանը իրար մոտ են եղել: Ս. Երեմյանի կազմած քարտեզի վրա դրանք նշված են կողք կողքի<sup>13</sup>: Տեսանք որ, ըստ Նդիշեի, մոգերի ջարդը տեղի է ունեցել Անգղում, իսկ Վասակի դատավարությունը նկարագրելիս պատմիչը գտնում է, որ մարդպանը Զարեհավանում մոգերի սպանությանը մասնակից է եղել: Այլուր նա ոչ Զարեհավան է հիշում, ոչ էլ մոգերի սպանություն:

Եթե նույնացումը ճիշտ է, եթե պատմիչները նույն դեպքերի մասին են հաղորդում, ապա հասկանալի է դառնում, թե ինչն է նկատի ունեցել Նդիշեն, նշելով «Հայոց գնդի» գալուստը: Դա եղել է հայոց այն զորքը, որը Անգղ էր ժամանել Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ:

Մոզերը հայերի աչքում եղել են «սուտ վարդապետներ»։  
նրանք են մարմնավորել այն նոր քաղաքականությունը, որին  
ձեռնամուխ էր եղել պարսից արքունիքը։ Մոզերից խորշում  
էին, կանայք թույլ չէին տալիս, որպեսզի երեսաները նրան-  
ցից դասեր առնեն։ Անգամ առերես զրադաշտություն ընդու-  
նած, բայց սրտի խորքում քրիստոնյա մնացածները («պատ-  
ճառանօք կարծեցուցանէին զինքեանս ուրացողս») թույլ  
չէին տալիս, որ նրանք իրենց ներկայությամբ հաց ուտեն։  
Մոզերը չէին կարող թողնել երկիրը և փախչել, իսկ մնալը  
դարձել էր անտանելի և կորուստ էր գուշակում։ Այդ վիճա-  
կում մնում էր մի ելք՝ գաղտնի հաղորդել հայերի ապստամ-  
բության մասին [Ղազ. Փարպ., էջ 60. 24—34]։

Մեր պատմիչների բովանդակալից շարադրանքը հնա-  
րավորություն է տալիս պատկերացում կազմելու ապստամ-  
բության ընթացքի, նրա հիմնական դեպքերի, առանձին  
երույթների կապի մասին։ Սակայն ժամանակագրական  
ատաղձը այնքան էլ պարզ չէ։

Եղիշեի ժամանակագրական տվյալների վրա մենք պետք  
է հատուկ կանգ առնենք։ Հեղինակը մի շարք երևույթներ  
թվագրել է Հազկերտ Բ-ի թագավորության տարիներով։  
Հայտնի է, որ Երկրի պտույտը Արևի շուրջ տևում է 365 օր,  
5 ժամ, 48 րոպե և գրեթե 46 վայրկյան։ Պարսից տարին  
ունեցել է 12 ամիս (յուրաքանչյուրը՝ 30 օր) և 5 օր, ընդա-  
մենը 365 օր։ Լինելով իրական տարուց կարճ, այն ամեն  
տարի ետ է նահանջել մոտավորապես 6 ժամով, 4 տարվա  
ընթացքում նահանջը կազմել է 1 օր, 120 տարին մեկ՝ տար-  
բերությունը պիտի դառնար մեկ ամիս, իսկ մեր 1660 տա-  
րիներին կհամապատասխաներ պարսից 1661 տարվա ժամա-  
նակամիջոցը։ Իսկական և շարժական տարիների անհամա-  
ձայնությունը վերացնելու համար ժամանակ առ ժամանակ  
հավելյալ ամիս էին մտցնում, որից հետո տարբերությունը,  
քնականաբար, սկսում էր կրկին աճել։ Պետք է ասել, որ այդ  
հավելյալ ամիսների գործառնությունը մեզ քիչ է ծանոթ,  
գիտելիքները հենվում են բավական անորոշ տվյալների վրա։  
Արաբական տեղեկություններից հայտնի է, որ Սասանյան-

ների իշխանության շրջանում վերջին ուղղումն իբր տեղի է ունեցել Հազկերտ Ա-ի (339—421), օրոք:

Շարժական է եղել նաև հայոց տարին, պասկականի պես ունեցել է 12 ամիս և 5 ավելյաց օր, ընդամենը 365 օր: Միակ տարբերությունն այն է եղել, որ սկսվել է պարսկականից 5 օրով ուշ:

Գիտությունը վաղուց ի վեր պարզել է այդ շարժական և մեր անշարժ տոմարների հարաբերությունը, ճշտված են նաև սասանյան թագավորների գահակալության տարիները (գահակալության տարին՝ տոմարական հասկացություն է, այն կարող է չհամընկնել գահը գրավելու իրական ժամկետի հետ): Եղիշեի երկում եղած տվյալների շնորհիվ մենք հաստատ գիտենք, որ նախարարները Տիգրոն են կանչվել 450 թ.: Գիտենք նաև, որ նրանք տեղ են հասել Զատիկի շաբաթ օրը, որը ճշտվում է առանց դժվարության՝ 450 թ. Զատիկը եղել է ապրիլի 16-ին, կիրակի, ուստի շաբաթն ընկել է ապրիլի 15-ին:

Թագավորական հրովարտակում ասված է եղել, որ «նավասարդից նավասարդ» տևող ժամանակամիջոցում քրիստոնեությունը պիտի տեղի տա կրակապաշտությանը: Նավասարդը՝ հայոց տարվա առաջին ամիսն է, 450 թ. սկսվել է օգոստոսի 6-ին: Գիտության մեջ այն կարծիքն է իշխում, որ հայերին մեկ տարվա ժամկետ է տրված եղել: Սակայն ավելի հավանական է, որ այդ բանաձևը էպիկական երանգ ունի, հայերը ողջ տարին, այսինքն մշտապես պիտի հետևեն կրակապաշտության օրենքներին: Հակառակ դեպքում անհասկանալի է, ինչու՞ պիտի նշվեր դավանափոխության սկիզբը, բավական էր կարգադրություն անել ավարտման ժամկետի վերաբերյալ: Այն էլ ասենք, որ հրովարտակը մեջ է բերված ոչ թե իր իսկական ձևով, այլ աչքի ընկնող փոփոխությամբ: Զրադաշտականի կողմից ստորագրված թղթում անհնարին կլինեին այնպիսի դարձվածքներ, ինչպես «սուրբ տաճարներ», «նվիրյալ սպասներ», «անսուտ մարգարեներ» և այլն (բոլորը վերաբերում են քրիստոնյա հավատին):

Հայաստան առաքված մոզերին ժամկետ է տրված եղել՝ վեցերորդ ամիսը: Համարենք, որ դա պարսկական Շահրևար ամիսն է, որը սկսվել է 450 թ. դեկտեմբերի 29-ին և ավարտվել հունվարի 27-ին:

Այնուհետև Եղիշեի մոտ կտեսնենք, որ ամբողջ Քաղոց ամիսը հայերը պիտի անցկացնեն պահքով և աղոթքով, իսկ հաղթության տոնը՝<sup>14</sup> խառնեն Քրիստոսի հայտնության տոնին: Եկեղեցու տոները լինում են շարժական և անշարժ: Զատիկի տոնը շարժական է, ամեն տարի այն որոշվում է հատուկ հաշվումներով (V դ. հայերը հաշիվը կատարել են, ըստ էության, համաձայն հուլյան, «հին» տոմարի), իսկ Հայտնությունը՝ անշարժ, նշվել է հունվարի 6-ին: Քաղոցը՝ հայոց տարվա հինգերորդ ամիսն է, սկսվել է 450 թ. դեկտեմբերի 4-ին, ավարտվել 451 թ. հունվարի 2-ին: Այսպիսով, Քաղոց ամսվա և Հայտնության տոնի նշումները իրար լավ են բռնում: Եղիշեի և Ղազար Փարպեցու մի շարք նշումներից երևում է, որ պատերազմական գործողություններն Աղվանքում իսկապես ձմռանն ավարտվեցին:

Բայց դրանից առաջ Եղիշեի Պատմության մեջ գտնում ենք ևս մի ժամանակագրական վկայություն: Հայոց գունդը բոլոր օգնականներով և բազմաթիվ մոզերով Անգղ մտավ «չորրորդ ամսում»: Վերևում պարզեցինք, որ խոսքն այն գնդի մասին է, որը Հայաստան ժամանեց ուրացող նախարարների հետ և այն մոզերի, որոնք Հազկերտի հրովարտակի համաձայն պիտի զրադաշտություն հաստատեին Հայոց երկրում: Անցավ 25 օր, և Անգղ գյուղաքաղաքը ժամանեց ինքը՝ մոզպետը: Մոզպետի գալստյան օրը տեղի ունեցավ Ղևոնդ երեցի և զայրացած ամբոխի ելույթը, որն ավարտվեց մոզերի կոտորածով:

Եթե «չորրորդ» ամիս ասելով Եղիշեն նկատի է ունեցել Հայոց Տրէ ամիսը, ապա 450 թ. այն սկսվել է նոյեմբերի 4-ին, ավարտվել դեկտեմբերի 3-ին: Եթե դա պարսից Տիր ամիսն է, ապա սկսվել ու ավարտվել է 5 օր առաջ: Ինչպես էլ որ հաշվելու լինենք, ստացվում է որ Անգղի ելույթը տեղի է ունեցել ոչ շուտ, քան նոյեմբերի վերջերին, սակայն նույն

հավանականությամբ այդ ժամկետը հնարավոր է տեղափոխել դեկտեմբերի մեջ: Իսկ հունվարի 6-ին հայերը արդեն նշում էին Վարդան Մամիկոնյանի հաղթանակը Աղվանքում: Ստորև կտեսնենք, որ այդ երկու ժամկետների միջև այնքան դեպքեր են եղել, որ անգամ մեկ ամսվա տևողությունը բավական չէր լինի դրանք ընդգրկելու: Ավելին, ըստ Եղիշեի, Անգղի դեպքերից հետո հայերը մի հրովարտակ են ուղարկում բյուզանդական Քեոզոս կայսրին: Դեսպանները ընդունվում են կայսեր կողմից և ինչ-որ ժամանակ հետը բանակցություններ վարում: Մինչդեռ, Քեոզոսը վախճանվել է հուլիսի 28-ին: Ինչպե՞ս համաձայնեցնել այդ փաստը և «չորրորդ» ամսվա հիշատակությունը: Եղիշեն սխալվել չէր կարող, հակասությունն ակնհայտ է: Այդ շրջանի դեպքերը նկարագրելիս, նա օրերով է հաշվում ժամանակը [Եղ., էջ 70. 13, 80. 8]: Մնում է ենթադրել, որ սույն տեղում բնագիրը աղճատված է, «չորրորդի» փոխարեն մի ուրիշ բառ է եղել, ասինք հայկական մի որևէ ամսվա անուն: Այսպես թե այնպես պարզ է, որ Անգղի դեպքերը նոյեմբեր-հոկտեմբերով թվագրել անհնարին է, դրանք պիտի տեղի ունեցած լինեին ամիսներ առաջ: Ղազար Փարպեցու տվյալները հաստատում են այդ միտքը: Նրա ասելով, մոզերի գործունեությունը Հայաստանում սկսվել է արդեն գարնանը, գարնանն է վերադարձել նաև Վարդան Մամիկոնյանը, իսկ Անգղի ընդհարումը եղել է շոգ ամիսներին («հասեալ ամիսը տօթոյն ջերմութեան»)՝ հենց այդ ժամանակ է Անգղին մտեցել սպարապետը: Ամառը մնացել է նույն Անգղում («դադարէին անդէն զաւուրս տօթոյն»), ապա մասնակցել Աղվանքի պատերազմական գործողություններին [Ղազ. Փարպ., 60. 18—19, 63. 8]<sup>15</sup>:

Անգղում հայերն առաջին անգամ բացահայտ կերպով դիմադրեցին պարսից իշխանությանը: Ապստամբության գաղտնի ծրագրերն իրականացվում էին առանց հեղինակների անմիջական մասնակցության: Այդ առաջին, տարերային բնույթ կրող ելույթը կարծես սարսափեցրեց հայերին: «Հայոց աշխարհի բոլոր կողմերից տղամարդկանց ու կա-

նանց մեծ բազմութիւնն հասավ նույն տեղը: Պետք էր տեսնել, թե ինչպիսի աղետալի իրարանցում ընկավ. ոմանք աղբյուրի պես հորդ արտասուք էին թափում իրենց աչքերից. ուրիշները բարձր ճշալով կարծես թե երկինք էին դողացնում, իսկ կեսն էլ խիզախելով ու դեպի գննքը վազելով՝ նախընտրում էին մեռնել, քան թե ապրել...» [Եղ., էջ 58. 21—59. 4]: Բայց պոռթկումը կայացել էր, նահանջելու ուղի այլևս չկար: Ո՞վ պիտի առաջնորդեր ապստամբ հայրենակիցներին:

Հայաստանի քաղաքական հորիզոնում երկու անձնավորութիւնն կար, որոնք կարող էին գլխավորել սկսած շարժումը՝ սպարապետ Վարդան Մամիկոնյանը և մարզպան Վասակ Սյունին: Ասացինք, որ Վարդանը հրաժարվեց գաղթելու մտքից, մնաց երկրում: Ապաշխարելով, կրկին ճանաչվեց քրիստոնյա: Մոգերի ջարդն Անգղում ու Զարեհավանում միջադեպ է եղել, կրակապաշտութիւնի բռնի տարածումը շարունակվում էր: Ճիշտ է, մոգպետին տագնապ էր պատել, ուղեցել էր իբր հայտնել արքունիքին, որ մոգութիւնն հաստատումը Հայաստանում անհույս բան է, այդ երկրում կարելի է հասնել ինչ-որ նպատակի միայն քաղցր խոսքով<sup>16</sup>: Այնուամենայնիվ, Վասակը Եսկսեց մոգեր բաժանել նախարարների տները և մեծամեծ ոռճիկներ նշանակել, կենդանիներ զոհել և բռնութիւնով ստիպել կնքված մարդկանց, որ զոհված միս ուտեն և արեգակին երկրպագութիւն տան: Մեկ օր էլ փշտիպանների<sup>17</sup> կանաչք հանգցրին եկեղեցու ճրագները և հարձակվեցին կույսերի վրա [Եղ., էջ 64. 23—65. 4]: Ատրուշաններ կանգնեցրին Արտաշատում և Հայոց աշխարհի այլ տեղերում: Հետագայում, երբ երկիրն արդեն խաղաղվել էր, մի շարք անվանի եկեղեցականներ խիստ տուժեցին այդ ատրուշանները քանդելու և կրակի պաշտոնյաներին հալածելու համար [Եղ., էջ 129—130]: Մոգերն ապավինել են այն զորագնդին, որը եկել էր Պարսկաստանից, հարկավոր էր այդ ուժը ապստամբների կողմը քաշել կամ առնվազն չեզոքացնել: Եպիսկոպոսները, ասում է Եղիշեն, աղաչում էին Վարդան Մամիկոնյանին (որն, ըստ երևույթի, գնդի հետ էր) դիմել կտրուկ միջոցների: Այդ կոչին

արծազանքեցին նաև մյուս նախարարները՝ «ոչնչի տեղ դրին արքունի պարզենները և ոտնատակ տվին ահռելի հրամանները»։ Իրենց զորամասերով շրջապատեցին բանակը, շատերին կոտորեցին, էլ ավելի շատերին երևելի մարդկանցից կապեցին և ամուր բերդերում բանտարկեցին իրենց իշխանության տակ։ Եվ բանակի կողոպուտը, թալանն ու ավարը մի տեղ ժողոված պահում էին իբր թագավորի հրամանով» [Սղ., էջ 65—66]։ Ձերբակալեցին նաև մարզպանին, շարունակում է Եղիշեն, Վասակն ապաշխարեց, երդումներ տվեց և այսպիսով միաբանեց նրանց, որոնք հրաժարվել էին ճանաչել պարսից իշխանությունը և դուրս էին եկել նրա դեմ։

Ղազար Փարպեցին այլ կերպ է ներկայացնում իրավիճակը. նա ոչինչ չգիտի մոգերի հենարան բանակը գրոհելու մասին, իսկ միաբանությունը Վասակի հետ ներկայացնում է որպես խաղաղ մի գործողություն [Ղազ. Փարպ., գլ. 17]։ Բայց երկու հեղինակների ասածը էականում համընկնում է. Վարդան Մամիկոնյանն ապստամբների շարքերում է, նրան է միացել (կամա թե ակամա) նաև Վասակ Սյունին։ Ըստ երևույթին, հենց այդ շրջանում Վարդանին ընտրեցին գլխավոր ղեկավար։ Ավարայրի նախօրյակին նա կհիշեցնի իր մարտակիցներին՝ դուք ձեր կամքով և հոժարությամբ կարգեցիք ինձ առաջնորդ և զորագլուխ [Սղ., էջ 101. 19—20]։

Շարժումն ավելի ու ավելի էր ծավալվում։ Գուրս շալըրտելով պարսիկներին, ապստամբները գրավեցին Արտաշատը, Գառնին, Անին\*, Արտազերսը և մի շարք այլ ավաններ, նրանց շրջապատող գյուղերով և ագարակներով։ Զայրույթն ուղղված է եղել ոչ միայն եկվորների դեմ։ Եղիշեն ասում է, որ «տղամարդկանց ու կանանց գերի տարան իրենց գույքերով ու ստացվածքներով, թանկագին գանձերով ու կահավարասիով։ Տապալում-քանդում էին նրանց շենքերը և հրկիզում էին կրակի պաշտամունքի տեղերը»։ Խոսքն, անշուշտ, կոապաշտություն ընդունած տեղացիների մասին է.

\* Ապագա հռչակավոր մայրաքաղաքի առաջին հիշատակությունն է հայ գրականության մեջ

սպստամբական շարժումը գնալով կրում է քաղաքացիական սպտեհրազմի բնույթ:

Այդ բոլոր ելույթներին պիտի մասնակցած լինե՞ր սպարապետը, բայց առայժմ նա կարծես մնում է ստվերի մեջ, առաջնությունը գիշում մարզպանին: Իսկ մարզպանը շատ բարդ խաղ է վարում: Համոզում է, որպեսզի սպարապետը մնա երկրում, գաղտնի ծրագրերին է մասնակցում: Կամավոր կերպով թե ճնշման տակ՝ ապաշխարում, և եկեղեցին, հանելով իր բանագրանքը, նրան կրկին քրիստոնյա է ճանաչում: «Մարզպանն, ասում է Եղիշեն, խառն էր մոգերի կոտորածին Զարեհավանում», բայց դա պարզվում է միայն հետագայում, երբ Վասակ Սյունին կանգնեց դատական ատյանի առջև: Որպես վկա ներկա էին հենց կապանքներից ազատված մոգերն ու փշտիպանները: Նրանք հաստատեցին՝ «այն բոլոր անցքերն ու շարշարանքները, որոնք անցան մեր գլխով, և այն բազմաթիվ հարվածները, որ թափվեցին արքունի զորքի վրա, և Հայոց աշխարհի ավերն ու գերությունը, այլև արքունի հարկերի կորուստը, — այդ բոլոր շարիքների սկզբնապատճառն ու առաջնորդն այդ մարդը եղավ» [Եղ. էջ 132—133]: Վասակին մեղադրում էին, որ գող դուրս եկավ, յուրացրեց այն հարկերը, որոնք պիտի տանեին Պարսկաստան: Սակայն այդ բոլորը պարզվեց հետագայում, առայժմ մարզպանը (գոնե արտաքնապես) մնում է արքունիքի հավատարիմ ծառա: Ինքն է համոզում մոգպետին դիմել (Անգղից հետո) կտրուկ միջոցների: Ասացինք, որ մոգերին բաժանեց նախարարների տները, իր դիրքն ապահովելու համար Սյունիքից կանչեց իրեն ենթակա զորականներին (ըստ Զորանամակի, նրանց ընդհանուր թիվը եղել է 19. 400), պահանջեց, որպեսզի Աղվանքում եղած 10.000-ոց այրուձին՝ ձմեռն անցկացնի Հայոց երկրում. սեփական ուժերի և Աղվանքից սպասելի զորքի օգնությամբ մտադիր էր անպահովել մոգության տարածումը:

Մարզպանի հավատարմությունն առջևնիքին ինչ-որ չափով ապահովագրված էր՝ նրա երկու որդիները պատանդ էին մնացել Տիզբոնում (սրանց ապագա ճակատագիրն ան-

հայտ է): Բայց Սյունյաց իշխանը անձայն մերժում է ստրուկի դերը, հակառակ սպասածին, ինքն է թելադրում մոգպետին, թե ինչ է հարկավոր անել ներկա պայմաններում:

Վասակը լի է եռանդով: Ասացինք, որ բանակցությունները Վարդանի հետ նրա նախաձեռնությամբ են եղել: Նա ջանք չի խնայում հայրենակիցներին քաշելու իր կողմը, ոմանց խաբում է գուլթով, ոմանց հորդորական խոսքերով, իսկ ուսմիկներին սպառնում-վախեցնում է [Ծղ., էջ 63. 23—24]: Արքունիքից շատ դրամ էր բերել և սրան-նրան կաշառում էր, իբր թե պարզև ու պատիվ է տալիս: Նախարարության մի զգալի մասը ենթարկվում է վասակին. մարզպանը փորձեց իրեն կապել նաև սպարապետին, կարծես այստեղ էլ հաջողակ գտնվեց:

Եղիշեն պնդում է, որ Վասակը «սրտանց էր ընդունել պարսկական կրոնը», իսկ եպիսկոպոսները խորշում էին ներքանից [Ծղ., էջ 62. 14—15, 63. 21—28, 64. 12—13, 20—21]: Այնուամենայնիվ, մինչև ձմեռ մարզպանն էր մնում Հայոց երկրի քաղաքական առաջին դեմքը: Նա պահպանեց իր դիրքն ինչպես այն շրջանում, երբ բացահայտ չէր միացել ապստամբությանը (և ամեն ինչ անում էր, որպեսզի ցրի արքունիքի հնարավոր կասկածները), այնպես էլ հետագա մի քանի ամիսների ընթացքում, երբ այդ կասկածները արդեն լիովին արդարացան:

Մինչ հետագա դեպքերին անդրադառնալը, մեկ անգամ ևս ընդգծենք V դ. ապստամբական շարժումների էական մի կողմը: Արդեն մի քանի անգամ առիթ ենք ունեցել ցույց տալու, որ սասանյան լծի տակ էին ընկել մի շարք ժողովուրդներ, որոնք ունեցել են սեփական դեմք, սեփական մշակույթ, ուստի և դիմադրել են արքունիքի համահարթող ուժին: Այդ տեսակետից հայերը, վրացիները, աղվանները նույն դիրքըն էին գրավել, շնայած դիմադրությունը տարբեր թափ էր ստացել, տարբեր հղանակով արտահայտվել: Դրացի ժողովուրդների ընդհանուր ճակատագրի գաղափարը առկա է Եղիշեի ստեղծագործության մեջ, բայց առավել ցայտուն այն դրսևորվել է Ղազար Փարպեցու մոտ, որն ականատես է եղել

նաև երկրորդ մեծ ապստամբությանը և ընդհանրացնելու առատ նյութ ունեցել: Նրա հեղինակած պատմության մեջ Հայք, Վիրք, Աղուանք երրորդությունը հանդիպում է ամեն քայլափոխում: Պարսից արքունիքը լավ էր ըմբռնել այդ միասնությունը, հասկացել էր նաև, որ թուլացնելով օղակներից մեկը՝ կթուլանա ամբողջ շղթան: Ուրվագծելով Արյաց աշխարհի նվաճումների ծրագիրը՝ Միհրնեբսեհ մեծ հազարապետը իբր ասել է Հազկերտ արքային. «Երբ Հայքը հաստատապես կլինի մերը, Վիրքն ու Աղվանքը մերն են ու մերը» [Ղազ. Փարպ., էջ 43. 8—9]: Պարսից ծրագրի տապալումը Հայաստանում ուղղակի թե անուղղակի թուլացրեց արքունիքի դիրքը նաև հարևան երկրներում: Բայց դրան նախորդել է լարված դիմադրություն, և այդ դիմադրության դրվագներից մեկը եղել է Վարդան Մամիկոնյանի պատերազմը Աղվանքում:

Հայերը շարունակում էին կործանել ատրուշանները և պատերազմել կրակապաշտություն ընդունած հայրենակիցների դեմ, երբ Հայաստան ժամանեցին Աղվանից երկրի հազարապետը և գլխավոր եպիսկոպոսը: Նրանք պատմեցին, թե հոների դեմ ուղարկված պարսից զորքը մտավ Աղվանք, նրան միացավ նաև արքունիքից եկած այրուձին: Աղվանից երկրում երևացին թվով 300 մոզեր և սկսեցին այն, ինչ որ միառժամանակ առաջ փորձեցին անել Հայաստանում՝ այսինքն կրակատներ հիմնել, պարսից կրոնը տարածել: Թագավորի հրամանով անհնազանդները ենթակա էին մահվան պատժի, իսկ նրանց կանայք ու որդիները պիտի աքսորվեին և ստրկական աշխատանք կատարեին արքունի կալվածքներում:

Ստանալով այդ լուրը, հայերը իրենց ուժերը բաժանեցին 3 գնդի: Առաջին գունդը հանձնվեց Ներշապուհ Ռմբոսյանին: Այդ գունդը շարժվեց դեպի Ատրպատականի սահմանները: Երկրորդ գունդը տվեցին Վարդան Մամիկոնյանին, որը Վրաց աշխարհով Գուգարքով պիտի անցներ Աղվանք<sup>18</sup>: Երրորդ գունդը մնաց Վասակ Սյունուն: Մարզպանը

մտադիր էր իր հայրենի Սյունիքից նեղել Աղվանք մտած պարսիկներին:

Վարդանը սկսեց շարժվել դեպի Աղվանք, սակայն մինչ այդ նա մասնակցեց կարևոր (չնայած և ապարդյուն) քաղաքական մի քայլի: Եղիշեն պատմում է, որ հենց այն ժամանակ, երբ հայերը ելք էին որոնում դրացիներին օգնելու համար, նրանք արևմուտք ուղարկեցին մեծ նախարարներից մեկին՝ Ատոմ Գնունուն: Ատոմը պիտի ներկայանար Քեոզուկայսրին, հաղորդեր արքայից արքայի չար մտադրությունների մասին, հավաստեք պարսիկներին դիմադրելու հայերի պատրաստակամությունը և, վերջապես, օգնություն և օժանդակություն խնդրեր: Պատվիրակը լիազորված էր կայսրին հայտնելու նրա ծառայության տակ մտնելու հայերի հոժարության մասին:

Ատոմը հրովարտակը հանձնեց կայսրին: Գրությունը կազմված է եղել Հովսեփ եպիսկոպոսի (և բազմաթիվ եպիսկոպոսների), մարզպան Վասակի, ներշապուհ Ռմբոսյանի, սպարապետի և բոլոր մեծամեծ նախարարների անունից: Նրանք փառաբանում էին կայսեր նախնիներին, ակնարկում Հռոմեական կայսրության գերագույն իշխանությունը Հայաստանի վրա, հիշեցնում, որ հայոց «Տրդատիոսը», փերկվելով իր հորեղբայրների ձեռքից, ապաստան էր գտել Հունաց երկրում և հույների օգնությամբ տիրացել իր աշխարհին: Քրիստոսի հավատն ընդունած է եղել Հռոմի եպիսկոպոսապետից, լուսավորել «հյուսիսի խավար կողմերը», իսկ այժմ «արևելքի խավարասեր որդիներն» ուզում են այդ երկիրը խլել: Հայերը դիմադրում են, ապավինելով հույների պաշտպանությանը, զգուշացնում, որ եթե օգնությունն ուշանա, «գուցե այս կրակի բոցը ուրիշ շատ աշխարհների էլ հասնի» (վերջին խոսքերով ակնարկում էին, որ նույն վտանգը կարող է սպառնալ նաև Հունաց երկրին)<sup>19</sup>:

Ատոմ Գնունու դեսպանությունը որևէ արդյունք չունեցավ: Քեոզուկայսրը տատանումների մեջ էր, փորձում էր, ասում է հեղինակը, խաղաղ միջոցներով ապահովել արևել-

քի եկեղեցիները: Բայց շուտով նա մեռավ, և օգնութիւնը խափանվեց:

Քեոզոսին հաջորդեց Մարկիանոսը. սա դիմեց մեզ արդեն ծանոթ Անատոլիոսին և Եղիարիոս (կամ, ինչպես Փարպեցին է ասում՝ Փլորենտիոս) ասորուն, այդ «անարգների և վատթարների» խորհրդով ետ կանգնեց հայերի գործից, ավելին՝ դաշինք կնքեց պարսիկների հետ, խոստանալով շօգնել հայերին ո՛չ զորքով, ո՛չ էլ զենքով [Եղ., էջ 72—73]:

Այդ նույն դեպքերը Ղազար Փարպեցին ներկայացնում է մի փոքր այլ ձևով. երբ հայտնի դարձավ, որ պարսիկները մտել են Աղվանք, մարզպան Վասակը նրանց դեմ ուղարկեց Վարդան Մամիկոնյանին, իսկ ինքը սկսեց նամակներ հղել կայսրին և հունաց ողջ ավագանուն, ապա Բյուզանդական Հայաստանի իշխաններին և կողմնակալներին, Անտիոքի մեծ սպարապետին (այսինքն՝ Անատոլիոսին): Նամակները տարան Վահան Ամատունին, Վարդան Մամիկոնյանի եղբայր Հմայեակը և մի շարք այլ ազնվականներ (Ատոմ Գնունին այդ ցուցակում չկա) [Ղազ. Փարպ., գլ. 19]:

Ավարայրի ճակատամարտից հետո ապստամբներից շատերը հավաքվել էին Տաջրում և Հմայեակ Մամիկոնյանի ղեկավարութեամբ շարունակում էին դիմադրել պարսիկներին: Հեղինակը խոսում է 451 թ. երկրորդ կեսի անցքերի մասին: Նա հիշեցնում է, որ Հմայեակը կայսեր մոտ գնացած է եղել զորք խնդրելու, երկար ժամանակ մնացել Հունաց երկրում («ինչպես այդ մասին գրված է իր տեղում», — ավելացնում է հեղինակը, — վկայակոչելով անշուշտ իր աշխատութեան 19 գլուխը): Այնուհետև նա մոտավորապես նույն բանն է ասում, ինչ որ և Եղիշեն՝ Քեոզոսը ուզում է օգնել, բայց վախճանվում է, Անատոլիոսը և Փլորենտիոսը համոզեցին նրա հաջորդ Մարկիանոսին հրաժարվել որևէ օգնութիւնից, հավատարիմ մնալ պարսիկների հետ կնքած դաշինքին և այլն: Պատասխանն այնքան ուշացավ, որ պարսիկների և հայերի պատերազմն արդեն ավարտվեց: Հունաց աշխարհը գնացած տանուտերերը և նախարարները ոչ մի օգուտ չբաղեցին և վերադարձան, որպեսզի իրենց ընկեր-

ների հետ ըմպեն մարտիրոսութեան բաժակը [Ղազ. Փարպ., գլ. ԽԱ]:

Նամակի բովանդակութեանից և պատմիչների հաղորդումներից կարելի է անել ժամանակագրական կարևոր հետևություններ: Հայտնի է, որ Թեոդոսը վախճանվել է 450 թ. հուլիսի 28-ին, իսկ նրա հաջորդը կայսր է հռչակվել օգոստոսի 24-ին: Ժամանելով Բյուզանդիա, պատվիրակութունը ինչ-որ ժամանակ անց է կացրել մայրաքաղաքում դեռևս Թեոդոսի օրոք, բացի այդ՝ Այրարատից դեպի Կոստանդնուպոլիս ճանապարհորդութունը ժամանակ է պահանջել: Միավաճ շենք լինի, եթե ենթադրենք, որ խնդրո առարկա հրովարտակը ստորագրվել է Թեոդոսի մահվան օրվանից շաբաթներ առաջ, հունիսին կամ հուլիսի սկզբներին: Հենց այն ժամանակ էլ լուր էր եկել Աղվանքի ծանր կացութեան մասին, և հայոց զորագունդը վարդան Մամիկոնյանի ղեկավարությամբ սկսել էր արշավը դեպի հարևան երկիրը:

Հետագայում, երբ վասակը ներկայացավ դատական ատյանի առջև, ի թիվս մյուսների, հիշեցին նաև այդ հանցանքը: Դուրս գալով առաջ, Ատոմ Գնունին մարզպանին մեղադրեց «հենց այն հրովարտակով, որ նա տվել էր՝ կնքած իր մատանիով» [Եղ., էջ 133. 4—7]:

Ինչ վերաբերում է Ղազար Փարպեցու տարբերակին, ապա պատմիչը շփոթել է Թեոդորոս կայսեր անունով գրված հրովարտակը Բյուզանդիա ուղարկված մի ուրիշ թղթի հետ, որը ստորագրել էր մարզպանն անձամբ: Այդ մասին մենք դեռ կխոսենք, իսկ այժմ վերադառնանք Աղվանից աշխարհում վարդան Մամիկոնյանի գործերին:

Նրա հակառակորդը եղել է Սեբուխտ Նիխորական մարզպանը: Կանխելով հայոց զորքի շարժումը, նա թողեց ճորագահակն, անցավ Կուր գետը և մոտեցավ Աղվանից թագավորների ձմեռոց Խաղխաղին<sup>20</sup>: Պարսից ուժերը գերազանցում էին հայոց գունդը թե՛ քանակով, թե՛ սպառազինությամբ: Այնուամենայնիվ, հաղթանակ տարան հայերը, և դա առիթ եղավ, որպեսզի Եղիշեն, խիստ հետևելով վիպական կանոն-

ներին, փառաբանի հայ զորականների խիզախությունը [Եղ., էջ 75—77]:

Հայերը գրոհում էին Աղվանքի բերդերն ու քաղաքները, ուր փորձել էին ամրանալ պարսիկները, ջարդ տալիս մոգերին: Վերադարձան Կողվասյան լեռները փախած աղվանները՝ «նրանց հետ միաբան և հավասար մասնակցեցին քաջության գործին», — գրում է պատմիչը [Եղ., էջ 78. 5]: Հարձակում կատարեցին Հոնաց կամ Ճորա պահակի վրա, որը եղել է պարսիկների հենարաններից մեկը, գրավելով այն, այնտեղ նստեցրին Վահանին (պատկանել է Աղվանից թագավորների տոհմին):

Վահանը բանակցություններ սկսեց հոների հետ: Հոները պարսիկների համար մեծ վտանգ էին ներկայացնում, վտանգավոր էին նաև Բյուզանդական կայսրության համար: Բյուզանդացիք հատուկ գումար էին վճարում պարսից թագավորին, որպեսզի սահմանը ապահովի քոչվորների ներխուժումներից: Մինչդեռ նրանք շարունակ խախտում էին սահմանը: Եղիշեն ասում է, որ հենց այն ժամանակ, երբ հայերը հալածում էին իրենց հայրենիքում բուն դրած մոգերին, «աշխարհի արևելյան կողմից ոմանք հարձակվեցին Ատրպատական աշխարհի վրա և զանազան տեղերում մեծ վնասներ տվին՝ բազմաթիվ ատրուշաններ առնելով, ավերելով ու կործանելով» [Եղ., էջ 69. 18—21]: Արդյո՞ք այդ «ոմանք» հոներից էին: Այսպես թե այնպես, Վահանի դեսպանությունն ավարտվեց կատարյալ հաջողությամբ: Կողմերը դաշինք կընքեցին, ապստամբները հյուսիսից իրենց ապահովված զգացին: Եվ այդ ժամանակ պարզվեց, որ վտանգը բուն է դրել հենց իրենց հայրենիքում:

Վարդանն իր գորքով դեռևս Աղվանքում էր, երբ լուր հասավ, որ Վասակն անջատվել է, գրավել Հայոց երկրի միջնաշխարհը: Ստանալով այդ լուրը, սպարապետը շտապեց հայրենիք, 30 օրում կտրելով Աղվանքից Հայաստան տանող ճանապարհը: Իմանալով այդ մասին, Վասակը դիմեց փախուստի, ամրացավ Սյունիքում: Ձմեռ էր, թշնամին իր հետ տարել էր կամ ոչնչացրել պաշարը: Վարդանն իր զինվոր-

ներին տեղավորեց տարբեր գավառներում, իսկ ինքը մի քանի ավագ նախարարների հետ մնաց «Թագավորանիստ» տեղերում՝ ուստանում: Զորավարն ու բանակը սպասում էին գարնան օրերին, որպեսզի շարունակեն պայքարը դրսի թշնամու դեմ: Իսկ մարզպանի հետ ծագած ընդհարումը վերածվեց կատարյալ պատերազմի:

\* \* \*

Ինչպես 450—451, այնպես էլ 482—484 թթ. ապստամբութունները եղել են խոշոր շարժումներ, ընդգրկել մասնակիցների լայն զանգվածներ: Ապստամբների միասնությունն անհնարին էր. անհամաձայնությունը նպաստել էին և՛ տեղային առանձնահատկությունները, և՛ դասային բարդ կազմը, և՛ նախարարական տոհմերի միջև եղած մրցակցությունն ու թշնամանքը: Զարմանալի չէ, որ հերոսական պայքարի հետ մեկտեղ տեղի է ունեցել դավաճանություն, դասալքություն և այլն: Որչափ խոշոր է լինում պատմական երեւոյթը, նույնչափ սուր՝ նրան կից հակասությունները:

Բայց հակասությունների այդ հանգույցում նշմարվում է, այնուամենայնիվ, քաղաքական երկու հիմնական ուղղություն, որոնցից մեկը մարմնավորում էր Վարդան Մամիկոնյանը, մյուսը՝ Վասակ Սյունին: Պատմիչները դրանց կերպարները կերտել են այն շրջանում, երբ Վարդանանքն ավարտվել էր, նրա հետևանքները պարզվել, անցյալի վերաբերյալ հասարակական կարծիքը ձևավորվել: Եվ հետագարձ հայացք ձգելով դեպի անցյալը, պատմիչները դիտել են պատճառները, ինչ-որ չափով ելնելով դրանց հետևանքներից:

Վարդանի կերպարը պարզ է, հստակ: Մանուկ հասակից յուրացնելով Ս. Գիրքը, նա մեկ անգամ է միայն շեղվել նրա պատվիրանից, Տիգրոնում ուրանալով իր հավատքը: Վերադառնալով Հայոց երկիրը, զգալով իր հանցանքի ծանրությունը, որոշել էր հեռանալ Հունաց կողմերը, բայց մնացել էր հայրենիքում և ապա հետևողականորեն պայքարել պարսից իշխանութայն դեմ՝ ինչպես Հայաստանում, այն-

պես էլ Աղվանից աշխարհում: Նահատակվեց Ավարայրի ճակատամարտում, ճանաչվեց սուրբ և հենց այդ պսակով մուտք գործեց հայոց հին գրականութուն:

Սպարապետի համեմատությամբ, մարզպանի կերպարը շատ ավելի բարդ է: Սյունյաց քաջ իշխանի երբեմնի բնութագիրը «այր խորհրդական և հանճարեղ և յառաջիմաց, շնորհատուր իմաստութեամբն Աստուծոյ» [Կոր., էջ 62. 2—4], մոռացված է իհարկե ընդմիջտ: Տիգրանում Վասակի ուրացութունը եղել է սրտանց, Վարդանին միացել է իր կամքին հակառակ, Անգղի դեպքերից հետո շար մտքեր ներշնչել մոզպետին, ապա գաղտնի բանակցութուններ վարել պարսիկների հետ, ապստամբել Վարդանի դեմ, Ավարայրի ճակատամարտին մասնակցել հակառակորդի կողմից, այնուհետև արքունի դատի տրվել ու կյանքն ավարտել զնդանում: Սև գույնները խտացնելով, պատմիչները հավանաբար ձգտել են կերտել Վարդանի հակապատկերը, բայց դա նրանց չի հաջողվել: Նրանք կհասնեին իրենց նպատակին, եթե Վասակին ներկայացնեին որպես թագավորի դրածո, արքունիքի հլու կամակատար: Մինչդեռ Վասակն իր սեփական գիծն էր բռնել, և այդ կարևոր հանգամանքն արձանագրել են պատմիչները, նրանք, որոնց համար այդ գիծը եղել է միանգամայն մերժելի: Վարդանանց ապստամբության և սկիզբ առած քաղաքացիական պատերազմի անցքերը հասկանալու համար առավել կարևոր է ճիշտ մեկնաբանել Վասակ Սյունու բռնած դիրքը:

Մենք տեսանք, որ Վասակը սկսեց գործունություն ծավալել Տիգրանից անմիջապես հետո՝ Վարդանին պահեց երկրում: Ամենայն հավանականությամբ, նա անհրաժեշտ էր համարել արքունիքին ցուցադրել Հայոց երկրի ռազմական ուժը. առանց Մամիկոնյան սպարապետի, այն, անշուշտ, թերի կլիներ: Վարդանն, ըստ երևույթին, թերահավատ է եղել Վասակի նկատմամբ: Պատմիչներից յուրաքանչյուրը յուրովի է ներկայացնում, թե սպարապետն ինչպես ապստամբության որոշում ընդունեց, բայց երկուսի պատմածից

էլ պարզ է, որ նա շէր շտապում այդ մասին հայտնել մարգպանին:

Կանցնի մեկ թե երկու տարի, և դատավարութեան ընթացքում կպարզվի Վասակի մասնակցութիւնը Անգղի-Ջարեհավանի դեպքերին: Իսկ առայժմ մոզպետն ու մարգպանը միասին ելք են որոնում առաջացած ճգնաժամից դուրս գալու համար: Վասակը միջոցառումների ծրագիր է ներկայացնում, խոստանալով միաժամանակ երկփեղկել եկեղեցու ուխտը [Եղ., էջ 63. 9—10]: Իսկ երբ Վարդանը զորքով մեկնում է Աղվանք, Վասակն այդ մասին անմիջապէս հայտնում է Սեբուխտ մարգպանին, նշելով, որ սպարապետի զորքը փոքրաթիւ է, նրան դժվար չի լինի ջարդել: Եւ, վերջապէս, բանակցութիւններ է վարում մեծ հազարապետ Միհրընբերսեհի հետ, որը ժամանել էր Փայտակարան քաղաքը և այնտեղից էր հետևում ապստամբութեան ընթացքին: Միհրընբերսեհի անձնավորութեան, նրա մեծ ուժի մասին ասվեց վերևում: Այժմ, պարսից իշխանութեան համակարգում այդպիսի դիրք գրավող պաշտոնյան հավանութիւն է տալիս Վասակի գործունեութեանը, խրախուսում նրան, անգամ ակնարկում, որ Վասակին վայել է թագավորական վիճակի հասնել: Եւ ահա, մարգպանն ու թագավորը դառնում են դաշնակիցներ: Մարգպանը պիտի շեղոքացնի սպարապետին, իրացնի պարսից քաղաքականութիւնը Հայաստանում:

Եթե մենք մնանք թվարկված փաստերի սահմաններում, այսինքն հետևենք Եղիշեի սխեմային, ապա Վասակի բռնած նոր դիրքը պիտի բացատրենք վերջինիս ներքին հատկութիւններով, հրաժարվենք նրան որպէս քաղաքագետի դիտելու մտքից: Մինչդեռ նա խորամանկ և ճկուն քաղաքագետ էր, և նրա էվոլյուցիան ըմբռնելու համար հարկավոր է հաշվի առնել մի կարևոր հանգամանք, այն է՝ պարսից կառավարութեան ինչ-որ շափով փոխված քաղաքականութիւնը:

Իմանալով Հայաստանում և Աղվանքում տեղի ունեցած դեպքերի մասին, Հազկերտն իբր զղջացել էր, ամբողջ մեղքը դրել խորհրդատուների վրա և հայտարարել, որ ամեն մեկը կարող է հետևել իր նախընտրած դավանանքին, եր-

բեմնի իրավունքներն ու արտոնութիւնները վերականգնվում են: «Ամենևին մտքովս չեմ անցկացնի վրեժխնդիր լինել»: Ինչպես առաջները ճշմարտությամբ պահում էիք ձեր կրոնը, այսուհետև ավելի պահեցեք. միայն թե մեր ժառայութիւնից դուրս մի գաք» [Եղ., էջ 82—86]: Բայց Հազկերտը շուտով իմացավ, որ հոռոմները ոչնչով չեն օգնելու քրիստոնյաներին և վերադարձավ իր նախկին ծրագրերին:

Այսպիսով, ինչ-որ ժամանակ Հազկերտը հետ էր կանգնել իր հին նպատակից. թվում է, որ մարզպանը հենց այդ ալիքի վրա բարձրացավ: Ծիշտ է, Եղիշեն ասում է, որ Վասակը (ո՞րերորդ անգամ) ուրացավ քրիստոնյա հավատքի սկզբունքները, դարձավ սատանայի գործիք և այլն: Բայց ուշադրութիւն դարձրեք նույն Եղիշեի հետևյալ հատվածների վրա. «Եվ իր ամբողջ երկիրը լիովին ապստամբեցրեց և ուրանալ տվեց ոչ միայն բազմաթիվ աշխարհականների, այլև շատերին եկեղեցու սուրբ ուխտից, մանավանդ սուտ երեցնների միջոցով, որոնց ձեռքով գործում էր այն շարիքները ... Սրանց ուղարկում էր անմեղ մարդկանց մոտ, խաբում էր ու մոլորեցնում. երգվում էին սուրբ ավետարանով և ասում, թե՛ «Թագավորի կողմից ամենքին պետք է շնորհվի քրիստոնեութիւնը»: Եվ այսպես խաբութիւնով շատերին անջատում էին սուրբ միաբանութիւնից, տանում ու խառնում էին ուրացողների խմբերին» [Եղ., էջ 92. 14—22]: Աղատների և շինականների հետ միասին Վասակը իր ետևից էր տանում նաև նրանց, ովքեր միայն անունով էին քահանա [էջ 91. 24—25]: Այդպիսի «սուտ քահանաների» օգնութիւնով «խաբում ու մոլորեցնում էր ինչպես ճշմարիտ մարդկանցով, ավետարանն էր ուղարկում խաչի հետ միասին, և իր ամբողջ սատանայական ստութիւնը ծածկում էր նրանցով: Իրեն և բոլոր ուրացողներին աստվածապաշտների կարգն էր դասում. իրեն ավելի հաստատուն էր ցույց տալիս, քան ամբողջ Հայոց գործը. երգվում էր ու հաստատում և ցույց էր տալիս արքունիքից ստացած թողութիւնի բոլոր հրամանները» [Եղ., էջ 93. 18—22, 94. 1—2]: Վկայաբերված բոլոր օրինակներում մարդիկ ուրանում են, հետ կանգնում քրիս-

տոննությունից, բայց այդ բոլորը քահանայի միջնորդութեամբ, ավետարանի ու խաչի միջոցով:

Նույնն է հաղորդում նաև Ղազար Փարպեցին: Վասակ Սյունին նամակներ է գրում հայ իշխաններին, շինականներին և քահանաներին ասելով, որ արքայից արքան քրիստոննություն է շնորհել աշխարհին, իսկ մոգերի կոտորածի համար վրեժխնդիր չի լինելու, ապստամբությունը մոռանալու է, միայն թե դուք հետ կանգնեք Վարդանի խրատներից ու խոսքերից, որ նրա հետ միասին չկորչեք: Վասակը որոշում է նաև իր դերը՝ «Ես այս բոլորի միջնորդն եմ և անվնաս կպահեմ իմ Հայոց աշխարհը»: Սուտ քահանաների («չքահանաների») միջոցով, Վարդանից գաղտնի, տարածում է նամակներ, ընդ որում՝ նրանք, ովքեր թուլացել էին հավատքով և կորցրել հույսերը՝ միանում էին նրան, իսկ պինդերը և մարտիրոսութեան սպասողները թղթերը մերժելով՝ ավելի զորանում [Ղազ. Փարպ., էջ 67. 38—68—14]:

Մեզ վիճակված չէ կոհակել Հազկերտ Բ-ի, Միհրնիբսեհի, նրանց շրջապատի գաղտնի մտքերը: Պետք է մտածել, որ զիջումը եղել է հարկադրված: Հպատակ ժողովուրդների ապստամբությունը խիստ անհանգստություն էր պատճառել արքունիքին, ստիպել նրան վերադառնալ (թեկուզ ժամանակավորապես) դավանական ազատությանը: Հանդուրժողականությունը դարձել էր հասարակական կյանքի փաստ: Եվ այդ քաղաքականությունն իրացվում էր մարզպան Վասակ Սյունու և յուրայինների ձեռքով: Թվում է, որ քաղաքական կուրսի այդ փոփոխությունն է ստիպել Վասակին փոխել դիրքը և, լքելով Վարդանին, դառնալ նրա բռնած գծի կատաղի թըշնամին:

Աղբյուրները պնդում են, որ Վասակը եղել է ընչասեր, փառամոլ, թագավորական գահի ցնորքն է նրան խելահան արել: Բայց նույն հատկություններն է ունեցել նա, երբ իրեն հայտարարել է ապստամբ: Կողմնորոշումը փոխելու համար հարկավոր էր, որպեսզի փոխվեն պայմանները, տվյալ դեպքում՝ փոխվի պարսից իշխանության քաղաքականութունը: Վասակը դրա հետ է կապել թե՛ իր անձնական բարեբախ-

տությունը, թե՛ իր ժողովրդի բարօրությունը: Այլ հարց է՝ ճիշտ է նա կշռադատել հանգամանքները, թե ոչ:

Ի ցույց հանելով նոր քաղաքականության նվաճումները («Իբր թե ամբողջ Հայաստանը միաբանվել է իր հետ»), վասակը մի թուղթ է հղում կայսրին, որը տեղ է հասցնում բյուզանդական Հայաստանի սպարապետ վասակ Մամիկոնյանը: Հասցեատերերին տրամադրելով իրեն հակառակորդ նախարարների դեմ, վասակ Սյունին նույնպիսի նամակներ է ուղարկում Տմորիք, Կորդուք, Արցախ, Աղվանք, Վիրք և Խաղտիք: Մարզպանի դատավարության ընթացքում կպարզվի, որ մեկ նամակ էլ ուղարկած է եղել Անտիոքի մեծ սպարապետին, այսինքն՝ մեզ ծանոթ Անատոլիոսին<sup>21</sup>:

Այսպիսով, ինչպես էլ որ մոտենալու լինենք հարցին, վասակին և նրա համախոհներին չի կարելի դիտել իբրև մի բուռ խռովարարների, որոնք խառը պայմաններում ուզեցել են միայն ինչ-որ օգուտ քաղել: Ո՛չ, նրանք փոփոխված պայմաններում մի նոր ուղղություն են ներկայացրել: Հազկերտի խոստումները տեղ հասան, Հայոց երկրի մի ղգալի մասը հավատաց նրան և հրաժարվեց ձեռք բարձրացնել օտար իշխանության դեմ: Դրան նպաստեցին նաև այլ հանգամանքներ: Հոռոմները հրաժարվեցին օգնել հայերին, Մարկիանոս կայսրը այդ մասին հատուկ դաշինք կնքեց Հազկերտի հետ [Յդ., էջ 73. 5—15]: Հայերն, ասում է Յղիշեն, ոչ թագավոր ունեին իրենց առաջնորդ, ոչ էլ դրսից որևէ օգնական՝ հոներից բացի: Հուսահատության համար կային. բոլոր նախադրյալները:

Սկզբնաղբյուրներից երևում է, որ մարզպանի կողմնակիցները եղել են բազմաթիվ: Ասվեց, որ նրանք հրաժարվեցին զենք բարձրացնել օտարների դեմ: Բայց պատմության դաժան տրամաբանությունը ստիպեց նրանց այդ զենքով դուրս գալ իրենց հայրենակիցների դեմ: Կիսովելով երկուսի, մարզպանական Հայաստանը ապրեց քաղաքացիական պատերազմի սարսափներ: Ահա թե վասակի մասին. ինչ պատմեց Աղվանքում գտնվող Վարդանին. Հայաստանից եկած գուժկանը. «Հեռացել է քրիստոնեություն. ուխտից և ավերել

Հայոց աշխարհի շատ տեղերը, մանավանդ արքունի ձմեռոցները, որոնք զորքի կայաններն էին, Գառնին և Երամոնքը և Դրասխանակերտը՝ մեծ դաստակերտը, Վարդանաշատը և Օշական ամրոցը, Փառախտը, Սարդյանքը, Չողակերտ ավանը և Արմավիրի բերդը, Կուաշ ավանը, Արուճը, Աշնակը և ամբողջ Արագածոտնը, Արտաշատի նահանգը և նույնիսկ Արտաշատն ամբողջովին, ինչպես և նրա շուրջը գտնված բոլոր գյուղերն ու ավանները՝ առել, ավերել և կրակ է տվել, և ձեր ընտանիքները փախցրել-հեռացրել է իրենց բնակությունից: Ձեռք է տվել նաև սուրբ եկեղեցիներին: Տարել է նաև եկեղեցու սեղանի սուրբ անոթները. գերել է քահանաների ընտանիքներին, իսկ նրանց կապել ու բանտ է դրել. և ինքը ասպատակ սփռելով ու տարածելով ամեն կողմ՝ ամբողջ երկիրն ավերում է...» [Եղ., էջ 78—79]: «Մամիկոնյան, Կամսարական, տանուտերական մյուս տոհմերի զավակներին, պոկելով յուրաքանչյուրին դայակից, տեղափոխեց Սյունյաց իշխանության բերդերը, հրամայեց որպեսզի այդ քերդերը լավ հսկեն: Այնուհետև նենգավոր վասակը ուղարկեց այդ տղաներին Պարսից թագավորի մոտ» [Ղազ. Փարպ., էջ 67. 6—10]:

Իսկ Վարդանը. «գունդ-գունդ զորք էր ուղարկում Սյունյաց երկիրը, առնում ու ավերում էր շատ գավառներ, և այնպես նեղը լծեց [Վասակին], և նրա հետ եղած ամբողջ զորքին, որ սովի վտանգից անխտիր սատկած էշերի և ձիերի միա էին ուտում: Եվ շատ հարվածներ էր հասցնում ուրացյալին, այնպես որ սուրբ Կպիսկոպոսների ժողովն ու քահանայության ամբողջ ուխտը դառն արտասուք էին թափում շարաշար տանջվածների վրա, որովհետև բոբիկ ու ոտքով էին քշում տղամարդկանց ու փափկասուն կանանց և շատ տղաներ քարերին խփելով սպանեցին-զցեցին ճանապարհների վրա» [Եղ., էջ 81. 1—8]:

Ապստամբության հենց սկզբում եպիսկոպոսները, պատմիչի ասելով, խրատում էին իրենց հոտին՝ «Հարազատ եղբոր ձեռքը թող բարձրանա այն մերձավորի դեմ, որ դուրս է եկել աստծու պատվիրանի ուխտից. հայրը չխնայի որդուն,

և որդին շահնաթի հոր պատվից: Կինը կովի իր ամուսնու դեմ, և ծառան դիմադրի իր տիրոջը» [Սղ., էջ 57. 17—21]: Սդիշեի ճարտասանության ծնունդ են այդ խոսքերը, բայց այնուհանդերձ լիովին համապատասխանում են իրականությանը. քաղաքացիական պատերազմը հարազատներին դարձրել էր թշնամի:

Մեզ հայտնի է, թե ազնվականներից ովքեր են հարել Վասակ Սյունուն. բերենք նրանց ցուցակը.

Արտակ Ռշտունի  
Գաղեշո Խորխոռունի  
Գյուտ Վահևունի  
Տիրոց Բագրատունի  
Մանեճ Ապահունի  
Արտեն Գաբելյան  
Ընշուղ Ակեացի  
Ներսեհ Ուրծա իշխան  
Վարազշապուհ Պալունի  
Մանեն Ամատունի<sup>22</sup>

Գայց նույն այդ տոհմանունները հիշվում են նաև այլ կապակցությամբ:

Անտեսելով հզոր տանուտերի իշխանությունը, Բաբգեն և Բակուր Սյունինները միացան Վարդան Մամիկոնյանին, Ավարայրից հետո աքսորվեցին: Բաբգեն Սյունին մասնակցեց նաև 482—484 թթ. ապստամբությանը: Խորեն Խորխոռունին, Արտակ Պալունին, Վահան Ամատունին, Խոսրով Գաբելյանը մայիսի 26-ին գտնվում էին Ավարայրի դաշտում, «Կորովի» Խորենը այնտեղ էլ նահատակվեց: Առանց անունները տալու, մյուս մասնակիցների կողքին Նղիշեն նշում է նաև Ակեացիների և Ռշտունիների զորքը: Իսկ Գյուտ Վահևունին լքեց Վասակին և Ավարայրի ճակատամարտին մասնակցեց որպես Վարդանի կողմնակից:

Քաղաքացիական պատերազմը քանդում էր նաև ընտանեկան բնական կապերը: Պատրաստվելով վճռական ճակատամարտին, Վարդանը իր զորքը հավաքեց Արտաշատում,

նրանց փոխարեն, ուլքեր ետ էին կացել միաբանությունից ու քաշվել Սյունիք, կարգեց նրանց եղբայրներին, որդիներին կամ եղբորորդիներին [Եղ. էջ 99. 11—13]: Եղիշեի ասածը գեղեցիկ արտահայտություն չէ, այլ իրական նկարագիր:

Ներքին հակասություններն իրենց գազաթնակետին հասան Ավարայրի ճակատամարտում, երբ Վարդանը ստիպված էր կռվել ոչ միայն եկվոր պարսիկների, այլև իր հայրենակիցների՝ Վասակի ու նրա կողմնակիցների դեմ:

Հետարշակունյաց Հայաստանում տեղի ունեցած ճակատամարտերից (որոնց հայերը մասնակցել էին որպես կրոնավոր ինքնուրույն կողմ) Ավարայրը հավանաբար եղել է խոշորագույնը: Ուժերի այդպիսի բախում չի եղել ո՛չ 482—484 թթ., ո՛չ հետագայում՝ Սասանյանների օրոք, ո՛չ էլ արաբական իշխանության շրջանում, երբ հայերը մի քանի անգամ ապստամբեցին խալիֆայության դեմ: Հայոց թե՛ ռազմական, թե՛ ընդհանուր պատմության մեջ Ավարայրը հատուկ տեղ է գրավում:

Բայց լինելով իրական կյանքի խոշոր երևույթ, Ավարայրը հանդես է գալիս նաև որպես ազգային պատմության յուրատեսակ խորհրդանշան: Անցյալի և ներկայի ողբերգական ընկալումը, որն այնքան հատուկ է հայոց պատմափիլիսոփայությանը, փաստորեն սկսվում է Եղիշեից: Հայոց պատերազմը\* նա ներկայացնում է որպես հերոսական ողբերգություն, փառաբանելով հերոսների համառությունն ու խիզախությունը, ողբում է նրանց դառը ճակատագիրը: Հին հայերենում նախատակ բառը նշանակել է առաջամարտիկ, քաջ ախոյան, բայց հետագայում վերաիմաստավորվել է, ստանալով նաև մարտիրոսի, վկայի նշանակություն: Եղիշեն Վարդանին և նրա ընկերներին ներկայացնում է որպես նահատակների այդ երկու իմաստով: «Չերկնչենք ու չվախենանք հեթանոսների բազմությունից, — կոչ է անում Վարդանը, — և ոչ էլ մահկանացու մարդու ահռելի սրի դեմ թիկունքներս դարձ-

\* Ասվեց, որ Եղիշեի աշխատության բուն վերնագիրն է՝ Բան վասն Հայոց պատերազմի, իսկ պատերազմ բառը նշանակում է և առանձին ճակատամարտ, և պատերազմ այսօրվա իմաստով:

նենք, որպեսզի եթե Տերը հաղթութիւնը մեր ձեռքը տա, ոչնչացնենք նրանց զորութիւնը, որպեսզի բարձրանա ճշմարտութեան կողմը»։ Բայց եթե մեզ մահ է վիճակված,— շարունակում է սպարապետը,— ապա ընդունենք ուրախ սրտով, «միայն թե արիութեան ու քաջութեան մեջ վախկոտութիւն չխառնենք» [Եղ., էջ 101. 21—102. 3]։ Իսկ զինվորներին խոսքը այլ շեշտ է կրում՝ «Թող մեր մահը արդարների մահվան հետ հավասարվի և մեր արյան թափվելը՝ սուրբ մարտիրոսների արյան հետ. թող աստծուն հաճելի լինի մեր կամավոր զոհաբերութիւնը և այլն» [Եղ., էջ 114. 8—11]։

Ավարայրի խորհրդանշային դերը հասկանալի է միայն հայոց միջնադարյան մտայնութեան կոնտեքստում։

Վերադառնանք, սակայն, հերոսական ողբերգութեան իրական գործողութիւններին։ Փայտակարանը ընտրելով որպես նստատեղի, մեծ հազարապետ Միհրնեբոսին շարունակում էր մնալ այնտեղ և բանակցութիւններ վարել Վասակի հետ, հարցուփորձ էր անում հայոց զորքի, նրա կազմի, սպառազինութեան, զորավարների մասին։ Նրան հատկապես հետաքրքրում էր զորքի մարտական ոգին՝ «Նրանցից որը պետք է տատանման մեջ մնա և կամ նրանցից որը ջանք թափի՝ իր անձը մահվան ենթարկելով» [Եղ., էջ 95—96]։ Վասակը նշանակվեց յուրօրինակ գլխավոր խորհրդարար՝ բոլորը պիտի հետևեն նրա խրատներին։ Իսկ պարսից զորքի գլխավոր հրամանատար դարձավ Մուշկան Նյուսալավուրտը։ Գարնանը նա սկսեց շարժվել դեպի Հայաստան։

Զատիկի տոնից, որը 451 թ. ընկել էր ապրիլի 8-ին, անցավ մի քանի օր և հայտնի դարձավ, որ թշնամին մտել է Հեր և Զարեանդ գավառը։ Գարեք շարունակ, հավաքվելով Ատրպատականում, թշնամու բանակներն այդ ճանապարհով էին մուտք գործում Հայաստան։ Վարդանը դիմեց «ուխտապահ» իր կողմնակիցներին, որոնք զնացել էին տները՝ Զատիկը տոնելու իրենց ընտանիքներում, հայտնեց նրանց Մուշկանի գալստյան մասին, կոչեց վերջին մարտի։ Ուժերը

կենտրոնացրեց Արտաշատում, ապա շարժվեց դեպի Արտազ՝  
Հեր և Զարեանդին հարող գավառը:

Վարդանը շտապում էր, ուզում էր Մուշկանի վրա գրո-  
հել Հեր և Զարեանդ գավառում, թույլ չտալ, որ նա «սպա-  
նությամբ ու գերելով» հարձակվի ու վնաս հասցնի բուն երկ-  
րին: Հոգ տանելով զորքի պատրաստության մասին, իր սե-  
փական միջոցներով օգնության էր գալիս ամենքին, զենք  
հայթայթում, զգեստ ապահովում, ձի նվիրում, պարեն հաս-  
ցընում: Հակառակորդի մասին լավ գիտեր. Առանձար Ամա-  
տունի սեպուհը 300 հեծյալով հարձակվել էր Մուշկանի վեր-  
ջապահ թևի վրա՝ շատերին սպանել, մյուսներին փախու-  
տի մատնել, իսկ վերադառնալով՝ անհրաժեշտ տեղեկություն-  
ները հաղորդել սպարապետին [Ղազ. Փարպ., էջ 69. 1—11]:  
Նույն այդ միջադեպի մասին հաղորդում է նաև Եղիշեն, այն  
էական տարբերությամբ, որ հայ զինվորների թիվը հասցնում  
է 2.000 հոգու:

Ի՞նչ է մեզ հայտնի պատերազմող կողմերի ուժերի մա-  
սին:

Դեռևս Վասակի հետ զրուցելիս, Միհրնեբսեհը ցանկա-  
ցավ իմանալ հայոց զորքի թիվը. մարզպանն ասաց, որ  
60.000-ից ավել է. մեկ ուրիշ տեղ Եղիշեն նշում է, որ Ար-  
տազում հավաքվեց 66.000 հեծյալ և հետևակ [Եղ., էջ 96.  
2, 100. 16—17]: Հայոց զորքի յուրաքանչյուր պարագլխի  
դեմ Միհրնեբսեհը մտադիր էր դնել երեքին [Եղ., էջ 96. 8—  
9], այսինքն՝ պարսից ուժը պիտի երիցս գերազանցեր հայ-  
կականին: Հայկական կողմը Ավարայրում կորցրեց 1036  
հոգի, պարսկականը՝ 3.544. ճակատամարտից հետո Մուշ-  
կանը ողբում էր, որ իր զորքի կորուստը հայկականից երեք  
անգամ ավելի մեծ է [Եղ., էջ 120, Ղազ. Փարպ., 72—73]:  
Պարսից զորքում գտնվում էր ռազմական փղերի երամակ,  
ոմն Արտաշիրի գլխավորությամբ. գրոհի ժամանակ նրանք  
պիտի տրորեին հակառակորդին: Յուրաքանչյուր 3.000-ա-  
նոց խմբին տրվում էր մեկ գազան [Եղ., էջ 115. 19—20]:  
Ահա այն թվային տվյալները, որոնք ունենք մեր ձեռքի տակ:  
Հիշենք, որ Մուշկանի զորքում էր գտնվում նաև Վասակն

իր բազմաթիվ կողմնակիցներով: Մինչև վերջին օրերը մարգ-  
պանը ձգտում էր իր կողմը քաշել հայրենակիցներին, շր-  
ջում «սուտ» երեցների հետ, նրանց միջոցով հայտնում  
քրիստոնեությունը պաշտելու արքայի թուլլտվությունը: Բայց  
բաժանումն արդեն կատարվել էր, նա նոր հետևորդներ չու-  
նեցավ: Այդ մտքի հետ հաշտվեց նաև Մուշկան Նյուսալա-  
վուրտը:

Մինչդեռ վճռական օրը մոտենում էր, հայոց և պարսից  
զորքերը դեմ դիմաց կանգնեցին Հեր և Զարևանդի և Արտազի  
միջև ընկած Ավարայրի կամ Արտազի դաշտում, որի միջով  
հոսում էր Տղմուտ գետը: Մուշկան Նյուսալավուրտը «բա-  
նակ դրեց, փոս փորեց, պատնեշ շինեց, ցցապատերով փա-  
կեց, և ամեն պատրաստությամբ ամրացրեց ինչպես քա-  
ղաք» [Եղ., էջ 105. 18—20]: Այդպիսի բանակը կոչվել է  
ղակիշ, հին արտասանությամբ՝ լակիշ: Ճակատամարտից  
անմիջապես առաջ Մուշկանը դասավորեց իր զորքերը, ճա-  
կատը ձգելով դաշտի երկարությամբ: Կենտրոնական (մա-  
տեան) գունդը ամրացրեց իբրև հզոր աշտարակ կամ անմա-  
տույց բերդ: Զորքում կային հատուկ ջոկատներ՝ կազմված  
Կասպից ծովի հարավային և հարավարևմտյան ափերին  
բնակվող կիսավայրենի ապարհացիներից, կատիշներից, գե-  
ղերից, նաև հոններից: Նրանց տեղը եղել է աջից: Մուշկանը  
բաժանեց զինվորական նշանները, հրամայեց արձակել դրոշ-  
ները և սպասել մեծ փողի ձայնին: Պատրաստություններն  
ավարտեց միայն գիշերը՝ ճակատամարտի նախօրյակին,  
ասում է Ղազար Փարպեցին, հայերը կարող էին մեծ վնաս  
հասցնել հակառակորդին, բայց առիթը բաց թողին [Ղազ.  
Փարպ., էջ 69. 29—36]:

Մարտին պատրաստ էր նաև սպարապետը: Նա իր զոր-  
քը բաժանել էր 4 գնդի, նշանակել զորագլուխներ, օգնական  
զինակիցներ և համհարզներ: Զորերորդ գունդը իրեն էր թողել՝  
որպես նիզակակից ընտրելով Արշավիր Արշարունուն և իր  
հարազատ եղբայր Համազասպեանին: «Այսպես կարգավո-  
րեց ու ճակատ կազմեց՝ սփռելով դաշտի ամբողջ երեսին,  
Արյաց զորքի դեմուղեմ, Տղմուտ գետի ափին» [Եղ., էջ

116]։ Ղազար Փարպեցու նկարագրութիւնը մի քիչ այլ է։ Վարդանը զորքը բաժանում է 3 առաջի (բաժանեալ զիւր գունդն յերիս առաջս»)։ Սպարապետը Համազասպեանին թողնում է վերջապահ և կարգադրում, որպեսզի ոչ ոքի չըննադատի, այլ խոսքերով միայն հորդորի՝ նրանց իսկ փրկութեան համար [Ղազ. Փարպ., էջ 71. 36—40—72. 1—10]։

Վերջին դիտողութիւնը նկատի ունի բանակի մարտական ոգին, որն ինչ-որ չափով պիտի կանխորոշեր ճակատամարտի ավարտը։ Ըստ Եղիշեի, Վասակի հետ զրուցելիս, Միհրնբսեհը հարցուփորձ էր անում ոչ միայն հայոց զորքի, նրա կազմի, սպառազինութեան, զորավարների մասին, այլ հատկապես հետաքրքրվում էր, թե «նրանցից որը պետք է տատանման մեջ մնա և կամ նրանցից որը ջանք թափի՝ իր անձը մահվան ենթարկելով» [Եղ., էջ 95—96]։ Այդ հարցը մտահոգում էր նաև սպարապետին։ Խրախուսում էր զորականներին, օրինակներ բերում Մ. Գրքից, որին ծանոթ էր մանկուց։ Զինվորներին քաջալերում էին նաև բանակում գտնվող եկեղեցականները, հատկապես Ղևոնդ Երեցը, այն գրասերը, որի անունը հայտնի դարձավ Անգղի նշանավոր դեպքերից հետո։

Գիշեր էր, երբ Ղևոնդն ավարտեց իր խոսքը. եկեղեցականները սեղանի շուրջ կատարեցին «ամենասուրբ խորհուրդը», այսինքն՝ պատարագը, ապա պատրաստեցին մի ավազան և մկրտեցին նրանց, ովքեր դեռևս մկրտված չէին։ Հաղորդութիւնը ընդունելով, զորականները սպասում էին լուսաբացին։

Ճակատամարտը սկսվեց։ Նկարագրելով նրա ընթացքը, Եղիշեն մեծ մասամբ առաջնորդվում է Աստվածաշնչով, հատկապես Մակաբայեցվոց գրքից քաղված օրինակներով, հետևում գրական տարածված նորմերին։ Ահա մի հատված՝ «Բազմաթիվ սաղավարտներն ու զրահապատված զորականների զենքերը փայլում էին ինչպես արևի ճառագայթների շողեր։ Նաև բազմաթիվ սուսերների շողալուց և բազմախուռն նիզակների ճոճվելուց կարծես ահագին կրակ էր թափվում երկնքից ...»։ Գեղազիտական բոլոր արժանիքներով հան-

դերձ, այդպիսի նկարագրութունները ոչինչ չեն ասում մարտի բուն ընթացքի մասին: Ի տարբերութուն Եղիշեի, Ղազար Փարպեցու պատմածը շատ ավելի համառոտ է, ընդամենը տպագիր 19 տող:

Այնուամենայնիվ, պատմիչների ներկայացված պատկերները պահպանել են իրական կարևոր գծեր: Եղիշեի ասելով, պարսիկները մնացին տեղում, իսկ հայերը ձիերով անցան գետը, և կողմերն իրար զարկվեցին: Սպարապետը գտնվում էր ձախից, որովհետև, նկատում է Ղազար Փարպեցին, այդ կողմից լավ էին երևում սյունյաց զորքի դիրքերը [Ղազ. Փարպ., էջ 72. 6—8]: Հիշենք, որ պարսից աջ թևում (այսինքն՝ հայոց ձախ թևի դիմաց) Մուշկանը դրել էր իր ընտիր զորականներին, կարգադրել, որպեսզի պատրաստ լինեն կռվելու հենց սպարապետի դեմ:

Արյաց զորքերն այդ ձախ թևը մի պահ ընկճեցին, բայց վարդանը վրա հասավ և հակառակորդին սեղմեց դեպի իր իսկ փղերը: Անգամ մատեան գունդը դիմեց փախուստի: Իսկ հայոց զորքից ոմանք բաժանվել ու ետ էին ընկել լեռների հովիտներում: Տեսնելով այդ, Մուշկանը աղաղակեց, քաջալերեց իր զինվորներին, որոնք գտնվում էին վարդանի գնդի հանդեպ: Բախումից հետո երկու կողմերն էլ իրենց պարտված էին համարում, նրանց շուրջը գետինը ծածկված էր դիակներով: Մուշկանը սպասում էր, որպեսզի մոտենան փղերը: Նրանց հետևող զորամասերի առաջնորդը՝ Արտաշիրը, նստած էր գազաններից մեկի վրա, դիտանոցում, որը նմանվում էր քաղաքի միջնաբերդի: Գալարափողերի ձայնով շտապեցրեց իր ջոկատներին, առաջամարտիկ զորքերը շրջապատեցին Մուշկանին: «Իսկ կորովի վարդանն իր քաջ նիզակակիցներով մեծ կոտորած արեց այնտեղ, ուր և հենց ինքն էլ արժանի եղավ ստանալու կատարյալ նահատակության պսակը» [Եղ., էջ 117—118]:

Հավանաբար, բեկում առաջացրեց հենց սպարապետի մահը: Հայոց զորքի մի մասը հերոսաբար էր կռվում, բայց քիչ չէին այնպիսիները, որոնք մարտի էին եկել հարկադրված և ոչ իրենց կամքով [Ղազ. Փարպ., էջ 72. 16—17]: Նրանք

դիմեցին փախուստի, խուճապ առաջացնելով նաև մյուսներին շարքերում: Զինվորական բախտը երես թեքեց հայերից: Պարսիկները հետապնդում էին փախստականներին և անխնա կոտորում: Նրանք փորձում էին ապաստան գտնել ամուր ձորերի լեռնադաշտերում, ասում է Եղիշեն, իսկ հանդիպելով հակառակորդի հետ, դարձյալ սպանում մեկմեկու [Եղ., էջ 118. 19—21]:

Հայոց զորքի մի մասը գերի էր ընկել, բայց նրանք կարողացան ոչնչացնել պահապաններին և հեռանալ: Այնուամենայնիվ, հաջորդ օրվա լուսաբացին կրկին բռնվեցին, նրանց տարան պարսից բանակը և կոտորեցին՝ սրի քաշելով կամ շարտելով փղերի ոտների տակ [Ղազ. Փարպ., էջ 72. 23—29]:

Ավարայրի ճակատամարտը տևեց ընդամենը մեկ օր և ավարտվեց գիշերը: Ըստ Եղիշեի, կռվի դաշտում ընկան 9 ավագ նախարար՝ քաջ Վարդան Մամիկոնյանը, Կորովի Խորեն Խորխոռունին, Արի Արտակ Պալունին, Զարմանալի Տաճատ Գնթունին, Իմաստուն Հմայեակ Դիմաքսյանը, Հրաշակերտ Ներսեհ Քաջբերունին, Մանուկ Վահան Գնունին, Արդար Արսեն Ընծայինը, Հառաջադեմ Գարեգին Սրվանձաթյանը, (պատկերավոր մականունները Եղիշեի ստեղծագործական գրչի ծնունդ են): Նրանց հետ դաշտում մնացին 287 հոգի: Մյուս զոհվածներին (թագավորական տնից, Արծրունիներից և նախարարական մյուս տոհմերից) պատմիչը հաշվում է 740 հոգի: Այսպիսով, ընդհանուրը  $9 + 287 + 740 = 1036$  մարդ: Ղազար Փարպեցու հաշիվը մի փոքր այլ է: Նախարարների ցուցակը լրիվ համընկնում է, սակայն նրանց հետ կյանքն ավարտեցին 276 հոգի, իսկ մնացածների թիվն է՝ 750: Ընդհանուրը՝ պիտի լիներ  $9 + 276 + 750 = 1035$ , սակայն Ղազարի մոտ նշված է ճիշտ այնպես, ինչպես և Եղիշեի մոտ՝ 1036: «Ուրացողներից և հեթանոսներից» այդ օրն ընկան 3544 հոգի, այս կետում ևս մեր պատմիչները միաձայն են [Եղ., էջ 119—120, Ղազ. Փարպ., էջ 72—73]<sup>23</sup>:

Ավարայրում զոհված 1036-ը դասվեցին հայոց եկեղեցու սրբերի կարգում Վարդանաճ-Բ՝ «վարդանականներ» ան-

վան տակ: Ինչպես ասացինք, նրանց տոնը շարունակվում է նշվել մինչև օրս: Իսկ Վարդանանք բառը այժմ վերաիմաստավորվել է և նկատի ունի Վարդան Մամիկոնյանի ապրստամբությունն առհասարակ:

Ե՛րբ է տեղի ունեցել Ավարայրի ճակատամարտը: Եղիշեից (այն էլ շատ ընդհանուր և անորոշ ձևով) կարելի է իմանալ, որ մարտը եղել է գարնանը: Ղազար Փարպեցու տվյալները ավելի որոշ են: Նրա շարադրանքից երևում է, որ ճակատամարտի նախօրյակը եղել է «Պենտեկոստե մեծ տոնի ուրբաթ օրը»: Պենտեկոստեն կամ Հոգեգալուստը նըշվում է Զատիկի կիրակիից հաշված 50-րդ օրը, դարձյալ կիրակի<sup>24</sup>: 451 թ. Զատիկը եղել է ապրիլի 8-ին, ուստի Հոգեգալուստը ընկել է մայիսի 27-ին: Ինչպե՞ս է առնչվում այդ ամսաթվին Ավարայրի շաքաթ օրը: Դեռևս Միքայել Չամչյանը, կատարելով պարզ հաշիվներ, եկել էր այն եզրակացություն, որ Ավարայրի ճակատամարտը տեղի է ունեցել հունիսի 2-ին, այսինքն Պենտեկոստեին կամ Հոգեգալուստին հաջորդող շաքաթ օրը<sup>25</sup>: Այդ ամսաթիվը մինչև օրս ճանաչում ունի գրականության մեջ: Մինչդեռ Մ. Օրմանյանը գրտնում է, որ դա թյուրիմացություն է, մարտն իրապես տեղի է ունեցել Պենտեկոստեին նախորդող շաքաթ օրը, այսինքն՝ մայիսի 26-ին<sup>26</sup>: Այդ ամսաթիվը ևս տարածված է գրականության մեջ, ընդ որում՝ Մ. Օրմանյանի նուրբ դիտողությունները համոզում են, որ Ավարայրի ճակատամարտը եղել է իրոք 451 թ. մայիսի 26-ին:

Ապստամբական շարժումը Ավարայրում գտավ իր ծայրահեղ արտահայտությունը, բայց ազատագրական պայքարը դրանով չավարտվեց: Տարածվելով երկրով մեկ, հայերը շարունակում էին դիմադրությունը: Հայկական մի գունդ ամրացել էր ինչ-որ բերդում: Մուշկանի գինվորները շրջապատեցին այդ բերդը, գրոհեցին, բայց չկարողացան վերցնել: Բերդում էին նաև Հովսեփ կաթողիկոսը, Ղևոնդ երեցը և մյուս քահանաները: Սրանք եղել են Ավարայրի դաշտում, բայց փրկվել են կոտորածից: Զորականների մի մեծ խմբի (700 հոգի) Բակի գլխավորությամբ հաջողվեց փախչել ամ-

րոցից: Մինչդեռ պարենի պակասութեան պատճառով 213 գինավոր իջան ներքև, և նրանց անմիջապես սպանեցին: Հանձնվեցին նաև եկեղեցականները: Եղիշեի ասելով, Հովսեփին և Ղևոնդին գանահարեցին և խիստ հսկողութեամբ ուղարկեցին Տիգրոն: Մյուսներին ազատ արձակեցին, որպեսզի երկիրը «շենացնեն և խաղաղեցնեն»:

Երկար դիմադրեցին Միջնաշխարհի Կապույտ լեռան մոտ ամրացածները: Այնուամենայնիվ, Վասակին հաջողվեց խաբուսթյամբ իջեցնել նրանց և գերի վերցնել, իսկ ամբուսթյունները կրակի մատնել:

Նախարարներից շատերն ապաստան էին որոնում երկրի հեռավոր վայրերում կամ նրա սահմաններից դուրս՝ Արցախում, Տմորիքում, Խաղտիքում: Տմորիք փախածները նույնիսկ հարձակվեցին հարևան պարսից գավառների վրա, բնակչության մի մասին կոտորեցին, մյուսին գերեվարեցին, իսկ երկիրը հրի մատնեցին: Խաղտիք փախածները մտան Տայք, որտեղ գտնվում էին Կոստանդնուպոլսից վերադարձած սպարապետի եղբայր Հմայեակը և նրա շուրջ եղած ապստամբները: Ընդհանուր ուժերով հաջողվեց ջարդել թշնամուն, բայց Հմայեակը ընկավ մարտում:

Իսկ Արցախի անտառներում ապաստան գտածները հորդորում էին հոներին՝ ի կատարումն հայերի հետ ունեցած դաշինքի, դուրս գալ պարսիկների դեմ: Ապստամբութեան թեժ պահին, դրժելով եղած ուխտը, հոները օգնության չեկան, բայց այս անգամ նրանք ներխուժեցին Պարսից երկիրը և վերադարձան մեծ ավարով: [Եղ., էջ 122—128, Ղազ. Փարպ., գլ. ԽԱ.]:

Հայոց աշխարհը խաղաղվեց միայն ձմռանը:

Խոռվությունն ավարտվեց, իսկ դատաստանը նոր էր սկսվում: Սակայն նախապես տեսնենք, թե ինչ հետևանքներ է ունեցել ապստամբությունը, հատկապես Ավարայրի ճակատամարտը հայոց ներքին կյանքում: Ռազմական առումով հայերն Ավարայրում պարտություն կրեցին: Կորուստն այնքան էլ մեծ չի եղել: Եթե ընդունենք, որ Վարդանն իր հետ բերել էր 66.000 մարդ, իսկ Ավարայրի դաշտում մնաց

1036 հոգի, ապա տոկոսային հարաբերութեամբ դա կլինի մոտավորապես 1,5%: Բայց 66.000-ը (և հատկապես պարսից զորքի 200.000-ը) կասկածելի են, իրապես բուն ճակատամարտին պիտի մասնակցեին ավելի փոքրաթիվ ուժեր: Սպարապետը, հրամանատարութեան մի զգալի մասը սպանվեց, իսկ մարտադաշտը մնաց թշնամուն: Տարվա վերջին ապստամբութիւնն արդեն ճնշված էր:

Բայց Արշակ կողմն էլ իրեն հաղթող չէր համարում: Մուշկանն անհանգիստ էր՝ չէ՞ որ պատերազմում ընկան թաղավորին անձամբ հայտնի անվանի մարդիկ: Հայերի համեմատութեամբ պարսիկների կորուստը եղել է եռակի: Պետք է ասել, որ հայոց զորքի կորուստներն իրենց հերթին պիտի ցավ պատճառեին արքունիքին, որովհետև դրանով թուլանում էր պարսից պետութեան ընդհանուր ռազմական զորութիւնը: Եղիշեն գրում է. «ոչ թե մեկ կողմը հաղթեց, և մյուս կողմը պարտվեց, այլ քաջերը քաջերի դեմ դուրս գալով՝ երկու կողմն էլ պարտութիւն կրեցին» [Եղ., էջ 119. 7—9]: Այդ նախադասութիւնը կարելի է մեկնել նաև ընդլայնված իմաստով, որպես բախման ընդհանուր արդյունք:

Հայոց դիմադրութիւնը մեծ անհանգստութիւն էր պատճառել արքունիքին, իսկ Ավարայրի ավարտը միայն ուժեղացրեց այդ տրամադրութիւնը: Ճակատամարտից անմիջապես հետո Վասակը գործունեութիւն ծավալեց երկիրը խաղաղեցնելու համար: «Երդումներ էր կնքում թագավորի հրամանով և իր անձի վկայութեամբ և այն խաբեբա երեցների միջոցով, որոնք նրա հետ էին. պատգամավոր էր ուղարկում նրանց և այնպես էր ցույց տալիս, թե ապստամբութիւնը ներված է, և կրկին իրավունք է շնորհված եկեղեցիները շինելու, և բոլոր կարգերը դարձյալ նորոգելու առաջվա սովորութեան համաձայն»: Թագավորի հրամանն իսկութեամբ էր տրված, — շարունակում է հեղինակը, — սակայն հայոց զորքը մնում էր թերահավատ [Եղ., էջ 121]:

Բայց Վասակի մարզպանութեան օրերը հաշված էին: Նրան շուտով կանչեցին Տիգրան, իսկ իշխանութիւնը հանձնեցին Ատրորմիզդ Արշականին: Ատրորմիզդը անձամբ մաս-

նակցել էր Ավարայրի ճակատամարտին: Նրա իշխանությունը, գրում է Եղիշեն, սահմանակից էր Հայոց աշխարհին, իսկ Ղազար Փարպեցին հայտնում է, որ նա պարզապես Հայոց աշխարհից է եղել [Եղ., էջ 128. 22—23, Ղազ. Փարպ., էջ 73. 18]: Մտնելով Հայաստան «սիրով և խաղաղությամբ», նոր մարզպանը հաստատեց, որ աստվածապաշտությունը (այսինքն՝ քրիստոնյա հավատը) ամբողջությամբ վերականգնվում է. իրենց նախկին հավատն են ընդունում նրանք, ովքեր բռնությամբ մոգություն էին ճանաչել: «Եվ եթե մեկը որևէ հեռու աշխարհ է գնացել, արքունիքից իրավունք եմ ստացել,— հաղորդում էր մարզպանը,— որ ազատ լինեն նրանք, թե՛ շինական, թե՛ եկեղեցական, ինչ կայք էլ թողած լինեն, թող գան և յուրաքանչյուրն իր ունեցածին տեր կանգնի»: Մարդիկ սկսել էին նրան հավատալ և վերադառնալ հայրենիք: Երկիրն ավերված էր. մարզպանը որոշում ընդունեց երկրի հարկերը ներել, իսկ արքունիք ուղարկվող այրուծին միանժամանակ կրճատել [Եղ., էջ 128—131, հմմտ. Ղազ. Փարպ., գլ. Խ]: Պարսից զորքը Հայաստանից գնացել էր հյուսիսային այն երկրները, որոնք հայերի հետ ունեցած դաշինքի համաձայն, ավերել էին հոնները:

Ահա այսպիսի պայմաններում Ատրորմիզդին հաջողվեց մի քանի ամսվա ընթացքում հաշտության բերել Հայոց երկիրը:

Բայց հաշտարար քայլերի հետ մեկտեղ Ատրորմիզդը պիտի ապահովեր նաև ապստամբության մեղավորների դատաստանը: Դեռևս Ավարայրից առաջ թագավորն իբր երդվել էր՝ «եթե այն անօրենը (Վասակ Սյունին) ողջ ազատվի մեծ պատերազմից, մեծ անարգանքով նրան պետք է խմացնեմ մահվան դառն բաժակը» [Եղ., էջ 87. 5—7]: Պաշտոնանկ մարզպանին այժմ սպասում էին Տիզբոնում: Տեսնելով, որ երկիրը շենանում է, իսկ եկեղեցին ապահով է, նախարարների մի մեծ խումբ հանձնվեցին մարզպանին, նրան թողեցին ընտանիքները, իրենց ունեցած գույքը և շտապեցին դեպի արքունի ձմեռոցը: Նույն ճանապարհով ուղևորվեցին նաև եկեղեցականները: Վերջիններիս թվում էին

Հովսեփ կաթողիկոսը, Ղևոնդ երեցը (նրանց հանձնության մասին խոսվեց վերևում), Ռշտունյաց եպիսկոպոս Սահակը, Արծրունյաց երկրի առաջնորդ Մուշե երեցը, Սամվելը, Աբրահամը, Արշենը, Քաջաջը: Եկեղեցականներին կապանքներով էին բռնում, նրանք տեղ հասան երկու ամիս քսան օրվա ընթացքում: Եղիշեի գրքի երկրորդ կեսը, ինչպես նաև Ղազարի պատմության Բ դրվագի հաջորդ գլուխները նվիրված են գլխավորապես նրանց ճակատագրին:

Բաց թողնելով մանրամասնությունները (պատմիչների շարադրանքն այս մասում շատ գունեղ է), նշենք, որ Վասակը մեղավոր ճանաչվեց, նրա դեմ խոսեցին բոլորը, և Սյունյաց իշխանն իր կյանքն ավարտեց զնդանում: Եկեղեցականները մարտիրոսական մահ ընդունեցին՝ 3 հոգի՝ 454 թ. հուլիսի 7-ին, 6 հոգի՝ նույն տարվա հուլիսի 25-ին: Նրանցից 6 հոգին Մաշտոցի-Սահակի աշակերտներն են եղել<sup>27</sup>: Երկու երեց, Խորեն Որկովեցին և Աբրահամ Զենակացին, հրաժարվելով ուրանալ հավատը, ծանր տառապանքներ կրեցին, սակայն մահապատժի չենթարկվեցին, այլ ստորկական աշխատանք էին անում արքունի կալվածներում: Խորենը վախճանվեց Ասորեստանում, իսկ Աբրահամը 12 տարի աքսորում անցկացնելուց հետո վերադարձավ հայրենիք:

Դատապարտվեցին նաև Տիզբոնի ատյանին ներկայացած նախարարները՝ 37 հոգի: Մինչև 457 թ. նրանք մնացին կապանքներում, ապա անցան զինվորական ծառայության և միայն 464 թ. վերադարձան հայրենիք: Ավարայրի ճակատամարտից անցել էր 13 տարի:

\* \* \*

Մինչև XIX դ. ներառյալ գիտությունը ընկալել էր Վարդանանքը և հատկապես Վարդանի ու Վասակի վարքագիծը ճիշտ այնպես, ինչպես և անցքերի ժամանակակից Եղիշեն: Վարդանը սուրբ է, առերես ընդունելով մոգություն, նա ապաշխարել է և, հետևողական պայքար մղելով հեթանոսների դեմ, նահատակի վախճան ունեցել: Վասակը սրտանց է դարձել կրակապաշտ, դավաճանել իր բուն հավատքը, դա-

վաճանել իր ժողովրդին, վերջապես ըստ արժանվույն պատրժվել: XX դարը վերանայել է այդ ըմբռնումը, ցույց տվել, որ բախումը տեղի է ունեցել ոչ թե բարոյական, այլ քաղաքական հողի վրա: Եղիշեն և Ղազար Փարպեցին դիտավորյալ խեղաթյուրել են Վասակի կերպարը. իրականում մարզպանն իբր ձգտել է փրկել իր հայրենակիցներին, եթե հաղթանակեր նրա բռնած գիծը, ապա ձեռք բերված ազատությունը այդքան թանկ չէր նստի հայերի համար<sup>28</sup>, Փորձենք մեկ անգամ ևս անդրադառնալ այդ հարցին:

Ապստամբության ընթացքը շարադրելիս, մենք նշեցինք, որ ենթակա ժողովուրդների նկատմամբ շահանշահի քաղաքականությունը ինչ-որ պահի փոխվեց: Հազկերտը խոստացավ կրոնական ազատություն, միաժամանակ նաև ապստամբության մեղքի թողություն: Փոխվեց նաև Վասակ Սյունու դիրքը, ըմբոստ մարզպանի փոխարեն հանդես եկավ արքունիքի կամակատար մեկը, որը ջանք չխնայեց, որպեսզի հայրենակիցներին հաշտեցնի գերագույն իշխանության հետ: Պառակտումը Վարդանի և Վասակի միջև անցքերի դարգացման տրամաբանական հետևանք է եղել: Կարևորություն շտալով Հազկերտի խոստումներին, սպարապետը շարունակեց պայքարը, իսկ մայիսի 26-ին նա և մարզպանը գտնվեցին Տղմուտ գետի հակառակ ափերին:

Այսպիսով, Վարդանի և Վասակի բախումը, որը վերածվեց քաղաքացիական պատերազմի, առաջացել է նախ և առաջ քաղաքական հողի վրա, եղել է քաղաքական տարբեր ըմբռնումների հետևանք: Այդ առումով միջնադարյան տեսակետը, որի համաձայն պատերազմը ծագել է բարոյական հողի վրա, աստվածապահների և ուրացողների միջև, անշուշտ ենթակա է վերանայման: Բայց ո՞ր գիծն է եղել ավելի իմաստուն, ի՞նչ կլիներ Հայաստանի վիճակը, եթե հայերն իսկույն զենքը վար դնեին՝ այդ մենք չենք կարող ասել, եղած սկզբնաղբյուրները քիչ թե շատ հավանական պատասխանի համար անբավարար են: Մասնակի փոփոխություններ մտցնելով, մենք չենք կարող կրկնել պատմական փորձն անգամ մտովին:

Վերևում թվարկեցինք Ավարայրի անմիջական հետևանքները: Պարսից արքունիքը քրիստոնեութուն շնորհեց հայերին, թեթևացրեց նրանց պարտականութունները գերագույն իշխանության նկատմամբ: Անշուշտ, դա դիտվել է որպես խոշոր նվաճում: Բայց դրա հետ մեկտեղ Հայաստանի ինքնավարութունը սահմանափակվեց կարևոր մի կետում՝ վարչական իշխանութունն տեղացի մարզպանից անցավ եկվորին: Ճիշտ է, այդ եկվորի տիրույթները գտնվել են սահմանամերձ վայրում (ուստի նա ինչ-որ չափով ծանոթ է եղել հայերի վարք ու բարքին), իսկ տոհմանունը եղել է Արշակյան (Արշակունի): Բացառված չէ, որ Հայոց մարզպան նշանակելով հենց Ատրորմիզդ Արշականին, պարսից Դուռը մըտածել է, թե նրա, այսպես ասած, կենսագրական տվյալները կարող են սփոփել նվաճված ժողովրդի ազգային վիրավորված զգացմունքը: Բայց եթե անգամ դա իրոք այդպես է եղել, Ատրորմիզդի նշանակումը մի այլ սկզբունքի հաղթանակ է արտահայտել: Եկվոր մարզպանը չէր կարող (թեկուզ խորհրդանշային եղանակով) ներկայացնել հայերի շահերը արքունիքի առջև, ինչպես դա կաներ տեղացի որևէ իշխան, ինչպես դա եղել է Վասակ Սյունու դեպքում:

Այնուամենայնիվ, բոլոր սահմանափակումներով հանդերձ, ճանաչված ազատութունները կարևոր են եղել, որպեսզի հայ ժողովուրդը ընթանա իր զարգացման բնական ուղիով, որպեսզի բուն կերպով չվերացվեն պատմական դարավոր ավանդույթները: Եվ եթե մեզ հայտնի չեն երկրնտրանքային վճռի հնարավոր արդյունքները, ապա կարող ենք հաստատ ասել, որ Վարդան Մամիկոնյանի գիծն է ապահովել թվարկված նվաճումները, ապահովել է Վարդանանց պատերազմը:

Իր աշխատության երկրորդ գլխի սկզբում, մեջբերում անելով մի հին աշխատությունից, Եղիշեն գրում է՝ «Մահ ոչ իմացեալ՝ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն է» [Եղ., էջ 14. 5—6]: Մեր հեղինակը քրիստոնյա բովանդակություն է գնում դրա մեջ, սակայն այդ ասույթն առաջացել է հեթանոսական կամ կիսահեթանոսական փիլիսոփայական հողի

վրա, իսկ այժմ ընկալվում է զուտ աշխարհիկ առումով:  
Վարդանանքը համաշխարհային պատմության այն անցքե-  
րից է, երբ ժողովուրդն իր ազատութունը պաշտպանելու  
համար մահու պայքարի է ելնում ոսոխի դեմ: Տվյալ դա-  
րաշրջանում ազատութունը հնարավոր էր միայն արյան  
գնով, դա լավ են հասկացել Վարդանն ու իր զորականները:  
Սույն դլխի վերնագիրն ակնարկում է Վարդանանքի այդ  
էական կողմը:

## «ՊԱՐՍԿԻ ԱՌՆ ԵՐԿԻՐ ՈՉ ՊԱԳՑՈՒՔ»

Խաղաղվել էր փոթորիկն ապրած Հայաստանը, բայց Խաղաղությունը սգալից էր: Իր աշխատության վերջին էջերում Եղիշեն սրտաճմլիկ մի պատմություն է անում այն կանանց մասին, որոնց ամուսիններն ընկել էին պատերազմի դաշտում կամ քշվել աքսոր: Խոսքը վերաբերում է ազնվականներին. դժբախտացած ընտանիքների «փափկասուն կանայք» են ողբում դառը ճակատագիրը: Եղիշեն պատկերում է այն, ինչ տեղի էր ունեցել Հայոց երկրում ապստամբության ճշնշումից հետո, այն, ինչ որ տեսած պիտի լիներ իր իսկ աչքով: Բայց մեծ վարպետի գրիչը միաժամանակ կերտում է ընդհանրացած մի պատկեր, տեսարանը զուգորդություններ է առաջացնում, որոնք ընթերցողի միտքը կապում են սպանության ու աքսորի հետ՝ անկախ տեղից ու ժամանակից:

Հազկերտ Բ 17-րդ տարում, այն է՝ 455 թ., վրաց բղեշխ Աշուշային հաջողվում է ազատագրել Հմայեակ Մամիկոնյանի որդիներին, որոնց Վասակը տարել էր Տիգրոն, «որպեսզի այնտեղ մեռնեն»: Բղեշխը, որ եղել է նրանց մորաքրոջ ամուսինը, 451 թ. սպանված ապստամբ իշխանի զավակներին կարողացավ տեխափոխել իր մոտ՝ Գուգարք: Փըրկագինը շատ խոշոր է եղել՝ Աշուշան ազատեց տղաներին: «բազում և անհամար կարասի ծախեալ» [Ղազ. Փարպ. գլ. ԾԹ]\*:

\* Ստորև նշված անանուն հղումները (զույգ կամ էջ) նկատի ունեն Ղազար Փարպեցու Պատմությունը:

457 թ. Հազկերտ Բ վախճանվեց: Նրա Որմիզդ և Պերոզ որդիները իսկույն սկսեցին կռվել գահին տիրանալու համար: Հաղթանակեց կրտսերը՝ Պերոզը, ավելի շուտ՝ նրա Ռահամ դայակը, Միհրան հզոր տոհմից: Ռահամը ջարդեց Որմիզդի զորքը, սպանեց թե նրան, թե Հազկերտի մյուս որդիներին, արքայից արքա հռչակելով Պերոզին: Երկպառակությունը տևեց 2 տարի, Պերոզը գահի վրա հաստատվեց միայն 459 թ.: Կատարելով իր խոստումը, նա 464 թ. ազատեց Ավարայրից հետո գերի տարած նախարարներին, հաստատեց նրանց իշխանությունը և ճանաչեց սեփականության իրավունքները: Դիմադրելով ճնշմանը, նրանք վերադարձան հայրենիք, պահպանելով քրիստոնեությունը:

Նախորդ գլխում ասվեց, որ Վասակ Սյունու փոխարեն Հայոց երկրում մարզպան էր նշանակվել Ատրորմիզդ Արշականը: Հայտնի է նաև, որ 482 թ. հայոց մարզպան է եղել Ատրվշնասպ Հոզմանդեանը, դարձյալ պարսիկ: Մենք ըզիտենք, երբ է ավարտել ժառայությունն առաջինը և երբ է ստանձնել իր պաշտոնը երկրորդը: Ամենայն հավանականությամբ, երեսուն տարվա ընթացքում եղել են նաև այլ մարզպաններ, սակայն դրանց մասին աղբյուրները կատարյալ լռություն են պահպանում: Այսպես թե այնպես, արևոտյալ նախարարները վերադարձան պարսիկ մարզպանի վարչական իշխանության ներքո գտնվող Հայաստան:

Անորոշ է նաև սպարապետության հարցը: X—XI դդ. հեղինակ Ասողիկը պնդում է, որ Վարդան Մամիկոնյանից հետո երկիրը 10 տարի մնացել է անիշխան: Այնուհետև, արդեն Պերոզի օրոք, Հայոց սպարապետ է դառնում Վարդանի որդի Մանգնոսը, այդ գործակալությունը վարելով 20 տարի [Աս., էջ 79]: Մանգնոս անունը, որն ուղղակի կամ միջնորդաբար ծագում է լատ. Magnus, «մեծ» անունից, խորթ է հայոց անվանակազմին: Մեր Մանգնոսից բացի, Հ. Աճառյանը հիշում է միայն մեկ ուրիշ Մանգնոսի, 627/8 թ.<sup>1</sup>: Ասողիկից առաջ ոչ մի հեղինակ այդ Մանգնոսին չի ճանաչում, ուստի Վարդան Մամիկոնյանի ժառանգորդին վերաբերող այդ տեղեկությունը տարակուսանք է առաջացնում: Հաս-

տատ գիտենք, սակայն, որ 482 թ. առաջ (հավանաբար տարիներ առաջ) սպարապետ է եղել Վարդանի եղբորորդի Վահանը, որը և գլխավորեց 482—484 թթ. ապստամբությունը։  
Վահան Ամատունուց հետո Հայաստանում տեղացի հազարապետ շի եղել, բացառությամբ թերևս այն առեղծվածային Մանանի, որի մասին ասվեց Գ գլխում։ Բայց մաղխազությունը դեռևս հայերի ձեռքն էր, Խորխոռունի մաղխազներ հայտնի են նաև Արշակունյաց թագավորության վերացումից հետո։ Այսպիսով, կտրելով մարզպանական Հայաստանի սահմանագիծը, հայրենադարձ նախարարները մտան մի երկիր, որը լրիվ չէր կորցրել ինքնավարության հաստատությունները։

Ինչպես ասացինք, 451 թ. աշնանը մի շարք անվանի եկեղեցականների հետ Հովսեփ կաթողիկոսին տարան Պարսկաստան։ 454 թ. նրանք իրենց կյանքն ավարտեցին որպես մարտիրոսներ։ Հովվապետի աթոռը հաջորդաբար գրավեցին Մելիտե և Մովսես Մանազկերտցիները։ Մելիտեն մասնակցել է Շահապիվանի եկեղեցական ժողովին, ապա իր ստորագրությունն է դրել այն գրության տակ, որը կազմել էին հայերը՝ ի պատասխան Միհրնբրսեհ մեծ սպարապետի նամակի։ Երկուսն էլ պատկանել են Աղբիանոսի տոհմին, համենայն դեպս, բռնել էին ավանդական դարձած նրա պարսկամետ գիրքը։ Այդ առումով Հովսեփի հաջորդները կրկնել էին նրա նախորդների՝ Սուրմակի, Բրքիշոյի, Շմուելի գիծը։ Մ. Օրմանյանի հաշվումների համաձայն՝ Մելիտեն կաթողիկոս է եղել 452—456, իսկ Մովսեսը՝ 456—462 թթ.<sup>2</sup>։ Թվագրումը պայմանական է, բայց ներկա դեպքում դա էական չէ։

Գյուտ կաթողիկոսի հովվապետությամբ սկսվեց նոր շրջան։ Եզնիկ երեցը Գյուտին հիշում է ասելը Գաղա անվան տակ։ Կաթողիկոսն, այսպիսով, նույն անձնավորությունն է, ինչ և Շահապիվանի ժողովի Գաղ եպիսկոպոսը, իսկ Միհրնբրսեհին ուղղված թղթում առկա է Վանանդի եպիսկոպոս Գաղի ստորագրությունը։ Գյուտն ուսում էր առել Հոռոմոց աշխարհում։ Ղազար Փարպեցին ասում է, որ կաթողիկոսը

լի էր «գիտութեամբ հայովս և առաւելեալ յունիւն» [էջ 110, 22]: Այդ բառերից դժվար չէ կռահել, որ Գյուտը պատկանել է Մաշտոցի և Սահակի գլխավորած լուսավորչական հոսանքին: Բայց հատկապես կարևոր է, որ Գյուտի կաթողիկոսութեան տարիներին եկեղեցին հնարավորութիւն էր ստացել վերականգնել իր անկախութիւնը, հանդես գալ որպէս ազգային քաղաքական ձգտումների կողմնակից ու պաշտպան:

Աքսորից վերադարձած նախարարները զայրույթով պիտի դիտեին, թե ուրացութիւնը ինչպիսի տարածում էր ստացել իրենց հայրենիքում: Ասացինք, որ իբրև երևույթ այն ծագել էր դեռևս Արշակունյաց շրջանում, երբ սասանյան գերիշխանութիւնը սկսել էր իրեն ավելի ու ավելի զգացնել տալ: Ուրացութիւնը տարածվել էր երկրի բաժանումից և հատկապես մարզպանութեան կազմակերպումից հետո: 450—451 թթ. այն արտահայտվել էր լայնորեն, իսկ Ավարայրի ճակատամարտում հայ քրիստոնյաները դեմ են դուրս եկել նաև հայ ուրացողներին:

Վարդանանց ապստամբութիւնից հետո ուրացութիւնը դարձել էր աչքի ընկնող հասարակական երևույթ: Եթե մինչ այդ խոսք էր լինում մեծ մասամբ անհատների մասին, ապա ապստամբութիւնից հետո ուրացութիւնը զանգվածային բնույթ էր ստացել: Խոսելով ուրացողների մասին, Ղազար Փարպեցին օգտագործում է դաս, ջոկ, փաղանգ բառերը [էջ 116. 23, 120. 83, 126. 4, 164. 4, 169. 33]: Ապստամբութեան թեժ պահին ուխտանենդների դասը դավաճանեց վրաց Վախթանգ թագավորին [էջ 146. 20]: Ուրացողներն իրոք որ կազմել են մի հատուկ հասարակական շերտ:

Նշել են դեպքեր, երբ կրոնափոխութիւնը ակամա մի գիշում էր, սեփական քաղաքական գիծը ապահովելու հնարավորութիւն: Այդպիսին է եղել Վարդան Մամիկոնյանի և նրա ընկերների «առերես» ուրացութիւնը 450 թ. ապրիլին: Այդպիսին է եղել նաև սպարապետ Վահան Մամիկոնյանի ուրացութիւնը (այդ մասին՝ ստորև): Բայց հասարակական կարծիքը հրաժարվում էր զանազանել ուրացութեան երանգները: Նշիշեն նկարագրում է այն զայրույթը, որն առաջա-

ցավ Հայաստանում Վարդանի և մյուսների ուրացութեան կապակցութեամբ, շնայած նա նշում է, որ հայ նախարարները Հազկերտի կամքը կատարել են «իբր թէ» [Եղ., էջ 50. 9]: Իսկ Վահանի ուրացութեան դեպքում Ղազար Փարպեցին չի բավարարվում հասարակական բողոքի նկարագրութեամբ և հենց իր անունից մեղադրանքի խոսքեր է ուղղում իր բարեկամի և հովանավորի հասցեին:

Եղիշեի օրոք ուրացությունը դեռևս արտասովոր երևույթ էր: Հեղինակն ասես քաշվում է այդ քայլի մասին պարզորոշ կերպով հաղորդել: Տիզբոն կանչած նախարարների մասին նա գրում է. «Եվ ամենքն այս-անբակտելի ուխտը դնելով աստծո հետ, որ հաստատ մնան իրենց նախկին մտադրութեան վրա, իրենց միևնույն խրատատուին պատգամավոր ուղարկեցին ներս, իբր թե կատարվելու է նրա (Հազկերտի) անօրեն կամքը» [Եղ., էջ 50. 7—10]: Իսկ Ղազար Փարպեցին նույն դեպքը նկարագրելիս, պարզ կերպով ցույց է տալիս, թե ինչ արին նախարարները, ավելացնելով, որ այդ քայլին դիմեցին «խաբէութեամբ», «զպատճառանօք և ոչ ճշմարտութեամբ» [էջ 53. 33—40 ևն]: Եվ ամենայն մանրամասնութեամբ, առանց որևէ բան թաքցնելու, ներկայացնում է այն տեսարանը, երբ Վահան Մամիկոնյանը «տկարանայր ի հաւատն». [Ղազ. Փարպ., էջ 116. 39]: Ժամանակները փոխվել էին, ուրացությունը դարձել էր սովորական:

Վարդանանց պատերազմի շրջանում պարսիկները քրիստոնյաներին հաճախ բռնի կերպով ենթարկում էին կրոնափոխութեան: Հաջորդ շրջանում աղբյուրները նման քայլերի մասին համարյա չեն խոսում: Ուրացությունը, որ թափ է ստանում հենց այդ շրջանում, լինում է կամավոր, առանց բացարձակ ճնշման: Այն արտոնությունները, որոնք ակնկալում էին ուրացողները, բավական են եղել, որպեսզի դրդեն նրանց դիմելու այդ քայլին:

Նախորդ գլխում ասացինք, որ մարզպանութեան շրջանում նախարարական կազմը ենթարկվել էր որոշ փոփոխութեան. տոհմիկները ետ էին մղվում, իսկ նրանց տեղերը

գրավում էին անտոհմիկները: Անտոհմիկները ուրացութեան շնորհիվ նոր դիրք են գրավում, նեղում բուն ազնվականներին [տե՛ս էջ 118. 25—28]: 483 թ. զինադադարի ժամանակ Վահան Մամիկոնյանը համոզում էր պարսից Միհրան զորավարին՝ Հայաստանը մեծ և պիտանի երկիր է, բայց ո՞վ է այնտեղ ստացել տանուտերութիւնն արժանավորապես, թագավորի օգնութեամբ: Իշխանութիւնը պատկանում է ավագակներին և անպիտաններին, հացկատակներին և վատատոհմիկներին: Անտոհմիկները, վատատոհմիկները, վատտոհմակները ետ են մղում տոհմիկներին, գրավում նրանց տեղերը: Պարզվում է, որ վատատոհմիկները և անպիտանները միաժամանակ ուրացողներ են՝ փառքն ու տերութիւնը կրակն աստված ճանաչելու դիմաց են գնում [էջ 136. 38—39]: Ուրացողները «ունեն գահ ու պատիվ, ամեն մեկն իր գավառում իշխան է, ձիու, զենքի, գնդի տեր է, մինչդեռ ուխտապահներին չի մնացել ոչ տուն, ոչ ծառա, ոչ գունդ, ոչ էլ տանուտերութիւն [էջ 168. 24—28]: Ինչպես տեսնում ենք, հակասութիւններն աճում էին նաև զուտ նյութական հողի վրա:

Ավելացնենք նաև, որ բաժանումը «տոհմիկների» և «անտոհմիկների» բացարձակ բնույթ չի կրել: Ղազար Փարպեցու «անտոհմակներն» ու «անպիտանները» կարող էին իրապես պատկանել հին ազնվականութեանը, բայց, դառնալով ուրացող, ուխտապահների աչքում զրկվում էին ազնվական համարվելու պատվից:

Պարսիկները նման քաղաքականութիւն էին վարում նաև Վրաստանում: 484 թ. գարնանը Վիրք է ներխուժում զորապետ Զարմիհր Հագարավուխտը: Նրան հաջողվում է իր շուրջը ժողովել վրաց ուրացողներին: Ինչպիսի՞ միջոցներով. մեկին թագավորութիւն էր խոստանում, երկրորդին՝ գահ, պատիվ, մեծ պարգև, մյուսներին՝ այն, ինչի պետքն էին զգում [էջ 146. 23—24]:

Դավանանքն ապրանքի էր վերածվել: Զարմանալի չէ, որ կրակապաշտութիւնն ընդունած ուրացողների համար սրբութիւն չի եղել նաև նոր տարերքում: Դիմելավ պարսիկ

գորավարին, Վահանն ասում է՝ երբ ուրացողները ձեզնից մի քիչ հեռու են լինում, ապա միզում են կրակի մեջ, իսկ մոխրի մեջ իրենց աղբն են թափում [էջ 136. 39—40]: Ոմանք կատակով աստվածներ էին գնում, բայց միաժամանակ թշնամանում թե՛ աստվածների, թե՛ անմիտ վաճառականների դեմ [էջ 111. 15—16]: Ուրացողները ոչ այնքան նոր կրոն, որքան նոր դիրք էին ընդունում: Իսկ երբ պայմանները փոխվում էին, ապա այդ նորաթուխ կրակապաշտները հեշտությամբ վերադառնում էին իրենց նախնիների հավատքին: 482 թ. հայերը ապստամբության որոշում են ընդունում: Ավետարանի վրա երդվում են միաբանությամբ թե՛ քրիստոնյաները, թե՛ ուրացողները, մանկական պարզությամբ արձանագրում է Ղազար Փարպեցին [էջ 120. 12—13]:

Ուրացությունը քրիստոնեությանը հարվածում էր ներսից, հայ եկեղեցին բնականաբար շէր կարող անտարբեր մնալ դրան: Հին ուժն ու հմայքը բավական շէին: Թվում է, թե հիմքն ամրապնդելու համար եկեղեցին հենց այդ պահին էր նպաստել Գրիգոր լուսավորչի պաշտամունքի առաջացմանն ու տարածմանը (ավելի մանրամասն՝ Բ գլխում): Բայց ուրացությունը ոչ միայն եկեղեցուն էր վտանգում, այն քայքայիչ դեր էր կատարում նաև հասարակական հիմունքների նկատմամբ: Ուրացությունը սպառնում էր նախարարությանը, նրա ավանդական կարգին, և այդ իմաստով էլ հակազդեցություն առաջացնում: 484 թ. Վահան Մամիկոնյանը թվարկում է նվարսակում զինադադարի և նրան հաջորդող խաղաղության պայմանները: Առաջին պայմանն էր՝ «թողեք մեզ մեր հայրենի և բնիկ օրենքը, որևէ հայի մոգ չդարձնեք, իսկ մոգության համար ոչ ոքի գահ և պատիվ չընորհեք» [էջ 161. 11—18]:

Նվարսակի պայմանադրության մեջ ճշտիվ արձանագրվել են այն հանգամանքները, որոնք մշտական բողոք են առաջացրել և ենթակա էին վերացման: Համաձայնության երկրորդ կետում Վահանը պահանջ էր դրել, որպեսզի մարդուն գնահատելիս պարսիկները չառաջնորդվեն կամայակա-

նությամբ (ոչ իշխանաբար ճանաչէ՛ք), այլ արդար կերպով ճանաչեն թե՛ լավին, թե՛ վատթարին, զանազանն պիտանին անպիտանից, հասկանան, որն է տոհմիկ, որն անտոհմիկ, թող բարձրացնեն պատվականներին, քաջերին և օգտակարներին, իսկ վատերին և անպիտաններին լրիվ արհամարհեն: Բոլոր պարագաներում՝ հարկավոր է սիրել վաստակավորին, ատել անվաստակին, մոտեցնել իմաստունին և նրան դիտել որպես խորհրդատու, իսկ անմիտին՝ հալածելով հեռացնել ասպարեզից [էջ 161. 19—25]: Պայմանադրության այդ երկու կետերն առնչվում են մեկը մյուսի հետ, չէ՞ որ ուրացողները դուրս են մղում տոհմիկներին և «լավերին», իրենք պատկանելով «վատերի» և անտոհմիկների դասին:

Շահանշահի գերագույն իշխանությունը իրացվել է նախ և առաջ մարզպանական վարչակազմի առկայությամբ: Դրժվար չէ պատկերացնել, թե մարզպաններն ինչպիսի ազատություն էին ապահովել իրենց համար, հատկապես այն դեպքում, երբ լինում էին ոչ թե տեղացի, այլ եկվոր: Նվարսակի երրորդ պայմանը եղել է այն, որ արքայից արքան անձամբ խորամուխ լինի Հայաստանի գործերին, ամեն ինչ իր աչքով տեսնի, լսի իր ականջով և խոսի իր բերանով: Թող նա շնաչի ուրիշի աչքով, շսի ուրիշի ականջով, ուրիշի միջնորդությամբ թող չճանաչի՝ որ մարդն է լավ, որը՝ վատ, մյուսի բերանով շարտասանի պետքերը: Միայն անձնական մոտեցումը կարող է ապահովել իր հպատակների բարեխիղճ ծառայությունը և այլն [էջ 161. 29—162. 3]: Հոետորական ոճով արտահայտված պահանջը մի պարզ նշում է, թե ինչպիսի խախտումներ են եղել, երբ վարչությունն ամբողջությամբ վստահվում էր մարզպանին: Եվ եթե այդ պահանջը մտել է համաձայնության առանձին՝ երրորդ դրույթի մեջ, ապա հեշտությամբ կարելի է պատկերացում կազմել մարզպանական վարչության դեմ աճող բողոքի մասին:

Ի մի բերելով այդ փաստերը, հնարավոր է պատկերացնել, թե ինչն է ստիպել հայերին V դ. 80-ական թվականներին կրկին դիմելու զենքի: Հավանաբար կային նաև այլ

հանգամանքներ (կարևոր հանգամանքներ), որոնց մասին ոչինչ չգիտենք կամ կարող ենք միայն կռահել: Բայց դրանց մասին խոսքը վաղաժամ է, այդ հարցին կանդրադառնանք ապստամբության արդյունքներն ամփոփելիս: Իսկ այժմ տեսնենք, ինչպիսի ձև և ընթացք էր ստացել V դ. օտարակալության դեմ ուղղված երկրորդ հուժկու ըմբոստությունը:

Այն քաղաքականությունը, որը վարել էր Հազկերտ Բ Ավարայրին նախորդող ամիսներին և հատկապես ճակատամարտից հետո՝ եղել է զիջում, որը հետևանք էր համընդհանուր խմորումի: Հարցերի լուծումը կիսատ էր, Տիգրանին ենթակա ժողովուրդները լիովին չէին բավարարվել: Բավական էր ճնշումը թեթևանար, կառավարության ուշադրությունը շեղվեր, որպեսզի հարկատու երկրները գլուխ բարձրացնեին:

Հազկերտի օրոք, երբ Աղվանքը վեր էր ածվել մարզպանության, այնտեղ շարունակում էր, այնուամենայնիվ, տիրել տեղացի Վաչե թագավորը: Վաչեն ամուսնացած էր Հազկերտի թոռան (նրա դստեր աղջկա) հետ<sup>3</sup>: Աղվանից թագավորը ծնվել էր քրիստոնյա, սակայն Հազկերտը նրան բռնի կերպով մոզ էր դարձրել: Ասացինք, որ Հազկերտի մահից հետո խռովություն առաջացավ, շահանշահի Որմիզդ և Պերոզ որդիները գահին տիրանալու համար մահու կոիվ էին սկսել: Հենց այդ ժամանակ Վաչեն «ավելի լավ համարեց պատերազմում մեռնել, քան թե ուրացությունը թագավոր լինել»: Մերժեց ժառայել Արյաց աշխարհին, ներս թողեց կովկասյան լեռնցիներին, միաբանեց 11 հարևան թագավորների հետ և սկսեց ջարդել արքունի բանակը: Պատերազմը տևեց մեկ տարի: Պարսիկները օգնության կանչեցին կովկասյան կիսավայրենի այլ ցեղերի՝ խայլանդուրներին և հոներին, Վաչեի զորքը լքեց իր թագավորին, սակայն ապստամբ արքան շարունակում էր դիմադրել և հարվածներ հասցնել հակառակորդին:

Պերոզը, որն արդեն հաղթել էր իր եղբորը, համաձայն էր, որպեսզի Վաչեն մնա քրիստոնյա, շարունակի տիրել իր երկրում, միայն թե ետ ուղարկի պարսից արքայի քրոջն ու

քեռորդուն: Վերջին պահանջը Վաչին կատարեց, սակայն իշխանությունից հեռացավ և դարձավ միայնակյաց [Եղ., էջ 197—199, Մով. Կաղ., Ա, 10]:

Եղիշեն պատմում է, որ Վաչին հայոց երկիրը ավերելու համար գրով և պատգամներով հանդիմանում էր պարսիկներին, հիշեցնում նախարարների սպանությունը և շարձարանքները: «Այնչափ սիրո և վաստակների համար փոխանակ կյանք շնորհելու,— պնդում էր Աղվանից թագավորը,— նրանց արևը խավարեցրիք». քրիստոնեությունը պաշտպանելու համար նա հանձն էր առել նրանց շարձարանքները: Պատմիչը նաև ասում է, որ Աղվանքի ապստամբության պատճառով հայ գերյալ նախարարների վերադարձը հայրենիք հետաձգվեց: Պերոզն, ըստ երևույթին, լավ էր հասկացել, որ պայքարն օտարակալության դեմ ողջ Այսրկովկասի համար ընդհանուր է եղել, ուստի ձգտում էր կանխել հնարավոր միությունը:

Հայոց երկիրն այդ շրջանում արտաքնապես խաղաղ էր, բայց ներքին հակասություններն ավելի ու ավելի էին աճում: Կարվել էին հարաբերությունները քրիստոնյա ազնվականների և ուրացողների միջև: Քրիստոնյա իշխանները համախմբվում էին Գյուտ կաթողիկոսի շուրջ, միասին ծրագրեր էին մշակում, թե ինչպիսի ելք գտնեն ստեղծված վիճակից: Ծրագրում էին թողնել երկիրը, գնալ օտարություն, կամ էլ՝ օգնություն խնդրել կայսրությունից և ապստամբել: Ապավինում էին բյուզանդական կայսր Լևոն Ա-ին (457—474): Գաղտնի կերպով նրա մոտ ուղարկեցին երկու պատգամավորություն: Լևոնը, իբր, ուզում էր օգնել, բայց այնպես էլ ոչինչ չարեց, և եղած ծրագրերը խափանվեցին [էջ 113. 1—4]:

Ուրացողների գորագլուխն ու քաջալերիչը մաղխազ Գաղիշո Խորխոռունին էր (ինչպես գիտենք, Վարդանանքի ժամանակ նա Վասակի կողմնակիցներից էր, իսկ այժմ խիստ թշնամական դիրք էր բռնել ուխտապահների նկատմամբ): Կաթողիկոսը, հայտնում էր Գաղիշոն Պերոզ արքային, կանչում է նրանց, ովքեր պատրաստ են ծառայել պարսիկներին,

և նրանց մտքերը հիմնովին փոխում: Ամենայն հավանակա-  
նությամբ, Բյուզանդիայի հետ կապված գաղտնի ծրագրերը  
թաքցնել շէր հաջողվում: Գաղիշոն հայտնում էր նաև, որ  
կաթողիկոսը բանակցություններ էր վարում կայսեր հետ,  
նրան, ինչպես նաև դռան մեծամեծներին իր կողմը քաշում:

Ամբաստանությունը հասավ նպատակին: Կաթողիկոսը  
ստիպված եղավ ներկայանալ պարսից դռանը և պատասխան  
տալ մաղխազի ասածի կապակցությամբ: Ղազար Փարպեցու  
ասելով, կաթողիկոսն իբր արդարացավ արքայի առջև: Ասաց,  
որ քրիստոնեությունը մանկուց է ընտրել և մնում է նրան  
հավատարիմ: Գաղիշոն այս կետում իրավացի է: Ինչ վերա-  
բերում է հոռոմների մոտ գնալուն, ապա այստեղ մաղխազը  
ստում է: Կաթողիկոսն իր ողջ գիտելիքները հոռոմներից է  
ստացել, այնտեղ բազմաթիվ ծանոթներ և ուսումնակիցներ  
ունի: Բացի այդ, եկեղեցական հագուստը այնտեղ են գնում,  
ուրիշ տեղ այդպիսի ապրանք չեն արտադրում: Ամփոփելով  
ասաց, որ քրիստոնյա օրենքը պահանջում է հնազանդվել և  
ծառայել աշխարհիկ տերերին: Վկայակոչելով, անշուշտ,  
ավետարանի խոսքերը, կաթողիկոսը, սակայն, իր կողմից  
ավելացրեց՝ երբ այդ տերերը լինում են իսկական և արժանի  
(«զգրիպողսն և զարժանաւորսն»):

Մեր պատմիչն ասում է, որ ծանոթանալով Գյուտի  
«ստույգ և մտացաբեր» խոսքերին, Պերոզն այլևս չխորա-  
ցավ հարցի էության մեջ, այլ պարզապես կաթողիկոսին  
առաջարկեց ընդունել կրակապաշտություն. այն ժամանակ,  
ավելացրեց արքայից արքան, նա կարժանանա շտեսնված  
պատվի և շքեղության: Հակառակ դեպքում նա կզրկվի հով-  
վապետությունից և հայրենիք կվերադառնա անարգանքով:  
Գյուտը հրաժարվեց և ստիպված եղավ լքել կաթողիկոսա-  
րանը [զլ. ԿԴ]:

Դիմադրությունը պարսկամետ ուրացողներին Բյուտի  
տապալումով չդադարեց: Այս նոր շրջանում քրիստոնյա նա-  
խարարությունը համախմբվել էր Վահան Մամիկոնյանի  
շուրջը, որը դարձել էր Հայոց երկրի քաղաքական առաջին  
դեմքը:

Վահանի երիտասարդութեան մասին առիթ ենք ունեցել խոսելու: Վահանը Վարդան Մամիկոնեանի հարազատ եղբայր Հմայեակի որդին էր: Ասվեց, որ Հմայեակը սպանվեց 451 թ. աշնանը Տայքում, որդիներին՝ Վահանին, Վասակին, Արտաշեսին որպես պատանդ տարան Տիզրոն (նրանց մանկահասակ Վարդ եղբայրը դայակների հետ մնաց, թվում է, Տայքում: Հետագայում, սակայն, նա ևս գտնվեց պարսից մայրաքաղաքում): 455 թ. Աշուշա բղեշխին հաջողվեց ազատագրել երիտասարդներին և տեղափոխել իր մոտ՝ Գուգարք: Այնտեղ նրանք միացան իրենց մորը՝ Զվիկին, որը բղեշխի քենին էր: Եվ ահա Վահանին տեսնում ենք Հայաստանում՝ սպարապետի բարձր պաշտոնով<sup>4</sup>: Ուրացողները երկյուղ են կրում նրանից և դիմում փորձված միջոցի՝ Պերոզ արքայի առջև ամբաստանում են Վահանին:

Մամիկոնեանների տիրույթ Տայք նահանգում, Փառանգիոն և Բողբերդ վայրերում ոսկու հայտնի հանքեր կային: Ամենայն հավանականութամբ՝ հենց այդ հանքերն էին Վահանի տնօրինութեան ներքո: Այդ հանքերի վրա նշանակվում էր «գործակից», պարզապես հսկիչ, որը, թվում է, պիտի ապահովեր հաշվետվութունը և հանվող ոսկուց Դոան եկամուտը: Հսկիչը Վրիվ անունով մի ասորի էր: Վահանը նրան թույլ չէր տալիս մոտենալ հանքերին և դրանով տապալում Վրիվի «արքունի գործը»: Դժգոհելով ստեղծված վիճակից, Վրիվը արքայից արքային հայտնում էր, որ Վահանը իր մոտ է հավաքել աշխարհի ոսկին, մտադիր է գնալ կայսեր կամ հոների մոտ, ոսկու օգնութամբ զորք խնդրելու և ապստամբելու:

Ղազար Փարպեցին [գլ. ԿԴ] պատկերավոր եղանակով է շարադրում Վահանի հաջորդ քայլերը: Նա հավաքում է իր մոտ եղած ոսկին և ուղևորվում դեպի արքունիք: Պերոզը զարմանում է՝ Վահանը ոչ միայն շտապում է ներկայանալ արքայից արքային, այլև հետը ինչ-որ բան է բերել. այդպիսի վարմունքն ամենևին չի համապատասխանում Վրիվի ասածին: Իմանալով այդ «ինչ որ բանի», այսինքն ոսկու չափերը, Պերոզն ուրախանում է, իսկ Վահանը փորձում է

արդարանալ: Վահանը լավ գիտի արյաց ուժը՝ ապստամբելով, հնում շատ ավագեր են ենթարկվել սաստիկ երկյուղի և հնազանդվել: Վրիվը պնդում է, որ Վահանը մտադիր է ապստամբել, բայց Վահանը ծառա անգամ չունի, որպեսզի տիրոջը կերակուր պատրաստի: Ամբողջ գնդում կա 2—3 պատանի, և նրանք էլ չեն ենթարկվում հրամանատարին: Եվ վերջապես, եթե նա՝ Վահանը, օտարութուն գնալու ծրագրեր մշակեր, ինչու՞ պիտի հետը այսքան ոսկի բերեր:

Պատմիչն ասում է, որ Պերոզն ու ավագանին հավատացին Վահանի իմաստուն խոսքերին, ամաչեցրին և արհամարհեցին Վրիվին, Վահանը վերադարձավ մեծարանքով և շքեղությամբ: Բայց այդ բոլորի հետ մեկտեղ սպարապետ Վահան Մամիկոնյանը ներկայանալով դռանը՝ «տկարանայր ի հաւատն», այսինքն ստիպված եղավ ընդունել մոգութուն: Վերցնելով բերած ոսկին, Պերոզը շարունակում էր, այնուամենայնիվ, կասկածել հայոց սպարապետի հավատարմության վրա: Հետագա անցքերը ցույց տվեցին, որ արքայից արքայի կասկածամտութունն անհիմն չէր:

\* \* \*

V դարում ապագա միասնական Վրաստանը բաժանված էր Բյուզանդիայի և Սասանյանների միջև: Վերջիններիս իշխանութունը տարածվում էր արևելյան հատվածի վրա, որը վրացերեն կոչվում էր Քարթլի, հայերեն՝ Վիրք: Ի տարբերութուն Հայաստանի, թագավորական իշխանութունն այստեղ վերացված չէր. V դ. երկրորդ կեսին Քարթլիում տիրում էր հզոր Վախթանգ Գորգասալ արքան (446—502): Վախթանգ Գորգասալը ձգտում էր իրեն ենթարկել նաև արևմտյան հատվածի առանձին մասեր: Նրա օրոք Թբիլիսին դառնում է պետության մայրաքաղաք, թագավորի հրամանով քաղաքը շրջապատում են ամուր պարսպով: Աշխարհիկ և եկեղեցական շինարարութունը մեծ թափ է ստանում:

Դրա հետ մեկտեղ՝ Վախթանգը ստիպված է հաշտվել իրանի գերագույն իշխանության հետ, որն այստեղ մոտավորապես նույն քաղաքականութունն է վարում, ինչ որ Հա-

յաստանի իրեն ենթակա հատվածում և Աղվանքում: Վրաց ժողովուրդը նույն սպառնալիքի առաջ է գտնվել, ինչ որ նրա քրիստոնյա հարևանները: Սասանյանների իշխանությունը կոչված էին ապահովելու Գուգարքում նստած բղեշխները:

Առնվազն հայոց թագավոր Արտաշես Ա-ի (189—160 մ. թ. ա.) ժամանակներից սկսած Գուգարքը եղել է Մեծ Հայքի կազմում: Լինելով երկրի 4 բղեշխություններից մեկը, այն կարևոր դեր էր կատարում երկիրը թշնամիներից պաշտպանելու գործում: Գուգարքը տարածվում էր Կուր գետի վերին հոսանքով, իր աշխարհագրական դիրքով հարելով և՛ Հայաստանին, և՛ Վրաստանին: 387 թ. բղեշխությունն անջատվում է Հայոց թագավորութունից և որպես առանձին միավոր մտցվում Վրաց մարզպանության մեջ<sup>5</sup>: Բղեշխների իշխանությունն այստեղ ժառանգական է: V դ. կեսերին Գուգարքի տերն էր մեզ արդեն ծանոթ Աշուշա բղեշխը, Հմայեակ Մամիկոնյանի քենակալը: Կավ հարաբերություններ պահպանելով պարսից դուան հետ, նա միաժամանակ ապաստան է տալիս այդ դուան դեմ ապստամբածների ընտանիքներին: Ընդունում է մոգություն, բայց և պայմաններ է ըստեղծում, որպեսզի Գուգարքում եկեղեցին ծաղկի: Բոլորովին այլ դիրք էր բռնել Աշուշայի որդի Վազգենը (վրաց ազբյուրները նրան Վարսկեն են անվանում):

Վազգենը ամուսնացած էր Վարդան Մամիկոնյանի դուստրը, Սահակ Պարթևի թոռ Շուշանիկի հետ: Նա ուղևորվում է Տիգրոն, ընդունում մոգություն և, թագավորից մեկ ուրիշ կին առնելով, վերադառնում Վիրք (այդ երկրորդ կինը եղել է իբրև թե թագավորի զոքանչը): Մանրամասնությունները գիտենք Շուշանիկի վկայաբանությունից, որը պահպանվել է հայերեն և վրացերեն տարբերակներով: Վկայաբանությունը կազմված է հետևելով կանոններին, ուստի շատ կետերում հեղինակը պարզապես ենթարկվում է գրական այդ տեսակի պահանջներին: Այնուամենայնիվ, վկայաբանությունը հարուստ է իրական տարրերով, և դրանց շնորհիվ կարելի է ընդհանուր պատկեր կազմել Վազգենի մասին: Ընդունելով մոգություն ոչ թե հարկադրաբար, այլ կամովին, Վազգենը

նույնն է պահանջում նաև կնոջից, մոգ է դարձնում իր զավակներին: Կինը կտրականապես հրաժարվում է և, շղիմանալով ամուսնու բազմամյա տանջանքներին, վախճանվում է (հետագայում սուրբ է դառնում ինչպես հայոց, այնպես և վրաց եկեղեցիների համար): Վազգենն, այսպիսով, ուրացող է, այն էլ՝ մոլեռանդ կրակապաշտ, քրիստոնեության հալածիչ: Եվ ահա, Պերոզի 25-րդ տարում, այն է՝ 482 թ., Վախթանգ թագավորը սպանում է բղջիխին: Այդ սպանությունը պարզ, աներկբայելի նշան էր, որ Վրաստանի տիրակալը հրաժարվել է ճանաչել շահանշահի իշխանությունը և ապստամբել:

Հայոց զորքն այդ տարի գնացել էր Աղվանք՝ սահմանապահ բերդերի կայազորի ապստամբությունը ճնշելու: Նրանց հետ էին Զարմիհր Հազարավուխտը և Հայոց աշխարհի մարզպան Ատրվշնասպ Հոզմանդեանը: Հայերը ցնծությամբ ընդունեցին Վիրթում սկսված ապստամբության լուրը: Ոգևորում էր նաև Վախթանգի խոստումը՝ «Զեմ թողնի որպեսզի որևէ մեկը կռիվ տեսնի, այլ այնչափ հոն կհանեմ, որ պարսից զորքը նրան չի կարողանա դիմադրել»: Հայ զորականները մի պահ մտածեցին, որ նրանց կարող են Տիգրբոն քշել, բայց նրանց ուղարկեցին Հայաստան: Զորքը մտավ Շիրակի դաշտը, որտեղ և բնակվել էր Ատրվշնասպ մարզպանը և նրան միացած հայոց հազարապետ Վեհվեհնամը: Հենց ասյտեղ էլ որոշում ընդունեցին կապ հաստատել Վահան Մամիկոնյանի հետ, համոզել, որ նա միանա ապրտամբներին: Նրանց հայտնի էր Վահանի տրտմությունն իր մոգության պատճառով: Ժամը պատեհ էր՝ և՛ Վահանը, և՛ նրանք կազատվեն, առաջինը՝ իրեն տանջող մտքերից, մյուսները՝ հնազանդ վիճակից: «Այդ վրաց արքա Վախթանգը իսկական տղամարդ է, ով գիտի, աստված կնայի մեզ ըսպառնացող վտանգին և կգա օգնության, իսկ վրացիներին հետ միասին մի փոքր կնեղենք պարսիկներին»:

Եվ մի գիշեր գաղտնի կերպով այդ բոլորը հայտնեցին սպարապետին: Վահանը սկզբնապես տատանվում էր: Ծիշտ է, նա գիշեր-ցերեկ մտածմունքի մեջ էր՝ ինչպե՞ս վերացնել

ուրացութեան կնիքը, բայց ապստամբութեան գաղափարը մերժում է: Պարսիկները զորեղ են, հոռոմները թույլ են և խարերբա, դուք իմ փորձից գիտեք, թե ինչպես մեր հայրերին երզվեցին պահել ուխտը և ստեցին: Վիրքը մեծ ուժ շունի, նրա այրուձին սակավաթիվ է, հոներին շի կարելի վստահել: Բայց ամենից շատ վախեցեք հենց ձեզնից,— ասում էր սպարապետը, դուք սուտ և անվստահ մարդիկ եք: հրաժարվեք ձեր մտքերից և ապավինեք միայն աստծու օգնութեանը: Նախարարները լիովին համաձայնեցին Վահանի հետ, հայտնեցին, որ հուլսը կապում են ո՛չ հոռոմների, ո՛չ էլ հոնների, այլ միայն աստծու հետ: Շարունակելով խոսքը նույն ոճով, հիշեցրին նախնիների նահատակութունը, ապա իրենց պատրաստակամութունը հայտնեցին ավելի շուտ մեռնել, քան տեսնել, թե թշնամիները ինչպես են ամեն օր հարված հասցնում քրիստոնեութեանը: Վահանը հիշեցքից նաև, որ նրա Վարդ եղբայրը պարսիկների ձեռքում է, ժթե իմանան բանակցութունների մասին, նրան կկապեն և կտանջեն: Այնուամենայնիվ, ինչպես և սպասելի էր, նա սովեց իր համաձայնութունը, և ահա՝ թե՛ քրիստոնյաները, թե՛ ուրացողները (1) երզվեցին իրենց գաղափարից չհեռանալ [գլ. ԿԶ]: Հավանաբար հենց այդ ժամանակ դաշինք հաստատեցին Վախթանգի հետ [տես էջ 132. 29—30, 133. 12] և մինչև վերջ հավատարիմ մնացին իրենց ուխտին: Համընդհանուր ապստամբութունը դարձել էր իրականութուն:

Ղազար Փարպեցու աշխատութունը մեր միակ գրավոր ակզրնաղբյուրն է ապստամբութեան ընթացքի և առհասարակ շարժման հետ կապված գլխավոր հարցերի ուսումնասիրութեան համար: Ուստի շատ դեպքերում մենք ավելի նպատակահարմար ենք դիտում պարզապես վերաշարադրել մեր հեղինակի ասածը: Ընթերցողն, անշուշտ, կուհում է, որ պատմիչը ոչ միայն փաստերն արձանագրում է իրենց իրական հերթականութեամբ, այլև այդ փաստերին տալիս է գրական կերպարանք: Շատ դեպքերում նա ցույց է տալիս ոչ միայն ինչպես էր, այլ ինչպես պիտի լիներ: Կարելի է հաս-

տատ ասել, որ նախարարների և Վահանի միջև եղած բանակցութիւնները մեծ մասամբ երևակայութեամբ են նկարագրված: Բայց դրանք ժամանակակցի, իրազեկ մարդու, վերջապես, իմաստուն պատմիչի երևակայութեան ծնունդ են: Ղազարի խոսքերը չի կարելի անվերապահորեն ընդունել, բայց կարելի է վստահ լինել, որ ժամանակի ոգին նա արտահայտում է ճշտութեամբ: Իսկ դա հաճախ ավելի կարևոր է դարաշրջանը հասկանալու համար, քան առանձին փաստերի շոր ու ցամաք արձանագրումը:

Ապստամբութիւնը սկզբից ևեթ եղել է կազմակերպված: Ապստամբները Վահանին ճանաչեցին Մամիկոնյան տոհմի տանուտեր, ընտրեցին նրան սպարապետ, իսկ Սահակ Բագրատունուն՝ մարզպան: Այդ փաստերը նշանակալից են. ապստամբները պահպանում են եղած վարչական համակարգը, պահպանում են մարզպանի պաշտոնը, այսինքն այն կառուցվածքը, որը իմաստ է ստանում հենց պարսից գերագույն իշխանութեան պայմաններում: Նրանք ընդհանուր առմամբ պատրաստ են ճանաչելու Սասանյաններին, միայն թե դրա հետ մեկտեղ ճանաչվեն նաև հայերի պահանջները: Արտասանելով այն ճառերը, որոնք նրա բերանն է դնում Ղազար Փարպեցին, Վահան Մամիկոնյանը հենց այդ ոգով է արտահայտվում: Կատարյալ անկախութիւնը եղել է անհնարին, ապստամբները ձգտել են ինքնավարութեան և, վերջիվերջո, հասել իրենց նպատակին:

Գաղտնի խորհրդակցութեան արդյունքները պարսիկներին անշուշտ հայտնի են դառնում: Ատրվշնասպ մարզպանը և Վեհվեհնամ հազարապետը փոխում են արիւններից և հայ ուրացողներից կազմված իրենց ենթակա ջոկատների դիրքը, նրանց կենտրոնացնում Անի ամրոցի մոտերքում, իսկ իրենք փախչում Արտաշատ: Ապստամբները հետապնդում են նրանց, սակայն ապարդյուն: Հաջողվում է հակառակորդի միայն գումակը բռնել և ձերբակալել մաղխազ Գադիշո Խորխոռունուն:

Հայ ջոկատները հասնում են Դվին, այնուհետև պաշարում Արտաշատը: Մարզպանին ու հազարապետին հաջող-

վում է այս անգամ էլ ազատվել՝ օգտվելով գիշերվա մութից, նրանք փախչում են Ատրպատական: Մարզպանին համոզում են, որ Վահանի ուժերը սակավաթիվ են, ո՛չ հոններից, ո՛չ էլ կայսրից նա օգնութիւն չի ստանալու, մնում է եռանդուն կերպով գործն առաջ տանել և դրանով թե՛ իր, թե՛ հայ ուրացողների համար պատիվներ և պարգևներ վաստակել: Սիրտ առնելով, մարզպանը հավաքում է իր զորականներին, օգնութիւն ստանում հարևան մարզերից և, առաջնորդելով նրանց, մոտենում Երասխ գետին: Ատրպատական երկրից թշնամին մեկ անգամ ևս արշավեց Հայաստան [գլ. Կէ]:

Հայկական ուժերի անբավարարութիւնը զգում էր նաև Վահանը, նա նույնիսկ մտածում էր ժամանակավորապես ամբանալ Տայքում: Հաղթանակեց սակայն հակառակ կարծիքը՝ սպարապետը և մարզպան Սահակ Բագրատունին մընում են ոստանում<sup>8</sup> և նեղում թշնամուն: Վահանի հետ էր Բաբգեն Սյունին, որին ապստամբները ճանաչեցին Սյունիքի տեր, սպարապետի եղբայր Վասակը, մաղխազ Գարշոյլ Խորխոռունին, Կամսարական եղբայրները (Շիրակի տեր Ներսէհը և Հրահատը), Գնունի եղբայրները՝ Ատոմն ու Առաստամը: Բանակում էր նաև Գյուտի հաջորդը՝ կաթողիկոս Հոհան Մանդակունին: Բայց փայլուն հրամանատարների տրամադրութեան տակ կար ընդամենը 400 զինվոր:

Արյաց զորքը որոշել էր Նախճավանի մոտ անցնել Երասխը: Ղազար Փարպեցու կարծիքով նրանց ընդհանուր թիվը 7000 զորական էր: Սպարապետին և մարզպանին թողնելով ոստանում, նախարարները շարժվեցին դեպի գետը: Պայմանավորվել էին մի գաղտնի տեղում սպասել, մինչև արյաց զորքի կեսը անցնի Երասխի այս ափը և ապա գրոհել: Բայց երբ մտան Վարազկերտ գյուղը, հայտնի դարձավ, որ թշնամին արդեն անցել է գետը:

Առաջապահ ջոկատի հետ միասին Վասակ Մամիկոնյանը մտավ Կովակք գյուղը, նպատակ ունենալով հետախուզել հակառակորդի ուժերը: Բայց լուսաբացին նույն գյուղը մըտավ նաև Ատրվշնասպ մարզպանը: Վասակն իրեն չկորց-

րեց, հրամայեց իր մարդկանց փոքրիկ (2—3 հոգի) խմբերով աննկատելի հեռանալ գյուղից: Ինքը ձևացնում էր, թե իբր եկել է բանակցությունների: Իմանալով, որ շոկատն ամբողջությամբ դուրս է եկել գյուղից և վարազկերտում միացել գլխավոր ուժերին, վասակն ինքն էլ անվնաս հեռացավ:

Միանալով եղբորը, վասակ Մամիկոնյանը հայտնեց, որ պարսից բանակը մեծ է, սակայն նրանցից շատերը «անպիտանք են և քերթաքաղ իշավարեան»<sup>9</sup>: Զգուշավոր վահանը հրաման տվեց ամրանալ լեռնակողմում: Հայերը բանակ դրին Մասիսի ստորոտում, Ակոռի գյուղի մոտ: Հենց այստեղ տեղի ունեցավ առաջին մեծ ճակատամարտը:

Ինչպես ասացինք, հայոց զորքը եղել է փոքրաթիվ՝ 400 հոգի պարսիկների 7000-ի դիմաց: Այդ 400-ը բաժանվեցին 4 առաջ-ի (ճակատի), ընդ որում՝ պայման կար, որ եթե մի կողմը թուլանա, ապա մյուսն անմիջապես օգնության գա: Ինչպես հայերը, այնպես և պարսիկները կռվում էին կատաղությամբ: Ճակատամարտի թեժ պահին Գարշոյլ Խորխոռունի մաղխազը, իր 100 զինվորների հետ անցավ թըշնամու կողմը: Այնուհետև նա իր ուժերին միացրեց կատիշներից<sup>10</sup> կազմված շոկատը, ապա հայ ուրացողներին և ձորի կողմից մտավ հայերի թիկունքը: Զորականներից մեկը տեսնելով, որ կատիշները կոտորում են հայերին, այդ մասին հայտնեց Կամսարականներին: Նրանք զայրացան լրաբերի դեմ, թե՛ դա մեր գունդն է, դու խաբեությամբ ուզում ես մեծ գործը տապալել: Քիչ էր մնում, որ նրան սպանեին: Շուտով, սակայն, համոզվեցին, որ պիտի ընկնեին ծուղակը, և իրենք հարձակվեցին դավաճանի վրա:

Այդ ընթացքում վասակ Մամիկոնյանի և Բաբգեն Սյունու հատվածում սպանվել էր պարսից մարզպան Ատրվշնասպը: Գարշոյլի դեմ գործողություններն ավարտվեցին փառավոր հաջողությամբ: Մեր հեղինակը շարունակում է՝ կատարելով սատանայի կամքը, երկու նախարար լուր տարան սպարապետին, մարզպանին, կաթողիկոսին (որոնք Գլին ոստանումն էին), իբր պարսիկները հաղթանակ են տարել,

Վասակ Մամիկոնյանը, Բարգեն Սյունին, Կամսարականները, Գնունիները՝ սպանվել, իսկ լանջակողմը, որտեղ գտնվում է Ակոռի գյուղը, ծածկվել է հայերի դիակներով: Բայց այդ լուրը դեռ չտարածված՝ երևաց Առաստամ Գնունին և հայտնեց՝ «Սուրբ խաչի զորությունը հաղթեց և մի՛շտ կհաղթի»: Շուտով մոտեցան և հաղթություն նվաճած զորամասերը:

Ջախջախելով պարսից բանակը՝ հայ մարտիկները հնարավորություն ստացան հանգիստ անցկացնել ձմեռը: Կռահելով, որ գարնանը կոհվը պիտի վերսկսվի, համապատասխան պատրաստություն տեսան [գլ. ԿԸ—ԿԹ]:

Եվ իրոք, 483 թ. սկզբին պարսիկները նոր արշավանք ձեռնարկեցին: Ինչպես և նախորդ տարում, նրանք դուրս եկան Ատրպատականից, փուշտիպանան սաղար Ատրնեբսեհի գլխավորությամբ<sup>11</sup>, Վահան Մամիկոնյանը Դվինից անմիջապես դուրս եկավ նրանց ընդառաջ և բանակեց Ներսեհապատ գյուղի մոտ, Արտազ գավառում: Բանակում էր գտնվում Հոհան Մանդակունի կաթողիկոսը: Հայերը պիտի մենակ դիմադրեին պարսիկներին: Դեռևս ձմռանը դեսպան էին ուղարկել Վախթանգ թագավորին, որպեսզի օգնության ուղարկի հոների խոստացած զորամասը: Երկար բանակցություններից հետո վրաց թագավորը ուղարկեց 300 հոն զինվոր, բայց մեկ ամիս շանցած՝ ետ պահանջեց նրանց ... [էջ 126. 24—30]:

Զորականներն ամբողջ գիշերը աղոթքով անցկացրին, իսկ առավոտյան Հոհան կաթողիկոսը դիմեց նրանց քաջալերիչ խոսքով՝ այդպիսին է հղել դարաշրջանի սովորույթը: Այնուհետև Վահան Մամիկոնյանը ճակատը բաժանեց 3 «կողմերի» (Ղազար Փարպեցու մեկ ուրիշ նկարագրությունից գիտենք, որ կողմ հատուկ տերմինը որպես հոմանիշ ունեցել է առաջ բառը): Ինքը՝ սպարապետը, իր այրուձիով կանգնեց ճախ «կողմի» աջից: Վրեն Վանանդացին իր հրամանատարության ներքո գտնվող այրուձիով առանձին տեղ գրավեց: Պատրաստ էին նաև «կողմերը»: Վահան Մամիկոնյանը զգուշացրեց այդ «կողմերի» ավագներին՝ մեր առջև

են գտնվում պարսիկների, կատիշների և Սյունյաց գնդի ընտիր զորականները<sup>12</sup>, պետք չէ շտապել, եթե սպարապետին հաջողվի փախուստի մատնել այն ուժերը, որոնք անմիջապես իր առաջ են գտնվում, ապա կնահանջեն նաև մյուս «կողմերը»:

Ճակատամարտը կատաղի էր, Բարշղ Վահևունու զինվորները շդիմացան և լքեցին մարտի դաշտը: Սահակ Բագրատունին և փուշտիպանների պետ Ատրնեբրսեհը մենամարտի բռնվեցին նիզակներով՝ վրիպեցին, ապա մարտը շարունակեցին ձեռնակովով: Վահանը վրենին խրամայեց շարժվել առաջ, բայց վրենը հրաժարվեց՝ «Ձեմ կարող այս պահին դու ինձ վրա հույս չդնես»: Եվ ահա սպարապետը, Կամսարական եղբայրների հետ միասին, վճռական հարձակում կատարեց: Հայ զորականները կործանում էին թշնամուն, Ներսեհ Կամսարականը մահացու հարված հասցրեց պարսից առաջնորդներից մեկին՝ Ատրվշնասպ Տապեանին: Տեսնելով այդ հաջողութունները՝ ոգի էին առնում փախստականները, վերականգնում շարքերը և անցնում հարձակման:

Հաղթանակը կատարյալ էր. ջարդելով թշնամուն, հայերը բանակ վերադարձան «բարի անուամբ և բազում փառք, լաւ աւարաւ և սաստիկ ընչիւք», ասում է պատմիչը [գլ. 2Ա]:

Ներսեհապատի ճակատամարտը տեղի է ունեցել 483 թ. գարնանը: Նույն գարնան երկրորդ մեծ հաջողութունը Վահանի եղբայր Վարդ Մամիկոնյանի ազատութունն էր: Վարդը մնացել էր պարսիկների հսկողության տակ: Վահանը միացավ ապստամբներին, քաջ գիտակցելով, թե ինչպիսի վտանգի է ենթարկում իր եղբոր կյանքը: Եվ ահա Վարդին հաջողվում է փախչել, այն էլ՝ ոչ մենակ, այլ իր հետ տանելով ծառաներին, շքախումբը, ամբողջ ունեցվածքը: Հասնելով Հայոց երկիրը, Վարդը միացավ ապստամբներին: Օգնութունը ժամանակին էր, առաջիկայում պատերազմը պիտի ավելի սաստկանար [գլ. 2Բ]:

Հայոց զորքը տեղավորվել էր Մաղկոտն գավառում՝ Այրարատ աշխարհի հարավում: Ճակատամարտից հետո Վառշակի կոչվող շերմուկի մոտ մտադիր էին հանգիստ առնել: Հենց այստեղ սուրհանդակը նամակ է բերում Վախթանգից: Վրաց թագավորը հայտնում էր. «Իմ Վրաց երկիրը մի մեծ գունդ է մտել. տեսնելով որ շեմ կարող դիմադրել՝ դիմել եմ փախուստի դեպի Հայոց լեռները և այստեղ, Վիրքի սահմանների մոտ, ձեզ եմ սպասում»: Միաժամանակ Վախթանգը հայտնում էր, որ հոներին հրաման է տվել՝ գալ և միանալ ապստամբներին: Հոները դեռևս չեն երևացել, բայց նախքան հայերի գալուստը՝ անշուշտ տեղ կհասնեն: Հայերը, վրացիները, հոները միանալով կշախշախեն պարսիկներին: Ավելին, եզրակացնում էր վրաց թագավորը, երբ հոները գան, մեզ անելիք չի լինի. նրանք իրենք կկատարեն գործը, մանավանդ որ Վախթանգը կոչ էր արել հոների «անչափ բազմությանը»:

Մինչդեռ հոները հապաղում էին, և Վախթանգը ճիգ էր անում այս կամ այն կերպ բացատրել նրանց ուշացումը: Մեկ ձգձգում էր լեռնականների գալուստը, մեկ էլ ասում, որ հոները միայն այն դեպքում կիջնեն լեռներից, եթե համոզվեն, որ հայերն արդեն պատերազմի դաշտում են գտնվում: Հայտնում էր նաև, որ իբր Միհրանը թողել է Վիրքը և Աղվանից կողմերն անցել: Ղազար Փարպեցին այդ բոլորը գիտակցված խաբեբայություն է համարում, բայց ի՞նչ էր մնում անել նեղն ընկած վրաց թագավորին հայերի օգնությունն ապահովելու համար:

Հոներն այնպես էլ չերևացին, իսկ հայ զորականները հավատարիմ լինելով Վախթանգի հետ կնքած դաշինքին («վասն զի երդումն էր Աւետարանաւ և խաչիւ ընդ թագաւորին Վրաց Վախթանգայ») շտապեցին օգնության և մտան Գուգարքի Կանգառք գավառը: Այստեղից նրանք իջան Ճարմանայնի դաշտը՝ Կուր գետի հովիտը. հենց այստեղ տեղի ունեցավ երրորդ մեծ ճակատամարտը:

483 թ. ամառն էր կամ վաղ աշունը՝ սաստիկ շոգ էր, նկատում է պատմիչը: Հայ իշխաններից ոմանք շարժումը

դեպի Վիրք սխալ էին համարում, բայց փոքրամասնութիւնն կազմելով, վերջիվերջո, ստիպված եղան համաձայնել: 3 թե 4 օրից երևաց Միհրանը: Պարսիկները բանակ դրեցին Կուրի մյուս ափին՝ հայ զորքի դեմ հանդիման: Հայերը թողեցին իրենց տեղը և ամրացան մի այլ վայրում, հակառակորդից ավելի հեռու:

Մինչդեռ կատարվեց այն, ինչ նման դեպքերում սովորական էր: Հայոց զորքի մի մասը գաղտնի բանակցութիւններ սկսեց Միհրանի հետ: Վահանն իբր բռնի կերպով էր ստիպել նրանց զենք բարձրացնել արիւնների դեմ: Եթե դուք, ասում էին նրանք դիմելով պարսիկներին, մեզ թողութիւն շնորհեք, ապա մենք կվերադառնանք նախկին ժառանգությանը: Իսկ վաղը, երբ ճակատամարտը սկսվի՝ մենք կփախչենք գնդից, մեզ հետ էլ կտանենք շատ շատերին [զլ. 29]:

Դավաճանների այդ քայլը քայքայեց հայոց զորքը. Վահանը գիտեր, որ իր բանակը կորցրել է երբեմնի կամքն ու պատերազմելու ցանկութիւնը: Այնուամենայնիվ, նա դասավորեց իր ուժերը այնպես, ինչպես դա թելադրում էր պատերազմ վարելու այն ժամանակվա գիտութիւնը: Հայերը և վրացիները կռվելու էին կողք-կողքի: Նրանք գտնվում էին ըստ երևույթին Կուրի աջ՝ հարավային ափին, իսկ պարսիկները, ժամանելով Աղվանքից, ամրացել էին հյուսիսային ափին: Ծակատամարտը սկսվեց, Մամիկոնյանները և Կամսարականները կռվում էին հերոսաբար, սակայն հայ ջոկատները ստիպված եղան հտ նահանջել. տազնապ պատեց նաև վրացիներին: Այդ ճակատամարտում սպանվեցին Վասակ Մամիկոնյանը և մարզպան Սահակ Բագրատունին:

Վահանը հեռացավ դեպի Տայոց կողմերը, ապաստան որոնելով Մամիկոնյանների ժառանգական տիրութիւնում (նախորդ գլխում ասացինք, որ 451 թ. աշնանը Տայքում էր ամրացել Վահանի հայր Համազասպ Մամիկոնյանը): Տայքում կարևոր դեպքեր են տեղի ունենալու նաև հետագայում: Նրան միացան Ճարմանայնի փախստականները: Սպարապետի հետ անբաժան էին երկու Կամսարական եղբայրները՝ Ներսէզը և Սահակը: Այստեղ եկավ Միհրանն իր գըն-

դով և բանակեց սահմանամերձ Դու գյուղում: Դուն գտնվում էր պարսից Հայաստանի հատվածում, մինչդեռ Վահանն ամրացել էր Հոռոմոց մասում: Միհրանի նպատակն էր կամ Վահանին շարդել պատերազմում, կամ խորամանկությամբ գերի վերցնել, կամ էլ համոզել, որ կամովին ենթարկվի պարսիկներին:

Վահանը բանակել էր Մկնառինչ գյուղում, Դուից 2 հրասահ (այսինքն՝ մոտավորապես 12 կմ) հեռավորության վրա: Եվ ահա սկսեցին գյուղից գյուղ անցնել սուրհանդակներ, Միհրանը ապստամբ սպարապետի հետ ձեռնամուխ եղավ բանակցությունների: Պարսից զորապետը համոզում էր Վահանին՝ «Մի կորչիր, արքայից արքայի ծառայությունից դուրս մի՛ եկ. Հայոց աշխարհը դեպի կործանում մի տանի: Հնազանդվիր թագավորին, իսկ ես [ձեր երկուսի միջև] կըլինեմ միջնորդ: Բարի հոգու տեր լինելով, նա սիրում է ինձ, ականջ դնում իմ ասածին: Ես կդիմեմ թագավորին, կհաշտեցնեմ ձեզ և կաշխատեմ, որպեսզի նա տա քեզ այն, ինչին որ արժանի ես»: Բայց Վահանը թվարկում էր պարսիկների կատարած այն ոտնձգությունները, որոնք և առաջացրին ապստամբության վերածված բողոքը [էջ 136—139]: Ճառերն, ինչպես և այլուր, Ղազար Փարպեցու ստեղծագործությունն են, դրանց իսկական կորիզը մենք բերեցինք շարժման պատճառների մասին խոսելիս: Այդ ճառերի հիման վրա կարելի է պատկերացում կազմել հայկական հասարակական հոգեբանության մի շարք առանձնահատկությունների մասին:

Բանակցությունների ընթացքում շոշափվեց մի հարց ևս: Տասնյակ տարիներ էին անցել այն պահից, երբ հայերը դարձել են արքայից արքայի հպատակներ: Վահան Մամիկոնյանի ժամանակակիցները դրանից շին տրտնջում (եթե առհասարակ տրտնջացել են): Բայց ահա Պերոզը հրապարակավ վատաբանում է հայերին. «Ասորին վատ մարդ է և անպետք զորական, բայց ասորուց վատթարն ու անպիտանը՝ հայն է»: Այդ հայտարարությունն ընկավիել է ոչ միայն որպես ազգային ինքնասիրության վիրավորանք: Արքայից ար-

քան կասկածի տակ է դրել հայ ազգի (միաժամանակ նաև զորքի) բարձր դիրքը, որը վաստակած են եղել հայաստանցի հպատակները: Մյուս խախտումների հետ մեկտեղ, այդպիսի վերաբերմունքը անպայման պիտի բողոք առաջացնեք [գլ. 26]:

Բանակցությունները շավարտած՝ Միհրանին անսպասելիորեն ետ կանչեցին Պարսկաստան: Ճանապարհ ընկնելով, նա իր հետ տարավ Հրահատ Կամսարականին և Հազդ Մյունուն: Կամսարականին հաջողվեց փախչել, իսկ Հազդ Մյունին պիտի ընտրություն կատարեր մահվան և ուրացության միջև: Մյունին ետ չկանգնեց իր հավատքից և 483 թ. սեպտեմբերի 12-ին իր կյանքն ավարտեց որպես վկա:

Միհրանի գնալը Վահանին հնարավորություն տվեց շունչ քաշել: Սպարապետը տեղափոխվեց Այրարատ և ձյմեռեց Դվինում: Փաստը նշանակալից է՝ 483—484 թթ. ոչ թե պարսիկները, այլ ապստամբներն են տիրում Հայոց երկրի բուն սրտում՝ ոստանում:

Ձմռանը Վիրքից դեսպաններ եկան, բերելով բոլորովին աներևակայելի մի լուր: Նրանց ասելով, Սահակ Բագրատունի մարզպանը և սպարապետի եղբայր Վասակ Մամիկոնյանը Ճարմանայնի մարտից հետո կենդանի են մնացել: Ծանր վերքերով, մեծ փորձություններից հետո նրանք վերջապես ապաստան են գտել ինչ-որ արեղայի մոտ, իսկ այժմ սպասում են, որ նրանց օգնության կգան, և նրանք կրկին կմասնակցեն ընդհանուր պայքարին: Այդ լուրը Ղազար Փարպեցին անվանում է անմիտ մարդկանց սատանայական խոսքեր: Սպարապետը մեծ կասկածով ընկալեց դեսպանների պատմածը: Լուրը գալիս է շարամիտ մարդկանցից,— բացատրում էր նա ընկերներին,— իմանալով, որ գարնանը պարսից բանակը մտնելու է Հայաստան, մտածում են, որ կարող են ոստանում գտնվող հայոց զորքը քայքայել, պառակտում մտցնել, ցրել այն [էջ 142. 36—143. 3]:

Այնուամենայնիվ, զիջելով ռանխորհուրդ և թեթևամիտ մարդկանց, մի ջոկատ են կազմում և Մուշեղ Մամիկոնյանի

գլխավորութեամբ ուղարկում Վիրք: Հայ զորականները տեղ հասնելով, անշուշտ, ոչ ոքի չեն գտնում<sup>13</sup>:

Ավարտվեց պատերազմական նաև երկրորդ ձմեռը, երբ 484 թ. իր զորքով Հայաստան ներխուժեց Զարմիհր Հազարավուխտը (482 թ. նա ամրականների ըմբոստութիւնը ճշնշելու համար եղել էր Աղվանքում): Հայ ուրացողները հասցրին հաղորդել նրան, որ հայոց զորքի գրեթե կեսը գտնվում է Վիրքում, ոստանում եղած Վահանի ուժերը փոքրաթիվ են: Հազարավուխտը որոշում է գրոհել Վահանի վրա Դվինի մոտ, այն մայրի անտառի կողմից, որը տնկել էր խոսրով Գ Կոտակ (330—338) Հայոց թագավորը: Վահանը և իր մարտիկները կռվում էին քաջաբար, սակայն ստիպված եղան նահանջել: «Հզոր մարդու քաջաբար կատարված փախուստը հաջորդ գործի վերաբերյալ, սաստիկ ահ է ներշնչում թշնամու գնդին», այդ կապակցութեամբ նկատում է պատմիչը [էջ 144. 30—31], սակայն չի թաքցնում, որ դրութիւնը շատ ծանր էր: Պարսիկները Դվինից դուրս մղեցին ապստամբներին, ճանապարհին վիրավորվեց և քիչ էր մնում գերի ընկնել կաթողիկոսը: Նույն օրը Վիրքից ետ եկավ Մուշեղ Մամիկոնյանը, բայց նրան մնում էր միանալ նահանջողներին [գլ. 29]:

Վահանը լավ էր պատկերացնում իրավիճակը: Նա որոշեց քաշվել խաղտիք, որը գտնվում էր բյուզանդական հատվածում: Սպարապետն իր զորքով կանգ առավ Վարայվաբում, Շաղագոմ գավառում: Հազարավուխտը հույս ուներ, որ իրեն անվտանգութեան մեջ գտնելով, Վահանը կկորցնի զգոնութիւնը: Նա գրոհեց, անակնկալի եկած սպարապետը շկարողացավ դիմադրել: Ղազարն ասում է, որ պարսիկները «զբազումս ի ռամիկ մարդկանէն Հայոց սպանանէին» [էջ 145. 33—34]: Տեղացի՞ էին դրանք, թե՞ փախստականներ: Վահանին հաջողվեց, այնուամենայնիվ, իր հիմնական ուժերով փախչել, ուստի Հազարավուխտի այդ արշավանքը ամենից կարևոր կետում նպատակին չհասավ: Զարմիհր Հազարավուխտը տեղավորվեց Դու գյուղում, որտեղից անցյալ՝ 483 թվականին, բանակցութիւններ էր սկսել Վահան

Մամիկոնյանի հետ: Միհրան զորավարը, սակայն, արդեն հաջորդ օրը հրաման ստացավ ուղևորվել Վիրք: Հրամանն ասում էր՝ կամ բռնել, կամ սպանել, կամ էլ իր երկրից հալածել Վախթանգ թագավորին [էջ 146. 13—14]: Հայաստանի նոր մարզպան էր նշանակվել Շապուհը՝ Միհրան տոհմից, իր հատուկ գնդով [գլ. 2Թ]:

Վախթանգ թագավորը նույնպիսի ծանր վիճակում էր գտնվում, ինչ-որ և Վահանը: Երբ Հազարավուխտն իր զորքով մտավ Արևելյան Վրաստանի սահմանները, ազատանու մի մասը, ուրանալով, միացավ նրան: Պարսից զորավարին շրջապատում էին նաև նրանք, ովքեր նախկինում «միաբանության մեջ էին արքայից արքայի հետ» [էջ 146. 22—23]: Խոստումներ տալով, Հազարավուխտը կարողացավ ի մի բերել այդ բազմությունը («միաբանեցուցեալ զշատրս յաշխարհէն Վրաց»), կազմելով մի հատուկ գունդ: Սեփական հպատակների դավաճանությունը Վախթանգին ըստիպեց ապաստան որոնել Եգեր աշխարհում, այն է՝ էգրիսի, Արևմտյան Վրաստան [գլ. 2]:

Հայաստանում բախումներ են տեղի ունենում, սակայն մեծ ճակատամարտեր չեն լինում: Ղազար Փարպեցին միշտ նշում է ապստամբների հաջողությունները, մինչդեռ նրա շարադրանքից ևս պարզ է, որ Վահան Մամիկոնյանի վիճակը արտակարգ ծանր է եղել: Սպարապետը իր ուժերը կենտրոնացրել էր պարսկա-բյուզանդական սահմանագծի մոտերքում, բայց սահմանն անգամ ապահովություն չէր տալիս պարսիկների հարձակումներից:

Պետք է ասել, որ հակառակորդի հաջողություններն էլ էին տարակուսելի: Ապստամբությունը շարունակվում էր, չէր հաջողվում ո՛չ ջարդել Վահան Մամիկոնյանին և Վախթանգին, ո՛չ էլ գերի վերցնել: Պարսիկները վախ են ունեցել, որ հայերը կդիմեն բյուզանդական հատվածում բնակվող իրենց հայրենակիցներին: Խոսքը Անձիտի, Մոփբի, Հաշտյանքի մասին է՝ այն տիրույթների, որոնք IV դ. վերջերից գտնվում էին կայսրության հովանավորության ներքո և վայելում էին ինքնավարութայն լայն իրավունքներ:

Մարզպանական Հայաստանի բնակչության համար նրանք եղել են ազգակիցներ՝ «ազգականներ»: Ղազար Փարպեցու վկայությամբ՝ Շապուհը գտնում էր, որ Պերոզը պետք է վերադառնա տուն և անձամբ ղեկավարի ռազմական գործողությունները Հայաստանում: Եվ ահա պարսիկների համար այդ ծանր պահին հայտնի է դառնում, որ հեփթաղների պատերազմում իր մահն է գտել արքայից արքա Պերոզը: Դատելի է ունեցել 484 թ. գարնանը կամ ամռանը<sup>14</sup> [գլ. 27—28]:

Պարսիկների պարտությունն արևելքում բացահայտեց Իրանի արտաքին քաղաքականության ողջ ճգնաժամը: Ամենայն հավանականությամբ, իր դերը կատարեց նաև հայվրացական ապստամբությունը, հայերի ու վրացիների համառ դիմադրությունը: Երբ Պերոզի սպանության բռնը հասավ Անդրկովկաս, Շապուհն ու Հազարավուխտը անմիջապես դուրս հանեցին իրենց զորքերը: Իսկ Վահան Մամիկոնյանը՝ հաղթական մուտք գործեց Դվին: Բայց սպարապետը նախապես «ողջախորհուրդ և աննենգ ուխտապահ նախարարների հետ միասին» անցավ Վաղարշապատ: Այժմյան մայր տաճարը դեռևս չկար, չկար անգամ նրա հիմքը կազմող հին կառույցը: Նրա տեղում գտնվում էր մի հին եկեղեցի, որը հիմնարկել էին Վահանի նախնիները: Վահանն առատ նվիրատվությամբ ապահովեց այդ եկեղեցու նորագումը մեծապայծառ շքեղությամբ: Շինարարությունը գալիք խաղաղ շրջանի առաջին նշանն էր:

Զենքը վայր չդնելով հանդերձ, հայերը դադարեցրել էին ռազմական գործողությունները: Պարսից արքունիքն իր հերթին երազում էր խաղաղության մասին: Մոտակա ամիսների բովանդակությունը կարելի է որակավորել որպես Իրանի, Հայոց և Վրաց երկրների միջև եղած հարաբերությունների կարգավորման շրջան:

Սպանված Պերոզի թափուր գահը գրավեց նրա եղբայր Վաղարշը (484—488): Փարպեցու Պատմության մեջ նա հանդես է գալիս որպես միանգամայն դրական հերոս: Անցյալի անհաջողությունները վերաբերվել էին Պերոզի բեր-

նաՎոր կամավորութիւնը», ապստամբութիւնը հայտարար-  
վել էր Պերոզի անմիտ քաղաքականութիւն հետևանք, մինչ-  
դեռ նոր արքան շրջապատի աչքում թվում է «այր քաղցր  
և աշխարհաշէն»: Ուրվագծելով արքայի հետագա քայլերը,  
Վրաստանից վերադարձած Զարմիհր Հազարավուխտը կոչ  
է անում, ի միջի այլոց, որ նա յուրաքանչյուրին ճանաչի  
ըստ իսկական արժանիքների՝ լինի դա Արի կամ ան Արի:  
Պետք է տարբերել պիտանուն և անպիտանին, խորհրդակ-  
ցել իմաստունների հետ, ապա ըստ արժանվույն վարձա-  
տրել վաստակավորներին: Այդ, իրականում երբեք շարտա-  
սանված ճառը, արտահայտում է ապստամբ հայերի պատ-  
կերացումը արդար շահանշահի մասին: Զ՛ է որ ապստամ-  
բութիւն պատճառներից մեկը հենց այն էր, որ Վաղարշի  
նախորդները, խախտելով նախարարական համակարգը, չէին  
զանազանում «պիտանուն» և «անպիտանին»: Այսպես թե  
այնպես, Հայոց երկիրը հարկավոր էր «նվաճել» խաղաղ  
եղանակով՝ այս հարցում Վաղարշի խորհրդատուները միա-  
ձայն էին: Իսկ նրանցից մեկը՝ Հայոց մարզպան Շապուհ  
Միհրանը, ընդգծում էր նաև, որ քանի հայերը մեզ էին  
ենթարկվում, ո՛չ Վիրքը, ո՛չ էլ Աղվանքը չէին համարձակ-  
վում հակառակ լինել:

Հետևելով ընդհանուր կարծիքին, Վաղարշը Հայոց երկիր  
է ուղարկում Նիխոր Վշնասպդատին՝ «զայր հեզ և մտացի և  
աշխարհաշէն»: Շահանշահը կարգադրում է՝ «Գնա Հայաս-  
տան և ամենայն քաղցրութեամբ և սիրով, Վահանի և նրա  
ընկերների կամքին համաձայն, համոզիր նախարարներին  
և բեր նրանց Արիներին՝ ի ծառայութիւն»: Բայց խաղաղ  
պատվիրակութիւն գործունեութիւնը ապահովելու համար  
Նիխորին տրվել էր մի մեծ զորաբանակ: Այն կազմված էր  
Ատրպատականի, Հեր և Զարևանդ գավառում գտնվող այ-  
րուձիուց [գլ. 25—28]:

Նիխոր Վշնասպդատը փորձ չարեց մտնել Հայաստանի  
խորքը, այլ կանգ առավ նվարսակ գյուղում, Ատրպատականի  
և Հայոց աշխարհի սահմանագծի մոտ: Հենց այստեղ էլ  
սկսվեցին բանակցութիւնները նրա և սպարապետի միջև:

Ղազար Փարպեցին մանրամասն նկարագրում է բանակցութ-  
յունները հերթականությունն ու կարգը, վերարտադրում  
(ավելի շուտ՝ հորինում) մասնակիցների ճառերը և այլն։  
Այստեղ շատ բան պայմանավորված է «Պատմության» ժան-  
րային պատկանելությամբ, սակայն հիմք չունենք մտա-  
ծելու, որ բանակցությունների էությունը հաղորդելիս, հեղի-  
նակը շեղվում է ճշմարտությունից։

Նիխորն իր հետ բերել էր Վաղարշ թագավորի հրովար-  
տակը, ուր ասված էր՝ «նվաճել հայերին խաղաղությամբ»։  
Կողմերը, սակայն, չէին վստահում միմյանց, ուստի բա-  
նակցությունները սկզբնապես կատարվում էին միջնորդնե-  
րի մասնակցությամբ։ Նիխորը ընտրել էր Չ հոգի՝ Շապուհ  
դպրին և Միհր Վշնասպ ձուարշացուն և նրանց ուղարկել  
Վահանի մոտ, նվարսակ գյուղը։ Իմանալով նրանց գալստյան  
մասին, սպարապետը իր մոտ հրավիրեց «ուխտապահների  
գունդը»՝ նախարարներին և ազատներին, ողջ այրուձին և  
հրամայեց նորեկներին հրապարակավ հայտնել Վաղարշի և  
ավագանու տեսակետը։ Երբ ասելիքն ավարտելով պատգա-  
մավորները լռեցին, Վահանն ասաց, որ պատասխան կտա-  
նան վաղը։

Հաջորդ օրը դահլիճում ներկա էին ինչպես հայ ազնւ-  
վականները, այնպես էլ Նիխորի պատգամավորները։ Դիմե-  
լով վերջիններիս, Վահանն (ըստ Ղազար Փարպեցու խմբա-  
գրության) ասաց հետևյալը. շատ և կարևոր խոսքեր ունենք  
ասելու ապստամբության պարագաների մասին, նաև այն  
մասին, ինչն է ստիպել մեզ մասնակից դառնալ այսպիսի  
խոշոր և մահաբեր գործի։ Անհնարին է գրի առնել այդ  
խոսքերը կամ հաղորդել դեսպանի միջնորդությամբ։ Կա-  
րող եմ դրանք հասցնել անմիջապես Արյաց թագավորին,  
նրա հետ միասին նաև ձեզ, որ պատկանում եք պարսից  
դռան ավագանուն։ Բայց Յ գաղափար պիտի հայտնեմ ձեզ  
Եթե այս երեք մտքերին արքան պատասխանի այնպես, ինչ-  
պես կամենում եմ ես և այստեղ գտնվողները, եթե պատաս-  
խանը լինի գրավոր, վավերացված արքայական կնիքով,  
ապա ընդունելի կլինեն ձեր ասածները, կլսենք ձեզ մեր

նախնինների օրինակով: Դուք լսում եք այժմ ոչ միայն իմ, այլև այստեղ գտնվողների խոսքերը: Այն երեք պահանջները, որ պիտի ներկայացնեմ ձեզ, այսօր չէ, որ առաջացել են. դրանց մասին մտածել ենք այն պահից, երբ մեզ հանձնել ենք մահաբեր գործի: «Եթե պարսիկները բալարարեն մեզ այս երեք հարցում՝ կժառայենք նրանց իբրև բնիկ և հավատարիմ ծառաներ: Եթե չհամաձայնեն և խստանան՝ կցրվենք աշխարհով մեկ, կկործանվենք, ուրախությամբ կհրաժարվենք կյանքից, բայց պարսկի առջև չենք խոնարհվի»<sup>\*</sup>:

Տեսնում ենք, որ բանակցությունների հենց սկզբից վահանը իրեն պահեց եթե ոչ որպես հաղթող, ապա ոչ էլ որպես պարտված: Խոսում է կտրուկ, մշտապես հիշելով արժանապատվության մասին: Հաշտության և խաղաղության երեք պայմաններն են՝

1. «Մեր հայրենի և բնիկ օրենքը մեզ եք թողնում, որևէ հայ մարդուն մոգ չեք դարձնում, մոգության դիմաց որևէ մեկին գահ և պատիվ չեք շնորհում, կրակարանը հեռացնում եք մեր Հայոց աշխարհից, մենք այլևս չենք տեսնելու աղտեղի և անպիտան մարդկանց թշնամանքը եկեղեցու նկատմամբ, ինչպես դա եղել է մինչ այժմ: Թույլ եք տալիս, որպեսզի աշխարհիկ քրիստոնյաները և հոգևորականները համարձակ և աներկյուղ հետևեն քրիստոնյա կարգին և պաշտամունքին՝ այնտեղ որտեղ և կկամենան»:

2. Անկարելի է մարդկանց ճանաչել «իշխանաբար», հարկավոր է «իրավաբար» զանազանել «լավերին»՝ «վատթարներից», «տոհմիկներից»՝ «անտոհմիկներից» և այլն: Երբ դա այդպես լինի, Արյաց աշխարհի գործերը կընթանան հաշող և անսխալ: «Ապա եթե նախընտրենք ինչպես ցայժմ հակառակը և ոչ ճիշտը՝ հակառակ կլինեն նաև գործերը, այնպես, ինչպես որ եղել են (հնում) և ինչպես դուք ինքներդ այդ տեսաք»:

<sup>\*</sup> Պարսկի առն երկիր ոչ պազուք՝ վահան Մամիկոնյանի ճառի այդ պատկերավոր արտահայտությունն ընտրել ենք որպես սույն գլխի վերնագիր:

3. Թագավորը պիտի տեսնի իր աչքով, լսի իր ականջով, ինքը ճանաչի (լավն ու վատը), խոսի իր բերանով, այլ ոչ թե դիմի իր ծառաների միջնորդությանը: Հակառակ դեպքում վաստակները կոշնչացվեն ծառաների ձեռքով, իսկ աշխարհը և նրա բնակիչները այլևս չեն մնա անսասան և հաստատուն: Եվ ամենայն ճիշտ մոտեցումն է ապահովում աշխարհի շենությունը և նրա տիրոջ պայծառ վիճակը:

Ինչպես ասվեց վերևում, առաջին հերթին թվարկված հանգամանքները պատճառ եղան, որ հայերը դիմեցին զենքի, դրանց վերացումը պիտի խաղաղություն մտցներ: Եվ Վահանը եզրափակեց. «Արդ, եթե դուք այսպես խոստանաք, խոստացածն էլ գրով ու կնիքով հաստատեք և մեզ տաք, ապա կոչեք մեզ և մենք կգանք և կլսենք ձեր խոսքերին, հավանություն կտանք թագավորի ասածին, ինչ և որ ասելու լինի: Ապա եթե այս երեք պահանջները չապահովեք, գտնեք որ անհնարին է՝ դրանով մեզ մահվան առջև կկանգնեցնեք. մենք պատրաստ ենք մեռնել, բայց Արյաց տիրոջը չենք ծառայի: Եվ եթե ես գամ, ապա այլ հարցերի մասին ինքս կխոսեմ նրա (Թագավորի) հետ, իսկ եթե այդպիսի պատեհություն չլինի, թող ասելիքս ինձ հետ մնա [գլ. 2Թ]:

Ավարտելով իր խոսքը, Վահանը պատգամավորներին հետ է ուղարկում Նիխորի մոտ: Նրանց ուղեկցում են մի քանի անվանի հայ նախարարներ: Առաջիկայում բանակցությունները վարելու են անմիջապես Վահանն ու Նիխորը: Ստանալով սպարապետի գրությունը Նիխորը մի պատասխան նամակ է ուղարկում նրան և Վահանին հրավիրում իր մոտ: Նամակից պարզ էր, որ Նվարսակի պայմաններն ընդունված են՝ Արյաց տերը և ավագանին հանձն են առնում ամբողջությամբ հետևել նրանց:

Բավարարված լինելով բանակցությունների այդ շրջանի արդյունքներով, Վահանը շարժվում է դեպի Արտազ գավառը (Նիխորը սպասում էր նրան Հեր գավառում): Զորավարն իր գնդի հետ կանգ է առնում Արտազի Ծղինդ գյուղում: Պարսիկների ոտնձգություններից իրեն ապահովելու համար, պահանջում է, որ Նիխորն իր մոտ ուղարկի առ-

վանի մարդկանց, որոնք Վահանի բացակայութեան ժամանակ կամնան հայ նախարարների հսկողութեան տակ: Նիխորին մնում է կատարել Վահանի պահանջը, 8 պարսիկ, որոնց թվում՝ Ատրպատականի կառավարիչ (շահապ) Բազեն, Հայոց երկրի նախկին հազարապետ Վեհվեհնամը և Միհրանի եղբայր Ներսազապուհը անցնում են հայոց բանակը: Արժանավորապես պատվելով նրանց, հայերը միաժամանակ աչք չպետք է հեռացնեն նրանցից:

Վահան Մամիկոնյանը առիթը բաց չէր թողնում ցույց տալու, որ նա հավասարի պես է վարելու բանակցութունները, շարունակ հաստատում էր հայոց կողմի արժանապատվութիւնը: Ուղեորվելով այն գյուղը, ուր նրան սպասում էր Նիխորը, նա հրաման է տալիս, որպեսզի զինվորները դուրս գան կատարելապես զինված, այնպես, ինչպես ռազմական գիտութիւնն է պահանջում ճակատամարտի պատրաստվելիս: Զորականներն, անշուշտ, կատարում են սպարապետի կամքը: Այնուհետև Վահանը նշան է անում, որպեսզի հընչեցնեն պատերազմական փողերը, և նրանց ձայնից թնդում էր երկիրը, նկատում է պատմիչը: Նիխորի բանակում տագնապ է առաջանում. կաշկա Վահանը եկել է ոչ թե խաղաղութիւն հաստատելու, այլ վնաս հասցնելու, բացականը հն ահաբեկված պարսիկները:

Նիխորը պատվիրում է Վահանին զգուշացնել, որ նա խախտում է արյաց կարգը, որովհետև փող հնչեցնելով իբր միայն պարսից սպարապետը կարող է մտնել բանակ: Վահանը հեզնանքով պատասխանում է. «Նախ դարձրու ինձ արյաց տիրոջ ծառա և հետո միայն կարգադրութիւններ արա»: Ինչ վերաբերում է արյաց աշխարհի կարգին, ապա Նիխորից ուսանելու կարիքը չունի, հիշողութիւնը տեղն է. մանավանդ որ շատ ժամանակ չի անցել այն պահից, երբ նա հեռացել է Պարսկաստանից: Պատմիչն, անշուշտ, ճոխացրել է միջադեպը, սակայն բանակցութիւնների մթնոլորտը ճիշտ է արտահայտված:

Վերջապես տեղի ունեցավ Նիխորի և Վահան Մամիկոնյանի հանդիպումը: Պետք է ասել, որ հատկապես բա-

Նակցութիւնները նկարագրելիս Ղազար Փարպեցին ազատութիւն է տալիս իր գրչին, շարագրանքը լցնում երկար մենախոսութիւններով: Վահան Մամիկոնյանը և Նիխորը, երկուսն էլ պատերազմի մարդիկ, ասես մրցակցում են հռետորաբանութեան մեջ, դժվար է ասել, թե նրանցից ով ում է գերազանցում: Անհնարին է այս էջերը դիտել որպէս իրականութեան անմիջական արտացոլում: Սակայն ընդհանուր առմամբ այդ էջերը շեն հակասում առաջացած իրավիճակին և հնարավորութիւն են տալիս բացահայտելու մի շարք կարևոր հանգամանքներ:

Պարսից կողմը դատապարտել էր սպանված Պերոզին, նրա վրա դրել կրած անհաջողութիւնների պատասխանատւութիւնը: Նիխորի ասելով, Պերոզը կործանեց իրեն, կործանեց Արշաց աշխարհի ուժն ու զորութիւնը, մեծ և ազատ թագավորութիւնը ենթարկեց հեփթաղներին [էջ 166. 23—25]: Ապստամբութեան պատճառը եղել է Պերոզը, Վահանը կտրուկ քայլերի է դիմել ի պատասխան Պերոզի բռնի շարութեան և ոչ թե իր կամքով, ապստամբների զոհերը Պերոզի ամբարտավանութիւնից են, իսկ նրանք, ովքեր կենդանի մնացին, բոլորովին անմեղ են [էջ 162. 38—39, 166. 17—19]: Այսպիսով, ապստամբներին ապահովված էր կատարյալ «թողութիւն»: Պերոզի նկատմամբ եղած բացասական վերաբերմունքը նոր երանգ էր մտցնում հասարակական-քաղաքական մտքի մեջ, որն իր հերթին հնարավորութիւններ էր բացում կարգավորել հարաբերութիւնները սասանյան հարևանների հետ: Այսրկովկասյան ժողովուրդները դրանից անշուշտ շահեցին:

Բանակցութիւններին ընթացքում պարզվեց մեկ հանգամանք ևս՝ ուրացողներն այլևս չէին դիտվում իբրև քաղաքական ուժ, որի վրա կարող էր հենվել Արշաց պետութիւնը: Նիխորը արհամարհում է նրանց, թույլ չի տալիս, որ մասնակցեն Վահանի պատվին կազմակերպված ընդունելութեանը: Բանն այնտեղ էր հասել, որ ուրացողները ցանկացած գնով ուզում էին ստանձնել «ապստամբութեան անունը», բայց ոչ ոք չէր համաձայնում նրանց շնորհել այդ պատի-

վը [էջ 170. 10—11]: Վահանն իր հերթին մերկացնում էր ուրացողների դերը, ցույց տալիս այն վնասները, որ հասցրեց էին նրանք ոչ միայն իրենց ազգակիցներին, այլև հենց պարսիկներին: Սպարապետը նրանց անվանում է «արք անպիտանք, ատեցեալք յամենայն սրբասէր մարդկանէ, փախստականք յաշխարհէն ըստ աղտեղի գործոց իւրեանց, լեառնախոյսք (այսինքն՝ մարդկանցից հեռացող՝ լեռներ փախչողներ), աւաղակապետք, արիւնապարտք, հացկատակք, բանորսողք, խաբեբայք, շաղակրատք, անյարուշք (կովարարներ), վատատոհմիկք» ևն, ևն [էջ 167. 16 ևն]: Ուրացությունից գալիք վտանգը ընդհանուր առմամբ վերացված էր:

Նիխորի և Վահանի բանակցությունները նվարսակի անմիջական շարունակությունն են հղել: Սպարապետը զարգացնում էր այն գաղափարները, որոնք առաջ էր քաշել նըվարսակի պայմանադրության մեջ և հատկապես պահանջում, որպեսզի հաշտության պայմանները հաստատվեն Վաղարշ թագավորի գրով և կնիքով՝ միայն դրանով հնարավոր կլինի ապահովել հայերի հավատարմությունը՝ «ծառայությունը» [գլ. ՂԱ—ՂԳ]:

Նիխորը պատրաստ էր ընդառաջել Վահան Մամիկոնյանի պահանջին, բայց իր կողմից մի ուրիշ պայման դրեց: Ապստամբել էր Պերոզի որդի Զարեհը, Նիխորը ցանկանում էր, որպեսզի խռովությունը ճնշի հայոց այրուծին: Վերադառնալով Գվին, Վահանը հատուկ գունդ կազմեց, հրամանատար նշանակելով Վրեն Վանանդացուն և իր Վասակ եղբոր որդուն՝ Գրիգորին: Զարեհը պարտություն կրեց ու ըսպանվեց, իսկ Վրենն ու Գրիգորը փառքով վերադարձան տուն: Նրանց քաջության համբավը հասել էր անգամ Վաղարշ թագավորին: Ռազմական ծառայությունից բացի այդ քայլը դիտվել էր, ըստ երևույթին, որպես հայերի հավատարմության յուրատեսակ ապացույց [գլ. ՂԴ]:

Մի քանի օր անց սկսվեց բանակցությունների երրորդ՝ եզրափակիչ փուլը: Շրջապատված «ուխտակից» նախարարներով, Վահանը հասավ պարսից դուռը, ներկայացավ Վաղարշ թագավորին: Ըստ Ղազար Փարպեցու՝ առաջին օրը

Քաղաքները, նկատի ունենալով ճանապարհի դժվարութիւնները, բավարարվեց նրանով, որ տեղեկացավ Վահանի ողջութեան մասին: Հաջորդ օրը ատյանը լցված էր Դուան ավազներով, անվանի մարդկանցով, պատմիչի արտահայտութեամբ՝ «սաստիկ որերով»: Պերճախոսութեան մրցումը այս անգամ շարունակվում էր Քաղաքների և սպարապետի միջև: Բանակցութիւնները պատվում էին հին թեմաների շուրջ: Վաղարշն ասաց, որ ապստամբութեան պատճառները Պերոզի գործած սխալներն են: Վահանն իր հերթին դատապարտեց սպանված արքայից արքային, շեշտեց, որ եթե նրա բռնապետութեան մյուս զոհերը նյութապես էին տուժում, ապա հայերը ունենում էին հոգեկան կորուստներ [«Իսկ զմեզ՝ հոգուով հարկանէիք», էջ 173. 14]: Սպարապետը կրկին ու կրկին անդրադարձավ լավերին ու անպիտաններին շփոթելու վտանգին. (հայ նախարարների համար դա դարձել էր հիվանդագին մի հարց): Այժմ, եզրափակեց սպարապետը, եթե պարսիկները ճիշտ դիրք ընդունեն, ապա հայերը կլինեն նրանց վստահելի հպատակները:

Վաղարշը համաձայնեց ճանաչել հայերի բոլոր պահանջները, քանի որ ապստամբութեան պատճառը Պերոզի բռնութիւնն էր, հայերն, ասաց նոր արքան, ընդմիջտ թողութիւն են ստանում: Միաժամանակ առիթը բաց չթողեց շեշտելու, որ իրենց տերերի նկատմամբ նրանք պիտի լինեն հավատարիմ ծառաներ [գլ. 15]:

Վահանը ճանաչվեց Մամիկոնյանների տանուտեր, հաստատվեց, ըստ իր նախնիների օրինակի, հայոց սպարապետ (հետաքրքիր է, որ նոր շահանշահը նորոգում էր իր նախորդի որոշումները, որոնք ապստամբութեան պատճառով հավանաբար շեղյալ էին համարվել): Ծանաչվեցին նաև Վահանի զինակիցների իրավունքները: Որոշվեց Կամսարական տոհմի տանուտերը. դա, ըստ երևույթին, եղել է Սահակը<sup>15</sup>: Ինչ վերաբերում է Արծրունիներին, ապա արքայից արքան հետաձգեց հարցի լուծումը, մինչև որ այդ տոհմը իր վաստակներով արժանանա արքայական շնորհին [գլ. 16]:

Հրաժեշտ տալով արքայից արքային, Վահանը վերադառնում է հայրենիք: Նրան ընդառաջ է գալիս կաթողիկոս Հոհան Մանդակունին, նրանք միասին մտնում են Վաղարշապատ: Վահանը նվերներ է տալիս կաթողիկե եկեղեցուն և սուրբ կույսերի տաճարներին, այդ օրերը եկեղեցիներում ճոխ արարողություններ են լինում, որից հետո Վահանը հանդիսավոր կերպով մուտք է գործում Հայոց աշխարհի «բուն ոստանը» (տվյալ դեպքում մայրաքաղաքը՝ Դվին) [գլ. 25]:

Ահա թե ինչպես ավարտվեց հայերի համար 482—484 թթ. ապստամբությունը: Վահան Մամիկոնյանը կարող էր գոհ լինել՝ նրա բոլոր պահանջները բավարարված էին, քաղաքական ուժն անցել էր նրա և նրա կողմնակիցների ձեռքը: Շատ ժամանակ շանցած, պարսիկները ավելի լայնացրին հայոց ինքնավարության սահմանները:

Հայոց երկրի Անդեկան անունով պարսիկ մարզպանը նստած էր Դվինում: Պատմիչը նրան համարում է «այր խելացի, մտադիր, իմաստահայեաց, որ գիտէր ճանաչողությամբ որոշել զիմաստունն յանմտէն և զլան ի վատթարէն»: Անդեկանի և Վահանի միջև հաստատվեցին բարեկամական հարաբերություններ: Եվ հենց Անդեկանն ինքն առաջարկեց, որ Հայոց մարզպան լինի Վահան Մամիկոնյանը: Հետաքրքիր է պատճառաբանությունը: Քչերը կարող են համեմատվել Վահանի հետ իրենց իմաստությամբ, բացատրում էր Անդեկանը Վաղարշ թագավորին: Բացի այդ, շարունակում էր նա, Հայոց աշխարհը մեծ է, մարդ 2—3 տարում հազիվ կարողանա ճանաչել այն, զանազանել լավին վատթարից, պիտանուն՝ ապիրատից (Ղազար Փարպեցին է, անշուշտ, և ոչ թե Անդեկանը, կրկին ու կրկին վերադառնում այդ հարցին): Պարսիկ մարզպանը գալիս է իր ընտանիքով, ծառաներով, աղախիններով: Ծախսի տակ են ընկնում թե՛ Արյաց թագավորը, և թե՛ «հավատարմագրված երկրի» բնակչությունը: Եթե մարզպան լինի Վահանը, իր տան պաշարով կապրի, «գուտ բերելով արքունի գանձատանը: Դժվար է ասել՝ իրոք Դուռը նկատի է ունեցել այդ հանգամանքը,

թե Անդեկանի հանձնարարության եղանակը, պատկանում է Ղազար Փարպեցու ստեղծագործական մտքին: Փաստն այն է, որ, մնալով Հայոց սպարապետ, Վահան Մամիկոնյանը ստանձնեց նաև մարզպանի պաշտոնը: «Վաղվաղակի հրամայէր թագաւորն Վաղարշ, միաբանութեամբ ամենայն աւագանոյ դրանն և Արեաց՝ հրովարտակ առնել ի Հայս, և զտէրըն Մամիկոնէից և զգօրավարն Հայոց Վահան՝ մարզպան ի վերայ աշխարհին կարգել» [էջ 178. 11—14]: Հաղորդելով այդ մասին, Ղազար Փարպեցին անսպասելի մի նշում է անում՝ իմանալով հայերի նախանձի մասին (զխանտածութիւն Հայ մարդկան ճանաչելով) Վահանը տատանվում է, սակայն չի համարձակվում թագավորական հրամանին ընդդիմանալ... Այսպես թե այնպես, ինչպես ռազմական, այնպես էլ վարչական իրավունքն այսուհետև նրան է պատկանում: Հայոց ինքնավարութիւնը մի մեծ քայլ է անում դեպի առաջ: Այն էլ ավելացնենք, որ Վահանի ժառանգը որպես մարզպան եղել է նրա Վարդ եղբայրը՝ դարձյալ ապստամբության մասնակից<sup>16</sup>:

Կասկած չկա, որ ապստամբության հաղթական ավարտը Վրաստանում ևս ամրապնդեց ինքնավարութիւնը, այն էլ՝ սեփական թագավորության ձևով:

\* \* \*

V դ. հակասասանյան առաջին և երկրորդ ապստամբութիւններն իրենց էութեամբ շատ մոտ լինելով, ունեցել են տարբեր ընթացք: Առաջինը տևել է ընդամենը մեկ տարի՝ 450 թ. ամառվա ամիսներից մինչև 451 թ. մայիսը: Երկրորդի տևողութիւնն է՝ մոտ երկու տարի, այն սկսվել է 482 թ. և ավարտվել 484 թ. կեսին<sup>17</sup>: Առաջին ապստամբության համեմատ, երկրորդը եղել է ավելի զանգվածային, տարածվել երկրով մեկ: Ծիշտ է, երկու դեպքում էլ ապրստամբութիւնն ընդգրկել էր միայն մարզպանական Հայաստանը: Մի քանի անգամ Վահանն ապաստան է որոնել բյուզանդական հատվածում, սակայն այդ հատվածի հայութիւնն ընդհանուր առմամբ անտարբեր է եղել արևելցիների ճա-

կատագրի նկատմամբ: Պարսիկներն, այնուամենայնիվ, չէին բացառում, որ կայսեր հայ հպատակները կարող են միանալ իրենց ազգակիցներին և, բնականաբար, երկյուղ էին կրում այդ հնարավորութունից: Եթե վարդանանց պատերազմը գլխավորապես Ավարայրի ճակատամարտն է, ապա վահանի ապստամբության ընթացքում, չհաշված բազմաթիվ փոքր բախումները, տեղի են ունեցել 3 մեծ ճակատամարտ՝ Ակոռիում, Ներսեհապատում, Ճարմառայնի դաշտում: Առաջին ապստամբութունը գերազանցապես հայկական էր, երկրորդին մասնակցել են թե՛ հայեր, թե՛ վրացիներ:

Ղազար Փարպեցու մանրամասն շարադրանքի հիման վրա հնարավոր է պարզել շարժման որոշ առանձնահատկություններ: Երկու կողմերի բախումը ունեցել է զուտ ռազմական բնույթ, նրան մասնակցել են միայն զինվորական ստորաբաժանումներ: Տեղացի բնակչության նկատմամբ գործադրած ճնշման մասին մենք ոչինչ չգիտենք, բացառությամբ մեկ-երկու միջադեպի: Այսպես, 484 թ. գարնանը, երբ ապստամբներն առավել ծանր վիճակում էին գտնվում, պարսից ջոկատները «գրազումս ի ռամիկ մարդկանէ Հայոց սպանանէին» (էջ 145. 33—34): Դեպքը տեղի է ունեցել Շաղագումք գավառում, Հայոց աշխարհի բյուզանդական հատվածում: Խոսվում է նաև այն մասին, որ պարսից զինվորները հարձակվեցին Կարինի մոտերքում հունձ անող մշակների վրա, բայց նախաբարներին հաջողվեց պաշտպանել գյուղացիներին [էջ 148—149]: Այսպիսով, ընդհանուր առմամբ՝ ապստամբության հաջողությունը կախված էր ռազմական գործողությունների արդյունքներից, ընդ որում՝ այդ գործողությունները երկու կողմն էլ վարում էր հետևելով ժամանակի կանոններին: Ճարմառայնի ճակատամարտի նախօրեին վահանը կազմեց իր գունդը «ըստ օրինի ճակատուն պատրաստութեան» [էջ 134. 4]: Փարպեցու շարադրանքի մեջ կան մի շարք նման դիտողություններ:

Վահանի գործը եղել է շարժունակ, սպարապետը այն հեշտությամբ տեղափոխում էր Այրարատից դեպի Տայք, անցնում պարսկա-բյուզանդական սահմանը, իսկ երբ իրադրությունը փոխվում էր՝ անմիջապես վերադառնում Դվին:

Ե՛վ հայերի, և՛ վրացիների մոտ գլխավոր դերը կատարում էր այրուձին, որը կազմված էր գերազանցապես ազատներից ու նախարարներից, այդ իսկ պատճառով Ղազարի շարագրանքը լի է ազնվական անունների հիշատակությամբ: Բայց ոամիկները ևս մտել են այրուձիի կազմի մեջ [տե՛ս էջ 144. 21—23]: Որոշ ակնարկներից կարելի է եզրակացնել, որ թե՛ առաջին, թե՛ երկրորդ ապստամբության շրջանում հատուկ հասարակական դեր են կատարել նաև ոամիկ-շինաչանները: Ներսեհապատի ճակատամարտում, հաղորդում է պատմիչը, նախարարների և ազատների կողքին կուվել են նաև ոամիկներ [էջ 128. 27—28]: Ռամիկների դերի մասին անուղղակի կերպով վկայում է նաև հետևյալ միջադեպը: Երբ Վահան Մամիկոնյանը ներկայացնում է Նիխոր Վշնասպդատին, վերջինս դռնփակ զրույցից հետո հրաման է տալիս «ամենայն եկեղոցն ընդ Մամիկոնենին Վահանայ՝ նախարարաց և ոամկաց, մտանել յատեանն առ նոսա» (էջ 169. 23—24): Իր դերն է կատարել, անշուշտ, նաև հոգևորականությունը, հայ մարտիկների հետ է եղել ինքը՝ կաթողիկոսը:

Շարժումն անշուշտ, միաձուլլ չի եղել, ընդ որում՝ «ուրացությունը» չէ միայն, որ վնասել է միասնությանը: Երբեմն, ի վնաս ընդհանուր շահերի, հաղթանակել են տեղական շահերը: 484 թ. ապրիլի 9-ին Վահան Մամիկոնյանի կողմնակիցների և հակառակորդների միջև իսկական պատերազմ է սկսվել (հաղթանակ են տարել սպարապետի մարդիկ): Կատարյալ համաձայնություն չի եղել նաև հայերի ու վրացիների միջև: Ըստ Ղազար Փարպեցու, վրաց թագավորը շարունակ խորամանկության է դիմել, դրանով երբեմն վնաս հասցնելով իր դաշնակիցներին: Սակայն մասնակի հակասությունների կողքին, այդ շրջանում դեռևս միադավան հայերին ու վրացիներին ամուր կապել է ընդհանուր

նպատակը և դրացիական հարաբերութիւնները բազմադար-  
յան ավանդույթը:

Քվական գերակշռութիւնը մշտապես պարսիկների կող-  
մըն է եղել: Ակոռիի ճակատամարտում 7000 պարսիկ զին-  
վորների դեմ դուրս են եկել 400, հետագայում, մաղխազ  
Գարշոյլի դավաճանութիւնից հետո՝ 300 հայ: 483 թ. Դու  
գյուղի մոտ եղած մարտում պարսիկների թիվը հասել է  
հազարների, իսկ հայերինը՝ ընդամենը հարյուրների [էջ 137.  
15—16]: Ղազար Փարպեցին բազմաթիվ օրինակներ է բե-  
րում, երբ Վահանի տասնյակները դուրս են եկել հակառա-  
կորդի հարյուրների և հազարների դեմ [էջ 136, 7—8, 156,  
22, 158, 36—37, 159. 4—5 և այլն]: Նման տվյալների ստույ-  
գութիւնը կարելի է կասկածել, բայց, ինչպես էլ որ դատե-  
լու լինենք, փոքրաթիվ ապստամբները դուրս էին եկել բազ-  
մաքանակ պարսից զորքի դեմ:

482—484 թթ. ապստամբութիւնը վերացրեց այն տազ-  
նապալից երևույթները, որոնք առկա էին Հայաստանում  
շարժման նախօրեին: Չէր վերացել, անշուշտ, պարսից գե-  
րագույն իշխանութիւն լուծը, մնում էին այն հակասութիւն-  
ները, որոնք հատուկ են միջնադարյան հասարակութիւնը:  
Այնուհանդերձ, պայքարի հաղթական ավարտը լիցքավորեց,  
բարոյական նոր ուժ տվեց հայերին: Նույնը կարելի է ասել  
նաև հարևան վրացիների մասին: Ինքնավարութիւն վերա-  
կանգնումը և՛ հայերի, և՛ վրացիների համար ապահովեց  
պատմական զարգացման բուն ընթացքը: Այդ էր 482—  
484 թթ. ապստամբութիւն ամենից կարևոր արդյունքը:

Դա միաժամանակ եղել է V դարի հասարակական զար-  
գացման և ազատագրական պայքարի բուն ելակետը:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### Գ Լ Ո Ւ Խ Ա

1. Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 66:
2. Բ. Ուլուրաբյան, Հյուսիս-արևելյան Հայաստանի նախամարդպանական շրջանի վարչա-քաղաքական վիճակի հարցի շուրջը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1975, № 2, Բ. Հարությունյան, Մեծ Հայքի թագավորության հյուսիս-արևելյան մարզերի վարչա-քաղաքական 'կացությունը 387—451 թվականներին, «Բանբեր Երևանի համալսարանի», 1976, № 2:
3. Տրդատ Ա մասին տե՛ս Հ. Մաեանյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Ա, Երևան, 1944, էջ 326—355, Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Հայաստանը նախնադարյան-համայնական և սուրբ-կատիրական կարգերի ժամանակաշրջանում, Երևան, 1974, էջ 734—764: Տրդատի ճանապարհորդության մասին խոսում են մի շարք հույն և լատին պատմիչներ, նրանց թվում նաև Տակիտոսը: Վերջինիս տեղեկությունները Հայաստանի մասին թարգմանված են հայերեն (տե՛ս Տակիտոս, քաղեց և լատիններենից թարգմանեց Պ. Ստեփկյան, Երևան, 1941):
4. Գրականության մեջ նա հայտնի է որպես Տրդատ Երրորդ (և ոչ թե Զորրորդ): Պարզվում է, սակայն, որ նրանից առաջ Հայաստանում իշխել է ոչ թե նրա Խոսրով Բ հայրը, այլ Տրդատ Գ հորեղբայրը: Վերջինս հիշատակված է նաև Պայկուլիում գտնված պարսկերեն հայտնի արձանագրության մեջ՝ մյուսների հետ միասին Տրդատ արքան ողջմտում է շահանշահ Ներսեհի պարսից գահ բարձրանալը (տե՛ս Յ. Toumanoff, The third-century Arsacids, „Revue des Etudes Arméniennes“, nouvelle série, t. VI, 1969, էջ 257):
5. Հ. Աճառյանը ևս այս կարծիքին է. տե՛ս նրա Հայոց անձնանունների բառարան, Գ, Երևան, 1946, էջ 112:
6. C. Toumanoff, Studies in Christian Caucasian History, Georgetown University Press, 1963, էջ 170.
7. Տե՛ս Գ. Խ. Սարգսյան, Հին Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման ուղիների մասին, Երևան, 1962, էջ 10—11:

8. Սպասկայսի մասին հետաքրքիր վարկած է առաջարկել Գ. Մուրադյանը. նրա կարծիքով՝ հավանաբար հենց այդ բառն է փորագրված եղել Գառնիի հունարեն արձանագրության վնասված մասում. *Г. С. Мурадян, Греческая надпись Трдата I, найденная в Гарни, 984, 1981, № 3, էջ 89.*

9. Մոզես Խորենացու տասնյակ ձեռագրերից գաճաճ ճիշտ ձևը տալիս է միայն մեկը, մյուսներում ունենք գաճաճ, որ այլ բան է նշանակում: Մոզես Խորենացու հրատարակիչները առանց տատանվելու նախընտրությունը տվել են այդ միակ ընթերցմանը: Մի նման օրինակ կարելի է բերել նաև XI դ. պատմիչ Արիստակես Լաստիվերտյուց: Բազմաթիվ ձեռագրերից այստեղ կա միայն մեկն է տալիս վառնզք ձևը, մյուսներն այն խեղաթյուրել են՝ ֆռանզք, ֆռանկք, փռանկք, բուլորովիս փոխելով իմաստը: Ի դեպ, հունարենից փոխառված վառնզք անշուշտ ավելի հարազատ է հայերենին, քան նոր շրջանում ուսուցիչից վերցրած և այժմ քաղաքացիության իրավունք ստացած վառյազը:

10. Լ. Օրբելու կարծիքով, արարողության ժամանակ այդպիսի մեծ դեր կատարող բարձերն են դրոշմված սառանյան շրջանի այն ոսկե սկուտեղի վրա, որն այժմ պահվում է Լենինգրադի էրմիտաժում: Իսկ երբ 1911—1912 թթ. գիտնականը այցելել էր պատմական Մոկս, նա նման առարկաներ տեսել էր տեղացի Մուրթուլյա քուրդ բնկի տանը. այստեղ կա բարձր եղել է պատվի խորհրդանշան, մի մնացուկ, որը պահպանվել է հնագույն ժամանակներից, տե՛ս *И. А. Орбели, Фольклор и быт Мокса, М., 1981, էջ 33—34.*

11. Տե՛ս *А. Г. Периханян, Сасагидский судебник, Ереван, 1973, էջ 445, 423* բառի աակ:

12. Օգտվում ենք Երվանդ Տեր-Մինասյանի աշխարհաբար թարգմանությունից. տե՛ս Եղիշիի վարդանանց պատմությունը, թարգմանությամբ և ծանոթագրություններով. պրոֆ. դ-ր Ե. Տեր-Մինասյանի, Երևան, 1958:

13. Գրականության տեսությունը և հարցի հստակ լուսարանումը տե՛ս հատկապես Գ. Խ. Սարգսյան, Հին Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման ուղիների մասին. Երևան, 1982, հմմտ. *А. П. Новосельцев. Генезис феодализма в странах Закавказья. М., 1980.*

14. Այս օրինակը վերցված է Անանիա Շիրակացու «Յաղագս հարցման և լուծման» թվարանության դասագրքից: Ներսեհ Կամսարականը՝ 482—484 թթ. ապստամբության մասնակիցներից է, սույն աշխատության Գ դիտում նրա մասին կխոսենք հանգամանորեն:

15. Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 91—99:

16. Ե. Արաքելյան, Гарни I, Ереван, 1961, էջ 25—26.

17. Նախալուսավորչական շրջանի մասին տե՛ս մասնավորապես՝

Լ. Գ. Աճառեան, Քրիստոնեության հետքերը Հայաստանի մէջ Ս. Գրիգոր

լուսատրչի քարոզութիւնէն առաջ (պատմական ուսումնասիրութիւն), Վե-  
նետիկ, Ս. Ղազար, 1979:

18. Տարածված է նաև այն կարծիքը, թե հայերն անմիջապես մեր-  
ժեցին Քաղկեդոնի ժողովը, որը սակայն խախտաւ հիմքեր ունի: Այդ մա-  
սին տե՛ս Ե. Տեր-Միհայրան, Տիմոթեոս Կուրի «Հակաճառութիւն առ սահ-  
մանեալսն ի ժողովոյն Քաղկեդոնի» երկի թարգմանութիւն ժամանակը  
(«Պատմա-բանասիրական հետազոտութիւններ», Երևան, 1971, էջ 394—  
410 և այդ ժողովածուի նաև այլ էջերում):

## Գ Լ Ո Ւ Խ Բ

1. Ստրաբոն, քաղեց և թարգմանեց Զ. Աճառյան, Երևան, 1940, էջ 67  
(ընդգծումները թարգմանչինն են):

2. Այդ երգը պահպանվել է Մովսես Խորենացու «Հայոց պատմու-  
թիւն» կազմում: Խորենացու բնագրի աշխարհարար թարգմանութիւնները  
վերցված են հետևյալ հրատարակութիւնից՝ Մովսես Խորենացի. Հայոց  
պատմութիւն, ներածութիւնը և ծանոթագրութիւնները Ստ. Մալխասյանցի,  
Երևան, 1940:

3. Р. Якобсон, Древнеармянский ВАХАГН в свете сравни-  
тельной мифологии, ՊՐՀ, 1982, № 4. В. В. Иванов, Выделение  
разных хронологических слоев в древнеармянской и проблема  
первоначальной структуры текста гимна Ва(х)агну, ՊՐՀ, 1983, № 4.

4. L. Bréhier, La civilisation byzantine, Editions Albin Michel,  
1970, էջ 306.

5. Հրատարակութիւնը տե՛ս ԿՅ, ԿՅՄ, 2, 1980, էջ 160—217:

6. Այդ տաճարը չի պահպանվել: Մաշտոցի գերեզմանի վրա եղած  
այժմյան եկեղեցին կառուցվել է XIX դ.:

7. Ն. Աքունց, Մաշթոց և նրա աշակերտները ըստ օտար աղբյուր-  
ների. տե՛ս Մեհրոպ Մաշտոց, Հողվածների ժողովածու, Երևան, 1962,  
գրքում, էջ 203: Հետազոտողը գտնում է, որ Մաշթոց անունն առաջացել է  
պարոկ. մազք արմատից, անցնելով փոփոխութիւնների հետևյալ ուղին՝  
Մազդոց→Մածոց→Մաշդոց→Մաշթոց: Սույն գրքի «Մաշտոց» գրու-  
թիւնը տուրք է ընդունված ուղղագրութիւնը:

8. Օգտվում ենք Ն. Աղունցի հունարենից հայերեն (գրաբար և աշ-  
խարհաբար) կատարված թարգմանութիւնից, անշշան փոփոխութիւններով:

9. Աքունց, Մեհրոպ Մաշտոց, էջ 201—202:

10. Այսինքն ժողովի մասնակիցները. ավելի մանրամասն տե՛ս Կոռ.,  
էջ 120, ծան. 147, 148:

11. Կորյունի երկից քաղված աշխարհաբար թարգմանութիւնները  
պատկանում են Մանուկ Արեղյանին:

12. Մեմական լեզուների այդ առանձնահատկութիւն մասին տե՛ս,  
օրինակ՝ Դ. Դիրուցեր, Алфавит, М., 1963, էջ 260—263, մասնավոր-  
ապես խմբագրի առղատակի գիտողութիւնները:

13. Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, հ. Ա. Ե., 1975, էջ 882:

1. *Перихахан.* К вопросу о происхождении армянской письменности. Переднеазиатский сборник, II, М., 1966.

15. Տե՛ս մասնավորապես Ե. Տեր-Մինասյանի հոդվածը «Հայոց գրերի գյուտի թվականի և այլ հարակից խնդիրների մասին», *ԲՄ*, № 7, 1964, էջ 25—48: Անվանի գիտնականը ինչ-որ շահով ամփոփում է կատարված աշխատանքը, պարզություն մտցնելով Կորյունի բնագրում եղած միջանի անունների վերաբերյալ:

16. Կոր. Ժ, էջ 111, ծան. 88:

17. Եկեղեցու հայրեր են կոչվում քրիստոնեության տարածման ու հաստատման առաջին դարերի գործիչները, որոնք նաև խոշոր գրողներ են եղել: Նրանց երկերում մշակված են դավանաբանական հիմնական հարցերը: «Հայրեր» անվանումը տարածվում է միայն նրանց վրա, որոնք երբեք չեն մեղադրվել հերձվածողության մեջ և ճանաչվել են համընդհանուր եկեղեցու կողմից:

18. Լ. Տեր-Պետրոսյան, Հայ հին թարգմանական գրականություն, Ե., 1984, էջ 6:

19. Ահա խնդրո առարկա նախադասության բնագիրը՝ «Եւ արդ առեալ նախարանեսցուք, եթէ իցէ՞ համարձակութիւն գրով նշանակել զվարս արանցն կատարելոց, ոչ ի մէնչ արուեստախօսեալ մերոյն կարծեօք վիճարանելով, այլ յօրինակացն տուելոց զընդդիմակացն բարձրացուցանել» [Կոր., էջ 24. 6—9]: Մ. Աբեղյանի թարգմանությամբ՝ «Բայց արդ՝ նախ մի առաջարան անենք, թե թույլատրելի՞ է արդոք կատարյալ մարդկանց վարքի մասին գրել: Ոչ թե մեր կողմից, մեր կարծիքով վիճարանելով կճարտարախօսենք, այլ տրված օրինակներով պարզ կերպով կապացուցենք հակառակը»: Մանրթագրություն՝ «Այսինքն՝ հակառակ այն մարդկանց կարծիքի, որոնք ասում են, թե թույլատրելի չէ»: Մոտավորապես նույնն է նաև Կ. Մելիք-Շահջանյանի և Շ. Սմբատյանի ռուսերեն թարգմանությունը:

Ընթերցողը նկատած կլինի, որ մենք այլ կերպ նեք հասկանում այդ կեճոտո նախադասությունը: Պետք է ավելացնենք, որ մի կետում թարգմանությունը բավարար չէ նաև քերականության տեսակետից: Բանն այն է, որ մերոյն ձևը մեր ստացական դերանվան սեռական հոլովն է՝ որոշիչ հոդով, մինչդեռ կարծեօք բառի հետ համաձայնվելու համար այն ևս պիտի լինի գործիական հոլովով: Սպասելի էր ուրեմն մերով կարծեօք, մինչդեռ բնագրում մերոյն կարծեօք է: Խոսքն, անշուշտ, սեփական կարծիքի մասին է, բայց ինչպես բացատրել խնդրառության այդ խախտումը՝ բնագրի աղճատմամբ: Մ. Աբեղյանը առանց վերապահության թարգմանում է «մեր կարծիքով»:

20. Հմմտ. Սեբեոսի մոտ՝ «Ջայս լուաք յարանց գերելոց ի Խուճաստան Տաճկաստանէ, որոց ինքեանք իօկ ակնատեսս եղեալ պատմեցին»:

մեկ զայս բանն [Մեր., էջ 139. 21—22]: Նախորդ հատվածում խոսվում է արարական արշավանքի մասին, ընդհանուր գծերով ներկայացվում է այդ մեծ եղելության պատմությունը: Մեկ ուրիշ օրինակ. Մովսես Խորենացին ողջունում է իր մեկնեանսին շի սկզբան յայսմ բանիցս [Մով. Խոր., էջ 5. 5]: Թվում է, որ տվյալ դեպքում ևս, քրանքս բառը հանդես է գալիս որպես պատմության հոմանիշ:

21. Գրիգոր Լուսավորչի պաշտամունքի մասին տե՛ս մասնավորապես՝ *П. М. Мурадян. Кавказский культурный мир и культ Григория Пр.светителя*, КВ, в. 3, 1981.

22. Ազաթանգեղոսը հրատարակված է բոլոր հայտնի ձեռագրերի համեմատությամբ և պատշաճ գիտական սարվածքով՝ «Պատմագիրք Հայոց» մատենաշարով (Ագաթ.): Այդ երկի պատմական մասը վերջերս վերահրատարակվել է աշխարհարար Թարգմանության մե՛ս Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, քննական քննագիրք Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կաճայանցի, աշխարհարար Թարգմանությունը և ծանոթագրությունները Ա. Ն. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1983): Հրատարակված է նաև անգլերեն թարգմանությունը երկու գրքով՝ *The Teaching of Saint Gregory. An Early Armenian Catechism. Translation and Commentary by Robert W. Thomson. Harvard University Press, Cambridge Mass., 1970.* *Agathangelos. History of the Armenians. Translation and Commentary by R. W. Thomson. Albany, State University of New York Press, 1976.*

23. Տե՛ս Պ. Մ. Մուրադյան, Ազաթանգեղոսի հին վրացերեն խմբագրությունները, Ե., 1982, առաջաբան, տարալեզու խմբագրությունների և պատումների տոհմածառը տե՛ս էջ 10:

24. Ըստ հին ավանդության՝ ներկայիս էջմիածնի Մայր տաճարը կառուցված է հենց այնտեղ, որտեղ երևաց այդ սյունը:

25. Գլխավոր եպիսկոպոս, որը V դ. Հայաստանում (ինչպես նաև հարևան մի շարք երկրներում) սկսվեց կոչվել կաթողիկոս:

26. Քերթողական արվեստը (հում. τεχνή ποιητική) այն ոճն է, որը հետևել է հին հունական գրականության կանոններին և այդուհանդերձ վեղջուկ խոսքով ստեղծված երկերին, տե՛ս Ա. Սարգսյան, Հովհաննես Գրասխանակերպոս «Քերթողական արվեստի» շուրջ, ՊԲՀ, 1981, № 2, էջ 164—165, 176:

27 Ճիշտ գրությունը Փալատոս է. այդ ձևը գտնում ենք ստորև, էջ 4. 29, 34:

28. Կայսրության նոր մայրաքաղաք Կոստանդնուպոլիսը կառուցվել է հնամյա Բյուզանդիոն հունական գաղութի վայրում:

29. Մաեռվ Աբդյան, Երկեր, Գ, Երևան, 1968, էջ 215—261:

30. Արտավանը պարթև Արշակունիների վերջին թագավորն է, որին գահազուրկ արին Սասանյանները (նրա մասին հիշեցինք վերևում): Հայ Արշակունիները վրիժառու են իրենց պարթև ազգակիցների համար: Որ-

պես քաղաքական զաղափար այդ միտքը հարատևել էր առնվազն մինչև Արշակ Բ ժամանակները:

31. Փափաստուից քաղված հատվածները թողնում ենք մեծ մասամբ զբարբար: Ոչ մի թարգմանություն ի վիճակի չէ պահպանել հեղինակի էպիկական ոճի առանձնահատկությունները: Բերված օրինակների գեղարվեստականությունը գալիս է նախ և առաջ շարադրության եղանակից, լիզվից:

32. Փուշ և տատանկ բուսցի. դարձվածքը մեջբերում է Աստվածաշնչից, հմմտ. Մենդ. 9, 18: Սույն զուգահեռի վրա ուշադրությունս հրավիրեց իմ աշակերտ Ա. Խոսրոբեյ Այդ օրինակը ևս մի զգուշացում է, որպեսզի վիպական գրույցի և գրող Բուզանդի լիզունները, ոճը շնույնացվեն:

33. Տեսիլը հայտնի է նաև հունարեն տարբերակով. փոխադրությունը շատ մոտ է հայերեն բնագրին, այլ հանգամանքներից բացի, այն հետաքրքիր է որպես հայերենից հունարեն (և ոչ հակառակը) կատարված թարգմանություն: *Sb'u G. Garitte. La Version de S. Sahak en grec, "Le Muséon", LXXI, 1958, 3—4.* Տեսիլի գուշակությունները անշուշտ վերաբերում են Հայոց աշխարհին և Հայոց եկեղեցուն: IX դարում այդ տեսիլը կօգտագործեն որպես Բարսեղ Մակեդոնացու կայսեր (867—886) դահ բարձրանալու գուշակություն: Հայ լինելով, Բարսեղը սերնոմ է անհայտ ընտանիքից, մինչդեռ տեսիլի շնորհիվ նա ներկայացվել է որպես հայ Արշակունիների շառավիղ: Կայսեր ծագման այդ առասպելը Բյուզանդիայում ընդունվել է որպես քաղաքական զաղափար:

34. Խորենացու օգտագործած աղբյուրների նորագույն տեսությունը՝ *Moses Khorenats'i. History of the Armenians. Translation and Commentary of the Literary Sources by Robert W. Thomson. Harvard University Press, Cambridge, Mass., London, England, 1978.* Առաջարկում հեղինակը նշում է բոլոր աղբյուրները, որոնցից օգտվել է Խորենացին, մեկնելով նրանց առնչությունը բնագրի հետ: Առ այսօր դամենից ընդարձակ տեսությունն է. հեղինակը աղբյուրագիտական հարցերին շարունակ անդրադառնում է տողատակի ծանոթագրություններում: Հմմտ. ի. Տեր-Պետրոսյանի գրախոսականը (ՊԲՀ, 1980, № 1): Խիստ քննադատելով հեղինակի առանձին գրույթներ, գրախոսողը ընդհանուր առմամբ բարձր է արտահայտվում այդ իրոք որ օրինակելի հրատարակության մասին:

35. «Հայոց պատմության» մեջ հիշատակված են օրինակ չորս «Հայաստաններ»: Գիտնականները ճշող մեծամասնությամբ հաստատում են, որ այդ տեղեկությունն արձագանք է VI դարի 30-ական թվականներին Բյուզանդական Հայաստանում տեղի ունեցած վարչական փոփոխությունների. Հուստինիանոս կայսեր քաղաքականության հետևանքով հայոց երկրի արևմտյան հատվածը բաժանվեց Առաջին, Երկրորդ, Երրորդ և Չորրորդ «Հայաստանների»: Բայց եթե «քննադատների» կարծիքով դա մի փաստ է, որը բացառում է Խորենացու պատկանելությունը V դարին, ապա

«պաշտպանները» դիտում են այդ «Հայաստանի» հիշատակությունը որպես լուր ընդմիջարկություն: Տե՛ս է. Լ. Դաեիկյան, Հայկական աղբյուրները Արևմտյան Հայաստանի վաղընթացական ռազմավարական բաժանումների մասին (ՊՔԸ, 1985, № 1, էջ 112):

36. Այդ ուղղությամբ քննական վերջին աշխատությունն է C. Toumanoff, On the date of the Pseudo-Moses of Chorene. Հանդես ամսօրեայ, 1961, սյուՆ. 467 — 476, հմմտ. նույն հեղինակի Studies in Christian Caucasian History, էջ 330—334: Կ. Թումանյանի ի մի է բերել այն աղբյուրները, որոնք, իբ կարծիքով, բացառում են Խորենացու պատկանելությունը V դարին:

37. Hippolytus Werke, B. 4. Die Chronik. Hergestellt von A. Bauer, Berlin, 1955, էջ 10: Աստվածաշնչում մի քանի անգամ հիշատակված է ասորա-բաբելական աղբյուրների Ուրարտու երկիրը՝ հրթ. ʾārārat. հուն. Ἀραράτ ձևով: Հայերը լավ են գիտակցել, որ այդ պետությունը գրավում էր նրանց մայրենի հողի տարածքը: Սպանելով ասորեստանցի թագավոր Սենեգերիմին, նրա Աղրամելիք և Սանասար որդիները փախչում են «յերիկիրն Արարադա», ասված է Աստվածաշնչի գրքերից մեկում [Դ. թագ. ԺԹ. 37]: Նույն այդ միջադեպի մասին հաղորդում է նաև Տոմարի գիրքը, բայց այստեղ հուն. εις τὰ ἔρη Ἀραράτ (գեպի Արարատի լեռները) տեղում հալ թարգմանելը դնում է «փախեան նոքա ի լերինս Հայոց» [Տոմ. Ա. 24]: Այդ դեպքի մասին պատմում է նաև Եսայի մարգարեն. հրբայերենն այստեղ ունի 'RRT (Արարատ), բայց հունարենը εις Ἀρμενίαν, հայերենում, բնականաբար, «ինքեանք զնացին փախստական ի Հայս» [Եսայ. Ա, 38]: Ըստ հայկական ավանդույթի, Արծրունի տոհմը ծագել է հենց այդ եղրայրներից:

Նոյի տապանը նստեց «ի լերինս Արարատայ», ասված է Մենդոց գրքում [Ը. 4], նկատի ունենալով դարձյալ երկիրը, այլ ոչ թե Մասիսը: Մասիսը նույնացրին Արարատ լեռան հետ ոչ շուտ, քան XII դարում: Հատուկ հետաքրքրություն է ներկայացնում Երեմիա մարգարեի մի դարձվածքը. հրամայեցեք իմ անումից, ասում է Աստված, «Այրարատեան թագաւորութեանցն և Աքանազեան դեդին», որպեսզի դուրս գան Բարելունի դեմ [Երե. ՄԱ, 27]: Երբայերեն-հունարեն «Արարատի» դիմաց այստեղ հանդես է գալիս Հայաստանի կենտրոնական աշխարհ Այրարատի անունը: Թագավորության բնակիչները կազմում են «Աքանազյան դունդը»՝ սրա հիման վրա է առաջացել հայերի՝ Աքանազից սերելու տեսությունը:

38. Մյուս աղբյուրներից գիտենք, որ այդ աստվածությունները եղել են աստվածացված կենդանիներ՝ առալիզներ:

39. Քեզ եմ ասում, քաջ տղամարդ Արտաշես,

Որ հաղթեցիր Ալանների քաջ ազգին.

Եկ լսիր Ալանների գեղալյա դատերս խոսքերին

Եվ տուր պատանին:

Որովհետև օրենք չէ՝ որ քեռի համար դուրսագնեքը  
Ուրիշ դուրսագնեք զարմերի կենդանութիւնը շնչեն  
Կամ իրրև ծառա ստրուկների կարգում պահեն.  
Եվ կրկու քաշ ազգերի մեջ  
Մշտնջենավոր թշնամութիւն հաստատեն

(Թարգմ. Ստ. Մալխասյանցի)

40. Եվ որտեղի՞ց քաշ Արտաշեսը պիտի տա  
Հաղար հազարներ և բլուր բլուրեր  
Քաշերի սերունդ այս կույսի՝  
Ալանների արքայազն օրիորդի համար

(Թարգմ. Ստ. Մալխասյանցի)

41. Հեծով արի Արտաշես արքան իր գեղեցիկ սև ձին,  
Եվ հանելով ոսկեօղ շիկափոկ պարանը,  
Եվ անցնելով գետն իրրև սրաթև արծիվ,  
Եվ նետելով ոսկեօղ շիկափոկ պարանը,  
Զգեց մեջքը Ալանաց օրիորդի,  
Եվ շատ ցավեցրեց փափուկ օրիորդի մեջքը,  
Արագորեն իր բանակը հասցնելով

(Թարգմ. Ստ. Մալխասյանցի)

42. Ոսկի տեղ էր տեղում  
Արտաշեսի փեսայութեան ժամանակ.  
Մարգարիտ էր տեղում  
Սաթենիկի հարսնութեան ժամանակ

(Թարգմ. Ստ. Մալխասյանցի)

43. Հայքա՝ այծի և ոչխարի մորթուց պատրաստվող նուրբ կաշի,  
սեկ, սաֆյան, խորենացու բացատրութեամբ՝ «մորթ կարմիր»:

44. Տե՛ս հատկապես՝ Գ. Խ. Սարգսյան, Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Երևան, 1966:

45. Արգար-Քաղեռոսին նվիրված վերջին մեծ ուսումնասիրութիւնն է՝  
Мещерская Е. Н., Легенда об Авгаре-раннесирийский литератур-  
ный памятник, М., 1984.

46. «Փախչողը ի ժառանգութենէ» [Մով. Խոր., էջ 364. 11]: Փակագծերում առաջարկածս լրացման համար հիմք են ծառայում Ազաթանգեղոսի հետևյալ նախադասութիւնը՝ «մտցեն ամենայն աշխարհ ի ժառանգութիւն Քրիստոսի» [Ազաթ., էջ 358. 13] և նման արտահայտութիւններ:

47. Կարիք կա՞, արդոք, հատուկ ընդգծել, որ «Ողբը» ոչ մի կերպ չի կարելի դիտել որպէս 40-ական թվականների պատմական իրականութեան հարազատ վերարտադրութիւն:

48. Վերևում ասացիք, որ նման տրամադրություն առկա է արդեն Ծղիշեի մոտ:

49. Մովսես Խորենացին ասում է, որ Հովսեփն ու Եզնիկը զնացած են եղել Կոստանդնուպոլիս առանց Սահակի ու Մաշտոցի թույլտվության՝ նրանք իբր նպատակ են ունեցել ուրիշներին ուղարկել մայրաքաղաք:

50. Վերնագիրը պատկանում է միսիթարյան հրատարակիչներին, հաջադատ վերատառությունը հայտնի չէ, ֆրանսիացի գիտնական Լուի Մարիեոսը երկը անվանում է «Աստծո մասին»:

51. Ղազար Փարպեցին ասում է, որ Ղևոնդի վարդապետը, այսինքն՝ սուրբիչը եղել է Մաշտոցը [Ղազ. Փարպ., էջ 70. 17]:

52. Մ. Արեղյան, Երկեր, Գ, Երևան, 1968, էջ 322—325:

53. Ի դեպ, Աղանը ևս անմիջապես մասնակցել էր նախորդ պատերազմին. 449 թ., մյուս հոգևորականների հետ միասին, նա ստորագրել էր Միհրենրոսի հազարապետին ուղղված այն դրույթունը, որտեղ հայերը պաշտպանում էին իրենց ազգային կրոնը դարձած քրիստոնեությունը ու հրաժարվում զրադաշտություն ընդունել:

54. Տե՛ս Թղթի հետին նախաբանը՝ «Ճառաշարան թղթոյ առաքել յԱմիթ քաղաքէ» [Ղազ. Փարպ., էջ 186. 6—7]:

55. «Կրելով ի խաղու զարկանելիս ձեր զկնի ձեր» [էջ 188, 11—12]: «Արկանելի» բառը նշանակել է նաև գորգ, գուցե ճիշտ է հանդուցյալ Հ. Քյուրոյանը, թե տվյալ դեպքում ևս խոսքը գորգի խաղի մասին է (տե՛ս Հ. Քիւրոսեան, Գորգը Հայոց մէջ, Վենետիկ, 1947, էջ 12—14):

56. Ղազար Փարպեցու գրած Թուղթը. Մեղադրութիւն ստախօս արեղաներին, Թարգմանութիւն և բացատրութիւնք Մ. Նալբանդեանց, Ս. Պետերբուրգ, 1868 = ՌՅԺէ:

## Գ լ ու խ Գ

1. Հմմտ. Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Գ, էջ 336:

2. Մարգպան տերմինի մասին տես՝ А. И. Колесников, О термине „марзбан“ в Сасанидском Иране. „Палестинский сборник“, вып. 27 (90), 1981.

3. Հայոց ինքնավարության մասին նշված շրջանում գրել են մի շարք գիտնականներ: «428 թվից հետո Պարսկական Հայաստանի նախարարական ինքնավար կազմակերպության մեջ զգալի փոփոխություններ չէին եղել», շեշտում է Հ. Մանանդյանը: «Հայաստանի բաժանմամբ նրա մեծ մասը դարձել էր Սասանյան Պարսկաստանից վասալական կախում ունեցող մի երկիր, որն արդեն ձևավորված նախարարական իրավունքի հիման վրա պահպանել էր իր ներքին ինքնավարությունը», գրում է Ս. Երեմյանը: «Ինքնավարություն» տերմինից օգտվում է Ռ. Գրուսեն: Ինքնավարության հաստատությունների մասին է խոսում Կ. Թումանովը: Արաբական գերիշխանության ներքո հայոց ինքնավարությանն են նվիրված Ա.

Տեր-Ղևոնդյանի մի շարք աշխատություններ (ստորև նշում ենք միայն մեկը, որն ամփոփող բնույթ է կրում): Ա. Տեր-Ղևոնդյանի ուսումնասիրության արդյունքները մեծ տեղ են դրել ժ. Լորանի վերահրատարակած մենագրության էջերում. հայոց ինքնավարությանը հեղինակը բազմիցս անդրադարձել էր արդեն 1919 թ. լույս տեսած առաջին հրատարակության մեջ (տե՛ս Ն. Մաեանյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Բ, մասն Ա, Երևան, 1957, էջ 286—287: Очерки истории СССР. Кризис рабовладельческой системы и зарождение феодализма на территории СССР. III-IX вв., М., 1958, էջ 194 (С. Т. Еремян). R. Grousset. Histoire de l'Arménie, P., 1947, էջ 226, 232 ևն. С. Toumanoff, Studies in Christian Caucasian History. Նույնի՝ Armenia and Georgia (The Cambridge Medieval History, vol. IV, part I, Cambridge, 1966). J. Laurent, L'Arménie entre Byzance et l'Islam depuis la conquête arabe jusqu'en 886: Nouvelle édition revue et mise à jour par M. Canard. Lisbonne, 1980. А. Н. Тер-Гевондян, Армения и Арабский халифат, Ереван, 1977).

Տեսնե՛լ, վերջապես, «Հայ ժողովրդի պատմություն» ակադեմիական ութհատորյակի Բ հատորը (Եր., 1984), ուր ինքնավարության սկզբունքը շեշտվում է բազմիցս:

4. IV դ. վերջերի և V դ. սկզբների ժամանակազրույթունը մեծ մասամբ խախտ հիմքերի վրա է: Հաստատապես կարող ենք որոշել միայն Արտաշես Ծ Արշակունու թագավորությունը՝ 422—428, շնայած այստեղ էլ բացառված չէ մեկ տարվա շփոթ:

5. Այդ աղանդի մասին տե՛ս Ե. Տեր-Մինասյան, Միջնադարյան աղանդների ծագման և զարգացման պատմությունից, Ե., 1968, էջ 73—85:

6. 363 թ. պարսկա-հռոմեական պատերազմից հետո Մծբինը գտնվում էր Պարսից պետության կազմի մեջ, մինչդեռ Եղիշեն գրում է, որ Հազկերտը «հարվածից մինչև Մծբին քաղաքը»: Այդ հարցը դեռևս բավարար կերպով չի բացատրվել: Ե. Տեր-Մինասյանը ենթադրում է, որ այդ հատվածը հետին ընդմիջարկություն է, բայց ինչպե՞ս պատճառաբանել այդ հավելումը: Հնարավոր չէ՞, արդյոք, ենթադրել, որ սկզբնապես բընագրում մի այլ տեղանուն է եղել, որն աղճատվելով դարձել է «Մծբին»-Նմամ. նաև Մավ. Խոր., 9, 67:

7. Այդ տուրքերի մասին տե՛ս Յաղ. Ավդալբեգյան, Հայագիտական հետազոտություններ, Ե., 1969, էջ 362—413:

8. Փանդում՝ ըստ Ե. Տեր-Մինասյանի՝ ճերմակ լաթից քող, որով մոզերն իրենց դեմքերը ծածկում էին կրակին մոտենալիս, որպեսզի իրենց արտաշնչությանը չպղծեն սուրբ հուրը:

9. Գումիլով՝ նույն գիտնականի բացատրությամբ՝ կովի մեղ, որը լվացման արարողությունների ժամանակ գործ էր անում պղծությունը սրբելու համար:

10. Այսպիսով, ամեն մի ընտանիք, ի նշան իր բարեպաշտութեան, պարտավոր է կապիճով (հատուկ շափ է) մոխիր ներկայացնել:

11. Հրովարտակը նկատի ունի այն տարին, որը հայերի մոտ սկսվել է 450 թ. օգոստոսի 6-ին և ավարտվել 451 թ. օգոստոսի 5-ին: Պարսից նույն տարին սկսվել և ավարտվել է 5 օր առաջ:

12. Հայերի մոտ վեցերորդ ամիսը կոչվել է Արաց, իսկ պարսիկների մոտ՝ Ծահրեար:

13. Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, քարտեզ, 9, 5:

14. Խոսքը Աղվանքում պարսից զորքի դեմ վարդան Մամիկոնյանի տարած հաղթանակի մասին է. տե՛ս ստորև:

15. Ժամանակագրական հարցերի վրա հատուկ կանգ է առնում Մաշտաքիա Օրմանյանը: Գիտնականի կարծիքով, «կրոնական» տոմարը Պարսկաստանում, ի տարբերություն «քաղաքականի», պարբերաբար ուղղվել է 411 թ. նահանջ ամիս է ավելացվել, պարսից տարեմուտը համընկել է մարտի 21-ի դարնանային գիշերահավասարին: Որպես հետևանք, 450 թ. մարտին սկսվել է մարտի 12-ին, շորորոգ ամիսը՝ հունիսի 10-ին, վեցերորդը՝ օգոստոսի 9-ին: Ընդհանուր առմամբ, այդ թվերը շատ լավ են բռնում վարդանանքի ողջ ժամանակագրությունը, սակայն Մ. Օրմանյանի ելակետը խախտւտ է, աղբյուրներում եղած տվյալներով չի կարելի ապացուցել, որ հենց 411 թ. «կրոնական» տոմարը ենթարկվել է ուղղման: Բացի այդ, մեր գիտելիքները «կրոնական» տարբերակի մասին շատ անորոշ են և, վերջապես, եթե այն իրոք գործել է այդ կերպ՝ ինչու պիտի քաղաքական քայլը թվագրվեր այդ տոմարով, եթե վերջինս կիրառվել է միայն ծիսակատարությունների ժամանակները որոշելու համար: Տե՛ս Մ. Օրմանյան, Ազգապատում, Կոստանդնուպոլիս, 1912, սյուն. 357—359:

16. Նղիշին մի ընդարձակ ճառ է հորինում, որը մոգպետն իրր ուղղած է եղել Վասակին: Վերջին տեղեկությունը քաղում ենք այդ ճառից, Նղ., էջ 59—63:

17. Փշտիպանները կամ փուշտիպանները կազմել են թիկնապահների մի առանձին զորամաս. նրանց ներկայությունը Հայոց երկրում ցույց է տալիս, որ մոգերի գործունեությունը պիտի հատուկ ապահովված լիներ:

18. Ղազար Փարպեցին գրում է, որ վարդանն իր հետ վերցրեց նաև մարդպետական այրուձիի կազմի մեջ մտնող շոկատներ. սա:ացվում է, որ Արշակունյաց շրջանում ստեղծված մարդպետական դունդը իր գոյությունը պահպանել էր նաև մարդպանների օրոք [Ղազ. Փարպ., էջ 64. 9]:

19. Վավերագիրն իսկականի տպավորություն է թողնում, Նղիշին հավանաբար վերաշարադրել է այն, պահպանելով էությունը:

20. Մինչև Ուտիթի՝ Աղվանից թագավորությանն անցնելը, այդ քաղաքը հղել է հայոց թագավորների ձեռնոցը [Ազաթ., 28]:

21. Տե՛ս Նղ., էջ 93—94: Ղազար Փարսիցու համաձայն՝ Վասակը նամակներ է գրել կայսրին, Աղձնիթի բղջիխին, Անգեղ Տան, Մոփաց,

Հաշտեանից, Եկեղյաց և այլ զավառների իշխաններին (նշված հասցեները կայսրութեան սահմաններում են եղել)։ Եղիշեի ցուցակը այլ է, բայց այդ չէ էական տարբերությունը։ Ըստ Եղիշեի, Վասակը այդ նամակագրությունը ձեռնարկեց այն շրջանում, երբ պառակտումը դարձել էր իրականություն։ Իսկ Ղազար Փարպեցու Վասակը գործում է բոլորովին այլ պարագաներում։ Մարզպանն ու սպարապետը դեռևս գաղափարակիցներ են. Վարդանը հիշեցնում է, որ հարկավոր է դեսպաններ ուղարկել կայսրի մոտ, և Վասակը պատրաստություն անում է կազմում։ Գեսապանների ցուցակի մեջ են Վարդանի իսկական մերձավորները՝ Վահան Ամատունին, Հմայեակ Մամիկոնյանը, Մհերուծան Արծրունին և մյուսները [Ղազ. Փարպ., գլ. 19, ԽԱ.]։

Պատմիչները նկատի ունեն նամակների նույն շարքը։ Եվ ընդհանուր առմամբ էիշտը, ըստ երևույթին, Եղիշեն է, բայց մի հարցում Ղազարը դժվար թե սխալվեր։ Սպարապետի եղբայր Հմայեակ Մամիկոնյանը անշուշտ զնացած է եղել կայսրի մոտ, Հայաստան է վերադարձել Ավարայրից հետո և նահատակվել Տայքում։ Մամիկոնյանների հովանու տակ մեծացած Ղազարն այդ մասին պիտի իմանար տոհմային ավանդություններից, պարզապես հուշերից։ Բայց Հմայեակը զնացած պիտի լիներ այն ժամանակ, երբ նրա եղբոր և մարզպանի միջև դեռևս թշնամություն չի եղել։ Արդյո՞ք նա մասնակցել է (Վարդանին մոտ կանգնած մյուս նախարարների հետ միասին) Ատոմ Գնունու դեսպանությունը։ Բոլոր պարագաներում միջադեպը հանելուկային է։

22. Ցուցակում անշուշտ զրանցված են գլխավոր նախարարները, Վասակի կողմնակիցները ավելի շատ պիտի լինեին։ Ինչ վերաբերում է ցուցակին, ապա նշանակալից է, որ 5 հոգի (ինքը՝ Վասակը, ապա՝ Արտակ Ռշտունին, Գաղեշո Խորխոռունին, Մանեհ Ապահունին, Գյուտ Վահունին) պատկանել են այն խմբին, որոնք 450 թ. Տիգրանում ստիպված եղան ուրանալ իրենց բուն հավատքը։ Դժվար թե դա պատահականություն լինի։ Ամենայն հավանականությամբ, այդ քայլը առաջացրեց հոգեկան բարոյալքում և ընտրության պահին նրանք անցան այն կուռակցության շարքերը, որը փաստորեն դաշնակցեց պարսից իշխանության հետ։

23. Թշնամու կորստի մասին խոսելիս Եղիշեն (ըստ քննական քննարկի) գրում է. «Իսկ ի կողմանէ ուրացելոցն անկանէր յայնմ աւուր երեք հազար հինգ հարիւր քառասուն և չորք այր» [էջ 120. 11—12], ընդ որում՝ այդ ընթերցումը պահել են բոլոր հայտնի ձեռագրերը։ Միայն «Անտոնյան օրինակն» է, որ ունի ուրացելոցն և հեքաճոսաց։ «Անտոնյան օրինակը» ձեռագիր վիճակով չի պահպանվել, նրա ծագումն առնողվածային է, այնուամենայնիվ այդ ընթերցումը ստիպված ենք դիտել որպես նախընտրելի։ Հակառակ դեպքում պիտի համարենք, որ 3544 թիվը վերաբերում է միայն Վասակի կողմնակիցներին՝ ուրացողներին։ Մինչդեռ վշտանալով, որ իր զորքի ստացած հարվածները երեք անգամ ավելի մեծ էին, քան

հայերինք, Մուշկան նյութալավորը նկատի է ունեցել իրեն ենթակա ամբողջ բանակը:

24. Հուն. πεντελοστή (ήμέρα) բառացի նշանակում է 50-րդ օր. պենտեկոստոս ասելով հասկացել են նաև Ջատկից մինչև հոգեզարուսայ 50 օրվա միջոցը, որի բուն հայերեն անվանումն է Յինուճ:

25. Մ. Չամչեան, Պատմութիւն Հայոց, Բ, Վենետիկ, 1785, էջ 464—465:

26. Մ. Օրմանեան, Ազգապատում, սյուն. 372—373:

27. Մ. Օրմանեան, յԱզգապատում, սյուն. 276—278:

28. Н. Адоку. Марзбан Васак перед судом историков. Записки Восточно о отделения императорского Русского археологического общества, 1914.

### Գ լ ո Ւ խ Դ

1. Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Գ, էջ 197—198:

2. Մ. Օրմանեան, Ազգապատում, սյուն. 411—412:

3. Վաչեի ազգակցական կամ խնամիրական կապը Սասանյանների հետ դժվարությամբ է որոշվում: Եղիշեն ասում է, որ Աղվանից թագավորը եղել է Որմզդի և Պերոզի քեռորդին, Պերոզը պահանջում է ետ ուղարկել Վաչեի մոտ դառնվող իր քրոջն ու քեռորդուն, վերջիվերջո Վաչեն ենթարկվում է արքայից արքայի կամքին: Նույն այդ արտահայտությունները գտնում ենք նաև Մովսես Կաղանկատվացու մոտ (ի տարբերություն Եղիշեի, վերջինս տալիս է նաև Աղվանից արքայի անունը): Թվում է, որ Վաչեն եղել է Հազկերտի թոռան՝ նրա դստեր աղջկա ամուսինը և ետ է ուղարկել իր կնոջը և նրա մորը (որոնք, ինչպես վկայում է սկզբնաղբյուրը, ի ընծ մեզ են եղել): Ինչ վերաբերում է Եղիշեի ասածին, որ Վաչեն եղել է Հազկերտի ապստամբ որդիների քեռորդին (վասն զի քեռորդի էր նոցա), ապա պետք է ենթադրել, (եթե դա դրչի սայթաքում չէ), որ հին հայերենում «քեռորդի» անվանումը կարող էր նկատի ունենալ նաև քրոջ աղջկա ամուսնուն՝ փեսային: Տե՛ս Եղ., էջ 197, 13, 198, 21, 24. Մով. Կաղ., էջ 15, 13, 17. 6—7, 10:

4. Պետք է խոստովանել, որ այդ ապստամբությանը նախորդող շրջանի մասին խոսելիս Ղազար Փարպեցին Վահանին սպարապետ չի անվանում: Մի տեղ միայն նա ասում է, որ հայերը և Հայոց զորավար (=սպարապետ) Վահանը Սահակ Բագրատունուն մարդպան կարգեցին, հաստատեցին Սահակի մարզպանությունը և Վահանի՝ Մամիկոնյան տերությունը և Հայոց սպարապետությունը [էջ 121. 30—33]: Բայց այդ նախադասությունը վերաբերում է այն պահին, երբ ապստամբության որոշումն արդեն ընդունված էր, հայերը երկրի ներսում հալածում էին պարսիկներին և նրանց կողմնակիցներին: Այնուամենայնիվ, քանի որ սպարսիկներին համար Վահանն է եղել Հայաստանի առաջին դեմքը, պիտի եղ-

րակացնել, որ հենց նա է ճանաչված եղել որպես սպարապետ և այդ պաշտոնով ներկայացել Պերոզ արքային (տե՛ս ստորև):

5. Այդ մասին տե՛ս Բ. Հարությունյան, Մեծ Հայքի Գուգարք աշխարհը ըստ «Աշխարհացոյց»-ի, «Քանրեր Երևանի համալսարանի», 1977, № 2, էջ 185—195:

6. Այժմ տարածում է գտել այն տեսակետը, որ գրական այդ կոթողը իր լեզվական երկու տարրերակով V դ. ծնունդ է, տեսակետ, որը ոչնչով չի ապացուցվում: Նշենք, որ Մ. Աբեղյանը հրատարակում է թվագրել Եուզանիկի վկայարանությունը:

7. Ժամանակագրական հարցերը քննության են առնված տողերիս հեղինակի աշխատություններում՝ Կ. Ն. Յուզբաշյան, Ե՞րբ է սկսվել Վահան Մամիկոնյանի գլխավորած ապստամբությունը (ՊՔՀ, 1984, № 1):  
Կ. Մ. Юзбашян, Хронология армяно-грузинского восстания против Сасанидов в конце V в. "Палестинский сборник", вып. 28 (91), 1986.

8. Ոստանը՝ Հայոց երկրի կենտրոնական մասն էր, Արշակունիների երբեմնի տիրույթը, ուր գտնվում էին ինչպես Դվինը, այնպես և Արտաշատը: Ոստան էր կոչվում միաժամանակ նաև մայրաքաղաքը, այսինքն Դվինը:

9. Ղազ. Փարզ., էջ 123. 26: Քերթափաղ՝ հին ու մին քուրչիներ, ցնցոտիներ հավաքող, իշավառեան՝ իշավար գոյականի հոգնակին. տե՛ս Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, Դ, էջ 570:

10. Կատիշենք՝ իրանական ցեղ է:

11. Փուշտիպանան աղա՞ր՝ թիկնապահների պետ, ինչպես ասացինք Ա գլխում, Արշակունյաց Հայաստանում նրան իր պաշտոնով համապատասխանել է մաղխազը:

12. Ինչպես Սասանյան պետությունը, այնպես և զորքը եղել է բազմազգ: Տվյալ հատվածում ամենից հետաքրքիրը Սյունյաց գնդի հիշատակությունն է: Խոսքն, անշուշտ, սյունեցի «ուրացողների» մասին է, որոնք վճռական պահին զենքով դուրս եկան «քրիստոնյա» մնացած հայրենակիցների դեմ:

13. Այդ միջադեպը առեղծվածային է. բանն այն է, որ Վասակ Մամիկոնյանի և Սահակ Բագրատունու սպանության պարագաների մասին Ղազար Փարպեցին չի հաղորդում: «Պատմության» մայր ձեռագիրը, որից բխում են մյուս գրչագրերը, ըստ երևույթին այդ մասում մի բաց ունի: Եթե երբևիցե գտնվի անթերի գրչագիր, հավանաբար կպարզվի, թե ինչ հողի վրա է առաջացել Վասակի և Սահակի կենդանի մնալու առասպելը:

14. Սասանյան պետության արևելյան հարևաններին հայ հեղինակներն անվանում են քուշաններ, ապա՝ հեփթաղներ, ընդ որում՝ քուշաններին նույնացնում են հոներին (Հազկերտը «Խազաց գնաց միանգամայն ի վերայ տէրութեան Հոնաց աշխարհին, զոր Քուշանս անուանեն»՝ Եղ., էջ 11. 22—23): Բուն քուշանները արդեն վերացել էին պատմական թա-

տերաբեմից, Հազկերտի և Պերոզի հակառակորդները հեփթաղներն են  
եղել: Պետք է ասել, որ վերջիններիս ծագումը և անգամ լեզուն դեռևս  
բավարար կերպով չեն լուսարանված, հմմտ. **Б. Г. Гафуров**, Таджики,  
М., 1972, էջ 193—211:

15. Տեկորի սուրբ Սարգսի վկայարանը շինել է Սահակ Կամսարա-  
կանը. նա հիշատակված է նաև «Քուղթ Հայոց ի Պարսս առ ուղղափառս»  
հայտնի վավերագրում (ԳՔ, էջ 48, ՊԲԷ, 1962, № 2, էջ 51: Ն. Աճառյան,  
Հայոց անձնանունների բառարան, Դ, էջ 353—354, № 18):

16. Ն. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. 6, էջ 69—70:  
Նախորդ ծանոթագրության մեջ հիշատակված թղթում վարդը հանդես է  
գալիս որպես Մամիկոնյանների տեր և Հայոց մարզպան (տե՛ս ԳՔ, էջ 48):

17. Ինչպես ասացինք վերևում, վազգենի սպանությունը, որից և  
սկսվել է ապստամբությունը, տեղի է ունեցել Պերոզ արքայի 25-րդ տա-  
րում: Այդ տարին ավարտվել է 482 թ. հուլիսի 13-ին՝ ըստ պարսկական  
տոմարի կամ հուլիսի 18-ին՝ ըստ հայկականի:

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

- Ազաթ** — Ազաթանգեղայ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան և Ստ. Կանայեանց, Տփղիս, 1909:
- ԳԹ** — Գիրք Թղթոց, Թիֆլիս, 1901:
- Եղ.** — Եղիշէի վասն Վարդանայ և հայոց պատերազմին, ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց, աշխատութեամբ Ե. Տէր-Միքաւսեան, Երևան, 1957:
- Կան.** — Կանոնադիրք Հայոց, աշխատասիրութեամբ Վազգեն Հակոբյանի, Ա—Բ, Երևան, 1964—1971:
- Կոր.** — Կորյուն, Վարք Մաշտոցի, բնագիրը, ձեռագրական այլ ընթերցվածներով, Թարգմանութեամբ, առաջաբանով և ծանոթագրութեաններով ի ձեռն պրոֆ. դ—ր Մանուկ Արեղյանի, Երևան, 1941:
- Ղաղ. Փարպ.** — Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան, աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան և Ստ. Մալխասեան, Տփղիս, 1904:
- Մով. Խոր.** — Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Արեղեան և Ս. Յարութիւնեան, Տփղիս, 1913:
- ՊԲԸ** — Պատմա-բանասիրական հանդես, Երևան, 1958:
- Սամ. Ան.** — Սամուէլի քահանայի Անեցոյ Հաւաքմոնք ի գրոց պատմագրաց յաղագս զիւտի ժամանակաց անցելոց մինչև ի ներկայս ծայրաքաղ արարեալ, յառաջաբանով, համեմատութեամբ, յաւելուածներով և ծանօթութիւններով Արշակ Տէր-Միքիլեանի, Վաղարշապատ, 1893:
- Սեբ.** — Պատմութիւն Սեբէոսի, աշխատասիրութեամբ Գ. Վ. Արգաւրյանի, Երևան, 1979:
- Փաւ. Բուզ.** — Փաւստոսի Բիւզանդացոյ Պատմութիւն Հայոց ի լոյս դրութիւնս, Վենետիկ, 1832:
- КВ** — Кавказ и Византия, Ереван.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Ք Յ Ո Ւ Ն

Նախարան . . . . .	5
Կ լ ու խ Ա, «Զի թէպէտ և հմք ածու փոքր...» . . . . .	8
Կ լ ու խ Բ, «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ...» . . . . .	45
Կ լ ու խ Կ, «Մահ իմացեալ անմահութիւն է» . . . . .	143
Գ լ ու խ Դ, «Պարսկի առն երկիր ոչ պապցուք» . . . . .	209
Մանթազարութիւններ . . . . .	250
Հապալոսներ . . . . .	265

ԿԱՐԵՆ ՄԿՐՏՁԻ ՅՈՒՋՔԱՆՇՅԱՆ

ՆՎԱՐԱՅՐԻ ԺԱԿԱՏԱՄԱՐՏԻՑ ԴԵՊԻ ՆՎԱՐՍԱԿԻ  
ՊԱՅՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Հրատ. խմբագիրներ Ա. Հ. Շաղգամյան, Վ. Զ. Սանփանյան  
Կազմը (կամ) նկարչական ձևավորումը Ա. Գ. Կաբախանյան  
Տեղ. խմբագիր Զ. Հ. Սարգսյան  
Սրբագրիչ Ն. Հ. Մկրտչյան

ИБ № 1206

Հանձնված է շարվածքի 4. 11. 88 թ.: Ստորագրված է տպագրության  
05. 07. 1989 թ.: ՎՅ 02240: Զափը 84×108<sup>1</sup>/<sub>32</sub>: Թուղթ № 1: Տառատեսակ  
«դրքի սովորական», բարձր տպագրություն: Պայմ. 14,07 մամ., տպագր.  
16,75 մամուլ: Ներկ. մամուլ 14,07: Հրատ.-հաշվարկ. 11,86 մամուլ:  
Տպարանակ 7000: Հրատ. № 7465: Պատվեր № 648: Գինը՝ 1 ռ. 80 կ.:

ՀեՍՀ ԳԱ հրատարակչություն, 375019, Երևան,


Մարշալ Բաղրամյան պող. 24 գ.:

Издательство АН Армянской ССР, 375019, Ереван,  
пр. Маршала Баграмяна, 24 г.

ՀեՍՀ ԳԱ հրատարակչության տպարան, 375019,

Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24:

Типография Издательства АН Арм. ССР, 375019, Ереван,  
пр. Маршала Баграмяна, 24.



ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0470346

1 н. 80 4.

II

79665